



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1892

Յ Ո Ւ Ն Ի Ս

1892 № 6

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

	երես	
1 ՍԵՆԿԵՐԻՉ, ՀԵՆՐԻԿ	855	Առանց դառնաճի (վէպ):
2 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆՆԷՍ	883	«Չորսպիսի գիշերով» (բանաստ.):
3	884	Բռնան (բանաստեղծութիւն):
4 ՊԵՏՕ	885	Հանապարհորդ. վիշտով թիւններ:
5 ՈՒՄԻԿԵԱՆ, ՆԵՐՍԷՍ ԲԺՇ.	899	Սննդառութիւն և կերակուր, I.
6 ՖԵԼԻԲՍ	916	Նառուրալիսմը և Զոլան:
7 ԽԱԼԱԹԵԱՆՑ, ԳՐ.	934	«Եղիշէի պատմութ. Վարդանանց»:
8 ՈՒՄԻԿԵԱՆ, Ն.	949	«Երկրցիկ ժառանգակ. մատին»:
9 ԼՈՒՍԻՆԻ.	951	Հաջոց Բարեգործական Ընկերութիւն- ները ընդհանրապէս և Թիֆլիսի Հաջ- ուհեաց Բարեգործական Ընկերու- թիւնը մասնաւորապէս:
10 ՂԱԶԱՐԵԱՆՑ, ԵՐՈՒԱՆԴ.	959	Աղքատութիւն և խղերար:
11 Ֆ.	965	Արտատահմանեան քրոնիկ:
12 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐԻԳՈՐ.	982	Երաժշտական քրոնիկ:
13 Շ.	985	Փաղաքական տեսութիւն:
14 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ.	997	Խղերան և հասարակութիւնը:
15 ՈՒՄԻԿԵԱՆ, ՆԵՐՍԷՍ, ԲԺ.	1000	Խղերան:
16 ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ, ԲԺ.	1013	Խրատներ խղերալի մասին:
17 ԽՄԲ.	1019	Խմբագրութեան կողմից:
18 ԽՄԲ.	1021	Բովանդ. «Մուր» №№ 1—6, 1892 թ.:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:



Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 6 1892

Յ Ո Ւ Ն Ի Ս

1892 № 6

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՏԻ

1892

Дозволено цензурою. Тифлисъ, 13 Іюня 1892 г.

Тинографія М. Д. Ротиніанца. На Гол. просп. соб. домъ № 41..

ԱՌԱՆՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկևիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(վերջ առաջին մասի ¹⁾)

8 չափսի.

Ամբողջ մի շաբաթւայ յիշողութիւններ եմ գրի անցնում: Մի քանի նամակ ստացայ՝ ի միջի ալլոց և Մնեատինսկուց: Ազնւահոգի Մնեատինսկուն այնքան վշտացրել է իմ ու Մնեկայի գործի մէջ տեղի ունեցած փոփոխութիւնը, որ մինչև անգամ չի կշտամբում ինձ: Գրում է միայն, թէ կլինը ինձ վրայ «աստիկ բարկացել է ու անունս անգամ չի ուղղում լսել և նրա կարծիքով ես մարդ չեմ, այլ հրէշ, որի ամենամեծ զւարճութիւնը ձեռքն ընկած զոհերին տանջելն է: Այս անգամ ես իսկ քրիստոնեայ եմ, որովհետև ոչ միայն դրա համար քէն չեմ զգում դէպի տիկին Մնեատինսկան, այլ և աւելի համակրութեամբ եմ վերաբերում նրան: Ի՛նչ տաք, բարի սիրտ ունի: Մնեատինսկին, ինչպէս երևում է, գործը կորած կամ, աւելի լաւ է ասել, վերջնականապէս վճռւած է համարում,

¹⁾ Տես «Մուրճ» 1892 թ. №№ 1, 2, 3, 4, 5:

որովհետև ոչ մի խորհուրդ չի տալիս ու միմիայն ցաւակցում է ինձ՝ «Տայ Ասուած (ղրում է նա) որ նրա նման մի ուրիշին գտնես»։ Չարճացք բան է, երբ որ դրա մասին միտք եմ անում, ինձ թւում է, թէ չեմ ուզում ոչ Անելկայի նման ուրիշին, ոչ էլ նրանից լաւին, այլ միմիայն նրան իրան եմ ուզում։ Ասում եմ թէ այդ ինձ թւում է, որովհետև այդ զգացմունքս հաստատ ու որոշ ձև չ'ունի։ Մէջս կարծես չափազանց խճճւած մետաքսի կծիկ լինի, տանջւում եմ ու չեմ կարողանում խճճւած դերձանները կարգի բերել։ Չը նայելով զարգացած ինքնագիտակցութեանս, ես չը գիտեմ օրինակ թէ ինչից է յաւաքանում իմ վիշտս. արդեօք նրանից, որ Անելկային կարծածիցս աւելի եմ սիրում, թէ միմիայն նրանից, որ զգում եմ, թէ կարող էի նրան աւելի շատ սիրել։ Անեատինսկին մասամբ պատասխանում է այդ հարցիս հետեւեալ խօսքերով՝ «Ասել եմ կամ գուցէ կարգացել, թէ ոսկու կտորները երբեմն պատած են լինում կւարցէ (որձաքար) խաւով, որի միջից մետալը դժւարութեամբ է հանւում։ Իմ կարծիքով քո սիրտդ էլ այդ տեսակ խաւով է պատած. մէջտեղում թանկագին հանք կայ, բայց այդ անիծեալ կեղեւը ամբողջապէս չը հալւեց վերջին անգամ Պոլշովում եղած ժամանակը։ Շատ կարճ մնացիր, այնպէս որ ժամանակ չ'եղաւ, որ սիրէիր օրիորդին այնքան սաստիկ որքան պէտք է։ Գործելու եռանդ գուցէ ունես, բայց մէջդ ամենեւին չը կայ վճռելու եռանդ. սակայն դրան էլ ոչժգ կը զօրէր, եթէ որ զգացմունքդ պէտք եղածի չափ դիպէր քեզ։ Հեռացար, սկսեցիր ըստ սովորութեան ինքդ քո մէջ խորասուզւել, դատել, քննել. ու զուշակածս կատարւեց, այսինքն փիլիսոփայութիւն անելով ձեռքիցդ բաց թողեցիր համ քո բախտաւորութիւնը համ ուրիշինը»։ Անեատինսկու խօսքերը ինձ սաստիկ զարմանք են պատճառում նրանով, որ կարծես կրկնութիւն լինեն մի ժամանակ հօրս՝ ինձ ասած խօսքերին։ Բայց Անեատինսկին աւելի լաւ է թափանցում հոգուս խորքը, որովհետև իսկոյն աւելցնում է՝ «Այդ շատ հին բան է. ով որ չափից վեր խորամնւի է լինում իւր մէջ, վերջ ի վերջոյ չի կարողանում հաշտւել ինքն իրան հետ, իսկ ով որ այդ տեսակ է լինում նա անընդունակ է, որ և է վճիռ կացացնելու։ Հիւանդ դար, երբ միայն էշերն են մնացել, որ դեռ քչից շատից կամքի տէր են, որովհետև մի քիչ խելք

ունեցողը իսկոյն ունեցած խելքը զործ է դնում ամեն բանի մասին կասկածելու և ինքն իրան համոզելու վրայ, թէ յիրաւի չարժի որ և է բան կամենալ: Այդ տեսակ զիտողութիւններ կարգացել եմ՝ Ֆրանսիացի հեղինակներից մէկի զրւածքում ու մտածել, որ շատ ճիշտ է ասում:

Լինում են լոպէսներ, երբ ավելի լաւ կը համարէի որ Սեւատինակին ինձ ուղղակի հաչոյէր քան նամակը լցնէր օրինակի համար այսպիսի խօսքերով.—«Ձը նայելով քո մեծ արժանաւորութիւններին, կարող է բանը այնտեղ հասնել, որ զու միշտ տանջանքի ու վշտի պատճառ դառնաս քո ամենամտերիմ ու ամենասիրելի մարդկանց համար»: Այդ ինձ սատարի տհաճութիւն է պատճառում, ևս առաւել նրա համար, որ ճիշտ է: Ես տանջանք եմ պատճառել Անեկային, հօրաքրոջս, Անեկայի մօրը և վերջապէս ինքս ինձ: Բայց միւս կողմից մի քիչ ծիծաղս զալիս է, երբ որ կարդում եմ թէ՛ «Կեանքի օրէնքների համաձայն մարդուս մէջ մի որ և է բան պէտք է բռնի, զգոյշ կաց ուրեմն որ քո մէջ այնպիսի մի չար բան չը բռնի, որ ամենից առաջ հէնց քեզ թունաւորի»: Զէ... Գոնէ դրանից կարող եմ աներկիւղ լինել: Ճիշտ է Լատերայի ձեռքով ցանած ինչ որ մի բորբոս ծլել է, բայց միմիայն այն կւարցէ կեղևի վրայ է բռնել, որի մասին յիշում է Սեւատինակին և չի կարողացել արմատները ավելի խոր կոխել ու ոչ ինձ է թունաւորել ոչ Լատերային: Այդ տեսակ բորբոսը արմատախիլ անելու անգամ կարիք չը կայ, բաւական է միայն փոշու պէս սրբել: Աւելի ճիշտ է Սեւատինակու ասածը այնտեղ, ուր նա սկսում է ինքն իրան նման լինել և հանդէս գալով յանուն իւր դաւանանքի, որ միշտ կրում է սրտումը, ասում է՝

—Եթէ զու քեզ բարձր տիպ ես համարում, եթէ մինչև անգամ ճիշտ որ բարձր տիպ էլ ես, պէտք է ասեմ քեզ, որ այդ տեսակ բարձր միութիւնների գումարից ստացւում է հասարակական մի ուս (բացասական քանակութիւն):

Որ ջհաննամիցն եմ ինձ բարձր տիպ համարում, եթէ միայն Կրօնիցիւ հետ համեմատելու չը լինենք ինձ. բայց էլի Սեւատինակին ճիշտ է ասում: Ինձ նման մարդիկ միայն այն դէպքում մի ուս չեն դառնում, եթէ որ չեն պատկանում անպորտֆեօյ հանճարների դասին, այսինքն եթէ որ մեծ գիտնականներ կամ մեծ

արտիստներ են: Այդ ժամանակ յաճախ մինչև անգամ ընթրումստոր-
ների դեր են կատարում: Իսկով ինձ, ես միմիայն իմ վերաբեր-
մամբ կարող եմ ընթրումստոր լինել: Ամբողջ օրը այդ միտքը չէր
հեռանում զլիսիցս, որովհետև յիրաւի անհաւատալի բան է, որ ինձ
պէս ինքն իւր պակասութիւնները կատարելապէս հասկացող մարդը
ոչ մի միջոց ձեռք չ'առնի նրանց ուղղելու համար: Վերջապէս եթէ
որ այս բոլորիս կէս օր տատանւելիս լինէի՝ տանից դուրս գամ թէ
չէ, հօ կարող էի վզիցս բռնել ու դուրս քշել ինձ փողոց: Ես
սկեպտիկ մարդ եմ—լաւ: Բայց միթէ չեմ կարող ինքս ինձ հրա-
մայել որ այնպէս վարւեմ իբր թէ սկի սկեպտիկ չեմ: Ում պէտքն
է, թէ արդեօք իմ վարմունքս մի քիչ աւելի շատ դրդւած կը լինի
համոզմունքից թէ աւելի քիչ: Ինչ կարող էի անել այ օրինակ
այժմ: Կարող էի ասել, որ բաներս կապեն, ու գնալ Պոշով: Այդ
շատ հիանալի կերպով կարող էի անել: Թէ ինչ դուրս կը գար
դրանից, յետոյ կ'երևէր, բայց զոնէ մի որ և է գործ արած կը լի-
նէի: Ճիշտ է, Մնեատինսկին գրում է, — «Այն կապիկը ամեն օր վայր
ընկած է լինում Պոշովում ու հանդիստ չի տալիս տիկիններին ու
օրիորդին, որոնք առանց այն էլ կարծես գերեզմանից դուրս եկած
լինեն»: Ուրեմն գուցէ ուշ լինի այժմ: Մնեատինսկին չի գրում, թէ
ինչքան ժամանակ առաջ է եղել ինքը Պոշովում, կարծում եմ՝
մէկ կամ երկու շաբաթ սրանից առաջ, այնպէս որ նրանից յետոյ
բանը կարող է շատ առաջ գնացած լինել: Հնչ, բայց ես այդ
չը գիտեմ: Յամենայն դէպս այժմ եղածից վատ էլ ինչ կարող է
պատահել: Զգում եմ, որ քչից-շատից վճռելու եռանդ ունեցողը
վեր կը կենար ու կ'երթար Պոշով, զգում եմ, որ կ'սկսեմ ինքս
ինձ մի քիչ յարգել եթէ այդ անեմ, մանաւանդ որ մինչև անգամ
Մնեատինսկին էլ չի աշխատում համոզել ինձ որ այդ անեմ, —
Մնեատինսկին, որ սակայն շատ եռանդուն մարդ է: Դրա մասին
մտածելուցն անգամ աչքերս պայծառանում են ու այդ պայծառ
լոյսի մէջ այնպիսի մի սիրելի դէմք եմ տեսնում, որ այս բոլորիս
նա ինձ աշխարհումս ամեն բանից քաղցր է թւում, և — per Baccho
(Բաքոսը վկայ) — երևի կը կատարեմ մոբումս դրածը:

9 լունիսի.

«La nuit porte conseil!» (գիշերը լաւ խորհրդատու է): Իս-
 չոյն չեմ գնում Պրոշով, որովհետեւ այդպէս եթէ անէի, կոյրգիւ-
 րոյն վարած կը լինէի, այլ հօրաքրոջս մի երկար նամակ գրեցի
 բոլորովին ուրիշ տեսակ քան Պելիից ուղարկածս: Ութ կամ ամէ-
 նաշաւը տասը օրւայ ընթացքում պէտք է որ պատասխան ստացւի,
 որին նայելով կ'երթամ Պրոշով կամ թէ... չեմ երթալ, և առ-
 հասարակ չը գիտեմ թէ ինչ կ'անեմ: Ես հաւաստի կը լինէի, թէ
 բարեջաշող պատասխան կը ստացւի, եթէ օրինակ այսպէս գրած
 լինէի, — «Աղաչում եմ, սիրելի հօրաքոյր, որ Կրոմիցկու հոռը կտրես
 Պրոշովից»: Անեկայից ներողութիւն եմ խնդրում, սիրում եմ
 նրան ու համաձայնութիւնը խնդրում պատկերել ինձ հետ»: Այդ
 դէպքում խնդիրքս միմիայն այն ժամանակ անհետեւանք կարող էր
 մնալ, եթէ որ նամակս հարսանիքից յետոյ տեղ հասնէր, բայց կար-
 ծում եմ, որ բաները այնտեղ այդքան արագ առաջ գնացած չեն
 լինիլ: Սակայն հօրաքրոջս այդպիսի բան չեմ գրիլ: Նամակս պէտք
 է առաջաւոր գնդի ղեր խաղաց, որ գնում է զօրքի առաջից ու
 հետագօտում է շրջակայքը: Նամակս այնպէս գրեցի, որ հօրաքոյրս
 եթէ ուզենայ պատասխանել, պէտք է ինձ տեղեկութիւն հաղորդի
 ոչ միայն նրա մասին, ինչ որ կատարւում է Պրոշովում, այլ և ինչ
 որ կատարւում է Անեկայի սրտում: Անկեղծ եմ ասում, միայն այն
 պատճառով աւելի վճռական կերպով չը գրեցի, որ փորձը սովորեց-
 րել է ինձ հաւատ չընծայել ինքս ինձ: Ախ, եթէ Անեկան, չը նա-
 յելով այն տոգորութեանը, որ քիչ թէ շատ իրաւացի կերպով կա-
 րող է զգալ դէպի ինձ, մերժէր Կրոմիցկու առաջարկութիւնը, որ-
 չափ շնորհակալ կը լինէի նրանից, որքան կը հեռացնէր այդ նրան
 իմ աչքումն այն հարսնացու օրիորդի անտանելի տիպից, որի միակ
 բաղձանքն ու նպատակը մարդու գնալն է: Երանի ոչինչ իմացած
 չը լինէի այդ Կրոմիցկու մասին: Թոչունի նման թուչելով, հեռա-
 նալով Լաուրացի ոտների մօտից, որ յամենայն դէպս պէտք է պա-
 տահէր, ամենայն հաւանականութեամբ ընկնելու էի Անեկայի ոտ-
 ների մօտ: Աղնահողի հօրաքոյրս ցոյց տւեց, որ շատ ծանր ձեռք
 է ունեցել, զրկելով ինձ Կրոմիցկու ոտնձգութիւնների ու Յելինայի
 նրան հասցրած օգնութեան մասին: Այժմեան ջղային դարում ոչ

միայն կանայքն են միմոզանման ¹⁾), այլ և տղամարդիկ: Բաւական է մի: քիչ կոպիտ կերպով ձեռք տալ, որ մեր հոգին կուչ դայ ու փակւի յաճախ ընդ միշտ: Գիտեմ, որ այդ յիմար ու վատ բան է, բայց այդպէս է: Եթէ ուզենայի ինքս ինձ փոխել, պէտք է դիմէի մի որ և է անատոմի ու նոր ջղեր պատւիրէի, իսկ ունեցածս պէտք է պահէի հազազիւտ դէպքերի համար: Ոչ ոք, մինչև անգամ պանի Մնեատինական, որ այժմ ինձ հրէշ է համարում, դէպի ինձ ինձնից աւելի կրիսիկաբար չի վերաբերւում: Բայց միթէ այդ Կրոմիցկին ինձնից լաւ է: Միթէ նրա յիմար դրամական ներող իմիցս բարձր է: Առանց պարծենկոտութեան կարող եմ ասել, որ նրանից տասնապատիկ աւելի նուրբ զգացմունքներ, աւելի ազնիւ ձգտումներ, աւելի լաւ սիրտ, աւելի քնքշութիւն ունեմ, էլ չեմ ասում այն, որ նրա հարազատ մայրն անգամ չէր կարողանալ չը խոստովանւել որ նա ինձնից յիմար է: Ճիշտ է՝ ես երբեք կեանքումս չեմ տիրանալ միլլիարդի ու մինչև անգամ նրա տասներորդ մասին, բայց Կրոմիցկին էլ դեռ չի տիրացել մինչև անգամ նրա հարիւրերորդ մասին. դրա փոխարէն կարող եմ ասել, որ իմ կինս աւելի ջերմութիւն ու լոյս կը տեսնի կեանքումը քան նրանը, որ իմ կինս աւելի բաց ու արձակ և ազնիւ կեանք կը վարի:

Այս առաջին անգամը չէ ինչ մտքումս ինձ համեմատում եմ Կրոմիցկու հետ, որ մինչև անգամ ինձ զայրացնում է, որովհետեւ ես ինձ Կրոմիցկուց անհամեմատ բարձր էակ եմ համարում: Մենք երկու տարբեր մոլորակների բնակիչ ենք, իսկ գալով մեր հոգիներին համեմատութեանը, նրանց մէջ այնպիսի չարաբերութիւն կայ, որ իմիս հասնելու համար պէտք է սանդուղքով վեր ելնել (որի ժամանակ, խոստովանւում եմ, մարդ կարող է գլխի վրայ գալ), իսկ նրա հոգուն հասնելու համար այնպիսի մարդիկ, ինչպէս օրինակ Անելկան է, անպատճառ պէտք է դաժ իջնեն:

Բայց միթէ այդ շատ դժւար կը լինի նրա համար: Զազրելի հարց: Սակայն այդ կողմից ես այնպիսի անհաւատալի բաներ եմ տեսել, մանաւանդ մեզնում, որ կանայք առհասարակ տղամարդկան-

¹⁾ Միմոզա մի բոյս է, որի տերեւները կուչ են գալիս երբ որ նրանց մի բան դիպչում է:

ցից բարձր են, որ չեմ կարող այդ հարցը չը տալ: Խնչը՝ այնպիսի դէպի ամեն գեղեցիկ ու ընտիր բան ղիւրաղգաց, ազնիւ խանդերով լի, գրեթէ թեւաւոր օրիորդներ եմ տեսել, որոնք ոչ միայն պսակւել են ամենաթուռն անբան անասունների հետ, այլ և հարսանիքի հետեւեալ օրը ընդունել են նրանց կենսական դաւանութիւնը, նրանց զուհկահոգութիւնը, նրանց եսականութիւնը, ունայնութիւնը, սահմանափակութիւնը ու չնչինութիւնը: Աւելի նշանաւորն այն է, որ ոմանք այդ անում էին պարծենկոտութեամբ, կարծես նրանց կարծիքով իրանց առաջնան իղէալներն էլ այնպէս դէն զցելու բաներ լինէին ինչպէս հարսանիքի մրտեայ պսակը: Եւ նրանք հաւատացած էին, թէ հէնց զրանով են լաւ կին դառնում, չը հասկանալով որ իրանք բոլորն էլ զոհում են հոգեկան խանդերը կապկային հակումների: Ճիշտ է՝ յաճախ յետոյ, վաղ թէ ուշ, բէակցիս էր սկսում, բայց ընդհանրապէս առած Շեքսպիրի Տիտանիան ¹⁾ մեղնում այնպիսի սովորական տիպ է, որ անշուշտ ամենքը իրանց կեանքի ընթացքում պատահած կը լինեն այդպիսի կանանց:

Ես ոտից գլուխ ս'իշարիկ եմ, բայց իմ սկեպտիկականութիւնս յառաջանում է չնրանից, որ սիրտս ցաւում է», և իրաւ սաստիկ կսկիծ եմ զգում, երբ որ մոքովս անցնում է, թէ նոյն բանը կարող է պատահել և Անելկային: Գուցէ նա էլ մի ժամանակ ուսերը թափ կը տալ իւր կուսական խանդերը յիշելիս, համոզւած լինելով, որ Թուրքեստանի կապալներն են միայն լուրջ ու իրական բան և որ կեանքում այդ կապալներից դուրս ոչինչ չը կայ, որով արժէր զբաղւել: Վատաղի բարկութիւն է դալիս վրաս, երբ որ միտք եմ անում զրա մասին, մանաւանդ որ եթէ այդ պատահի՝ մասամբ իմ մեղքիցս կը պատահի:

Սակայն միւս կողմից իմ խորհրդածութիւնս ու տարակուսանքներս ծագում են ոչ միայն վճռելու եռանդ չ'ունենալուցս, ինչպէս գրում է Սենտաինսկին, այլ և նոյնպէս մի ուրիշ աղբիւրից: Ես

¹⁾ Շեքսպիրի «Ամարալին գիշերաչ երազ» պիեսից: Ֆէան թողում է Տիտանիալին, որ նա սիրահարւի առաջին պատահած տղամարդու վրայ, և պատահեցնում է նրան մի արհեստաւորի հետ, որի գլուխը էլի գլուխ է դարձրած լինում:

ամուսնութեան մասին այն աստիճան բարձր դադարար ունեւ՝ և այն-
քան բարձր պահանջներ նրա վերաբերմամբ, որ այդ անհամարձակ
է դարձնում ինձ: Գիտեմ, որ երբեմն մարդ ու կին այնպէս են
խրար ընկնում, ինչպէս երկու ծուած տախտակ և այնու ամենայ-
նիւ մի կերպ օրները մթնացնում են, բայց այդ ինձ բաւարարու-
թիւն տալ չի կարող: Հէնց այն պատճառով, որ ընդհանրապէս
թերահաւատութեամբ եմ վերաբերում բախտին, ասում եմ ինձ
ու ինձ՝ չը շտապեմ, թող գոնէ այս բանում բախտս բանի: Բայց
կարող է արդեօք բանել: Չարմացք բան է: Ինձ այսքան երկմտող,
այսքան անվճռական են դարձրել ոչ թէ կեանքիս ընթացքում տե-
սած անցածող ամուսնութիւնները, այլ մի քանի հատ լաւերը,
որովհետեւ նրանք որ միտքս են դալիս՝ հէնց այն ժամանակն եմ
ինձ ու ինձ ասում, — կարող է բախտս բանել, այդ թէօրիայի բան
չէ, պէտք է միայն բաղարել դանել:

11 յունիսի.

Վերջին օրերս Լուկոմսկու հետ շատ մտերմացել ենք: Ինձ մօտ
էլ աւաջւայ պէս լուռ ու խուփ չէ: Նրէկ երեկոյեան մօտս ինձ
մօտ. միասին կամաց-կամաց զնացինք մինչև Կարակալի (թերմերը
1), յետոյ հրաւիրեցի նրան ինձ մօտ ու նստեցինք համարեա մինչև
կէս գիշեր: Նրա հետ մի խօսակցութիւն ունեցանք, որ այժմ գրի
եմ անցնում, որովհետեւ ինձ վերայ մի քիչ տպաւորութիւն գոր-
ծեց: Լուկոմսկին մի քիչ ամաչում էր որ այնքան սաստիկ յուզւել
էր, մեռնող դալի արձանի մօտ, բայց ես գիտմամբ խօսք զցեցի
Լեհաստանի մասին, դուրս քաշեցի նրա բերնից ինչ որ կար սրտի
խորքումը և վերջը, երբ որ մեր յարաբերութիւնը սրտանց դար-
ձաւ, ասացի, — ներէցէք, պան Իւզէֆ, հարցիս համար, բայց ճիշտն
ասած՝ ես չեմ հասկանում, թէ ինչու ձեզ պէս՝ ազգակիցներով ու
հայրենի բաներով շրջապատւած լինելու պահանջ ունեցող մարդը՝
չի աշխատում հայրենակից ամուսին գտնել: Այնպէս հայրենիքի տե-
ղակը տալ որ նա կարող է, չեն տալ ձեզ ոչ ձեր արւեստանոցը, ոչ
ձեր օգնականները, ոչ էլ աւելորդ է մինչև անգամ յիշել, Կրուկն
ու Կուրտան:

1) Հռոմայական բաղանիք:

Լուկոմոսկին ժպտաց ու ցոյց տալով ինձ մատի մատանիքը, ասաց.

— Ես հէնց պսակելու եմ: Սպասում ենք միայն, որ նշանածս հօրը մահւան սգից զուրս զայ: Երկու ամսից յետոյ զնալու եմ նրանց մօտ:

— Սերպի շրջակայքումն են բնակւում:

— Ձէ, նրանց հայրենիքը Վիլիոմերի մօտ է:

— Դուք ինչ բան ունէիք Վիլիոմերում:

— Ես պատահամբ ծանօթացայ նրանց հետ Հոմոնում, (Corso-ում):

— Բախտաւոր պատահումներ է եղել:

— Ամենաբախտաւորը իմ կեանքումս:

— Երեւի կարնաւալի ժամանակ:

— Ձէ, որտեղից: Մի առաւօտ գնում էի via Condotti, մէկ էլ տեսնեմ ինչ որ երկու շիկադէմ կին, ըստ երևոյթին, մայր ու աղջիկ, աղաւաղւած խալերէն լեզւով հարցնում են կապիտոլիումի մասին: Ասում էին՝ «Capitolio», «Capitole», «Capitol» և ոչ ոք նրանց ասածը չէր կարողանում հասկանալ այն հասարակ պատճառով, որ, ինչպէս ձեզ յայտնի է, խալերէն ասում են «Campidolio»: Հասկացայ որ Լեհուհի են, աչքս փորձւած է այդ բանում: Սաստիկ ուրախացան, երբ որ սկսեցի հետները լեհերէն խօսել. ես էլ ուրախացայ և ոչ միայն ճանապարհը ցոյց տւեցի, այլ և տարայ տեղ հասցրեցի նրանց:

— Ձէք կարող երեւակայել, թէ որքան հետաքրքրեցնում է ինձ ձեր պատմածը: Ուրեմն միասին գնացիք:

— Միասին գնացինք: Ճանապարհին տեսնեմ, որ օրիորդս կ'ասես չինար լինի. Ժիր, սիրուն, զլուխը փոքրիկ, ականջները, օրինակացու, արտայայտութիւն ինչքան ուզէք, թերթերունքներն հօհէնց իմանաք ոսկուց լինեն: Այդ տեսակ բան միայն մեզնում է լինում. այդ այստեղ չէք կարող տեսնել, չը գիտեմ թէ գուցէ Վենետիկում կարելի լինի, բայց այն էլ հազարից մի անգամ: Ինձ դուր էր գալիս և այն, որ շատ էր հոգս տանում մօրը, որ շատ դարդոտ էր, որովհետև մարշը նոր էր մեռել: Մտածեցի, որ ազնիւ սրտի տէր պէտք է լինի: Մի շաբաթ նրանց ծառայում էի իբրև չիչերոնէ

(ուղեցոյց), իսկ շաբաթն անցնելուց յետոյ առաջարկութիւն արեցի:

— Ինչպէս, մի շաբաթից յետոյ:

— Հա, որովհետեւ վերադառնալու էիր Ֆլորենցիա:

— Յամենայն դէպս դուք այդպիսի մարդկանց թւին էք պատկանում, որոնք մի բան վճռելուց առաջ երկար ու բարակ խորհրդածել չեն սիրում:

— Եթէ որ հայրենիքում լինէինք, անկասկած աւելի երկար կը քաշէր բանը, բայց այստեղ սիրտս ուզում էր համբուրել նրա ձեռները հէնց միայն նրա համար, որ լեհուհի է...

— Այդ այդպէս է, բայց ամուսնութիւնը այնպիսի յեղաշրջութիւն է մարդու կեանքի մէջ:

— Ճիշտ էք ասում: Բայց ես ինչ խելօք բան պէտք է մտածէի երկու կամ երեք շաբաթում, որը չը կարողանայի մտածել մի շաբաթուայ մէջ: Ասեմք, պէտք է խոստովանեմ, կասկածներ կային սրտումս: Մի քիչ անախորժ է ինձ համար խօսել դրա մասին... Մեր ընտանիքում ժառանգական խլութիւն կայ: Պապս ծեր ժամանակը ոչինչ չէր լսում, հայրս քառասուն տարեկան հասկում խլացաւ... Այդպէս էլ կարելի է ապրել, բայց ինչ էլ լինի այդ ծանր արատ է մանաւանդ շրջապատողների համար, որովհետեւ խուլ մարդիկ դադարած են լինում: Ես կուռում էի այն մտքի հետ, թէ արդեօք իրաւունք ունեմ այդպիսի մի օրիորդի կեանքը կապել ինձպէս մարդու կեանքի հետ, որին հաւանականօրէն այդպիսի խեղութիւն է պատճառում և որի հետ կենակցելը կարող է զժւար լինել:

Միայն այդ ժամանակ նկատեցի, որ երբ որ Լուկումսկու հետ խօսում են, նրա աչքերի արտացոլութեան, զլխի շարժումների ու ականջ դնելու ձևի մէջ այնպիսի մի բան կայ, որ սովորաբար նկատուում է խուլ մարդկանց մէջ: Նրա լսելիքը մինչև այժմ շատ լաւ է եղել, բայց ինչպէս երևում է միշտ հսկելիս է եղել, թէ տեսնի հօ լսելիքը չի թուլանում:

Աշխատում էի նրան հանդատացնել:

— Ես էլ այդպէս էի մտածում, ասաց նա: Միմիայն հաւանական վտանգների համար չ'արժի փչացնել թէ սեփական և թէ ուրիշի կեանքը: Գիտեմք, որ Խալիլայում խօլերա է լինում, բայց հօ յիմարութիւն կը լինէր եթէ որ ոչ մի խտլացի չը պսակէր

այն պատճառով, որ կարող է մեռնել խղերայի ժամանակ և կնոջն ու երեխաներին առանց խնամքի թողնել: Ասենք ինչ որ պարտականութիւնս էր արեցի: Առաջուց ասացի պաննա Վանդային, որ իրան սիրում եմ, որ կեանքս էլ չէի խնայիլ նրա ամուսինը դառնալու համար, բայց այս ինչ ու այս ինչ խոչնդոտները կան: Եւ գիտէք ինչ պատասխանեց: Ասաց, — «Երբ որ չը կարողանամ ձեզ ասել, թէ ձեզ սիրում եմ, կը գրեմ, որ կարդաք»: Բանը առանց արտասուքի չը վերջացաւ, բայց մի ժամ անցած մենք արդէն ծիծաղում էինք այդ ան ու երկիւղի վրայ և ես գիտամք խուլ էի ձեռնում նրան ստիպելու համար, որ գրի՝ «սիրում եմ»:

Այդ խօսակցութիւնը յիշողութեանս մէջ շատ խորը նստեց: Մեռափնակին սխալում է պնդելով թէ մեր ժամանակը միայն էշերն են, որ քչից-շատից կամքի տէր են: Այդ քանդակազործը իսկական պատճառ է ունեցել տատամսելու, բայց մի շաբաթը հերիք է եղել նրան այդպիսի կարևոր վճիռ կայացնելու համար: Կարելի է նրա ինքնադիտակցութիւնը այն աստիճան զարգացած չէ որքան իմն, բայց ոչ ոք չի ասել թէ նա խելօք մարդ չէ: Ինչ կորիճ կին է այդ ապագայ պանի քանդակազործուհին, որքան դուր է դալիս ինձ նրա պատասխանը: Միևնոյն ժամանակը զգում եմ որ Անելկան էլ այդ տեսակ կանանց թւին է պատկանում: Եթէ օրինակ ես կուրանայի, Լաուրան այն չափով կը հետաքրքրէր իմ կուրութեամբ, որ չափ որ այդ դէպքում նա կը կարողանար ինձ խնջոյքում երգեր ասող ֆէակացի Գեֆոդոկի զգեստ հագնել: Բայց Անելկան, նա անշուշտ ինձ չէր թողնիլ հեռանալ, եթէ մինչև անգամ դեռ պսակած էլ չը լինէինք: Գլուխս կը տամ կտրելու, եթէ ճիշտ չեմ ասում:

Պէտք է միայն խոստովանւեմ, որ այդպէս վստահ եղողի համար մի շաբաթ տատանւելն էլ չափազանց շատ է, իսկ ես այս վեցերորդ ամիսն է ինչ տատանւում եմ: մինչև անգամ հօրաբրոջս գրած վերջին նամակս էլ ամենևին վճռական բան չէ:

Սակայն ինքս ինձ մխիթարում եմ մտածելով որ հօրաբրոյս, իբրև խելօք ու ինձ սիրող կին կը հասկանայ թէ ինչ է պէտք ինձ ու իւր իմացածովը ինձ օգնութեան կը հասնի: Բացի այդ՝ սրտումս մի յոյս էլ կայ, թէ Անելկան այդ դործում հօրաբրոջս դաշնակից կը լինի: Ափսոսում եմ այնու ամենայիւ որ նամակը աւելի որոշ

չը գրեցի: Սիրոս ասում է բռնեմ մի նամակ էլ դրեմ, բայց ես այսօր էգուց եմ քցում այդ: Պէտք է սպասել մինչև առաջինի պատասխանը ստացւի: Երանի այն տեսակ մարդկանց, ինչպէս Լուկոմակին է, որոնք հէնց զուգ զործիցն են սկսում:

15 յունիսի.

Ինչ անուն էլ որ տա՛մ դէպի Անեղիան տաճած զգացմունքիս՝ սէր թէ մի ուրիշ անուն—միւնոյնն է՝ ահագին տարբերութիւն եմ տեսնում այդ զգացմունքիս և այն բոլորի մէջ, որոնք մինչև այժմ թուել անց են կացել սրտովս: Առաւօտանից մինչև երեկոյ այդ զգացմունքիս մասին եմ մտածում. նա ծագել ու զարգացել է իմ սեփական աշխատանքով, ես ինքն ինձ իմ առաջ պատասխանատու եմ զգում նրա համար: Այդպիսի բան առաջ սկի չի եղել: Այն առաջւան կապերը կապում, շարունակում ու կտրւում էին թողնելով սրտումս քիչ կամ շատ ախրութիւն, երբեմն քաղցր չիշողութիւն, երբեմն դառնութիւն, բայց երբէք այս աստիճան չէին գրաւել իմ ներքին էութիւնս: Այն անգործ ու աշխարհասէր կեանքում, որ վարում ենք մենք բոլորս, մենք, որ ոչ մի բարձր նպատակի չենք ձգտում, ոչ մի գաղափարի չենք ծառայում և միւնոյն ժամանակ կարիք չ'ունենք հաց վաստակելու համար աշխատելու, կինը երբէք չի հեռանում բեմից, —մարդ շարունակ նայում է նրա վրայ, միշտ պտոյտ — պտոյտ է անում նրա չորս բոլորքը և այն աստիճան սաստիկ շնորհակտում է նրան, որ վերջ ի վերջոյ նրան իւր ամենօրեայ մեղքերի կարգն է դասում: Մենք կանանց խաբելիս այնքան քիչ ենք խղճահարւում, որ գուցէ մեզնից քիչ խղճահարւում են միայն կանայք՝ մեզ խաբելիս: Ես, չը նայելով բնութեանս սաստիկ տպաւորւող լինելուն, նոյնպէս այն մարդկանց թւին եմ պատկանում, որոնց խիղճը այդ կողմից բթացած է: Եղել են դէպքեր, երբ ես ինքս ինձ ասել եմ, —«Ա՛յ ինչ հիանալի առիթ է որ մարդս ինքն իրան մի քանի պաթետիք յանդիմանութիւններ անի», բայց միշտ գերադասել եմ ձեռքս թափ տալ ու մի ուրիշ աւելի զուրեկան բանի մասին մտածել: Այս անգամին այդպէս չէ: Երբեմն միտքս զբաղւած է լինում բոլորովին ուրիշ բանով, մէկ էլ յանկարծ զգում եմ, որ ինձ մի բան պակաս է, վրաս մի տեսակ ան-

հանդատութիւն է զալիս, մի տեսակ վախ, կարծես թէ մի ինչ որ չափազանց կարեւոր բան զանց եմ արել, ինչ որ մի բան մոռացել եմ անել և ես նոյն րոպէին նկատում եմ, որ այդ Անեղկայի մասին մտածմունքս է նորից զուրս զալիս բոլոր ծածկոյթների տակից, որպէս զի ամբողջապէս տիրապետի ինձ: Այդ մտածմունքը գիշերցերեկ շարժ է զալիս իմ մէջ ինչպէս Միցկևիչի պօէմայի ուտիճը գրասեղանում: Երբ որ ուսերս թափ եմ տալիս ու աշխատում եմ նւագեցնել այդ տպաւորութեանս նշանակութիւնը կամ մինչև անգամ ծիծաղել նրա վրայ, սկեպտիկականութիւնս ու հեգնութիւնս ինձ չեն օգնում կամ, աւելի ճիշտն ասած, միայն այնքան ժամանակ են օգնում որքան որ տևում են, որովհետև յետոյ իսկոյն նորից ընկնում եմ կախարդած շրջանի մէջ: Իսկապէս ասած այդ խղճատանջութիւն չէ, ոչ էլ մինչև անգամ խղճահարութիւն, այլ աւելի մոքի տագնապալից փակչումն մի առարկայից և միևնոյն ժամանակը այնպիսի տենդային ու անհանգիստ հետաքրքրութիւն, թէ ինչ է լինելու յետոյ, կարծես թէ կեանքս այդ «յետոյ»-իցն է կախած:

Եթէ որ ինքս ինձ զննելում այնքան վարժ չը լինէի որքան որ եմ, կը կարծէի թէ այդ մեծ ու արտասովոր զգացմունք է, բայց, նկատում եմ, որ այդ խորհրդածութիւններս ու վրդովմունքներս միայն ապագայում Անեղկային տիրանալուն չեն վերաբերում, այլ և ինչ որ մի ուրիշ բանի: Կասկած չկայ, նա ինձ վրայ խոր ու սաստիկ տպաւորութիւն է գործել. բայց Մեհաօինսկին իրաւամբ է ասում, թէ եթէ ես նրան այնքան սաստիկ սիրէի ինչպէս օրինակ ինքն է սիրում իւր կնոջը, նախ և առաջ կը ցանկանայի որ Անեղկան իմն լինի: Իսկ ես, — բոլորովին հաւատալի բան է, — այնքան չեմ փափագում որ նա իմն լինի, որքան վախենում եմ, որ նրանից զրկեմ: Գուցէ ամեն մարդ չը կարողանայ նկատել այդ տարօրինակ ու մեծ տարբերութիւնը: Բայց ես հաստատ համոզւած եմ, որ եթէ Կրոմիցկին չը լինէր, եթէ չը լինէր Անեղկայից զրկելուս հաւանականութիւնը, ես չէի զգալ ոչ այդ վախը, ոչ այդ անհանգստութիւնը: Այդ մի քիչ արձակում է իմ խճճած թելերս, որովհետև համեմատաբար պարզ ապացուցանում է ինձ, որ ես ոչ այնքան սիրում եմ Անեղկային որքան զգում եմ, թէ կարող էի սիրել:

և հէնց այդ է սաստիկ ախտոս զալիս, բախտաւորութեան այդ յոյսս, կեանքս երջանկութեամբ լցնելու այդ միակ առիթը, իսկ աւելի ևս վախենում եմ այն գատարկութիւնից, որ իմ առջևս կը բացւի, եթէ Անելիան ձեռքիցս թռչի:

Նկատել եմ, որ ամենաթունդ պեսսիմիստները, երբ որ բախտը կամ մարդիկ ուզում են նրանցից մի բան խլել, ամենաթունդ օպտիմիստներին էլ լաւ են ձեռք ու ոտքով պաշտպանւում և ձայները երկինք հասցնում: Ես հէնց այդ դրութեան մէջ եմ: Ճիշտ է՝ ես գոռում—գոչում չեմ բարձրացնում, բայց սրտիս վրդով է տիրում, երբ որ մոքովս անցնում է, որ զուցէ մէկ-երկու օրից յետոյ չեմ իմանալ, թէ որ ջուրն ընկնեմ:

16 շուկիսի.

Աղմուսի տեղեկութիւն ստացալ Անելիայի մասին. տեղեկութիւն առողջ նոտարս էր, որ միւսնոցն ժամանակը Դեխնոց դործերն էլ է վարում: Դեխը արդէն զժանոցումն է: Տիկինը բնակում է Ինտերլակէնում՝ Իւնգլիբաուի ստորոտում: Նրեի միտք ունի բարձրանալ նրա զագաթը: Նրեակայում եմ, թէ ինչպէս Լաուրան զարգարւում է Ալպերով, նրանց ձիւնով, մառախուղներով, արշալոյսներով, ինչպէս է զբօսնում լճերում, կանգնում անդունդների բերնին: Նոտարիս յայտնեցի ցաւակցութիւնս դէպի Դեխը և միւսնոցն ժամանակ դէպի տիկինը, որ այդքան ջանել հասակում մնացել է մեռնակ ու անտէր: Ծեր իրաւաբանը հանգստացրեց ինձ տիկնոջ վերաբերմամբ, յայտնելով որ մի շաբաթ առաջ Չիցերիա է զնացել տիկնոջ ազգական նէպոլսեցի կոմս Մալեսկին: Ճանաչում եմ, լաւ եմ ճանաչում: Գեղեցիկ Խաւաքի է Անտինոյի ¹⁾ նման, բայց խաղամուլ և, ինչպէս ասում են, սաստիկ վախկոտ: Քուում է ինձ, թէ մի ժամանակ զուր էի Լաուրային Պիզայի աշտարակ անւանում:

Միանգամայն առաջին անգամն է պատահում ինձ կեանքումս, որ մի կնոջ յիշատակի հետ, որին ճիշտ է չէի սիրում, բայց որին խաբում էի, թէ սիրում եմ, այս տեսակ չարակամութիւն կապւած

¹⁾ Աղբիւս կալուրի սիրելին, որին նա սրա մահից չետոյ աստածների կաբղը դասել տուց (132 թ. թ. ծ. առաջ):

լինի սրտումս: Լաուրացի վերաբերմամբ այնքան ապերախտ եմ և անմեծահոգի, որ մինչև անգամ ամաչում եմ: Իսկն ասած ինչ պատճառ ունեմ ատելու նրան և ինչ չեմ կարողանում ներել նրան: Այն, որ, ինչպես արդէն ասել եմ, մեր յարաբերութեան սկզբից և եթ' ճիշտ է ոչ ուղղակի նրա մեղքիցը, բայց հէնց նրա հետ շրջա-
վելու շնորհիւ հազար ու մի այնպիսի վատ ու անպիտան բաներ եմ արել, որ կեանքումս երբէք արած չեմ եղել: Չը պատկառեցի սգիցս, չը պատկառեցի Դեիսի թուլութիւնիցն ու հիւանդութիւ-
նիցը, մեղիացայ, փչացայ, գրեցի այն չարաբաստիկ նամակը... Այդ բոլորի մեղքը ի հարկէ իմս է: Բայց եթէ կոյրը ճանապարհ գնալիս ոտը քարին խփելով վայր է ընկնում, միշտ քարն է անի-
ծում, թէև իսկպէս վայր ընկնելու պատճառը իւր կոյր լինելն է:

17 Կունիսի.

Այսօր Լուկոմնիւն հասնելիք փողը տարաց իրան, նոտարիս կատարեալ լիազօրութիւն տւեցի, բաներս դարսած-կապած են և ես յամենայն դէպս պատրաստ եմ ճանապարհ ընկնելու: Հռոմը քիչ քիչ անտանելի է դառնում ինձ համար:

18 Կունիսի.

Հաշւեցի տեսայ, որ հօրաքրոջս պատասխանը կարող էր ար-
դէն ստացւած լինել այստեղ: Մի կողմ թողնելով ամենավատ են-
թադրութիւնները, աշխատում եմ գուշակել, թէ արդեօք ինչ է
գրում ինձ հօրաքրոջս: Հաշիւն էլ կորցրել եմ թէ այս քանիերորդ
անգամն է, որ ափսոսում եմ աւելի որոշ չը գրելու համար: Սակայն
գրել եմ, թէ դուցէ գնացի Պլոշով, եթէ հաւատտի լինէի, թէ իմ
ներկայութիւնը անախորժ չի լինիլ հօրաքրոջս հիւրերի համար և
չիշել եմ սրտագին ողջոյն Անելկային ու մօրը: Յիշատակել եմ նոյն-
պէս և նրա մասին, թէ Պելիում կացած վերջին օրերը հիւանդ էի
և այնքան զրգուած, որ ինքս էլ չը գիտէի թէ ինչ եմ անում: Այդ
նամակը՝ գրելիս՝ ինձ շատ խելացի էր թւում, իսկ այժմ երբեմն
չիմարութեան վերջին ծայրն է թւում: Աւղղակի ինքնասիրութիւնս
թոյլ չը տւեց ինձ պարզ ու վճռակի յետ առնել այն, ինչ որ
առաջ Պելիից գրել էի: Յոյս ունէի, թէ հօրաքրոջս կը շտապի օգու-

ւել առաջին պատահած առիթից ամեն բան ուղղելու համար և այն ժամանակ ես մուտք կը գործեմ Պոլշով իբրև մեծահոգի իշխան: Մարդու բնութիւնը շատ անպիտան է: Ինձ մնում է միայն երկու ձեռքով պինդ բռնած կենալ այն յոյսից, թէ այնուամենայնիւ հօրաքոյրս պէտք է հասկանայ, թէ ինչ է ինձ պէտք:

Այժմ երբ իմ անհանգստութիւնս ամեն բոլոր աւելի ու աւելի սաստկանում է, զգում եմ ոչ միայն այն, որ կարող էի Անեկային սաստիկ սիրել, այլ և որ ընդհանրապէս կարող էի անհամեմատ աւելի լաւ լինել քան եմ: Իրաւ, ինչո՞ւ եմ ես այնպէս վարւում. կարծես թէ մէջս բացի եսականութիւնից ու զրգուած ջղերից ոչինչ չկայ: Իսկ եթէ ուրիշ ոչինչ չկայ, ինչու իմ ինքնանալիզս չի ապացուցանում այդ աներկբայաբար: Ամենավերջին եզրակացութիւնների հասնելու քաջութիւն ունեմ ու ճշմարտութիւնը ինձնից չեմ ծածկում և սակայն այդ եզրակացութիւնը միշտ բացասում եմ: Ինչո՞ւ որովհետեւ անյողորդ կերպով հաւատացած եմ, որ ես իմ վարձուներդից լաւ եմ: Վարձուներդիս պատճառը մի տեսակ կենսական անկարութիւն է, որ ծագում է մասաւր ցեղից (race), մասաւր այն դարի հիւանդութիւնից, որի զաւակն եմ ես, այսինքն այն ծայրացեղութեան հասցրած ինքնանալիզից, որ երբեք թոյլ չի տալիս մեզ հետեւել մարդկային բնութեան առաջին, պարզ ճշմարտութիւն, այլ քննադատում է ամեն բան, մինչև որ բոլորովին ուժասպառ է դարձնում հոգին: Երեկոյ ժամանակս ես խաղ էի անում դարսելով փող փողի վրայ մինչև որ սիւնը կռանալով իւր սեփական ծանրութիւնից փլում էր ու անկանոն կոյտ դառնում: Այժմ ես նայեալս իրար վրայ շարում եմ իմ մտքերն ու շիտաւորութիւնները և դարձեալ մինչև որ վայր են թափում խառնիխառն: Ուստի շատ աւելի հեշտ է ինձ համար ոյժերս շարելով մի բացասական գործ կատարել քան դրական, ոչնչացնել քան ստեղծել: Թւում է ինձ, թէ ինտելիգենտ մարդկանցից շատերն են տկար այդ հիւանդութեամբ: Ամեն բանի և մեր սեփական անձի քննադատութիւնը խանձել ոչնչացրել է մեր մէջի դրական ոյժերը. մեջքի յեղարաններ չունենք, սկզբնակէտ չունենք, հաւատ չունենք դէպի կեանքը: Ահա այդ է պատճառը, օրինակ, որ ես այնքան չեմ ուղում Անեկային տիրանալ, որքան վախենում եմ որ նրանից զրկեմ:

Բայց դարիս հիւանդութեան մասին խօսելիս, չեմ ուզում սահմանափակել բացառապէս իմ մասին խօսելով: Որ մարդ մահի՞ծ է մանում հանրախօսի ժամանակ այդ շատ սովորական բան է, — իսկ այժմ ամեն բան քննադատելը ամբողջ աշխարհում տարածւած հանրախօս է: Դրանից ուղղակի հետեւում է այն որ այն զանազան յարկերը, որոնց տակ ապրում էին մարդիկ, փուլ են զալիս նրանց գլխին: Կրօնը, որի նոյն իսկ անունը կապ է նշանակում ¹⁾, քայքայւում է: Հաւատը, մինչև անգամ այն մարդկանց մէջ, որոնք դեռ հաւատում են, անհանգիստ է դարձել: Այն տանիքի միջով, որ հայրենիք է կոչւում, սկսում են կաթկթել սոցիալական հոսանքներ: Միայն մի իդէալ է մնացել, որի առաջ մինչև անգամ ամենաշնորհալի սկեպտիկները զլխարկ են հանում, — ժողովուրդը: Բայց այդ արձանի պատանդանի վրայ զանազան չարածի՛ մարդիկ արդէն սկսում են գրոտել քիչ կամ շատ ցինիկական սրախօսութիւններ, և որ աւելի զարմանալին է՝ կասկածանքի առաջին մշուշները այն զլուխներիցն են բարձրանում, որոնք իրերի բնութեան համաձայն պէտք է որ ամենից ցած խոնարհւէին: Կը զայ վերջ ի վերջոյ մի որ և է հանճարաւոր սկեպտիկ, մի նոր Հէյնէ թուք ու մուր կը թափի այդ կռուքի գլխին, ապաւիններ կ'ուտացնի նրան, ինչպէս այդ իւր ժամանակին արեց Արիստոփանը, բայց կը թքի — կը մրի նրան ոչ յանուն որ և է հին իդէալի, այլ միմիայն յանուն մոքի ազատութեան, յանուն կասկածանքի ազատութեան, և ինչ կը լինի այն ժամանակը՝ չը գիտեմ: Հաւանօրէն այդ ահագին դատարկ էջի վրայ սատանան սոնէտներ կը գրի:

Արդեօք մի ճար կայ գրա գէմ թէ ոչ: Նախ և առաջ ինձ ինչ այդ: Մի որ և է բան կամենալը իմ բանս չէ: Դրա համար ես դարիս շատ լաւ դատաւարակած զաւակ եմ: Սակայն եթէ այն բոլորը, որ մտածւում է, անւում է և կատարւում է՝ ծառայելու է բախտաւորութեան համադրումարի աւելանալուն, այն ժամանակ ես թող կտամ ինձ մի անձնական նկատողութիւն անել, յիշելով հան-

¹⁾ Լեհերէն բելի գիա, որ վերցրած է լատիններէնից և ընդհանուր է եւրոպական լեզուներին:

դերձ որ ես ի նկատի ունեմ մարդուս ոչ թէ նիւթական զրուծիւնը, այլ ներքին անդորրութիւնը, որից կարող եմ ես նոյնպէս զուրկ լինել ինչպէս ուրիշները,—պապս հօրիցս բախտաւոր է եղել, հայրս՝ ինձնից, իսկ իմ որդին, եթէ բան է՝ ունենամ, ուղղակի ողորմելի մարդ կը լինի:

Ֆլորենցիա, 20 լունիսի.

Խաղաթղթից շինած տնակս փուլ եկաւ: Հօրաքրոջիցս նամակ ստացայ: Անեկան պատկուած է Կրոմիցկու հետ. հարսանիքը մի քանի շաբաթից յետոյ կը լինի: Անեկան ինքն է ցանկացել, որ այդքան կարճ ժամանակ նշանակէի: Այդ համբաւը ստանալուց յետոյ նստեցի երկաթուղի և ուղում էի գնալ Պլոշոյ, գիտակցելով հանդերձ, որ այդ ուղևորութիւնս յիմար ու արկածախնդիր քաջ է, որից ոչ մի կարգին բան չուրս չի գալ: Ահա թէ ինչու այժմ Ֆլորենցիայում եմ: Ինչ որ մի ոյժ ինձ գետնից թուցրեց ու քշում-տանում էր, բայց հաւաքելով մէջս մնացած զգաստութիւնս ու խոհմութիւնս, զաղար առայ այստեղ:

Ֆլորենցիա, 22 լունիսի.

Հօրաքրոջս նամակի հետ միաժամանակ ստացայ կանացի ձեռքով հասցէագրւած մի «faire part» ¹⁾: Այդ ոչ Անեկայի բնաւորութեան է համաձայն, ոչ էլ նրա մօր: Նրանցից ոչ մէկը այդպիսի բան չէր անիլ: Հաւանօրէն այդ պանի Մեատիւնսկայի չարակամութեան ու սրամտութեան արդիւնքն է: Ասենք, ինչ էլ լինի՝ ինձ համար միևնոյնն է: Գլխիս մահակի հարւած եմ ստացել, շշմել եմ: Բայց ինչպէս տեսնում եմ՝ այդ աւելի ցնցում է քան ցաւ է սալիս: Չը գիտեմ, ինչպէս կը լինի յետոյ,—գնտակի խփածի ցաւն էլ ասում են սկզբում զգալի չի լինում: Սակայն ոչ գնդակ արձակեցի ճակատիս, ոչ էլ ցնորուցի. նայում եմ ինձ համար Լուսզի, Արնոյի վրայ, մինչև անգամ պատիանս ²⁾ էլ բայց կանէի, եթէ որ իմանայի, մի

¹⁾ Աղղարար ստմասկ (սամուսնութեան, մահւան և ալլն.):

²⁾ Քուղթ բայ անելու մի ձև է, որ չափազանց երկար է տեսում: Պատիանս ֆրանսերէն կը նշանակի՝ համբերութիւն:

խօսքով՝ վատ չեմ... Որ անկեղծ բարեկամների մէջ շները նապաստակին կերան, — այդ հին նաղլ է... ¹⁾ Հօրաքոյրս քրիստոնէական պարտականութիւն է համարել իւր համար կրկնել Անեղկային այն, ինչ որ ես զրել էի Պելիից:

Ֆլորենցիա, 23 յունիսի

Առաւօտեան, երբ որ զարթնում եմ կամ աւելի ճիշտ՝ երբ որ աչքերս բաց եմ անում, պէտք է ինքս ինձ կրկնեմ, թէ այդ այն Անեղկան է Կրոմիցկու հետ պատկուում, այն բարի, սիրող Անեղկան, որ չէր պառկում քնելու, որպէս զի ընդունէր ինձ, երբ որ ես Վարչաւայից Պլոշով վերադառնայի. նա որ նայում էր աչքիս մէջը, լսում էր ինչ որ ասում էի և իւրաքանչիւր հայեացքովը ասում էր ինձ՝ իմն է: Եւ այդ նոյն Անեղկան ոչ միայն պանի Կրոմիցկա կը դառնայ, այլ և հարսանիքից մի շաբաթ անցած անհասկանալի կը թւի նրան թէ ինչպէս կարող էր ինքը տատանւել մի որ և է Պլոշովսկու և Կրոմիցկու պէս Իւպիտերի մէջ ընտրութիւն անելիս: Սակայն տարօրինակ բաներ են կատարւում աշխարհիս երեսին և այնքան սարսափելի անդառնալի կերպով, որ մարդուս ապրելու վերջին ստոր յօժարութիւն էլ կորչում է: Պանի Յելինան ու պանի Սնեատինսկան այժմ անշուշտ Կրոմիցկուն «al pari» ²⁾ են ընդունում ու զիտմամբ բարձրացնում են նրա զինը ի վնաս իմ: Լաւ կանէին զոնէ հանգիստ թողնէին Անեղկային: Սակայն հօրաքոյրս թոյլ է տւել, որ այդ բոլորը կատարւի: Ես զեռ ոչինչ, բայց հօ հօրաքոյրս զիտէ ու տեսնում է, որ Անեղկան չի կարող նրա հետ

¹⁾ Առակ է: Երեւից հալածւած ճապաստակը դիմում է զանազան կենդանիների՝ օգնութիւն խնդրելով. բարեկամական խօսքեր ասողներ չատ են լինում, իսկ օգնող՝ ոչ ոք, աչնպէս որ շները վերջ ի վերջոյ բռնում են նրան:

Մանօթ. թարգմ.

²⁾ Երբ որ թղթադրամի գինը համապատասխանում է համանուն մետաղէ դրամի գնին, օրինակ, երբ որ մի բուլբրիանոց թղթադրամ տալով կարելի է ստանալ մի բուլբրիանոց ոսկի, ասում են՝ թղթադրամը al pari է մետաղադրամի հետ: Նոյնպէս երբ որ փոխանակագիրը ծախւում է աչն դնով, որը նշանակւած է նրա մէջ, ասում են al pari է ծախւում (եթէ աւելի էժան՝ ասում են՝ գիսկանտով է ծախւում, եթէ աւելի թանկ՝ պրեմիալով):

Մանօթ. թարգմ.

երջանիկ լինել: Ինքն է գրում ինձ, թէ Անեղկան յուսահատութիւնիցն է պատկու՞մ նրա հետ:

Ահա այդ անիծեալ երկար նամակը.

«Շնորհակալ եմ վերջին նամակիդ համար, մանաւանդ որ Պելից դրած առաջին նամակդ ոչ միայն վճռական էր, այլ և անգութ: Հաւատալս չէր գալիս, որ դու գէպի Անեղկան ոչ միայն սէր չես զգում, այլ և բարեկամութիւն ու կարեկցութիւն: Ես հօ չէի ուզում, սիրելի Ահօն, և չէի յորդորում քեզ, որ խիոյն առաջարկութիւն անես Անեղկային. ես միմիայն այն էի խնդրում, որ մի քաղցր խօսք գրէիր նրան թէկուզ ոչ ուղղակի, այլ իմ նամակումն: Եւ հաւատա ինձ, այդ էլ բաւական կը լինէր, որովհետեւ նա քեզ այնքան էր սիրում, որքան որ կարող է այգալիսի մի աղջիկ սիրել: Սակայն մոխր իմ գրութեանս մէջ, ինչ պէտք է անէի նամակդ ստանալուց յետոյ. ինչ խղճմանքով պէտք է այնուհետեւ թողնէի որ Անեղկան մնար այն պատրանքների ու միւսնոցն ժամանակը անհանգստութեան մէջ, որ ակներևաբար քայքայում էր նրա առողջութիւնը: Խւատուիսկին նամակները բերելու համար միշտ առանձին մարդ է ուղարկում Վարչաւա և առաւօտեան ինքը հետը բերում է թէյի ժամանակ: Անեղկան տեսել էր որ քեզնից նամակ կայ, որովհետեւ խեղճիկը միշտ Խւատուիսկու ճանապարհը պահում էր ու նրա ձեռքից առնում էր նամակները իբր թէ իմ թէյի սարքի մօտ դնելու, իսկ իսկապէս տեսնելու համար, թէ արդեօք բան կայ քեզնից: Այգալիսով տեսել էր, որ քեզնից նամակ կայ: Թէյը այնպէս էր ածում, որ գդալները պար էին դալիս դաւաթներումը: Ինչ որ մի վառ նախազգացմունք խայթեց ինձ. վարանմունքի մէջ էի, մէկ ուղեցի նամակդ թողնէի յետոյ կարգայի, երբ որ իմ սենեակումը կը լինէի, բայց սիրտս անհանգիստ էր, վախենում էի հիւանդ լինելի, չը կարողացայ դիմանալ: Վկայ է Աստուծ, թէ որքան դժւար էր ինձ համար ոչինչ ցոյց չը տալ երեսանց, մանաւանդ որ զգում էի, որ Անեղկան աչքերը յառել է ինձ վրայ: Բայց մի կերպ յաղթեցի ինձ. մինչև անգամ ասացի՝ «Ահօնը էլի դարդ է անում, բայց փառք Աստծու առողջ է և ձեզ շատ բարեւ է գրումն: Անեղկան հարցրեց իբր թէ սովորական ձայնով՝ «Պեռ երկար կը մնայ Խտալիայում»: Տեսնում էի, թէ որքան բան է պարունակում այդ

հարցի մէջ և քաջութիւն չունեցայ ճիշտն ասելու, մանաւանդ որ խառնուածութիւն ու ծաւալների ներկայութեամբ էինք խօսում. պատասխանեցի թէ՝ «կարճ ժամանակ կը մնայ. կարծում եմ, շուտով ճանապարհ կ'ընկնի գէպի մեզ»։ Պէտք է տեսնէիր թէ ինչպէս բացաւաւոր նրա երեսահարքը, ինչպէս ուրախացաւ, ինչպէս ճիգ էր դրած դնում որ լացը պահի։ Խեղճ աղջիկ։ Իմ լացս զալիս է այժմ, երբ որ յիշում եմ այդ։ Ինչեք քաջեցի սենեակս վերադառնալուց յետոյ, որ ասեմ չես հաւատալ. բայց դու պարզ գրել էիր՝ «Յանկանում եմ նրան բախտաւոր կեանք Արոմիցիոս հետ»—և խղճմանքս ասում էր, որ պէտք էր նրա աչքերը բաց անել։ Հարկաւորութիւն չեղաւ նրան կանչելու, որովհետեւ ինքն եկաւ. այն ժամանակ ասացի նրան՝ «Անելկա, ես գիտեմ, որ դու խելօք, ազնահոգի աղջիկ ես և միշտ հպատակում ես Աստծու կամքին։ Մենք պէտք է իրար հետ անկեղծ խօսենք։ Գիտեմ, որդեակս, որ քո ու Ահմէի մէջ սիրոյ նման մի բան էր սկսում և պէտք է ասեմ քեզ, որ դրանից մեծ՝ սրտի փափագ չունէի, բայց երևի Աստած այդ չէր կամենում. եթէ այդ բանի վերաբերմամբ որ և է յոյսեր դեռ մնացել են սրտումը, ձեռք քաշիր նրանցից»։ Սկսեցի գրկել նրան, որովհետեւ նա մեռելի նման գունատուեց. կարծում էի թէ կ'ուշաթափուի, բայց բարեբախտաբար բանը այդտեղ չը հասաւ։ Նա միայն չփքեց ծնկներին մօտ ու սկսեց անդադար կրկնել՝ «Ինչ է գրել ինձ ասելու»։ Դիմադրում էի, չէի ուզում քո գրածդ բառ առ բառ յայտնել նրան, բայց մտածեցի, որ նրա համար աւելի լաւ կը լինի ճշմարտութիւնը լիովին իմանայ ու վերջապէս ասացի, որ դու նրան բախտաւոր կեանք ես ցանկանում. Արոմիցիոս հետ։ Այդ որ լսեց՝ վեր կացաւ չորած տեղիցն ու մի րոպէ անցած ասաց ինձ բոլորովին ուրիշ ձայնով՝ «Իմ տեղակ նրան շնորհակալութիւն յայտնէք»—և իսկոյն հեռացաւ։ Վախենում եմ ուրախ չը լինիս, որ այդպէս ճշտութեամբ կրկնեցի քո գրածը, առանց մեղմացնելու մի որ և է քաղցր խօսքով, սակայն քանի որ վճռակի հրաժարում ես Անելկայից, ինչքան պարզ ասէի նրան այնքան լաւ էր։ Ինչքան աւելի համոզւած լինի, որ իւր հետ վատ ես վարւել, այնքան շուտով կը մոռանայ քեզ։ Վերջապէս եթէ այդ քեզ անախորժ լինի, մտածիր թէ որքան ոչ միայն անախորժութիւն, այլ և տանջանք-

ներ ենք քաշել մենք երեքս և մանաւանդ Անեղիան: Նա սպասածիցս աւելի է կարողանում իրան զսպել: Ամբողջ օրը աչքերը չոր էին և ոչինչ նկատել չը տւեց մօրը, որը առողջութեան համար սաստիկ վախենում է. միայն սովորականից աւելի էր փաթաթւում նրանից և ինձնից էլ էր փաթաթւում, որ ինձ այնքան յուզեց, որ քիչ էր մնում լաց լինել: Պան Սնեատինսկին, որ նոյն օրը եկաւ մեզ մօտ, Անեղիայի վրայից ոչինչ չը հասկացաւ, մինչև որ ես ինքս նրան պատմեցի, որովհետեւ զիտեմ, որ քո բարեկամն է: Նա սաստիկ վշտացաւ ու սկսեց քեզ այնպէս հաչոյել, որ ես նրա վրայ բարկացայ: Ինչ ասես ասաց, — զիտես էլի թէ ինչ տեսակ մարդ է: Դու որ Անեղիային չես սիրում, չես կարող հասկանալ, թէ որքան բախտաւոր կը լինէիր նրա հետ. բայց լաւ. չէիր անում, սիրելի Լէօն, որ թողնում էիր կարծի, թէ սիրում ես իրան: Միայն նրան չէր այդպէս թւում, մենք բոլորս էլ այդ կարծիքին էինք, իսկ այդ վատ էր, որովհետեւ առաջինը Աստծուն է միայն յայտնի թէ ինչեր քաշեց նա դրա շնորհիւ, իսկ երկրորդը այդ էր պատճառը որ իսկոյն վճռեց ընդունել Կրոմիցկու առաջարկութիւնը: Ես համոզւած եմ, որ նա այդ յուսահատութիւնիցն արեց: Պէտք է որ մօր հետ խօսած լինի նրա մասին և խօսելուց յետոյ վճռած: Կրոմիցկին նամակիդ ստացելու հետեւալ օրն եկաւ: Անեղիան նրա հետ միանգամից այն աստիճան սովորականից տարբեր սկսեց վարուել, որ նա մի շաբաթ անցած առաջարկութիւնն արեց ու համաձայնութիւն ստացաւ: Պան Սնեատինսկին սրանից երկու օր առաջ միայն իմացաւ այդ ու գլխի մազերը պոկում էր, իսկ թէ ես ինչ օրի էի սկզբիցը, ասել չեմ կարող:

«Կեանքումս երբէք այն աստիճան բարկացած չէի եղել քեզ վրայ, որքան այդ ժամանակ, մինչև որ վերջապէս երկրորդ նամակդ մի քիչ մեղմացրեց բարկութիւնս, թէև վերջնականապէս համոզեց ինձ, որ իմ օղային դժբաղնեւրիցս ոչինչ դուրս չի գալու: Պէտք է խոստովանեմ քեզ, որ առաջին նամակիցդ յետոյ, քանի որ դեռ Կրոմիցկին առաջարկութիւնն չէր արել, մտքովս դեռ անցնում էր՝ «Դուցէ Աստուած քաղցր աչքով նայի մեզ և կակղացնի Լէօնի սիրտը: Դուցէ նա բարկութիւնիցն է միայն այդպէս զրել»: Բայց երբ որ յետոյ արդէն կարողացել էիր մէկ-երկու քաղցր խօսք գրել Անեղ-

կային ու ոչինչ յետ չէիր վերցրել առաջին նամակումը զրաժիցի, համոզւեցի, որ էլ ամենեւին յոյս չը պէտք է ունենալ: Անեկայի հարսանիքը յուլիսի 25-ին է լինելու: Ստեմ թէ ինչու է այդպէս շուտ լինելու: Յելինան իսկապէս սաստիկ հիւանդ է, զգում է որ օրհասն եկել է և չի ուզում, որ յետոյ իւր մահւան սգի պատճառով հարսանիքը երկար ժամանակով յետաձգւի. ուզում է որ աչքը խփելուց առաջ աղջկանը տղամարդու թւի տակ տեսնի: Կրօնից-կին շտապում է, որովհետեւ նա արեւելքում կարեւոր գործեր ունի, որ չի կարող երեսի վրայ թողնել, իսկ Անեկան փափագում է, որ քան կարելի է շուտով լսմէ այդ դառնութեան բաժակը: Ախ, սիրելի Լէօն, ինչու գործը այդ ընթացքը ստացաւ, ինչու այդ աղջկը այդքան անբախտ է:

«Երբէք չէի թողնիլ, որ նա պսակէր Կրօնիցիւ հետ, բայց ինչպէս կարող եմ ես մի խօսք էլ է ասել, որ առանց այն էլ մեղաւոր եմ զգում ինձ Անեկայի վերաբերմամբ: Իմ սիրտս սաստիկ ուզում էր քեզ պսակել, և ես չը մտածեցի թէ ինչ հետեւանքներ կարող են ծագել զրանից Անեկայի համար: Մեղքը իմն է, սակայն ես էլ քեզ չեմ տանջում և ամեն օր աղօթք եմ անում Անեկայի համար:

«Նրանք հարսանիքից յետոյ գնալու են Վոլին: Յելինան կը մնայ ինձ մօտ Վարշաւայում. նա ինչ որ խօսում էր Օդեսայի մասին, բայց հազար էլ ասի չեմ թողնիլ որ գնայ: Գիտես, հոգիս, թէ որքան երջանիկ եմ լինում երբ որ քեզ տեսնում եմ, բայց այժմ Պլոշով չը գաս, Անեկայի խաթեր կատարիր այդ խնդիրքս: Եթէ կ'ուզես, ես հարսանիքից յետոյ իսկոյն կը դամ քեզ մօտ. Անեկային պէտք է այժմ խնայել:

Ինչու պէտք է ինքս ինձ խաբեմ: Քանի կարգում եմ այդ նա-նամակը, ուզում եմ զլուխս պատովը տամ և այդ ոչ թէ բարկու-թիւնիցս կամ նախանձիցս, այլ վշտիցս:

Կունիսի 22.

Չէի կարող ձեռներս խաչել ու բոլորովին ընդունել, որ յաղթ-ւած եմ: Եթէ այդ ամուսնութիւնը գլուխ գայ՝ հրէշային ամուս-նութիւն կը լինի: Այսօր, հինգշաբթի, հեռագիր խփեցի Մեատինս-

կուն, որով աղաչում եմ նրան յանուն բոլոր սուրբերի, որ կիրակէ Կրակով զայս ևս ինքս էլ վաղը ճանապարհ կընկնեմ զէպի Կրակով: Խնդրել եմ նրան, որ հեռագրի մասին ոչ ոքի բան չ'ասի: Կը խօսեմ հետը կամ աւելի ճիշտ՝ կ'աղաչեմ - կը պաղատեմ նրան, որ իմ անունիցս խօսի Անեկլայի հետ: Մեծ յոյս ունեմ նրա ազդեցութեան վրայ: Անեկլան չափազանց սիրում ու յարգում է նրան: Հօրաքրոջս չը դիմեցի, որովհետև մենք՝ տղամարդիկս իրար աւելի լաւ ենք հասկանում: Մենատինսկին՝ իբրև հոգեբան՝ աւելի ներողամիտ աչքով կը նայի այն անիծեալ հոգեկան պրոցեսսի վրայ, որ կատարւում էր իմ մէջ վերջերքս: Նրան Լաուրայի մասին էլ կարող եմ ասել, մինչդեռ եթէ նրա անունը տայի հօրաքրոջս մօտ, նա կսկսէր երեսը խաչակնքել: Սկզբում ուզում էի ուղղակի Անեկլային գրել, բայց նամակս ուշադրութիւն կը դարձնէր իւր վրայ, իրարանցում կը գցէր Պրոշովում: Գիտեմ Անեկլայի շիտակութիւնը, գիտեմ որ նա իսկոյն ցոյց կտար նամակը մօրը, իսկ նա չի կարող ինձ չ'ատել և անշուշտ կը շտապէր ծուռը մեկնութիւն տալ նամակիս, Կրոմիցկին էլ ի հարկէ կ'օգնէր նրան այդ բանում: Անհրաժեշտ է, որ Մենատինսկին առանձնակի տեսնւի ու խօսի Անեկլայի հետ: Այդ կարող է յաջողեցնել նրա կինը: Յոյս ունեմ, նա յանձն կ'առնի այդ պատգամաւորութիւնը, թէև շատ լաւ գիտեմ, որ չափազանց փափուկ գործ է: Մի քանի գիշեր է քուն չ'ունեմ: Հէնց որ աչքս խփում եմ, յիշում եմ Անեկլային, նրա դէմքը, մազերը, աչքերը, խօսելու ձևը, ժպիտը, — տեսնում եմ նրան այնպէս, կարծես թէ աչքիս առաջին կանգնած լինի... Ձեմ կարող այսպէս ապրել:

Կրակով, 26 յունիսի.

Մենատինսկին այստեղ է: Յանձն առաւ: Պառակտան երիտասարդ: Ասուած նրան իւր սրտովը տայ: Գիշերւայ ժամի չորսն է, բայց էլի քունս չի տանում, ուստի նստում եմ գրելու քանի որ ուրիշ բան չունեմ անելու: Մենատինսկու հետ մինչև երեքը խօսում, վիճում էինք, զատողութիւն էինք տալիս: Այժմ նա կողեկող է շուռ գալիս կողքիս սենեակումը: Շատ չարչարեցի մինչև համոզեցի նրան: Շարունակ կրկնում էր, թէ՛ «Սիրելիս, ես ինչ իրաւունք ունեմ խառնելու ձեր ընտանեկան շարաքերութիւններին, այն էլ

այսպիսի մի փափուկ դործում: Պաննա Անելկան կարող է մի հար-
ցով փակել իմ բերանը թէ՛ «ձեզ ինչ, պարոն»: Ես այնպէս թունդ
երդում կերայ, թէ Անելկան այդպէս չի ասիլ, կարծես թէ նրանից
ստորագրութիւն ունէի ձեռքիս: Բնդունում էի որ Մեատօինսկու
ասածները իրաւացի են, բայց ասում էի, որ կան դրութիւններ,
երբ չը պէտք է բանի տեղ դնել մինչև անգամ այդպիսի հանգա-
մանքներ: Նրան համոզեց իմ այն պատճառաբանութիւնը, թէ հարցը
իմ մասին չէ, այլ միմիայն Անելկայի, բայց, ընդհանրապէս ասած,
եթէ նա յանձն առաւ նրա հետ խօսել, այդ նրանից է, որ խղճում
է ինձ: Սաստիկ ընկել եմ այս երկու-երեք օրւայ մէջ. Մեատօինսկին
ինքն ասաց ինձ այդ և տեսա՛յ որ նրան այդ յուզել էր: Բացի դրա-
նից՝ նա պատռում է Կրոմիցկուց, որովհետև նրանք երկու բոլորո-
վին տարբեր տիպ են: Մեատօինսկին պնդում է, թէ դրամական սպե-
կուլեացիայով պարապելը միևնոյնն է թէ մարդ ուրիշի զրպանից
փողը դուրս տալ իւր զրպանը լցնի: Նա շատ բանում է մեղադրում
Կրոմիցկուն և այսպէս խօսեց նրա մասին՝ «եթէ որ փող դիզելիս
մի ուր և է բարձր ու ազնիւ նպատակ ունենար՝ կը ներէի նրան այդ.
բայց նա միմիայն փող ունենալու համար է փող դիզում»: Անելկայի
պատկեւելը նրան էլ գրեթէ նոնքան է վրդովում որքան ինձ և նա
այն կարծիքին է, թէ Անելկան իւր ձեռքով իւր համար անբախ-
տութիւն է պատրաստում: Իմ խնդրելովը Մեատօինսկին անմիջապէս
վաղը ծանադարհ կ'ընկնի՝ առաւօտեան դնացքով:

Միւս օրը նա ու կինը Պլոշովում կը լինեն և եթէ անկարելի
լինի այնտեղ ազատ խօսել Անելկայի հետ, մէկ—երկու ժամով նրան
կը տանեն իրանց մօտ: Անելկային նկարագրելու է իմ ասանջանքները,
ասելու է, թէ իմ կեանքը նրա ձեռին է: Նա այդ կը բաշարի անել:
Նա նրա հետ կը խօսի լրջօրէն, քաղցր ու դատողաբար. կ'աշխատի
համոզել նրան թէ ոչ մի կին, թէկուզ սիրտը ամենասաստիկ կեր-
պով խոցւած էլ լինի, իրաւունք չունի պատկեւելու այնպիսի մարդու
հետ, որին նա չի սիրում. թէ այդպէս վարւելով նա կը վարւի կեղ-
ծաւորաբար ու անազնիւ կերպով, թէ նոյնպէս անիրաւ բան կը լինի
նրա կողմից մերժել սիրած մարդուն և սեւացնել նրա կեանքը նրա
համար, որ նա նախանձից կատաղած ժամանակը այնպիսի մի բան
է արել, որի համար զղջում է ի բոլոր սրտէ:

Ի վերջոյ Մեատինսկին ասաց ինձ հետեւեալը.

—Ամեն բան կ'անեմ, միայն թէ մի պայմանով, այն է՝ որ զուինձ ազնիւ խօսք տաս, թէ եթէ բանը անյաջող գնաց, քեզ չես գցիլ Պլոշով ու այնպիսի բաներ անիլ, որոնց համար հօրաքոյրդ, պանի Յելինան ու պաննա Անեկան ստիպւած լինեն տուժել իրանց առողջութեամբ: Կարող ես, եթէ ուզում ես, նամակ գրել պաննա Անեկային, բաց անձամբ չը գաս, մինչև որ նրանից թոյլտուութիւն չը ստանաս:

Խնչ աչքով է նայում նա ինձ վրայ: Խոստացայ, թէև իսկոյն այդ ինձ սկսեց անհանգստացնել: Բաց յուսով եմ Անեկայի սրտի ու Մեատինսկու ճարտարախօսութեան վրայ: Սի, ինչ լեզու ունի: Յամենայն դէպս խոստանում է զոնէ խօսք աւելել Անեկայից, որ կէս տարով յետաձգի հարսանիքը: Եթէ այդ բանին համաձայնի, ես յաղթել եմ, որովհետև Կրոմիցկին անշուշտ ինքն իրան յետ կը քաշուի: Այսօրւան օրը երկար ժամանակ կը յիշեմ: Մեատինսկին իսկական տանջանք տեսած ժամանակը կինարմատի պէս փափկասիրտ է. նա խնայում էր իմ ինքնասիրութիւնս: Սակայն հեշտ բան չէ մարդու համար խոստովանել իւր արած խենթութիւնները, մեղքերը, իւր թոյլ կողմերը և ուրիշի ձեռքը յանձնել իւր բախտը, փոխանակ անձամբ նրա դէմ մաքառելու: Բաց ինչ հոգս է այդ բոլորը, երբ որ հարցը Անեկայի մասին է:

27 լունիսի.

Մեատինսկին գնաց առաւօտեան: Ճանապարհ գցեցի նրան միւլնոյն յանձնարարութիւններով. կարծես թէ նա ապուշ լինէր: Նա, հանաք անելով, ասում էր, որ եթէ նրա պատգամաւորութիւնը յաջողութիւն ունենայ, ես նորից կը սկսեմ փիլիսոփայութիւն անել: Սիրտս ուզում էր ծեծէի նրան: Նա ճանապարհ ընկաւ լի քաղցր յոյսերով. երգում կ'ուտեմ, որ նա հաւատացած է, թէ գործը հիանալի կը գնաց: Նրան ճանապարհ գցելուց յետոյ գնացի Տիրամօր եկեղեցին և ես՝ սկեպտիկս, ես՝ փիլիսոփաս, ես, որ «չը գիտեմ, չը գիտեմ, չը գիտեմ»—պատարագ անել տւեցի Աֆօնի ու Անեկայի համար: Ես ոչ միայն մինչև պատարագի վերջը մնացի, այլ և այժմ դրում եմ զրա մասին սև թանաքով սպիտակ թղթի:

վրայ,—Թող ջառը ջհաննամը դնայ սկեպտիկականութիւնը, փիլիսոփայութիւնն էլ հետը, իմ չը դիտեմն էլ վրադիր:

28 լունիսի.

Ժամի մէկն է՝ կէսօրից յետոյ: Հէնց այժմ պէտք է Սնեատինսկիները ճանապարհ ընկնէին դէպի Պրոշով: Գոնէ մի բանի պէտք է համաձայնի Անեկիան, այն է՝ հարսանիքը յետաձգելուն: Նա իրաւունք չունի այդ խնդիրքս մերժել... Այսօր ամբողջ օրը զանազան մտքեր են գալիս գլուխս: Կրօմիցկին սաստիկ փողասէր մարդ է,—այդ անկասկածելի է,—ինչո՞ւ չի աշխատում հարուստ նշանած գտնել: Անեկիայի կալւածը մեծ կալւած է, բայց պարոք շատ կայ վրան,—ծիշո՞ւ է՝ նա կարող է պէտք գալ Կրօմիցկուն նրա համար, որ նրան թոկից փախած մարդ չը համարեն, որից ոչինչ չի կարելի ստանալ, կարող է նրան օգնել, որ ուսասնականութիւն ձեռք բերի. բայց Կրօմիցկին իբրեւ հարուստ մարդ հռչակ ունեցող կարող էր այդ բոլորը գտնել մեծ օժիտ էլ վրադիր: Ակներեւ է, որ Անեկիան նրան դուր է գալիս և վաղուց է որ դուր է գալիս: Ասենք՝ ինչ զարմանալու բան է, որ Անեկիան դուր է գալիս:

Գլխիս զաղը վեր է կենում, երբ որ մտածում եմ, որ նա սպասում էր մի հատիկ խօսքի իմ բերնից, իբրեւ երջանկութեան, իբրեւ փրկութեան: Հէն է հօրաքոյրս գրում է թէ «խեղճը Խւաստովսկու ճանապարհը պահում էր նամակները ձեռիցն առնելու համար: Սարսափ է տիրում ինձ, թէ այդ բոլորը ինձ չի ներել և թէ ինձ ու ինձ նմաններին կորուստ է ճակատագրւած:

Երեկոյեան ժամի 10-ին.

Յերեկը ջղացաւս բռնեց, գլուխս արաքում էր. այժմ ցաւը անցել է, բայց այդ ցաւից և անքնութիւնից ու անհանգստութիւնից այնպիսի դրութեան մէջ եմ, կարծես հիպնոսահարած լինեմ: Միտքս, մտաչելի և բորբոքւած միմիայն մի մտածմունքի վրայ, այնպէս պարզ է տեսնում ինչ որ լինելու է, ինչպէս երբեք չի տեսել: Ուղղակի ինձ թւում է, թէ Պրոշովումն եմ, թէ լսում եմ այն ինչ որ Անեկիան պատասխանում է Սնեատինսկուն—և չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպէս կարող էի ես սխալւել: Նա

ինձ չի խղճալ: Այդ ենթադրութիւնն չէ, այլ կատարեալ հաւաստիութիւն... Յիրաւի ինչ որ արտասովոր բան է կատարուում իմ մէջ: Մէջս այնպիսի սարսափելի լրջութիւն եմ զգում, կարծես թէ մինչև այժմ երեխայ էի,—և միևնոյն ժամանակը սիրտս չափազանց տխուր է: Կարծում եմ, որ կը հիւսնդանամ: Մտաւրիակուց խօսք առաջ, որ իսկոյն կը հեռագրի: Մինչև այժմ հեռագիր չը կայ, թէև, իսկապէս ասած, նրանից ոչ մի նոր բան չեմ իմանալու:

29 յունիսի.

Մտաւրիակու հեռագիրը ստացեցի, ահա ինչ է գրում.

—«Աշխատանքս զուր անցաւ, ոյժերդ հաւաքիր ու դնա ճանապարհորդելու»:

Այդպէս էլ կ'անեմ, իմ Անեղիս:

(Վերջ առաջին մասի):

ՆԿԱՐԻՉ Գ. ԲԱՇԽՆՋԱՂԵԱՆԻ

„ՁՈՐԱԳԵՏԸ ԳԻՇԵՐՈՎ“

ՆԿԱՐԻ ԱՌՋԵՆԻ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Արտիստ, քաջերի այս ձորն ահարկու
Իւր բնավայրից փոխադրելու դու.
Մեծ է արդարեւ, մեծ է քո հոգին,
Որ ընդգրկել է ժայռերն ահագին
Իրանց սեպհական խոր մտածմունքով,
Փրփրուն զետը փայլուն ծփանքով,
Լուսին-աստղերով կամարը երկնի
Եւ համառարած խաւարն ահռելի...
Լուռ հանգստութիւն — գիշեր է մթին.
Հանգստանում է նաեւ իմ հոգին:

Բայց ահա, այնտեղ, ձորի խորքերում
Մի մենակ վառւող լոյս է երևում.
Այո, մի խուղ կայ այն ձորի միջին,
Գուռ ճանաչում ես նորա բնակչին...
Ո՛հ, չեմ ճանաչում -- անծանօթ ես դու,
Բայց թէ գիշերը և նրա հոգու
Կարողանայիր տեսնել և զգալ —
Հանգստութիւն չէիր նայողին դու տալ:

ՐՈՄԱՆՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Երկու աչքով լալիս էր նա.
Վճիտ կաթիլքն արտասրի
Թափւում էին կրճքի վերայ
Սև աչքերից այն կուսի:

Նուրբ շրթունքը այրւում էին
Մատաղ սրտի կրակից,
Եւ համարձակ իմ առաջին
Լալով պատմում էր նա ինձ:

Ես ակնապիշ լսում էի
Այն պատկերով հիացած,
Եւ յիշում եմ միմիայն վերջի
Նրա խօսքերն, որ ասաց՝—

«...Ախ, չարտասուել ես չեմ կարող,
Ծանր է ապրել սիրազուրկ...»
Եւ բարձրաձայն հեկեկալով
Դարձեալ թափեց արտասուք:

1892 թ., փետրվարի 13:

ՃԱՆԱՊԱՐՅՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Պ Ե Տ Օ Ի

(Հարուհակութիւն ¹⁾)

Կէս օրին պատահեցինք մի փոքրիկ առւակի, հանգիստ առանք, նախաճաշեցինք: Խօսք բացեց ալն բանի մասին, թէ թուրքն ինչու է հալի հացին «մուրտառ» ասում, քանի որ իրանք տաան անգամ աւելի կեղտոտ, մուրտառ են հալից: Մեր ձիապանն ուղելով ասպացուցանել դործ-նականապէս, որ ինքը հալին մուրտառ չի համարում, մօտեցաւ և մեր հացից մի պատառ դրեց բերանը: Մի փոքր ցետոյ ընկերս, զարմանալով, ինձ դրդեց հէնց ալն վարկեանին, երբ թուրքը ծածուկ հացը բերնից թափում էր առւի մէջ և ապա բերանն էլ մաքուր լւաց: Նորից ճանապարհ ընկանք, ալժմ Միլլիւղ դաշտը կտրում ենք լաջուլթեամբ: Պնում ենք, դնում, վերջ չը կալ, արեղակն ալրում է, մենք բաւականին չողնել ենք: Ակսեցինք ձին արագ քշել և նոյն իսկ մի քիչ վազեցնել, բայց որովհետեւ տնճոռնի փալանով բոլորովին անլարմար էր քշել, ընկերոջս ձիու փալանը չուռ եկաւ և ինքը թրմիաց դետին: Մեր թուրքը հետեւորդն է, պէտք է խոտտովանել հիանալի քալող է, ձիաները սովորական արագութեամբ հազիւ նրան հետևում էին: Արդէն վստօն վերստ անցել էինք և նրա վրայ չողնածութեան նշուլ չի երևում: Նա սաստիկ խղճահարւեցի և չալանցի նրան, որ մի բան աւելի կը տամ:

Մօտ ժամը 4-ին Կոտուր պղտոր գետն անցանք և իջևանեցինք նրա ափին կառուցած Լաօղլի գիւղը: Զիւաներից վալը դալուն պէս միւլ չրջապատուցին պարսիկները: Ամենքը ալքերը չորս արած, չւած նստում էին

¹⁾ Տես «Մուրճ» 1891 թ. № 11:

մեղ և մեր շորերին: Զգւեցրին իրանց հարցերով: «Գու՞ք անպատճառ «թթալգոսն» (աֆն կողմից) էք գալիս, Թիֆլիզից, հա՞յ մարդիկ էք: Ո՞ւր էք գնում, ի՞նչ գործի էք, առաւօտը գիշերով պիտի գնաք, այս «ղամէն» քանիսի էք առել, էօֆ, ալդ բկով («էքմէքն») ինչ լաւ են, քանիտով էք առել և ալէն:

Նւ ալդ ամենքը հաղնւած էին շատ վատ, անճոռնի, անճաշակ ու կեղտոտ: Աղտոտ թաղիքէ գլխարկի, զօլաւոր չալից թիկնոց, որը մի քիչ նմանութիւն ունի ժակետի, առանց թեկի, որ քեաղախա է կոչւում, լաֆն անշնորհք արխալուզ բաց կանաչ, կամ սպիտակաւուն գոյնով, կարճ սպիտակ կտաւից վարտիկ, աֆնպէս որ սրունքների վարի մասը միշտ բաց երևում է: Ոտներն Աստուած հեռու տանի: Գուլպաների բկները չեն կապում, ոտնամանները անճոռնի, հաստ ու տձև բաներ են, որոնց կրունկները միշտ ծաււած է, որովհետև տան մէջ սովորութիւն ունին ծաւալատիկ նստելու, ուրեմն և շուտ-շուտ հանել հագնելու: Գրանք շատ անգարմար են քաշկելու համար: Նս երկու օրւա՞յ ընթացքում բաւական մօտ լինելով դրանց, ոչ մի լաւ բան չը տեսա՞յ դրանց մէջ, դրանք սաստիկ ատելի դարձան ինձ: Մի լաւ լատիութիւն, որ աչքի էր ընկնում, աֆն էր, որ հողի հետ կապւած են, մշակում են, բազց որովհետև խաների ճորտերն են, սաստիկ հարստահարւում են, աղքատ են:

Մոռացա՞յ ասել, որ հրացանից զատ մեր պաշտպանութեան գէնքն էր՝ հեղինակութիւնից օգուժել: Մենք արդէն կնքւած էինք: Նս մի լալանի վաճառականի, որ Պարոկաստանում մեծ անուն ունի, մարդն էի, իսկ միւսը մի իշխանի գործակալատարը: Նրբ հարցնում էին, թէ ով էք, ես իսկոյն հպարտութեամբ պատասխանում էի այս ինչ նշանաւոր վաճառականի մարդն եմ: Կարծես զբանով մի քիչ զսպում էինք նրանց վատ դիտաւորութիւնները:

Նոր-նոր խումբեր էին գալիս մեզի տեսութեան, ես ձանձրացա՞յ ու ներս մտնելով տուն, բուրկէս (եաֆնջի փռեցի ու պարկեցի հանդստանալու: Ճանճերից ազատ մնալու համար, թաշկինակս քաշեցի երեսիս: Երոպէից վատը իրար ետևից ներս մտան երկու պարտիկ: Տասը բոպէի չափ խօսելով մեր ու շոչերի մասին ինձ ձայն տւին հետս խօսելու: Նս լռեցի, իբր թէ քնած եմ: Հաւաստիանալով, թէ արդէն անուշ քուն եմ մտել, նրանից մէկն առաջարկեց իւր սովորական ու շատ պարզ ծրագիրը. «Նիթ սրանք առաւօտը մի քիչ վաղ ճանապարհ ընկնեն. ես ու Գեամիլը «աֆնալուով» ¹⁾² աղաճ հեռու, (աղաճը 7 վերստ է) ձորի մէջ կը խլենք սրանց բոլոր շորերը՝ ինչպէս երևում է բաւականին փող էլ պիտի ունենան: Նիթ զիմաղրեն ես կը խօսեմ: Պէտք է առաջուց ձիապանի համաձայնութիւնը տանել, որ շուտ ճանապարհ ընկնեն նրան էլ բաժին կը տանք, սուջեցի չէ, ուրախութեամբ կը համաձայնի»: Հետաքրքիր է լսել, թէ ինչպէս դադատուկ և ուշադրութեամբ էին կապում այս գաւաղրութիւնը: Գրանց բարի գիտաւորութիւնը լալանից ընկելով: Մի ժամ՝ չափ առանձին

հանգստութիւն հազիւ կարողացանք վազելել: Թէկի ժամանակ դարձեալ սկսեցին կուտալու մեր գլխին: Ամեն մի ներս մտնող պարսկին բարեւում էր «սալամն ալէքում» բառերով, իսկ քրիստոնեաներիս, «Ալլահ սալւան»: Այդ բոլոր պարոններն հերթով, իրանց լատուկ բաժակներով, սկսեցին մեզ հետ թէլ անուշ անել: Շաքարն ալգքան բաղմութեանը չը բաւականանալով, մենք սկսեցինք կծովի խմել, բայց նրանք դարձեալ իրանց էջն էին քշում: Պարսկաստանում ամեն տեղ թէկի համար գործ են ածում փոքրիկ բաժակներ, Ռուսաստանում դրանցով միայն զինի են խմում, ամեն մի մարդ խմում է երկու բաժակ և շատ քաղցր, մինչև չիրին (քաղցր) և մուգ գոյնով չը լինի, չեն խմի: Կնչպէս երևում է այս երկրում թէլը ոչ թէ գործ է ածում զխաւորապէս ջրի կարիքը լցուցանելու համար, ալ իրեն մի քաղցր ըմպելիք, չէրէթ: Այդ ժամանակ ներս մտաւ մի պարսիկ ևս, որը իւր անձուռնի քրքրած շարերով բոլորովին չէր տարբերում մեր միւս 8 բարեկամներից, միայն մաշած, կարմիր ուտադիրներից և անշնորհք զամալից երևում էր, որ դա զինուոր պէտք է լինի: Ամենքը բոլորեցին թուրքի շուրջը և սկսեցին ամեն մէկն իրանց տեսածն ու լաածը պատմել՝ չալանի աւաղակ Վեարիմի, խամպելի և ալ քաջերի մասին էր խօսքը: Ամբողջ երկու ժամ սպանութիւնների, թալանի, գողութեան, աղջիկ փախցնելու մասին էին պատմում մի առանձին ողետրութեամբ: Այդ նկատելի էր շատ սեղեր: Երեք պարսիկ պատանիներ 14-ից 16 տարեկան դրանց քամակին կուչ եկած ուշադրութեամբ լսում էին ալ բարոյական-հերոսական պատմութիւնները, որպէս զի 20 տարեկան դառնալուն պէս, ձի և «ալիալու» ճարեն իրանց գաղափարական նախորդներին նմանեցնում... Արդիսի աւանդութիւններով է կրթւում պարսիկ մատաղ սերունդը: Տան միւս անկիւնում աչքի էին ընկնում դարձեալ նոյն թշաւաւ արարածները մերկ սրունքներով, բոբիկ, աղտոտ շարերով: Նրանց մէջ ամենից շատ հարստահարւածները ուրիշների անառնական կիրքեր, չաղեցնելուց անառնական կարիքը լցուցանելուց, և տնակին ստրկական ծանր աշխատութիւնից զատ ուրիշ բաժին չունէին... Գրանց կեանքը տեսնելը շատ դժւար է, սաստիկ խոլս են տալիս քրիստոնեաներից:

Մեր զաւաղիրների ծրագիրը քանդելու համար՝ արեւածաղին դուրս եկանք: Նստրէն պատրաստուում եմ մի բա՝ վճարել տանտիրոջը չը վերաւորելու համար. միւս կողմից ընկերս չալտնում է, թէ գիշերելու համար փող են ուղում, կարծեմ հաշ կամ վրացի գիւղացին ալոպէս չէր վարել, մանաւանդ որ բոլոր ծախսը մերն էր: Գիւղից դուրս մեզ միացաւ և մի ուրիշ ձիաւոր հրացանով, որը նոյնպէս վտանգի համար ուշ էր գուրս եկել:

Միլիլուղը հիւսիսից հարաւ ձգւելով, մի ձիւղ ևս արձակում էր Էւզղլու մօտից դէպի արեւմուտք, որը կազմում է Կոտուրի հովիտը: Մեր առաջ քացւում էր մի հրաշալի տեսարան, ալ ևս անպատու Միլիլուղը չէ: Հեռուից երևում են պարսիկ զիւղերը ծառերի ալիքների մէջ խեղդում: Մե-

ճանապարհը շարունակ կտրում են անհամար փոքրիկ ջրանցքներ, առակներ, որոնք խոխովալով սփռում են աշնանացանների և ծառատունկերի մէջ: Այդ բոլոր ջրերը օգտաւէտ կոտորինն են: (Ռուսները իրանց քարտէզներում սրան անւանում են *Копейки воды*): Գետի երկու կողմերն էլ ծածկւած են մշակւած սրտերով ու ծառերով: Լսելի է կաքաների երգը, նրանք ողջունում են արևին: Ահա մեծ-մեծ խմբերով թռչում են մեր գլխի վերևից: Նրանք սփռւած են և ճանապարհի երկու կողմերի արտերում, 15 քաչ մկղանից հեռու, անխափ կերակուր են որոնում: Զարմանալի բան է, երբի աչս կողմերում որս անելու սովորութիւն չը կա: Փանի առաջ էինք գնում, առնքան դաշտը դեղեցկանում, լաչնանում է և ոլորւելով ձգւում է դէպի հարաւ, իւր մալը դաշտի, Մելլիւլի հետ զուգահեռական գիծ կազմելով: Սա իւր մէջ առնելով Խոյ քաղաքը, տարածւում է մինչև Սալմաստի մօտերը, Հառանք առաջին հալ գիւղը (կէսը թուրք), Մահլազան, Նախկին Մաղանդարան: Մինչև այստեղ բոլոր գիւղերը պարսկական էին: Մահլազտնի հալերը աչս տարի, բաւական փող պոկելով կաթողիկներից, թողել են լուսաւորչական կրօնը:

Ընկերս ինձ շարունակ ցոյց էր տալիս ճանապարհի աջ և ձախ կողմերում գիւղեր, որոնք առաջ հալոց են եղել: Գրանց մէջ տեղ-տեղ վանքերի հետքեր կան: Այդ բոլորը 1828 թւականի ռուս-պարսկական պատերազմի մեծ դաղթականութեան տխուր հետքերն են:

Շատերը լաւ լիչում են աղ սնողորմ գաղթականութիւնը և նրանից չառաջացած թշուառութիւնները... Համարեա Ատրպատականի բոլոր հուգերը շարժւել, դեղահան են եղել, հիմիկալ մնացածներն աչն ժամանակաւ փշրանքներն են միալն: Ոմանք մնացել են պարսից կառավարութեան և իսաների չորդորմամբ, կամ սպառնալիքով. կամ թէ գեներալ Վաղարեւի ոտքն աչնտեղ չի ընկել, ոմանք ընդհանուր շարժումից, կարաւանից վտո են մնացել, ու վախից ձէնները փորը քաշել: Ոմանք Արաքսն անցնելու ժամանակ իրանց հալը, որդին կամ քույրը խեղդւելով, թքել վտ են դարձել: Առհասարակ սոսկումով են վիչում աղ աղգւււր գաղթականութիւնը:

Գաղթողներն առհասարակ ընակութիւն են հաստատել Նրեանեան Նահանգում: Նախչւանի շրջականերում ամբողջ գիւղեր կալ որ զուտ աղ գաղթականութիւնից են: Ժամը երկուսին իջանք Սէլաւար գիւղը մեր ծաշօթի տանը: Զարմացալ, երբ ամբողջ երկու օր ճանապարհորդելով պարսից կեղտոտ գիւղերով, չանկարծ մտնում եմ մի գիւղ, որը լաւ տներ, նոն իսկ կանոնաւոր սենեակներ ունի:

Մեր բռնած սենեակը կանոնաւոր, եւրոպական ձևով է շինւած, միալն ճաշակը պարսկական, ունէր երեք լուսամուտներ, որոնցից երկու կողմինը շափաւոր մեծութեամբ, իսկ մէջ տեղինը շատ լաչն և միապաղաղ ասպակու տեղ, դարդարւած էր կարմիր, կանաչ, կապուտ գոնաւոր փոքր

ապակիներով, որոնք կաղմում են զանազան գեղեցիկ նաշխեր: Լուսամուտ-
ների վերին մասը կամարածն է և սպիտակ ապակիները քառորդ թերթից
շատ փոքր են: Յատակը ցեխով պինդ և կոկ սրւաղած է, նրա վրայ սփռած
հատիկ, ապա կապերտներ, իսկ բոլորի երեսից սենեակի երկու կողմի եր-
կարութեամբ զարդարւած պարսկական գովական գորգերով: Վերին ճա-
կատում ճաշակով շինւած է բուխարիկ (օջախ), պատերը շատ կանոնաւոր
և սպիտակացրած: Առհասարակ բնակարանում տիրապետում էր վաղելուչ
մաքրութիւն:

Ճան միւս մասերը կաղմում են—մի մեծ ու ընդարձակ սրահ, որի
բարձրութիւնը հասնում է $2-2\frac{1}{2}$ սաժէնի: Նրեք կողմից պատերն են,
առաջին կողմը բաց է, որն ուղղւած է միշտ դէպի հիւսիս: Այդ տեղ թաղ-
ւած են մեծ և փոքր թոնիրներ, առանձն ալյուտեղ են նստում: Սրահից մի
անգլին, հաստ ու ծանր դուռ բացւում է դէպի մի ուրիշ, երկու անգամ
աւելի մեծ բաժանմունք, որ տուն է կոչւում: Սա էլ նոյն անագին բարձ-
րութիւնն ունի: Ակառայ մտածում ես, թէ սա երկկարկանի փառաւոր տուն
կարելի է դարձնել: Ալյուտեղ և միւս փոքր բաժիններում են տեղաւորում բո-
լոր պաշարեղէնները: Զմեռը սրահից, կամ երկկարկանի սենեակներից տե-
ղափոխւում են տունը: Պատերն, սկսած Նրեանի նահանգից, շինում են
սպիտակաւուն ցեխից, նրանց բարձրութիւնը $2-3$ սաժէն է:

Մինչև Սէլդաւար էինք խօսացել քերադարի հետ: Հաշւեցի 15 կռան
երկու հողու համար և երկու կռան (30 կոպ.) էլ իմ խօստացած ընծան, 17
կռան տւեցի նրան: Վերջինս իշխանաբար գոռաց և լանդզնաբար փո-
ղերը շարտեց սենեակի մէջ: «Այս ի՞նչ ես տալիս, փահ, ես ձեզ սաղ սա-
լամաթ տեղ եմ հասցրել, դուք մարդ պիտի վարձէիք, ես երեխայ եմ,
վերջապէս ամեն մէկդ 5 ռուբլուց պակաս չի լինի, վերջացրեց մեր պա-
րոնը կտրուի ու ձաջն աւելի բարձրացնելով:—«Վալրենի, բարկացա՛յ ես
և իրանից աւելի բարձր բղաւցի, քանի կռան է վարձդ, 15, երկու կռան
էլ աւել: «Դու ի՞նչ խօստացել ես, ես ձեզ սալամաթ եմ բերել:—«Վո՛ր, չեմ
չեմ ուղում՝ ալք երկու աւելի կռանն էլ կառնեմ»: Այս խօսքերից չետոյ
ես ուշադրութիւն չը դարձնելով նրա ճղաւցին, սկսեցի հանդարտ խօսակ-
ցել ներկայ եղողներին հետ: Նա երբեմն-երբեմն անի էր անում և մոմուում,
երևի ափսոսում էր, որ մեզ պէս լաւ որսը ձեռքից բաց է թողնում, ին-
չու չը թալանել մեզ: Մի փոքր չետոյ թունալից և վրեժառու հալեացք
ձգելով մեր վրայ, փողերն հաւաքեց, ու առանց շնորհակալութիւն կամ մնաս
բարեւ ասելու գուրս ծկեց: Նստողէն ընտելացի էի պաշտպանութեան զէն-
քի հետ՝ աւելի բարձր բղաւել, մէկի հետ՝ տասն ասել և աչն ժամանակ
պարսիկն անշուշտ կը զիջանի: Այդ օրը Սէլդաբազում հանգստանալով լաւ
հետաքրքրական և, ինչպէս ասում են, լիախորտ կերակուելով, միւս օրը
ճանապարհ ընկանք Խոյ, որը երեք վերստ հեռու է: Այդ քաղաքը երկու
սաժէն բարձրութեամբ ցեխի սլաքսով է պատած, ունի բուրջներ (աշ-

տարակ): Վարդապետից մօտեցել էինք, երբ լանկարծ վրա հասան, երեք տղորական հագուստով, պարսիկներ, մէկը խուրճիկներ, միւսը մափրաշը, երրորդը բուրվաններու սկսեցին քրքրել: Նրանց փալտն կոծակներէից երևաց, որ ծառադուղներ էին: Քաղաքում մեր առաջ ներկայանում էին թէև նեղլիկ, բայց բաւականին կանոնաւոր փողոցներ, որոնց երկու կողմերից հասում էին առևտրներ: Շուկան ներկայացնում է մի քանի փոքրիկ իրար կտրող փողոցներ, որոնք վերելից ծածկած են: Ահաւոր կառարկապէս տիրապետում է ամեն տեղ, շատ խուլ անկուններից դարձահատու թիւն է բուրում: Հաջող թաղը դնալու համար շեղակցինք բազարից: Մի նեղ քուշում մեր վրա լարձակեցան մի քանի կանաչ, ընկերա առաջ էր դնում, քաշ ընկան խուրճիկից և շորերից: Սկզբում ես դարձանում եմ, մտածում եմ, չը լինի ընկերա նրանց խօսքով վիրաւորել է կամ մի ուրիշ բան է պատահել, բայց երբ նոյն վարկունքն իմ առաջ պատկերացաւ, հատկացաւ որ աղքատներ են: Նրանք հինգ-վեց հողի էին, աղմկալու խնդրելով, ժըմբէլով կախ էին ընկնում, քիչ էր մնում ձիւղ վաչ բերէին: Ընդամենը մի քանի ժամ պիտի մնալինք խոլում, աղ պատճառով շտապեցի տեսնել հաջող թաղը, զպրոցն ու եկեղեցին: Նրեկոյեան զանգերի ժամանակ, երբ հաղիւ լսում էր տախտակների, կոշակի խուլ չխկնկոյցը (զանգակներ և կաթնուղիէ չը կա), շտապեցի եկեղեցի: Դու ներս չը մտած, ախանջիւ հասաւ մի տարօրինակ աղմուկ, ճըղճըց, տիրացուն և աշակերտները միասին երգում էին... Ներսում ոչ ոք չը կար: Եկեղեցին շատ անշուք էր: Բակում գտնւում էր զպրոցը, ճիշդ տէր Թողիկի զպրոց: Մատնաչափ թողոտ ու կեղտոտ լատակի վրա մաշած մինդարներ, մի թշառ, բոլորովին անպէտք տիրացու իւր նոյնքան թշառ աշակերտներով... Աղ բոլորը ճշող տպաւորութիւն է թողնում: Քաղաքից դուրս կան երեք թաղեր, հալերը բնակում են ներքին և վերին «մահլա» կոչւած թաղերում, 80 տուն են. մեծ մասամբ արհեստաւորներ են և վատ համբաւ են վայելում Պարսկաստանի հալերի մէջ: Խալից արտահանում է բամբակ, չիլա, մանած, չիր և ալին գէպի վան, Ալաշկերտ, Էրզրում ու Նրեան: Արտահանողները մեծ մասամբ թուրքեր են: Յերեկը ժամը երեքին դնացի շուկայ, մի հալ վաճառականի խանութ, ուր հաւաքւած էին մի քանի հալեր և խօսում էին Պոլսի և Էրզրումի գէպերի մասին: Դրանց լեզուն սաստիկ աղճատւած է, հաղիւ կարողանում եմ հասկանալ: Մի պարսիկ մօտ 40 տարեկան, լղար և բաւականին անամօթ գէմքով մօտեցաւ մեզ: Նա քիթի տակին լնչ որ մի բան է եղանակում, երեւի մեղ օրհնում է: Կողքին քաշ է արած մի փոքրիկ անօթ, որը կոչւում է «քեաշիլի», դա հնդկական ընկողի կեղև է, և ունի 3 վերջույ տրամագիծ: Նրկար կանոնեց, առանց ամաչելու հալեացքը մէկից միւսի վերալ էր փոխում, վերջապէս կանգ տուաւ իմ վերալ, երեւի հասկացաւ, որ նորեկ եմ և իւր ձեռքի մի փունջ համեմից մի քանի հատ առաջարկեց ինձ: Այն ընդունեմ, նշանա-

Կում է մի բան ողորմութիւն պիտի տամ նրան: Հանգամանքին տեղեակ չը լինելով, նստում է խօսակիցների երեսին, թէ այս ինչ է նշանակում: Ինձ այդ դրութիւնից ազատելու համար, մինը սև փող տւեց, որ այդ պարոնը խօսուի ձգեց «քեաշկիւլ» մէջ և հեռացաւ: Ողորմութիւն հաւաքելու ժամանակ սրահանջող զիրք են բռնում:

Այդպիսիներին անւանում են «լարւիչ», որ մեր ճգնաւորների նշանակութիւնն ունի: Այդպիսի հացխտտակ զարւիչներով վիտտում են Պարսկաստանի փաքիկ քաղաքներն ու գիւղերը:

Խօլի ժողովրդի ազամարդիկ ղեղնած և գունաթափ են, իսկ կանայք առողջ, զարթ գէմքով: Թուրքերը խաղտառակ բայցաորութիւն են տալիս՝ Խօլի ջուրն «էղլու» ջուր է, ալսինքն կանանց վրայ է գալիս:

Միւս օրը վաղ ճանապարհ ընկանք Սալմաստ: Առաւօտեան մէղը կամոց-կամաց անհետանում էր: Մեր առաջ բացւեց զեղեցիկ տեսարան: Այլ ու ձախ ծառատունկեր և ալլիներ են: Սառնորակ առակներ խոխուջալով վազում են ամեն ուղղութեամբ: Միլղիւղ զաշտի շարունակութիւնը նորից բացւեց մեր առաջ: Ակամալ սրտիցդ դուրս են թռչում այս խօսքերը. «Ախոս, հաղար ախոսս այս հրաշալի վայրերին»... Քաղաքից 4 վերստ հեռաւորութեան վրայ հանդիպեցինք աղահանքի, որը մշակում է բոլորովին ասիական, ամենալատ եզանակով: Աչտեղ աչնտեղ անճուռնի փոսեր փորած, փորփորած, ծուլութիւնից, թէ ծախս չանելու համար հողը դուրս չեն թափում: Առհասարակ այս կողմի աղերը թօլ ութ ունին, լաւ տեսակից չեն, դրա վրայ էլ աւելացրէք անշնորհք մշակութիւնը, ամեն բան կը լրանալ: Սիրուն մարդագետիկներ և աշնանացան արտերի վրայով անցնելով հատանք մի ճամբարաժանի: Մինը մեծ էր, որը թէև մի քիչ երկար էր, բայց աւելի հեշտ և ապահով: Միւսը կարճ էր, ուղղակի կտրում էր լեռները, բայց զփար անցանկի և վտանգաւոր:

Մեծ ճանապարհի ապահովութիւնն Ատուած հեռու տանի: Իսկ մի վատ տեղ ունի, որ կոչւում է ղեաղուկ (կիրճ): Կառավարութիւնը մի քանի ձիաւորներ է դրել աչքտեղ ճանապարհորդների ապահովութեան համար: Եւ ահա այդ ապահովութիւն շնորհողներն իրանք պլոկում բաց են թողնում: Համարեա ամեն օր աչքտեղ անդակատ են ագեղ երեւոթները: Չիաւորները ամեն անցնողից կարողութեան համեմատ 1, 3, 5, յոնի իսկ 10 բուրլի «սալամաթլը» (ապահովութեան փող) առնում բաց են թողնում: Հակառակ դէպքում սարապիւլի հաշտանք, տուր ու դմիսց, աղմուկ, սպառնալիք է... Առհասարակ ոչ դատ կալ, ոչ դատաստան, որքան սուրբ կտրէ, աչնքանը քոնն է: Եթէ անցորդը մի լաւ պատառ է, կարող են նաեւ ետեւից դնալ և թալանել...

Մեր ջութպանն առաջարկեց կարճ ճանապարհով դնալ, որ համ չուտ կերթանք, համ էլ զուր տեղը ձիաւորներին փող չենք տալ: Մեր համաձայնութիւնից փտոջ թուրքն իսկուի աւելացրեց—«Հապա ինձ ինչ կը տաք»:

որ ազատում եմ ձեզ այդ ծախսերից»։—Դրա համար մենք քեզ ոչինչ չենք տալ, միայն եթէ լաւ գնաս, ինչպէս սովորութիւն է, մի քանի կոպէկ ընծալ կը տանք։ Այդ մէկ, երկրորդ, քեզ կը պարտաւորեցնենք կարճ ճանապարհով գնալ։ Մտածեց, մտածեց, զլուխը շարժեց և կարճ ճանապարհով քշեց։

Աջ կողմում, մեզանից 1 վերստ հեռաւորութեամբ թողեցինք երկկրորդ աղահանքը, որն առաջինից աւելի լաւ է և ամբողջ Սալմաստին աղ մատակարարողն է։ Հասանք վերջին թուրք գիւղը, որտեղից պիտի սկսէինք բարձրանալ լեռները. անցնելու գիւղում պատահեց մի թուրք փոստապետ, որը նոյնպէս Սալմաստ էր գնում։ Նա բոլորովին չէր զանազանում սովորական, պատառոտած պարսիկներից, տակից հագած ունէր մի կիսամաշ նշանադրեցող և մի անճուռնի դամա ունէր։ Լեռների տողորտից տեսաբանը գեղեցիկ էր։ Մեր առաջ ձգւում էր մի բոլորածէս, գոգաւոր դաշտ, որը չը նայելով խոր աշունքին՝ դեռ կանաչին էր տալիս։ Խոյը ծառերի մէջ թագ էր կացել. նրա շրջակայքում, երբեմն շրջապատող բլուրների և միմեանց մօտ, մօտիկ երևում էին ծառախմբեր, որոնք դաշտին մի առանձին գիւթական գեղեցկութիւն, զարդ էին տալիս. դրանք գիւղերն են։ Աւելցնեմ որ այս ճանապարհն ևս թուրքերն են բռնած, բայց հաջ գիւղերի մնացորդներն անպակաս են։

Կուրուղ թրքարհակ գիւղում հաշկական եկեղեցու պատերը դեռ կանգուն են, կան նոյն խակ միջակ տարիներով մարդիկ, որոնք այդ գիւղումն են ծնւել, ապա գաղթել։

Զինուորականը մեզ հետ քաղցրութեամբ ուսիրով էր վարւում. գովաբանութեան մէջ նա աւելի առաջ գնաց. «Բիւրդերը վաւրենի են, գող, աւագակ, համա պարսիկներն պակաս չեն, նրանք էլ անպիտան են, ոչ մինը հալին չի գալ։ Նա խաղաղ, հանդարտ, աշխատասէր ժողովուրդ է։ Նա իւր քրտինքով է ապրում։ Ահա այս օրերս լիւրք քուրդերը Ուրմիի կողմերը դարձեալ ուղում են կուռլ կառավարութեան հետ, մենք փամփուշտներ ուղարկեցինք աշնտեղ»։ Նա մինչև անգամ միրդ առաջարկեց մեզ։ Լեռն անցանք և մտանք մի մեծ և երկար ձոր, որն աւաղակների բոցն է համարւում։ Զինուորականը երբեմն ևս էր ընկնում, ընկղմւում խորը մտածմունքների մէջ, ապա մեզ հասնելով, հպարտութեամբ ասում էր, «Աչտեղ ահաւոր տեղ է, բայց միք վախենալ, քանի ևս ձեզ հետ եմ»։ Հասկանալով կեղծաւոր, խարդախ պարսիկի միտքը, ես ասացի, որ զուր անհանգիստ չը լինի մեզ համար, հարկաւոր գէպքում ինքներս կարող ենք մեզ պաշտպանել։ Նա մեր ջորեպահին առաւ, ևս ընկաւ և մի քանի րոպէից լեռով նրան պատգամաւոր ուղարկեց մեզ մօտ։ Մեզ ապահով բերելու համար փող էր պահանջում։ Այդ ստոր վարմունքը մեզ սաստիկ վրդովեցրեց։ Մեր պատգամաւորին լեռ ուղարկեցինք և պատառնանքի ենք՝ ամօթ քեզ, քաղցր խօսակ, ընկերական վարմունքդ ասենք, թէ

ալժմեան կեդոտո վարմունքդ: Ոչ մի կողմէի էլ չես ստանալ: Պարսիկն ինչպէս երեսմ էր, սաստիկ զարացել էր, նա ալ ևս մեղ հետ չէր գալիս, կամ չեա էր ընկնում կամ առաջ: Վերջին բլուրն էր, մեր առաջ հիւսիսից հարաւ ձգւում էր Սալմաստի գեղեցիկ դաշտալալը, որի երկարութիւնը մօտաւորապէս 40 վերստ է, իսկ լաւնութիւնը 15—20 վերստ, որի հիւսիս արեւելեան մասը ձգւում է մինչև Ուրմիա լճի ափերը, Սալմաստի սահմանները, Հասնելով Սեղեղեան, ուր ճանապարհը բաժանւում էր դէպի Փալաճուկ, Բաֆիու հալքերի գիւղը վանապետը մօտեցաւ ընկերոջն և թշնամական գիրք բռնելով, նրա առաջը կտրեց, պահանջելով սալամաթը, հակառակ դէպքում նրան «ղաչաղ» (փախստական) համարելով, իսկոյն ձերբակալել պիտի տայ: Երիտասարդն իւր դասը լաւ իմանալով աւելի բարձր էր գոռում և մէկին տասը պատասխանում: Բանն աշտոնդ հասաւ, որ վանապետը համբերութիւնից դուրս գնալով ձիու սանձով խփեց ալդ երիտասարդին, որը իւր ձեռքի թոկն երկու տակ անելով, խփեց ու խփեց մեր սիրելի զինւորականին, ապա ձին քշելով անցաւ գնաց: Ահա մօտենում ենք Փալաճուկին: Ինձ հետ եկողը ալդ կողմերից էր: Արտերում աշխատող սարմատցիք շտապում շնորհաւորում էին դրա գալուտը: Հէնց բարեկց թէ չէ՝ չետոյ թէ մարդ և թէ կին իսկոյն հարցնում էին. «Մեր Սեփանին (Ստեփան) չը տըսար, մեր Խանամիւրից կիր չես բերելի, մեր Կիւկեօր (Գրիգոր) չի կես...»

Տուն հասնելուց չետոյ մի սարսափելի պատկեր նկարեց իմ առաջ: Ամեն կողմից խումբ-խումբ թափւում էին իրանց կարօտեալ պանդուխտներից տեղեկութիւն ստանալու: Թըֆլիզ, Բաթում, Բաղու, Հաշտարխան, Նոր-Նախիջևան, Բոստով, Կիւե, Օղեստա, չարունակ այս քաղաքների անուաններն էի լսում: Մէկը ձեռքերն իրար էր խփում ու ծանր ակն քաշում, միւսը շիւար կանգնել, քար էր դառել, իւր սիրելի պանդխտի հետքն չգտնի չէ, երրորդի 26 տարեկան հարսի երեսին ուրախ ժպտն է իսողում, ամուսինը թիֆլիզ է, առողջ է և բարե է ուղարկել. մի ուրիշի միակ որդին վախճանել է պանդխտութեան մէջ, նրանից երկար ժամանակ ծածկել են, հիմա նա կասկածում է և վրայ պրծնելով նորեկի վրայ ալրւած սրտով համբուրում է նրան իւր կաթողին որդու կարօտն առնելու: Արտասուքս չը կարողացաւ զսպել հետեւալ դէպքից: Մի մօտ 55 տարեկան պառաւ կին լալաղին ձախով ձեռքերն երկինք բարձրացնելով դառն արտասուք էր թափում, հազիւ կմկմալով այս խօսքերը. «Աստուծ, քեզ փառք, քեզ փառք, եօթը տարի էր տունս «քթաք» (զղակ) չէր մտել, եօթը տարի էր սպասում էի իմ կարօտած որդուն, ուրիշի դռներն էի անտէր, անտիրական...»: Սրա 28 տարեկան որդին նոր էր վերադարձել: Դեռ Մէղաւարում տեսաւ մի պառաւ, որն ամեն մի օտարական տեսնելիս, աղի արտասուք էր թափում, հարց ու փորձ անում իւր պանդխտի մասին: Նրա որդին ամուսնանալուց չետոյ երեք ամիս է մնացել տանը:

ալժամ 15-րդ տարին է նա պանդուխտ է, ոչ նամակ դրում մօրը, ոչ փող ուղարկում: Թշառ պառաւը սրտն նրան զխմելով մի կերպ պահպանում է իրան ու հարսին: Ամբողջ փառաճուղում չը կալ մի տուն, որ պանդուխտ չունենալ, երկտասարդներ չը կան: Աւելի վատ է Մահլամ գիւղը, որտեղից ամենից շատ են գնացել օտարութեան, չը նախելով, որ ալլ գիւղը քաջ է համարում, զինուորած է և լաւ զինուորում է քիւրդերի հետ:

Տաճկա-Հայաստանից լիտոյ Սալմաստը պանդուխտութեան երկրորդ բունն է: Կաղթող երկտասարդութիւնն ալնքան էլ լարդելի պատճառներ չունի: Ճիշտ է, որ զրանցից ոմանք անհոյ են, ոմանք պարտքի տակ, ալն էլ ճիշտ է, որ ձեռքի աշխատանքը սաստիկ ընկած է, բայց չէ որ ապրուստն էլ չափից դուրս էժան է: Մի դատակարգ կալ, որը երկրի վերայ հող էլ ունի, ապրուստն էլ լաւ է, բայց դարձեալ գաղթում է, նրա համար ախտ է դարձել արդէն: Գլխաւոր պատճառներից մէկն էլ այս է, որ Ռուսաստանում ձեռքի աշխատանքը բարձր է, ալնտեղի մի սարաւալ բերած աշխատանքով 2—3 տարի կարող է ապրել, իսկ Սալմաստի մի տարաւալ աշխատանքով հազիւ մի տարի: Սալմաստն իսկ որ մի հրաշալի գեղեցիկ, առատ երկիր է: Նրա անուշ և առատ ջրերը, պարտէզները, սիրուն արտերը ճիշտ որ անխորհարկներն են: Օղը մեղմ է, բարեխառն: Սալմաստում մաքուր հալաբնակ գիւղերն հետեւեալներն են— Հալթուան, Փալաճուկ, Ղալասար, Մահլամ և Սառնա, վերջինում մի քանի տուն քիւրդ հովիւներ կան, էլի 15-ի չափ գիւղեր, ուր հալերը իստոն ապրում են պարտիկների հետ: Հալ գիւղերի սննդը կատարեալ ամրոցներ են... Սալմաստի տները ներկայացնում են մի-մի ամրոց: Նախ սկսում է մի բակ, որի պատերի բարձրութիւնը 2—3 տաժէն է, ապա մի երկրորդ բակ նոնալիսի ահուկի պատերով, վերջապէս մի երրորդ հալեաթ, ուր արդէն տան մուտքն է Նորեկը տխուր ու բանդարկած է համարում իրան ուղ տների մէջ:

Քիչ տներ կան, որ սենեակներ չունենան: Ամառներն ապրում են ոռնեակներում, սրտք երբեմն երկրորդ լարկ են լինում, սենեակ չունեցողները սրահում, իսկ ձմեռը տեղափոխվում են տունը, որն իւր անդարմարութիւններով պակաս չէ Նովկասի գիւղերից. տների կտուրները շատ լաւ են շինած: Առհասարակ պարսկական սովորութիւնները, նիստ ու կացը տիրապետում է հալերի տան մէջ: Տղամարդիկ վերելից հագնում են «գէյմա» պիղծակի նման մի բան, որը մինչև ծնկներն է հասնում և իւր ետևի օգմալով աւելի արխալուղի է նման, տձև է, պարսկական և ալլ երկրում լարդած հագուստ: Գլխարկները, որոնց մէջ կարդոն (ստորաթուղթ) է դրած երեսից մորթու նման սև գործւածք քաշած, չափազանց անլարմար է արևի և անձրևի, ծածկելու և վերստնելու համար. ծածկելու ժամանակ մարդու ալլակերպում է անձուռնի աբան, քեաղախի և վատտակ: Անդրա-կարտիկ եւրոպականին բաւականին մօտ է, միաջն լալն ու անձուռնի կտրած:

Սուրբը, որ նման է մալականների կանանց հագած բաշմակիներին,

քաղվելու համար անդամար են, արխարդները կողկասեանի նման է։
Կանաչը հալիական զիւղական զէրիւններ են հաղնում, վերան կա-
պում կարծ և խիտ օլմաներով զոգնոց։ Գէրիւնների վրայից քիւլաճա հա-
մարեա ամենքը զլլսները ծածկում են սպիտակ, մեծ լաչակով, քօղով,
կորդիկով (քիւլաճա)։ Ճակատներին քիչ զարդարանք, ոտի չեն դնում
միայն երբեմն պատահում են արծաթեալ դօտի կապոգներ։ Գործի ժա-
մանակ կանաչը վերից հաղնում են ճիշտ շապկի նման մի բան, որը
հասնում է մինչև տոները։ Աղջիկները նոյն ձևով են հաղնում, միայն
զլլսները ծածկում են, աւելի դէպի ճակատը թէքած, սաճկական արախ-
չինով, որ շատ ուղ է դալիս։ Արախչինի երկու կողմից դէպի ակոնջ-
ները քաշ են ընկնում իրեն զարդ, ուստական մի քանի ոտիկներ, իրար
հետ միացած օղակներով, ակոնջների վերաջ կրում են ահաղին կիտա-
լունանձև օղեր, որոնց իրանք գլինդ են անւանում։ Փոքրիկ աղջիկների
ուսերը զեղեցիկ կերպով զարդարում են թուխ և փալլուն մաղերի ման-
րիկ հիւսերը, որոնք ձգւում են մինչև դոտկատեղը և որոնց ծայրերից
քաշ են անում արծաթի փողեր։ աղ զարդի անունն է «քեակեաղի»։

Տղամարդիկ առհասարակ միջահասակ են, պնդակազմ, առողջ և մի-
ջակ զեղեցիկութեան տէր, բայց կանանց չի կարելի համեմատել տղամար-
դիկների հետ, նրոնք բարձրահասակ են, լաղթանդամ, կորմրերես, սա-
տիկ առողջ ու զեղեցիկ, սակայն աղ զեղեցիկութիւնը աւելի լեռնական է։

Կանանց սիւն ունի իւր որոշ, աչքի ընկնող զծերը, որոնք խոկոյն
աչքի են ընկնում և լաւ սպաւորութիւն թողնում։ Բնականաբար թունդ
ասիացիների, սլարսիկների աղեցութեան տակ ընկնելով, փախչում են
տղամարդիկներից, սակայն հասարակ դատակարարի կանաչը իրանց աւելի
մտաչելի են պահում, մինչև անգամ խօսակցում, հարց ու փորձ անում,
վաճառականների, ունեւորների կանաչք, Աստած հեռու տանի, ալնպէս
փախչում են, որ կարծես հարեմից նոր են դուրս եկել, նրանց երես տես-
նելն անհնարին է։

Սալմաստիները անունի վերաջ կանոնաւոր ուշադրութիւն են
զարձնում։ Բոլոր զիւղացիները, բացի սակաւաթիւ չքաւորներից, ամեն
օր միս են գործ ածում։ Թէ ճաշին, թէ երեկոյեան նրանց սեղանից ան-
պակաս է տաք կերակուրը, Սալմաստի սպիտակ գլինիով։ Ճաշի ժամանակ
սուրբէն փռում են, ջրով լաւցւում, ծալապատիկ բոլորում նրա շուրջը,
երեք-չորս հոգու առաջ դնում մի չանախ, միսը ջուկում և ալնքան բրդում,
որ ջրի հետք չի երևում, ապա մատներով սկսում են գործել հետո ու
հետը կոնծելով Սալմաստի համեղ և սպիտակ գլինին խմում են առանց
փրուն խօսքերի։ Աղ գործողութիւնն աւարտելուց վետոյ միտն ածում են
կրկին չանախի մէջ, հացով ճմուռ, աղ ածում վերան և անուշ անում,
նորից պարպելով սպիտակ գլինու բաժակները։ Հացից վետոյ, եթէ օտար
հիւր կալ, զահէ են բերում, որոնք ալնքան փոքր են, որ հաղիւ մի ումպ

լինի. աշխուհետե սկսում են զալլան քաշել կամ ծխախոտ. եթէ հարուստ առևտրական է, ծառան պատրաստում է զալլանը, տալիս է մեծին և ոտքի վրայ կանգնում. հէնց որ մատով կամ աչքով են անում, խսկոյն մէկից առնում միւսին է տալիս, նորից ոտքի կանգնում. Այս թէ չէ պարոնը գրպանից հանում է ծխախոտի ամանը, ծառան խսկոյն հասկանում է բանն ինչումն է, վերցնում է ծխախոտը, քաշում անկիւն պատրաստում. կրակ կպցնում և ապա մատներով սրբելով շրթունքները ծխաքարչին կպած տեղը, համեցէք անում պարոնին... Նորեկը հալիւ կարող է զսպել իւր ծիծաղը այս պարսկական էտիկէտներից: Չը նայելով որ առևտրականներն ունին եւրոպական դեղեցիկ սենեակներ, կահաւորած Վիէննայի փալտն աթոռներով և զարդարած պարսկական գովական գորգերով, աշու աճնաւնիւ ծալապատիկ են նստում, պատառաքալ, դանակ, զգալ և անձեռոցներ երբէք գործ չեն ածում: Ծիծաղաշար է դրանց ուտելը—ամբողջ հինգ մատները խրելով ամանի մէջ, վերցնում են փլաւը և իրանց առաջ հացի վրայ ածում, ապա հաւի միսը մանրացնելով խառնում հետը ու զարծեալ իւզոտած, փալտն մատներով փլաւը չփչփացնելով անուշ անում. այդ տարօրինակ գործողութիւնը կատարելուց չետոց սկսում են ամեն մի մատը մի քանի անգամ խոթելով իրանց բերանը մեծ ախորժակով ծծել: Վերջն ի հարկէ լացում են: Այդ ձեռն աւելի բարդ կերպով գործ են դնում պարսկները: Սալմաստցիները գործ են ածում կճուճի համեղ սլանիր, որն մի առանձին հոգատարութեամբ և ճաշակով են պատրաստում, նրա հետ խառնում են վարդի թերթերը, ուէրան կամ ալլ կանաչեղէն, որն աւելի լաւ չատկութիւն է տալիս:

Ժողովուրդը գլխաւորապէս պարապում է երկրագործութեամբ, մշակում է իւր ալգիները, որոնցից ալնքան էլ մեծ արտահանութիւն չի լինում, ալլ իրանց տան համար:

Կտաւագործութիւնը սաստիկ տարածւած է: Իրանք գործում ներկում և վաճառականների ձեռքով արտահանում Ռուսաստան և Վան. պարապում են նողնալէս և զարբնութեամբ:

Հողատիրութիւնը (հողերի խնդիրը) շատ խճճւած է Սալմաստում: Գլխաւորապէս հողաբաժանութեան երկու սիստեմ կա.

1. Խալիսա հողեր, որ նշանակում է արքունական հողեր. այդ հողերն ինքը տէրութիւնն է տալիս ժողովրդին մշակելու:

2. Աղալղ հողեր՝ ալսպէս կոչւում են խաների կապալով վերցրած հողերը: Ալն գիւղը, որ նստում է խալիսա հողերի վերայ, 10 փթի տեղին հարկ է տալիս 6 բուբլի, 3 բ. էլ տան հասած և գործող արական անդամից, սրանով վերջանում է ամեն բան, որ համեմատաբար աւելի թեթեւ է: Աղալղ հողերի վրայ ապրող գիւղացիների գրութիւնն աւելի վատ է, նրանք տալիս են և խալիսալի (10 փ. 6 բ.) հարկը խանին և բերքի 9 մասից մի մասը: Եւ ահա զրա պատճառն ինչ է: Ալն երկրագործը, որ

խալիսա հողի վրա է, իրան արտի կամ ալգու տեղերը ժամանակի ընթացքում փողով առած է, նրանից իրաւունք չունին տոտանորդ առնելու: Խոկ աղալդ հողի վրա բնակւող գիւղացին անհող է, փողով գնած չէ, ալգ պատճառով նրանից վերցնում են և տոտանորդ: Այս գիւղացիները կատարեալ ճորտեր են: Որովհետեւ խանը կապալով է վերցրել ալգ գիւղերը, ուրեմն որքան լաւ հարստահարէ ճորտերին, աչնքան ինքը ճոխ կարող է ապրել, կանանց թիւն աւելացնել, կաշառք, ընծաներ տալ ուր հարկն է, որպէս զի միւս տարիները կապալն իւր ձեռքից չենիւ: Այս երկրում ոչ դատ կա և ոչ դատաստան, ուրեմն ո՞վ պիտի լսէ թշառ ճորտի բողոքը, ով շատ կաշառք կերցրեց, ցաղթութիւնը նրանն է: Պարսկատտանում հողատիրութեան սխտեմը տրամադրում է ժողովրդին առնել և ծախել հողը, ալգ պատճառով աղքատացած, պարտքի տակ ընկածինը միշտ առնում են հազ վաճառականներն ու թուրքերը: Անհողների թիւը քանի գնում շատանում է, իսկ լորդական կալւածատիրութիւնը աճում: Ժամանակի ընթացքում ճորտութիւնը կարող է մեծ չափեր առնել Պարսկատտանում: Թուրք հասարակ ժողովրդի զրութիւնը մանաւանդ անտանելի է, խաների անիրաւութիւնները իրանց ճորտերի վերաջ ծարաւեղութեան է հասնում, նրանք մինչև անգամ երբեմն կովերից, ոչխարներից, մարդկանցից և աչն (աշխատող տաւարից, օր. եղից չեն առնում) հարկ են վերցնում: Խանի քէֆն ուղած ժամանակը կարող է դուրս վաճառել գիւղացիներին իւր հողից, աւելի օգուտ տուող գիւղացիներին բնակեցնելու նպատակով: Եւ ահա դժբաղդ ճորտը մի գեղեցիկ օր իւր ամբողջ ընտանիքով գլուխ դնելու տեղ անգամ չը պիտի ունենալ... Խաներն աւելի հալերին են տեղ տալիս, որովհետեւ վերջիններս աւելի աշխատասէր են, ուրեմն աւելի չարմար հարստահարութեան:

Շատ անգամ կապալի ժամանակ տեղի է ունենում խաների մէջ սատտիկ մրցումն, ընծաներ (կաշառք) են տալիս և ալգ ծանր հարկերը, իրանց չապլ ծախսերը պէտք է հանեն խղճուկ ժողովրդի կոշտակից:

Խալիսա գիւղ են Հաւթուան, Ղալասար և աչն: Աղալդ գիւղեր են Փալաճուկ, Սահլում, Ախտախանա և աչն:

Հողերի մշակութիւնը տարբեր ձևով է կատարւում: Արտերը ցանում են աշունքը, պարնանացանը չի բուսնում, և իւրաքանչիւր արտ կարելի է ցանել մի տարի, աչնուհետեւ 2 տարի պէտք է հանգստացնել, կամ առոյտ են ցանում և մի քանի տարուց քետու, երբ առոյտի արմատները փթում են, տեղը ցորեն են ցանում, որ շատ լաւ է լինում: Հողը պարարտացնում են աղբ ածելով, կամ առոյտ ցանելով ու բանջարանոց դարձնելով: Հողը կաւալն բաղադրութիւն շատ ունի, ալգ պատճառով ուժը քիչ է և շատ կարծր է, դժար է վարւում, ցանքի համար պէտք է անպատճառ դոմեշներ պահել: Արօտ չը կա, երկրագործութիւնը շատ ծանր է, ալգ պատճառով իւրաքանչիւր գիւղում 5, 10 կամ 15 տուն տաւար է պահում և

միւսները արտերը փողով վարում: Հնձի ժամանակ նոյնպէս իրանք չեն բանում, չատերն արտ հնձել չը գիտեն, ալ Սամալի քրդերը և Աղրակի հալերը խումբերով գալիս են Սալմաստ և կապալով արտերն հնձում: Արտատեղ չը լինելու պատճառով անառնապահութիւնը թուլ է, կողեր, մատակներ պահում են միայն կաթի, մածնի ու պանրի համար, որ շատ գեղեցիկ պատրաստում են:

Մրանից 7 - 8 տարի առաջ Սալմաստը ունեցել է Տէր-Թողիկի դպրոցներ, բայց 1882^թ թ. Թաւրիզի երջանկալիշատակ առաջնորդ Մուշեղ եպիսկ. Գրիգորեանց քարոզելով, համոզելով, ոգևորելով բաց է արել 10-ի չափ ուսումնարաններ, որոնցից երկուսն օրիորդաց է: Ժողովրդի ղէպի ուսումն ունեցած պահանջն այնքան է եղել, որ Տէր-Թողիկի դպրոցներ է պահել, ապա մի եռանդուն, աշխատասէր եպիսկոպոսի ազդեցութեամբ, ոչ իրան, ժողովրդի պահանջի հիման վերաջ բացել են փոքր ի շատէ կանոնաւոր դպրոցներ. բնական է, որ Մուշեղի մահից չէտ, երբ իւր չաջորդը թուլ էր, նոյն ազդեցութիւնը չէր բանեցնում, պիտի ընկնէր: Վերջին տարիներս, Մխիթարեան եպիսկոպոսի առաջնորդութեան ժամանակներից սկսել է փոքր ի շատէ կանոնաւորել: Ուսուցիչներից շատերը անպատրաստ են իրանց կոչմանը, իրանք էլ են խոտոտվանում աչք: Աւանդած առարկաներն են՝ հալոց լեզուն, թւաբանութիւն, հալոց պատմութիւն, ուսուց լեզու, աշխարհագրութիւն, երբեմն պարսկերէն: Երեսները կարգում են գոռալով ու երգելով, կէտաղբութիւն չը կալ, գիտակցական, զարգացողական ընթերցանութեան հոտն անգամ չը կալ: Արգասպահութիւնը սառնակ թուլ է, ով ուզում է դասի ժամանակ դուրս ուներս է անում, մէկը միւսի տեղ առաջ թռչում, դաս պատասխանում, աշակերտն առանց լարդելի պատճառի բացակայում է և ալս բռնորը ուսուցչի համար սովորական բաներ են... Նա բոլորովին չի էլ գգում, որ այս բոլոր անդամարութիւնները դպրոցի խառնազգիութիւնը սպանում են: Որոշ կուրս, դասարաններ չը կան, այնպէս որ եօթը, ութը սարաւ աշակերտը զեռ շարունակում է սովորել, նոյնը կրկնել: Աւարտ մօտաւորապէս կարելի է հաշել մինչև առաջին դասարան, թէև տեղ-տեղ թռչում են մինչև երկրորդի կուրսը: Բացի Հաւթուանից, ոչ մինը փոքր ի շատէ կանոնաւոր դրազարան չունի: Այս բոլոր խոչնդոտների ղէմ կարելի էր կուել, ունենալով Սալմաստում չորս դասարանեան, կամ քսնէ երեք դասարանեան մի կանոնաւոր կեդրոնական դպրոց, որտեղից դուրս եկողները կարող էին գիւղական ուսուցիչներ լինել: Անդրոնական դպրոցը ամեն կողմից մեծ զարկ կը կար ժողովրդին առաջ շարժելու...

Սալմաստում կալ նաև Բարեգործական ընկերութիւն:

ՄՆԵՂԱՌՈՒԹԻՒՆ ԵՒ ԿԵՐԱԿՈՒՐ

ԲՃԿ. ՆԵՐՍԷՍ ՌԻՄԿԵԱՆԻ,

Ասիատեստ առողջապահութեան ամբիոնի խարկովի համալսարանում:

Մտադրելով տալ «Մուրճ»-ի ընթերցողներին մի շարք զիտական յօդածներ բնական գիտութիւնների ալ և ալ ճիւղերից, կ'աշխատեմ այս անգամ ծանօթացնել ընթերցողին մանդառութեան հիմնական կանոնների հետ — աչն կանոնների՝ որ մշակել է նորագոյն գիտութիւնը:

Ես ընտրեցի այս նիւթը զլսաւորապէս աչն պատճառով որ նախ՝ որքան ինձ յայտնի է, հաջ դրականութիւնը չունի որ և է աշխատութիւն այս ճիւղի վերաբերեալ և երկրորդ՝ ինքս անձամբ՝ համալսարանում եղած միջոցիս՝ զբաղւում էի մօտ երեք տարի մանդառութեան հարցով իմ պրոֆեսոր Տ. Յ. Դանիլեւսկու հսկողութեան ներքոյ:

Ամենից առաջ ես կը խօսեմ մանդառութեան ֆիզիոլոգիական¹⁾ օրէնքների մասին, յետոյ կանցնեմ մանդատու նիւթերի նշանակութեան մասին կենդանի (ЖИВОТНЫЙ) օրգանիսմի համար և ապա մէջ կը բերեմ մանդատու նիւթերի կանոնաւոր և անհրաժեշտ քանակութիւնը մարդու մանդառութեան համար:

Ընթերցողը անշուշտ ներդամիտ կը լինի դէպի իմ այս առաջին փորձի պակասութիւնները: Մանդառութեան ուսումը ինքն ըստ

¹⁾ Ֆիզիոլոգիա ասն գիտութիւնն է, որ ուսումնասիրում է բոլոր ֆիզիկական և քիմիական պրոցեսները կենդանի օրգանիսմի մէջ:

ինքեան շատ ծանր լինելով՝ դժւարանում է մի կողմից և նրա բացատրութիւնը հանրամատչելի լեզուով, — միւս կողմից՝ գործը դժւարանում է զիտական տերմինների մեզանում չը հաստատուած լինելովը:

Իմ այս առաջին ուսումնասիրութիւնը կը լինի ընթերցողի համար ամենադժւարը, իսկ յետագայ ուսումնասիրութիւնները կը յեւեռն այս մէկի վրայ և կը լինեն աւելի զիւրըմբռնելի:

I

Մարդկային կեանքը, ծննդեան բոպէից մինչև մահ, պայմանաւորում է մի շարք ֆիզիկական և քիմիական երևոյթներով մարդուս իրա մէջ: Այդ երևոյթները տեղի են ունենում բազմատեսակ նիւթերի վրա և հէնց այդ պատճառով այդ երևոյթները դառնում են մատչելի զննութեան համար:

Այդ ֆիզիկական և քիմիական երևոյթների շնորհիւ մարդուս օրգանիսմի մէջ նիւթերը անընդհատ իրար տեղ են տալիս: Այսպիսով որ և է նիւթի մասնիկները, որոնք զիցուք այսօր շրջումանցնում են մեր արիւնի մէջ կամ կազմում են էական մասը մեր մարմնի — մի քանի ժամանակից յետոյ՝ նոյն այդ մասնիկները կարող են դառնալ բաղկացուցիչ մասեր հողի, օդի, բոյսերի և նորից ընկնել մեր մարմնի մէջ: Օրինակի համար Հացի նահապետի նիզակի երկաթը կարող է այսօր բաղադրիչ մաս դարձած լինել մեր արիւնի: Երկաթը տարիների ընթացքում փոխւելով՝ կարող է նիւթ դառնալ բոյսերի և սպա տեղ դանել թէ անասունների և թէ մարդկանց արիւնի մէջ: Կամ թէ յիշեցնենք երկաթի ջրերը, որոնք հեշտութեամբ փոխ են տալիս մեզ իրանց երկաթէ մասնիկները: Մարդուս մէջ անընդհատ կառարւող նիւթերի այսպիսի շրջադարձը առաջ է բերում այն հանգամանքը, որ մարդուս օրգանիսմը վերանորոգում է իւր բաղադրիչ կազմաւածքը (составъ), թէև մեր անհատականութեան յատկութիւնները չեն փոխւում այդ բոլորի միջոցին: Մասնիկների այս անընդհատ փոխանակութիւնը պայմանաւորում է այն ճակատագրական անհրաժեշտութիւնը, որ առաջ է բերում ջերմութիւն, մեքանիկական շարժողութիւն, էլեկտրականութիւն և ուրիշ ոյժեր և այս բոլոր ոյժերը միասին առած բնո-

րոշում են թէ մարդկային, թէ անասնային օրգանիսմի կենսականութիւնը:

Աւելի մօտից ուսումնասիրելով այս ֆիզիկական և քիմիական երևոյթները, պրոքէսները և նիւթի այս անընդհատ փոխանակութիւնը՝ մենք կը նկատենք երկու որոշ կէտ: Մի կողմից մարդկային և անասնային օրգանիսմները ընդունում են զրսից զանազան նիւթեր իբրեւ կերակուր, ըմպելիք և այլն և կերպարանափոխում նրանց. ապա դոցանից մի մասը ծառայում է ծախսւած արիւնի և մարմնի մասնիկների տեղը բռնելու, միւս մասը՝ պատրաստելու օրգանիսմի հեղանիւթերը¹⁾, որոնք են օրինակի համար՝ թուք, ստամոքսային հիւթ (suc gastrique, желудочный сок) և վերջապէս երրորդ մասը առաջ է բերում մեքանիկական գործողութիւն, տաքութիւն, էլէքտրականութիւն և այլն: Պատահում է, որ նոր ընդունւած նիւթերը ուղղակի չեն առաջ բերում վերոյիշեալ հեղանիւթերը և զանազան ոչժերը, այլ սոքա կազմւում են արիւնի և մարմնի բաղադրիչ մասնիկներից, իսկ այս վերջիններս գոյանում, պատրաստւում են ընդունւած կերակուրից:

Միւս կողմից օրգանիսմը արտալիժում է իւր միջից այն նիւթերը, որոնք իրան այլ ևս պէտքական չեն՝ իրանց կատարած ծառայութիւնից, գործառնութիւնից (ֆլուիդ) յետոյ:

Այսպէս ուրեմն մարդկային և անասնային օրգանիսմի մէջ տեղի են ունենում երկու քիմիական իրար հակառակ երևոյթներ: Դոցանից մէկը աւերողականն է, որի միջոցին մկանունքի, արիւնի, լեարդի, երիկամունքի, սրտի և միւս օրգանների բաղկացուցիչ մասերը (մասեր, որոնք կազմւած են վերին աստիճանի բաղադրեալ նիւթերից) բաժանւում են ամենահասարակ քիմիական տարրերի և արտաքսւում օրգանիսմից: Անշուշտ նոքա ծառայեցին օրգանիսմի նպատակներին հէնց իրանց քանդակւովը կամ տաքութիւն կամ մեքանիկական շարժում առաջ բերելով:

Միւս՝ նորա հակառակ երևոյթն է ստեղծողական պրոքէսը (process plastique, пластический процесс), որը ընդունած նիւթերից պատրաստում է աւելի բարդ, բաղադրեալ նիւթեր և նրանցով փո-

¹⁾ Secretum.

խանութում է մկանունքի, արիւնի, լեարդի, երիկամունքի, սրտի և այլն ծախսւած մասերը: Նիւթերի այս անընդհատ փոխանակութեան գործում ահագին դեր է կատարում արիւնը: Արիւնը իւր շարժողութեան մէջ բերում հասցնում է մեր օրգանիսմի ամենացնմի բջիջին (cellule, клетка) անհրաժեշտ սննդատու և ստեղծողական նիւթերը և հեռացնում է անօգուտ և ֆիսասակար նիւթերը:

Մարդկային կեանքի միջոցը կարելի է բաժանել երեք ¹⁾ ժամանակամիջոցի՝ ա) աճումի, բ) հասունութեան և գ) ծերութեան կամ թառամութեան:

Աւերողական և ստեղծողական պրոցէսի քանակը տարբեր է այս ժամանակամիջոցներին:

Աճումի ժամանակ ստեղծողական պրոցէսները աւելի զօրեղ են լինում, աւելի գերազանց են լինում քան աւերողական պրոցէսները և սրա հետեանքը լինում է մարդու աճելը և նրա կազմաւածքի ստւարանալը: Այս պերիոդում օրգանիսմը ընդունւած կերակուրներից մի մասը դործադրում է կենսական բոլոր ոյժերի վրա, միւս մասը ծառայեցնում է իւր կազմաւածքի, իւր մասսայի ստւարանալուն—ասե լէ՛ օրգանիսմը զարգանում, աճում է: Բայց եթէ այս միջոցին օրգանիսմը շատ առատ է սնունդ ստանում—այդ դէպքում սննդատու նիւթերի մի մասը օրգանիսմը պահում է իւր մէջ իբրև պաշար: Ուեմն աճումի այս ժամանակամիջոցում սննդատու նիւթերը կարելի է բաժանել հետեւեալ չորս կարգի՝ օրգանիսմի մէջ իրանց կատարելիք դերերի համեմատ.

ա) Մի մասը դնում է օրգանիսմի ծախսւած մասերի տեղը բռնելու համար:

բ) Երկրորդ մասը ծառայում է մասսայի զարգացնելուն,

գ) Երրորդ մասը՝ կենսական ոյժերի առաջ բերելուն և

դ) Չորրորդ մասը պահում է իբրև պաշար:

Ասածս լուսաբանելու համար դիմենք թւերի, որոնք ցոյց կը տան որ աճումի ժամանակամիջոցում ստեղծողական պրոցէսները գերազանցում են աւերողական պրոցէսներին:

¹⁾ Մինչդեռ Վիրխովը բաժանում է երկուսի՝ աճող և նւազող պերիոդներին:

Քետուլէի հետազօտութիւնների համաձայն ծնող երեխայի քաշը հաւասար է իւր ապագայ կշռի $1/20$ մասին (Հասուն ծնած երեխայի քաշն է 3330 գրամ $= 8\frac{1}{3}$ ուսաց ֆունտ): Մարդու քաշը առ առաւելն լինում է նրա 35 տարեկան հասակում և այդ միջոցին մարդու քաշը միջին թուով $= 65.000$ գրամ $= 4$ վուլթ $2\frac{1}{2}$ ֆ. Քաշի այս առաւելութիւնը բացատրւում է միմիայն նրանով, որ ստեղծողական պրոցէսները զերագանցում են աւերողական պրոցէսներին: Աւելացնենք որ մատաղ հասակում քաշի աւելանալը աւելի մեծ է, քան յետագայ շրջանում:

Հասունութեան ժամանակամիջոցին, երբ մարդու օրգանիսմը հասնում է իւր կենսական ոյժերի գագաթնակէտին, ստեղծողական և աւերողական պրոցէսների մէջ նկատուում է հաւասարակշռութիւն: Եւ որովհետեւ այս ժամանակամիջոցում օրգանիսմին վիճակած է ամենամեծ գործողութիւն, ուստի և ստեղծողական ու աւերողական պրոցէսները լինում են ամենամեծ աստիճանով և ամենամեծ չափսով: Եւ եթէ այս պերիոդում օրգանիսմի սննդառութիւնը լինում է անհրաժեշտից աւելի՝ ապա սննդատու մասնիկներից մի մասը, մանաւանդ սպիտակուցային նիւթը (бѣлковые вещества) և ճարպը (жиры) ամբարւում են ինչպէս սպիտակուցային և ճարպային պաշար: Սպիտակուցային պաշարը տեղ է գտնում գլխաւորապէս մկանունքների մէջ (76%), արիւնի մէջ (18%), մնացած 6% ուրիշ օրգանների մէջ ¹⁾: Ճարպային պաշարը տեղաւորւում է առաւելապէս կաշու տակը:

Այսպիսով հասունութեան հասակում բոլոր սննդատու նիւթերը կարելի է բաժանել երեք կարգի.

ա) Մի մասը գնում է ծախսած մասնիկների տեղը բռնելու համար:

բ) Երկրորդ մասը ծառայում է կենսական ոյժերը զարգացնելու համար և

գ) Սպիտակուցային և ճարպային պաշարներ կազմելու համար: Մերութեան կամ թառամութեան ժամանակամիջոցում ստեղ-

¹⁾ Տես՝ Н. Умиковъ. Физиологія бѣлковаго запаса въ животномъ организмѣ.

ծողական պրոցեսները բաւականին պահասում-թուլանում են: Աւերողական պրոցեսները մնում են նոյն աստիճանի վրա: Ուրեմն եթէ ծերութեան հասակում օրգանիսմը կատարում է նոյն մեքանիկական և մտաւոր զործողութիւնը (работа), ապա նա կսպառէ շատ շուտով, որովհետեւ աւերողական պրոցեսները գերակշռում են ստեղծողական պրոցեսներին:

Աւելացնենք որ մարսեցուցիչ զործիքի (пищеварительный аппарат) թուլանալու պատճառով՝ նոյն խի ամենայնոց սննդառութեան ժամանակ — ծերացած օրգանիսմը չի կարողանում սպիտակուցային և ճարպային պաշարներ ամբարել, քանի որ նրա մարսեցուցիչ զործիքները հազիւ հազ կարողանում են ծածկել ծախսւած մասերը:

Այսպիսով ուրեմն ծերութեան հասակի սննդատու նիւթերը կարելի է բաժանել երկու կարգի.

ա) Մի մասը ծառայում է ծախսւած մասնիկների տեղը բռնելու և

բ) Միւս մասը գնում է կենսական ոյժերը զարգացնելու համար:

Զը մոռանա՛մ չիշել ստեղծողական և աւերողական պրոցեսների հետեւեալ առանձնացատկութիւնները: Այնեւրեւ է որ ստեղծողական պրոցեսները միմիայն այն ժամանակ տեղի կարող են ունենալ, երբ օրգանիսմը իւր մէջ սնունդ է ընդունում. հակառակ պէպքում օրգանիսմը ոչինչ չէր ունենալ մի բան արտադրելու համար: Մինչդեռ աւերողական պրոցեսները կատարւում են անընդհատ կերպով՝ ամեն մի րոպէ, ամեն մի վայրկեան, ինչ դրութեան մէջ և լինի օրգանիսմը՝ հիւանդ, առողջ, արթուն թէ քնած: Ծնելու րոպէից մինչև մահը այս աւերողական պրոցեսները կատարւում են անդադար. որովհետեւ ոչ մի կեանք չը կայ առանց այս տեսակ աւերողական պրոցեսի (նիւթի ծախսումն):

Երկրորդ կէտը լուսաբանելու համար առաջ բերենք քաղցի վրա եղած փորձերը:

Յայտնի է որ, եթէ՝ մարդս կամ անասունը զրկւում է կերակուրից և ջրից՝ քաղցի առաջին 2-3 օրը նա ապրում է՝ սպառելով իւր ունեցած սպիտակուցային պաշարը: Հաւանական է որ այս միջոցին կը սպառուի նաև ճարպային պաշարը: Հետեւեալ օրերը

կենդանին ապրում է իւր մարմնի սպիտակուցային նիւթերի հաշուով և նա մեռնում է, երբ որ սպառւած էն լինում արդէն այն բոլոր նիւթերը, որոնք կարող էին ծառայել նրա կեանքի պահպանելուն:

Քաղցի ժամանակ անդադար կատարւող աւերողական պրոցէսների գոյութեան մասին եղած շատ շատ փորձերից ¹⁾, առաջ բերեմ, խնդիրը լուսաբանած լինելու համար, Ֆալկի ²⁾ փորձերից մէկը: Ֆալկի պառաւ զեր շունը ենթարկեց կատարեալ քաղցի 60 օր. նրա սկզբնական քաշն էր 21.210 գրամ, վերջնականն էր 10.830 գրամ: Ֆալկը հետազօտում էր իւր փորձի ենթարկւած շան մէջը և զոնում նրա մէջ քայքայման արդիւնք եղած նիւթերը, չը նայած որ շունը ոչինչ չէր ուտում: Իմ արած փորձերը ուրիշ տեսակ էին: Ես կուշտ կուշտ կերակրում էի մի քանի շներ՝ տալով նրանց եփած միս, հաց և այլն մի քանի օր շարունակ. այնուհետև նրանց սպանում էի և ապա որոշում էի նրանց օրգաններում եղած սպիտակուցային նիւթերի քանակութիւնը: Մի քանի ուրիշ շներ կատարեալ քաղցի էի ենթարկում, մինչև նրանց սպանելը: Նրանց տրւում էր միմիայն ջուր:

Համեմատելով սպիտակուցային նիւթերի քանակութիւնը կերակրւածների և քաղցած պահւած շների օրգանների մէջ՝ ես ամենքի մէջ և բոլոր օրգաններում զոնում էի սպիտակուցային նիւթերի տոկոսը. նւազումն օրինակի համար՝ սպիտակուցային նիւթերի տոկոսը պակասել էր լեարդի մէջ $3,72\%$, երիկամների մէջ $3,68\%$, մկանունքի մէջ $6,95\%$, արիւնի մէջ $4,11\%$: Նմանօրինակ նւազումն նկատւում էր և բոլոր ուրիշ օրգանների մէջ: Այս սպիտակուցային նիւթերի պակասումը կարելի է բացատրել միմիայն նրանով, որ շները ապրում էին քաղցի ժամանակ ի հաշիւ իրանց օրգաններում եղած սպիտակուցային նիւթերի մի որոշ մասի, ասել է թէ շները իրանք իրանց էին ուտում մինչև մահ:

¹⁾ Chaussat, Schuchardt, Bidder et Schmidt, Pettenkofer, Voit և ուրիշներ:

²⁾ Voit, *Physiologie des allgemeinen Stoffwechsels und der Ernährung* 1885 г. стр. 112 (Hermanns Handbuch der Physiologie).

II

Նախընթաց տողերով էս ցոյց տւի այն հանգամանքը, որով օրգանիսմի մէջ անդադար նիւթերի փոխանակութիւն է կատարուում: Խօսեցի երկու իրար հակառակ երեւոյթների մասին փոխանակութեան վերաբերեալ, այն է ստեղծողական կամ պլաստիկական պրոցէսի մասին և աւերողական պրոցէսի մասին: Յոյց տւի դոցա յարաբերութիւնները կեանքի ջոկջոկ ժամանակաշրջաններում և վերջապէս ապացուցանելու համար թէ աւերողական պրոցէսները կատարուում են անընդհատ (թէ այն դէպքում մնունք է առնում կենդանին և թէ այդ դէպքում, երբ չէ առնում), առաջ բերեցի արած փորձերս քաղցի ենթարկած կենդանիների վրա:

Որպէս զի չիշեալ պրոցէսները տեղի ունենան կատարեալ ներդաշնակութեամբ իրար հետ, որպէս զի օրգանիսմը օգուտ քաղել կարողանայ իւր համար ամենաշահաւէտ կերպով — անհրաժեշտ է անշուշտ օրգանիսմի համար գոհացուցիչ և լաւ սննդառութիւն ունենալը: Սրանից պարզ երևում է որ սննդառութեան նպատակը պիտի լինի սահապանել օրգանիսմի նիւթական կազմածը (СОСТАВЪ)՝ սպիտակուցային նիւթերի, ճարպի, ջրի, աղերի ¹⁾ վերաբերութեամբ: Այն բոլոր նիւթերը, որ ընդունում է իւր մէջ մեր մարմինը, որպէս զի նրանք ապահով են մեր մարմնի որ և է մասը աւերւելուց կամ վերանորոգեն արդէն սպառւածը մեր մարմնի մէջ իւր կենսական գործունէութեան միջոցին — կոչւում են սննդատու նիւթեր: Դոցա թւում են՝

- ա) Սպիտակուցային նիւթերը,
- բ) ճարպի տեսակներ:
- գ) Ածխաջրածինները (углеводы),
- դ) Հանքային աղերը
- ե) Զուրը:

Այս հինգ մասերը կարելի է բաժանել երկու կարգի.

- ա) Օրգանական և
- բ) Անօրգանական սննդատու նիւթեր:

¹⁾ Աղ՝ անւանւում է առհասարակ հանքային բաղադրութիւնը օրգանիսմի մէջ:

Օրգանական նիւթերը բաժանուում են երկու տեսակի՝ բորակածին (ԱՅՈՒԵ) պարունակողները և ոչ պարունակողները:

Ասաճներս պատկերացնենք այսպէս.

Մենդատու նիւթեր

օրգանական նիւթեր		անօրգանական նիւթեր	
բորակածին պարունակող և ոչ պարունակող:	սպիտակուցային նիւթեր:	ջուր և հանքային աղեր (աղեր՝ կալիւ, նատրի, կալցիւ, մագնիւ, խլորի, ֆոսֆորի, երկաթի, ծծումբի):	
		ճարպեր և ածխածնայիններ (օսլայ, խաղողի շաքար, եղեգնի շաքար, կաթի շաքար, մրդի շաքար, կամեդ):	

Բայց մարդ գրեթէ երբէք չի դիմում պարզ սննդատու նիւթերին, այսինքն չի գործածում միմիայն սպիտակուցային նիւթեր, կամ ճարպեր և այլն: Առհասարակ իբր կերակուր նա գործ է ածում կամ բնական, կամ արհեստական խառնուրդներ կենդանական կամ բուսական աշխարհից, որոնք և կոչւում են կերակրացիին, օրինակի համար՝ կաթ, միս, ձու, հաց, զետնախնձոր, միրգ, տեսակ-տեսակ համեմներ և այլն:

Խօսենք ամենից առաջ սննդատու նիւթերի տեսակների մասին ջուր-ջուր առած, յետոյ կանցնենք կերակրացին միջոցներին:

Սկսենք սպիտակուցային նիւթերից:

Կենդանական և բուսական հիւսւածքների (ТКАНЬ) մէջ զանազակ սպիտակուցային նիւթերը թէև ֆիզիկական և քիմիական ջուր-ջուր՝ իրարից զանազանազան յատկութիւններ ունին, այնու ամենայնիւ նոքա բաղկացած են միևնոյն 5 տարրերից՝ թթւածնից, ջրածնից, բորակածնից, ածխածնից և ծծմբից, որոնք քիչ տարբերուում են իրանց չափերով: Կան սակայն և մի քանի այնպիսի սպիտակուցային նիւթեր, որոնք պարունակում են բացի յիշեալ 5 տարրերից նաև երկաթ (օրինակի համար արիւնի hemoglobine-ը) և ֆոսֆոր:

Սպիտակուցային նիւթերի երկրորդ յատկութիւնն է՝ անորոշ

ձև ունենալը կամ այլապէս նրանց անձեւ (ամորֆ) լինելը ¹⁾։

Սպիտակուցային նիւթերը կազմում են թէ կենդանու օրգանների էական մասը և թէ նրա կերակուրները։ Սպիտակուցային նիւթերը գտնուում են կենդանու օրգանիսմի բջիջների և հիւսւածքների պինդ մասերում, նմանապէս և օրգանիսմի մէջ շրջող հեղուկ արիւնի մէջ իբրեւ ոչ-լուծւած, երկրորդների մէջ՝ լուծւած ձևով։

Ես ինքս հետազօտել եմ շների զանազան օրգաններում գտնւած սպիտակուցային նիւթերի քանակութիւնը (ենթարկելով շներին զանազան կերակուրների) և մի քանի հարկւրաւոր թւերից միացն առաջ կը բերեմ այսօր՝

Լեարդը պարունակում է	10,15%	սպիտակուցային նիւթեր
Երիկամները	» 9,61%	» »
Մկանուկները	» 15,75%	» »
Ուղեղը	» 7,47%	» »
Արիւնը	» 21,52%	» »

Եթէ ընթերցողը չիշում է իմ ասածները Ֆիզիկական և քիմիական անընդհատ կատարւող պրոցէսների մասին օրգանիսմի մէջ, ստեղծողական և աւերողական պրոցէսների մասին – այստեղ ես պիտի սեւեւացնեմ որ այդ պրոցէսների մեծ մասը կատարւում է սպիտակուցային նիւթերի վրա։

Օրգանիսմը իւր գործունէութեան միջոցին անխուսափելի կերպով աւերում է սպիտակուցային նիւթի մի որոշ մասը թէ անկախ այն բանից թէ որտեղից է այս վերջինը։

Եթէ կերակուրը չի մատակարարում սպիտակուցային այս նիւթերը, կամ եթէ մատակարարում է աւելի քիչ քան հարկաւոր է օրգանիսմին՝ այն ժամանակ այս վերջինը ծախսում է իւր սեփական սպիտակուցային նիւթերից այնքան, ինչքան որ հարկաւոր է՝ անկախ այն բանից թէ ճարպային և ածխածնածնային նիւթերը մատակարարւում են բաւականաչափ քանակութեամբ քան նոյն իսկ առատութեամբ։

Պէտք է աւելացնեմ գիտութիւնը չի լուծել մինչև օրս այն հարցը,

¹⁾ Թէև մի քանի գիտնականներին (Grubler, Ritthausen, Zinoffsky և ուրիշներ) չաջողւեց գտնել կրիստալաձև սպիտակուցային նիւթեր։

Թէ ինչո՞ւ օրդանիսմը չի կարողանում զաղարեցնել սպիտակուցային նիւթերի սպառումը, երբ որ վերջինս արդէն բաւականաչափ քչացել է (օր. քաղցի ժամանակ), ուրեմն ընթերցողը Թող մտաբերի որ ոչ մի միջոցով կարելի չի եղած զաղարեցնել սպիտակուցային նիւթերի սպառումը օրդանիսմի մէջ: Սպիտակուցային նիւթերի այս ծակառազրական կորուստը անդադար աղքատացնում է օրդանիսմը այս նիւթի կողմից:

Եզրափակելով իմ բոլոր ասածները սպիտակուցային նիւթերի մասին, պէտք է տւելացնել որ սպիտակուցային նիւթերը ահագին և էական նշանակութիւն ունեն օրդանիսմի կենսականութեան համար և սր օրդանիսմը անխուսափելի կորուստից ազատելու համար՝ անհրաժեշտ է ուրեմն կերակուրի միջոցով անընդհատ ընդունել օրդանիսմի մէջ սպիտակուցային նիւթեր:

III

Անցնենք այժմ երկրորդ կարգի անդատու նիւթերի նշանակութեան մասին:

Ճարպերը և ածխածնիները բաղկացած են միատեսակ նիւթերից՝ ածխածնից, ջրածնից և Թթւածնից: Սակայն այս ստորերը զանազան չափերով են պարունակում չիշեալ ճարպերի և ջրածնիների մէջ:

Այսպիսով՝ ճարպերը աղքատ են Թթւածնով, բայց հարուստ ածխածնով և ջրածնով: Եթէ կենդանին իրր կերակուր ստանայ էլ բացառապէս ճարպային կերակուր, այնուամենայնիւ նրա օրդանիսմի մէջ տեղի կունենայ սպիտակուցային նիւթերի անդադար լուծումը և վերջի վերջոյ կենդանին կը մեռնի, եթէ մինչև անգամ ճարպային տրւելիք նիւթերը շատ շատութեամբ տեղի ունենան:

Voit-ը տալիս էր իւր շանը միմիայն ճարպ և չը նայած սրա զանազան քանակութեան՝ շունը կորցնում էր մի որոշ քանակութիւն իւր սեփական սպիտակուցային նիւթերից:

Նոյն կերպով՝ եթէ մենք կերակրելու լինենք կենդանին միմիայն ածխածնային կերակրով — սպիտակուցային նիւթերի սպառումը դարձեալ անդադար պիտի կատարւի և կենդանին կը մեռնի քաղցի ենթարկւածի նման:

Ուրեմն՝ ճարպերը և ածխաջրածնները ոչ մի պայմանով չեն կարող փոխարինել կերակուրի սպիտակուցային նիւթերը և եթէ կերակուրը զուրկ է սպիտակուցային նիւթերից՝ կենդանին պէտք է մեռնի:

Ընդհակառակն — սպիտակուցային նիւթերը կարող են փոխարինել ճարպերը և ածխաջրածինները՝ սպիտակուցային կերակուրի զոհացուցիչ չափսով ընդունելիս — կենդանին շարունակում է ապրել, իսկ երբ սպիտակուցային նիւթերը տրւում են առատութեամբ՝ կենդանին ոչ միայն չի ծախսում իւր ունեցած ճարպը, այլ երբեմն մինչև անգամ պաշար է յետ գցում իրա մէջ աննշան քանակութեամբ: Ուրեմն, այս հանգամանքներն էլ ապացուցանում են սպիտակուցային նիւթերի ահագին նշանակութիւնը սննդառութեան համար:

Եթէ այդ այդպէս է — ապա որն է ճարպերի և ածխաջրածինների դերը օրգանիսմի մէջ: Եղած բազմաթիւ փորձերից (Voit, Rischoff, Pettenkofer, Ridder und Smidt և այլն) ապացուցւել է որ ճարպերը և ածխաջրածինները կերակուրի մէջ լինելով՝ թուլացնում, չապաղեցնում են սպիտակուցային նիւթերի սպառումը օրգանիսմի մէջ: Եւ եթէ կերակուրը շատ հարուստ է ճարպերով և ածխաջրածիններով՝ ապա առաջ է գալիս հաւաքումն, գանձումն օրգանիսմի մէջ սպիտակուցային նիւթերի. սրանք և կոչւում են պաշարային սպետակուցային նիւթեր ¹⁾: Մինչդեռ բացառապէս սպիտակուցային նիւթեր պարունակող կերակուրով կերակրելով՝ օրգանիսմի մէջ դժւարութեամբ է զոյանում սպիտակուցային նիւթերի պաշարը, իսկ եթէ տեղի է ունենում այդպիսի զէպք — դա լինում է շատ աննշան չափսով:

Ընդունող կերակուրի մէջ եղած ճարպերը և ածխաջրածինները պակասեցնում են, կամ նոյն իսկ ոչնչացնում են պաշարւած ճարպը օրգանիսմի մէջ: Իսկ եթէ ճարպերը և ածխաջրածինները տրւում են մեծ քանակութեամբ՝ այն ժամանակ զոյանում է զոցանից աւելի մեծ պաշար ²⁾:

¹⁾ Н. Умиковъ. — Физиологія бѣловлагого запаса въ животномъ организмѣ.

²⁾ Ֆիզիոլոգիական այս օրէնքի վրա է հիմնւած Բանդինգի գէրութիւն:

Կենդանու կեանքը կարելի է պահպանել սպիտակուցային նիւթերի աւելի քիչ քանակութեամբ, եթէ տրւի նաեւ ճարպ և ածխաջրածին: Եւ ընդհանրապէս՝ եթէ տրւում է բացառապէս սպիտակուցային նիւթ — կենդանու կեանքը նոյն դրութեան մէջ պահպանելու համար անհրաժեշտ է որ տրւելիք սպիտակուցային նիւթերը տրւեն շատ աւելի մեծ քանակութեամբ:

Եւ վերջապէս ճարպերը և ածխաջրածինները տաքութիւն (тепло) արտադրելու ամենագլխաւոր միջոցներն են:

Տաքութիւնը իւր կողմից այն նշանակութիւնն ունի, որ բոլոր ֆիզիկական և քիմիական պրոցէսները, ուրեմն և աւերողական ու պլաստիկական ծանօթ պրոցէսները, մկանտնաքային և ջրային գործողութիւնները աւելի զօրեղ, աւելի ինտենսիւ են լինում տաքութեան աւելի բարձր աստիճանին ¹⁾:

Ճարպերի և ածխաջրածինների նշանակութեան քննութիւնից երևաց՝ որ ճարպերի և ածխաջրածինների ֆիզիոլոգիական դերը օրգանիսմի մէջ գրեթէ մի է. ուստի նոքա կարող են իրար փոխարինել կերակուրի մէջ: Ռուբների ²⁾ արած հետազոտութիւններից մենք իմանում ենք որ 100 գրամ՝ ճարպը օրգանիսմի մէջ նոյն տաքութիւնն է արտադրում, ինչ որ

234 գրամ — շաքարը կամ

232 » օսլան (կրախմայը):

Նից (չաղութիւնից) բժշկելու միջոցը, որը կապնում է նրանում, որ օրգանիսմին տրւի աւելի պակաս քանակութեամբ ճարպեր և ածխաջրածիններ քան հարկաւոր է, և հէնց ապախտով ոչնչացնելի ճարպի եղած պաշարը օրգանիսմի մէջ՝ ստիպելով օրգանիսմին բանեցնել իւր սեփական ամբարւած ճարպը՝ քանի որ ընդունածը կերակուրի մէջ պակասեցրած է:

¹⁾ Frankland, Stohman, Rubner, Գանիլեւսկի և ուրիշները հետազոտութիւններ են արել զանազան ճարպերի և ածխաջրածինների ալրւելիս տւած տաքութեան քանակութեան մասին: Եղան ճարպը տւել է 9686 կալորի տաքութիւն: Զիթապտուղի իւղը՝ 9479: Խոզի ճարպը՝ 9423: Կովի իւղը՝ 9179: Օսլաց՝ 4479: Շաքարը՝ 4176: Նոյն չափսերով տաքութիւն է գոյանում ալի նիւթերի մեր օրգանիսմի մէջ ալրւելիս (վերոյիշեալ թւերը վերաբերում են լինեալ նիւթերի 1 գրամ = 1/4 մսխալ): Կաւորի կոչում է անհրաժեշտ տաքութիւնը 1 գրամ ջուր 1 աստիճան Յելսի տաքացնելու համար: (Бунге' Лекція по физиологической химии):

²⁾ Ерисманъ' Курсъ Гигіены т. III.

Այժմ մի քանի խօսք անօրգանական սննդատու նիւթերի մասին, որոնց թւումն են հանքային աղերը և ջուրը:

Անօրգանական աղերը նմանապէս անհրաժեշտ են կենդանու օրգանիսմի սովորական, (նորմալ) կազմաձքի (СОСТАВЪ) համար, նման միւս սննդատու նիւթերին: Առանց սոքա չէին կարող կազմել ոչ կենդանական մարմնի հիւսւածքները և ոչ էլ տեղի կունենար օրգանիսմի կենսագործութիւնը:

Փանի որ անօրգանական զանազան աղեր (աղեր՝ կալիի, նատրի, կալցիի, խլորի, ֆոսֆորի, երկաթի, ծծումբի) միշտ գտնուում են օրգանիսմի բոլոր հիւսւածքներում ¹⁾ և հեղուկներում, քանի որ նոյն աղերը լուծւած արտաթորուում են դուրս իբրեւ մէջ, ապա ուրեմն պարզ է, որ նոյն այդ աղերը անհրաժեշտ են օրգանիսմի համար և պէտք է ներս ընդունեն կերակուրի հետ: Սակայն այդ անօրգանական աղերը զանազան չափերով են հարկաւոր աճող և արդէն հասակ առած օրգանիսմների համար. ջահել, աճող օրգանիսմը պէտք ունի այդ աղերից աւելի մեծ քանակութեան քան հասակ առածը. ջահել, աճող օրգանիսմի մէջ ընդունւած անօրգանական աղերի մի մասը արտաքսուում է դուրս, միւս մասը ծառայում է հիւսւածքներ պատրաստելու, կազմելու համար:

Եւ չիրաւի, կաթը որ միակ սննուղն է նորածին երեխայի, պարունակում է իւր մէջ բաւականին անօրգանական աղեր և այն էլ բոլոր վերոյիշեալ տեսակներից:

Forster-ը իւր փորձերով գտաւ օր 3 ամսական երեխան 7 օրւայ մէջ ընդունեց կաթի հետ 12,18 գրամ կիր, իսկ արտաթորեց նրանից այդ 7 օրւայ մէջ 9.24 գրամ, ուրեմն մարմինը հարս-

¹⁾ Folkmann-ի արած հետազոտութիւններից երևում և որ:

ուկը պարունակում է 22,11% անօրգանակ. աղեր

մկանունքը » 1,05% »

սերոլը » 1,06% »

ուղիղը » 1,41% »

թոքը » 1,16% »

լիարղը » 1,38% »

մորթը » 0,70 »

արիւնը » 0,85 »

տացաւ մօտ 3 զրա՛մ կիրով, որը հաւանականապէս գործադրւեց մեծ մասամբ ոսկրները ամրապնդելու համար: Միւս կողմից Voit-ի արած փորձերից երևում է որ եթէ աճող օրգանիսն՝ անհրաժեշտ քանակութիւնից պակաս անօրգանական աղեր է ընդունում, — առաջ է գալիս մարմնի աղքատութիւնը անօրգանական աղերով, որ և յայտնւում է իբր հիւանդութիւն (անդլիական ախտ կամ րախտիսմ):

Հասակ առած օրգանիսմի համար անօրգանական աղերի նշանակութեան մասին եղած բազմաթիւ փորձերից առաջ բերեմ երկու երեքը:

Ֆորստէրը ¹⁾ կերակրում էր 3 աղաւնիներ՝ անօրգանական աղերից զուրկ կերակրով. սոցանից առաջինը մեռաւ 13-րդ օրում, 4-րդը 25-րդ օրում և վերջինը 29-րդ օրում: Նոյնպիսի փորձեր նա արել է 5 մկների հետ և սոքա սատկեցին 11, 13, 14, 15, և 21-րդ օրերում: Երկու շներից, որոնց նա նմանապէս կերակրում էր անօրգանական աղերից զուրկ կերակրով, առաջինը մահի մօտ էր 36-րդ օրում, 2-րդը 26-րդ օրում և, եթէ փորձը շարունակէր, անշուշտ նոքա էլ կը սատկէին: Chaussat և Voit կերակրում էին կրազուրկ կերակրով հասակաւոր կենդանիներին և զտնում էին շատ թէ քիչ ժամանակամիջոցից յետոյ — ոսկրների հիւանդութիւններ:

Ահաասարակ այս փորձերով, երբ կենդանիներին զրկում էին անօրգանական աղեր սրարունակող կերակրից, նկատուել են՝

Մկանունքների ընդհանուր թուլութիւն, մկանունքների կաթւած, ուղեղի գործողութեան խանգարումն, տեսողութեան խանգարումն և վերջ ի վերջոյ խեղդամահ լինելը ամբողջ մարմնի ցնցումով:

Անօրգանական բոլոր աղերից, որոնք անհրաժեշտ են մեր մարմինը կերակրելու համար, միմիայն հասարակ աղն է՝ որ մենք ընդունում ենք մեր մէջ իբր այլպիսի մէկը — մնացած անօրգանական աղերը մենք ընդունում ենք մեր մէջ միւս օրգանական նիւթերի հետ շաղկապւած, որոնցից մեր օրգանիսն օգտւում է՝ իրան համար անհրաժեշտ անօրգանական նիւթերի ստանալով:

¹⁾ Zeitschrift für Biologie 1873. Forster.

Եւ եթէ հասարակ աղը մենք ընդունում ենք ոչ իբրեւ սննդատու նիւթ (որովհետեւ հէնց կերակուրն էլ իւր մէջ պարունակում է բաւականին աղ), այլ իբր համեմ, քանի որ աղի աւելացնելով կերակուրը աւելի համով է դառնում, — սակայն Voit-ի փորձերից հաստատում է որ հասարակ աղի աւելացնելով՝ զօրեղանում է նիւթերի փոխանակութիւնը օրգանիսմի մէջ:

Նգրափակելով անօրգանական աղերի մասին մեր ասածը՝ երեւում է որ կենդանի օրգանիսմը իւր նիւթական կազմաձքի (СОСТАВЪ) պահպանութեան համար պահանջում է անընդհատ փոխատուութիւն անօրգանական աղերի և, եթէ սոքա սովորական (նորմալ) չափսից քիչ են մատակարարւում, կամ խաղառ սահմանափակւում — կենդանին մեռնում է շուտ թէ ուշ:

Անցնենք ջրին: Ջուրը՝ նման սպիտակուցային նիւթերին, ճարպերին, ածխածիններին և անօրգանական աղերին — կազմում է մի նշանաւոր սննդատու տարր, ուստի ջուրն էլ պիտի միշտ մատակարարւի միւս նիւթերի նման:

Մեր բոլոր հիւսւածքները և օրգանները պարունակում են իրանց մէջ ջուր:

Ջրի քանակութիւնը որոշելու համար արւած են փորձեր Rischoff, Lawes, Gilbert և իմ կողմից: Ես հետազօտել իմ ջրի քանակութիւնը առատութեամբ կերակրւած և անօթի պահած շների, ճագարների աղաւնիների, գորտերի և կրիաների հիւսւածքների և օրգանների վրա: Ահա միջին թւով ջրի քանակութիւնը նորմալ շների մի քանի օրգանների մէջ՝

լեարդը պարունակում է	69,35%	ջուր
երիկամունքը	» 77,56%	»
մկանունքը	» 75,78%	»
ուղեղը	» 81,56%	»

Ջրի ֆիզիոլոգիական ծառայութիւնը սննդառութեան դրծում սրանք են՝

ա) Ջուրը կազմում է, վերոյիշեալ թւանշանների համաձայն, մեր օրգանների բաղկացուցիչ մասերից զլիսաւ որը:

բ) Զուրը հասցնում է սննդատու նիւթերը դէպի օրգանիսմի բոլոր բջիջները (клетка) և արտաքսում է բջիջների լուծման արդիւնքները, որոնք թէ աւելորդ և թէ փնասակար են դարձել:

գ) Միայն ջրի միջոցով են կատարւում բոլոր բիմիական պրոցէսները օրգանիսմի մէջ, և վերջապէս:

դ) Հիմնւելով Voit-ի փորձերի վրա՝ ջրի առաւել մատակարարումը օրգանիսմի մէջ—ուժեղացնում է վերջինիս մէջ նիւթերի փոխանակութիւնը:

(Վերջը միւս անգամ)

ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄ ԵՒ ԶՈԼԱՆ

(GUSTAVE FLAUBERT)

ՖԵԼԻՔՍԻ

(Շարունակութիւն ¹)

ՓԼՈՒՆԵՐ

„Pourquoi gonfler ce qui est plat“!

ՖԼՔԵՐ:

(«Բովար և Պէկլւէ»-ի մէջ):

Ֆլոբերն ու Բալզակը:—Բոման և գիտութիւն:—Ֆլոբերի տիպերը:—Նրա աշխատասիրութիւնը:—«Տիկին Բովարին»:—Այս գրքի նշանակութիւնը:—Նրա պարունակութիւնը:—Էմման իբրեւ զգալնական արարած:—Նրա հոգեբանութիւնը, նրա հիասթափումն ու լուսահատութիւնը:—«Սալամբո»-ն իբրեւ պատմական վէպ:—Նրա համառօտ բովանդակութիւնը:—Մաաթօն և Սալամբօն:—Ֆլոբերը բովանդակ-գիտնական է:—Նրա ոչնչականութիւնը և հուետեսութիւնը:—Գեղարեստի անդիմութիւն (impersonnalité de l'art):—Համառօտութիւն Ֆլոբերի գործունէութեան:

I

Եթէ նատուրալիստի առաջին յարկը հաստատ հիման վրայ Բալզակը կառուցեց, երկրորդը Ֆլոբերի դործն էր:

¹) Տես «Մուրճ» № 5.

«Տիկին Բովարի»-ի հեղինակը մեր գիտական դարի հարազատ պալատին է: Նրա ծնունդն ապացոյց էր այն մեծ օրէնքի ճշտութեանը, թէ մարդս ժամանակի արդիւնք է:

Ժամանակը պահանջում էր ճիշտ գիտումներ և անալիզ (լուծում), և Բալզակն ու Ֆլորերը պիտի ծնւէին:

Երկար, թէև չափազանց հետաքրքրական, կը լինէր ցոյց տալ, թէ ինչպէս սերտ կապւած է բոմանը գիտութեան հետ: Կարելի է ասել, որ գիտութեան զարգացման իւրաքանչիւր խոշոր շրջանը յեղափոխում է վիպասանութիւնը:

Մեր դարի բոմանը, ճշմարիտ որ, ձեռ-ձեռի է տւած գնում գիտութեան հետ:

Կիւլէիի հրաշալի գիւտերը, Լամարկի, Սեանտ-Հիլէրի յափըշտակող ուսմունքը, բժշկական գիտութիւնների մշակումն մի նոր զարկ տւին բնագիտութեան զարգացման, և ծնւեց Բալզակը, որ կամեցաւ մոցնել բոմանի մէջ գիտումներ և փորձ, այսինքն՝ գիտութեան առաջադիմութեան երկու անհրաժեշտ տարրերը: Այս գիտումները «Մարդկութեան կոմեդիայի»-հեղինակին միջոց տւին ճշգրիտ նկարագրելու տալ իւր գիտած կեանքից: Սեանտ-Հիլէրի թէօրիայով զբաււած, նա ճգնում էր մարդին էլ ենթարկել շրջապատող հանգամանքների ազդեցութեան, ինչպէս այդ արել էր Սեանտ-Հիլէրը կենդանիների վերաբերմամբ:

Սակայն այս վերջին մեծ ձեռնարկութիւնը չը յաջողեց Բալզակին, և չը յաջողեց մեր կարծիքով հետեւեալ պատճառներով.

Նախ բոմանտիստը իւր ճոխութեան զագաթնակէտին հասած, դեռ չափազանց զօրեղ թոճութեան մէջ էր պահում իւր դարը, և Բալզակն ինքը, չը նայելով իւր դրական հանճարին, դեռ չէր ազատուել այս կախարդանքից:

Վ. Հիւգօի հիւանդական շունչը վարակել է մեր դարը: Գիտութեան կերակուրը բժշկում է այս հիւանդութեան արտայայտութիւնները, բայց երկար չի կարողանում արմատախիլ անել նրան: Ֆրանսիական ամենամեծ նատուրալիստ զրոյները վարակւած են նոյն չափազանցրած իդէալականութիւնով:

Բալզակի գործերի մի սուար մասն ապացոյց է այն կռիւն, որ մղում էր վիպասանի դրական ուղեղը բոմանտիկ սրտի հետ: Եւ

ամեն անգամ, երբ ուղեղը թուլանում է, գրողի զիւրազգացնութիւնը տիրապետում է ասպարէզին:

Այսպէս պէտք է բացատրել, մեր կարծիքով, այն զարմանալի հանդամանքը, որ Բալզակը, միջավայրի ճշգրիտ նկարագրութիւն տալով հանդերձ, իյեւալացնում է զործող անձերին: Նա ձեզ լուսանկարչական ճշտութիւնով մի որ և է շրջանի սլաոկեր է ներկայացնում, իրերի վերաբերմամբ համաշափութիւն (սլոպորոցիան) սահմանելով, յանկարծ այնտեղ մի հսկայ է կանգնեցնում:

Գուցէ այս հանդամանքին աջակցում էր և այն, որ նաուուրալիսմի հօր հանձարը թոյլ չէր տալիս նրան բանական մարդուն բոլորովին յարմարեցնել կենդանիներին, զանց առնելով նրա հոգեկան ոյժը, ինչպէս աշխատեցին անել մի քանի յետագայ գրողներ:

II

Ֆլոբերի ժամանակով, յիսուն—վաթսունական թւականներին, դրական գիտութիւնները մեծ զարգացումն էին ստացել:

Անմահ Բիշպից յետոյ, մարդակազմութեան ուսումնասիրութիւնը մի նոր զարկ ստացաւ: Իսկ Շարլ Բելի, Ֆլուրանսի, Մաթանգիի հետազօտութիւնները մի նոր լոյս գցեցին մարդու Ֆիզիոլոգիայի վրայ և բացատրեցին մեր ուղեղի գլխաւոր ֆունկցիաները:

Գիւստաւ Ֆլոբերը մի յայտնի բժշկի որդի էր և ուրեմն միջոց ունէր հետաքրքրելու բժշկական գիտութիւններով: Նւ, իրօք, նրա զրքերից ակներև է, որ Գիւստաւը հետևում էր այս գիտութիւնների զարգացման:

Բացի սոսկ գիտական տեղեկութիւններից, մեծ վիսպասնը իւր էտիւդների մէջ մոցրեց այն ձևերը, որոնք գործ են ածւում բնագիտութեան մէջ, այն է՝ մանրահատումն (disséction):

Նա քրքրում է իւր նկարագրած կեանքը, լաւ գննում է իրերի դասաւորութիւնը՝ և փոխադարձ շարաբերութիւնը, քննում է առարկաները մի առ մի ոչ թէ իւր սեփական, այլ հերոսների տեսակէտից, և լուսանկարչական ապարատը ձեռին մանում է առօրեայ կեանքի խորքերը և իւր պատկերները վերցնում: Սենտ-Բեովը նրան անատոմիստ և ֆիզիոլոգ է անւանում: Նա այնպէս է բռնում գրիչը,

ինչպէս ուրիշները (անատոմիական) զանակը», ասում է այս կրիտիկոսը:

Ֆլորերը չը բաւականացու շրջանի, կամ ինչպէս մենք անւանեցինք, միջավայրի ճիշտ նկարագրութիւնով, ինչպէս արդէն արեւ էր Բալզակը: Մանօթանալով անատոմիայի և ֆիզիոգիայի հետ, ըմբռնելով մարդու զգայարանքների գործունէութիւնը, և որ զլիսուորն է նրա ուղեղի ֆուկցիաները, «Սալամբո»-ի զրոյը կամեցաւ այս նորագոյն զիտական տեղեկութիւններն էլ մոյցնել վէպի մէջ: Այսպիսով նրան յաջողեց վստահութիւնով անել այն, ինչ որ նրա մեծ յաջորդն անգամ չէր կարողացել իրադործել. — նա փոքրացրեց գործող անձերին:

Մարդը, նորագոյն հետազօտութիւնների շնորհիւ, արդէն փոքրի շատէ մանրահատուած, քննւած, պարզւած էր, և այս մանրակրկիտ ուսումնասիրութիւնը ցոյց տւեց, որ նա ոչ հրեշտակ է և ոչ հրէշ, ինչպէս քարոզում էր բոմանտիկ զպրոցը, այլ հասարակ մահկանացու: Հիւղոյի, Դիւմա — Հօր, Սուլիէի հերոսներն անբնական, երեւակայական անձնաւորութիւններ էին, Շէքսպիրի բոլոր գործող անձերը, Բալզակի գործող անձերի մեծ մասը — բացառական էակներ: Իսկ «հասարակ մահկանացուն», իսկ առօրեայ մարդը, որին մենք ամեն րոպէ պատահում ենք, որի հետ ապրում ենք, այսինքն՝ մեր հայրը, մեր եղբայրը, մեր հարեանը, վերջապէս մենք ինքներս դեռ չէինք նկարագրւած:

Միևնոյն ժամանակ գիտութիւնն ուսուցել էր նրան, որ մարդու մէջ կայ և ինքնուրոյնութիւն, և ուրեմն նա հլու հպատակ չէ «շրջապատող հանգամանքների», ինչպէս աշխատեցին անել նրա հետևողները:

Մի խօսքով, ֆլորերին վիճակւած էր նկարագրել հասարակ մահկանացուներին իրանց ուղեղով ու զգայարանքներով:

Նս չափազանցեում եմ:

Կայ մի ուրիշ հանճար, որ անտարակոյս մեծ ներգործութիւն է ունեցել ֆլորերի վրայ: Դա Ստենդալն է:

Մենք մտադիր ենք աւելի մանրամասն քննել այս անզուգական վիպասանի գործը — որին Տէնը «մեծ բոմանտիստ, դանիս ամենամեծ հոյեբան» տիտղոսներն էր տալիս — երբ կ'ուսումնասիրենք հոգեբանական զպրոցը:

Առ այժմ կ'ասենք, որ Ստենդալը դեռ երեսնական թվականներին, երբ Հիւզօն ստեղծում էր Հերնանիսեր և Մարիոն Դըլորմներ, զարմանալի ճշտութիւնով հոգեբանական էտիւզներ էր տալիս մեզ: Եւ այս էտիւզներն այնքան ճիշտ են և այնքան նշանաւոր, որ արդի հոգեբանները Ստենդալին իրանց հայրն են անւանում:

III

Գիւստաւ Ծլոբերը ծնւեց Բուանում 1821 թվին: Նա քսաներկու տարով Բալզակից կրտսեր էր: Նրա բժիշկ հայրը բաւականին կարողութեան տէր մարդ էր ու ունէր: Հէր խնայում իւր որդու զարգացման համար:

Ծլոբերը չափազանց աշխատասէր էր: Աշխատանքը մոռացնել տւեց նրան սէրը և նա ամուրի մեռաւ: Ծլոբերն յիշեցնում է Ալեքսանդր Դիւմայի քիմիկոսին, որ ասում է.

— Ես ժամանակ չունեցայ սիրելու:

Եւ ճշմարիտ որ «Տիկին Բովարի»-ի հեղինակը գիտնականի պէս է ուսումնասիրում իւր նկարագրած միջավայրը:

Նախ քան մի գիրք գրելը, Ծլոբերը գցում է իրան տաժանական աշխատանքի մէջ: Տարիներով նա կը խրէի գրադարանների մէջ, կը քրքրէի գրքերի կոչտեր, հատորներով դիտողութիւններ կը գրէ: Օրինակ. «Երկրագործութեան մասին մի տասը էջ գրելու համար, նա քսան-երեսուն հատոր մասնագիտական գրքեր կը կարդայ, ասում է Զոլան, — բացի այդ նա հարց ու փորձ կանի հասկացողներին, կը հետազօտի դաշտերը: Եթէ հարկ լինի՝ կ'գնայ նկարագրելի տեղը և այնտեղ կ'ապրի... Միշտ նոյն առանձին խնամքը դէպի իրականը: Նա քննում է լուսանկարները, պատկերները, ժամանակակից լրագիրներն ու գրքերը... Իւրաքանչիւր վէպ նրան ստիպում է մի ամբողջ աշխարհ տակնուվրայ անել: Իւր «Զգացնական դատօրհարակութիւն» ըրմանը գրելիս, նա ուսումնասիրել է մեր երկրի քսան տարւայ քաղաքական և բարոյական պատմութիւնը և տւել է մեզ մի ամբողջ սերնդի թողած ահագին աղբիւրները: Վերջապէս, «Սալամբո» և «Սուրբ Անտօնիոսի փորձութիւն» ըրմանների համար աշխատանքն աւելի ևս բեղմնաւոր էր: Նա ճանապարհորդել էր Աֆրիկա և Արև-

մուտք, դատապարտել էր իրան մանրամասն ուսումնասիրել հնու-
թիւնը, թափ տալ բազմաթիւ դպրերի փոշին»:

Ֆլոբերի իւրաքանչիւր գիրքը մի ամբողջ պատմական շրջանի
նկարագիր է, նա ոչ մի տող չէր գրում առանց երկար խորհելու:
Երբեմն տասը հատորաչափ «դիտողութիւնները» միայն մի բովանդի
նիւթ էին զաւնում: «Իսկ այս դիտողութիւններից մի տող գրելու
համար, նա մի ամբողջ էջ էր կտրում», ասում է Զոլան: Նա իւր
գրքերը գրելու համար լատիներէն է սովորում, զանազան գիտու-
թիւններ, ինչպէս՝ հնագիտութիւն, Արեւելքի հին պատմութիւն է
ուսանում: Այսպիսով նա վստահ էր, որ իւր «փաստային մասը» ան-
խախտելի է:

Երբ նա հրատարակեց իւր պատմական «Սալամբո» բովանդ, որի
մէջ նկարագրում էր հին Կարթագէնը, մի գերմանացի պատմաբան
և հնագէտ փորձեց սխալ ցոյց տալ մի քանի մանրամասների մէջ:
Այն ժամանակ Ֆլոբերը մի ահագին ցուցակ սպագրեց, որից երեաց,
որ այս տիտանեան աշխատողը տակն ու վրայ է արել հումայա-
կան և յունական ամբողջ գրականութիւնը, նորագոյն հնագիտական
հետազոտութիւնները և կլանել է այն ամենը, ինչ որ յարաբերու-
թիւն ունէր Կարթագէնի պատմութեան հետ:

Եւ մեծ ուսմանիստը աւելացնում է, թէ նա չի արգելում քննա-
դատել գրքի գրականական մասը, բայց ոչ դիւ թոյլ չի տալ ձեռ-
տալ նրա պատմական և սոսկ գիտնական բաժինին:

Ահա ինչ կատարելագործութեան էր հասցրել Ֆլոբերը բովանդի
նկարագրական մասը:

Նոյնչափ մշակեց նա իւր ոճը: Ճիշտ պատկերը ճիշտ գծերով
պիտի նկարէր: Այս է պատճառը, որ Գ. Ֆլոբերը չէր զաւարտւում
իւր ոճը կոկելուց, նրբացնելուց, նախադասութիւնները հաւաք,
կտրուկ դարձնելուց:

Նա նոյնչափ խստապահանջ էր դէպի իւր ստիլը, որչափ դէպի
պատկերների ճշտութիւնը: Նրա աչքին ստիլն ահագին նշանակու-
թիւն ունէր գրաւճախ տեղողութեան վրայ: Բառերը պիտի ճշտապէս
արտայայտեն մեր միտքը, որպէս զի այդ միտքը յարատեւութիւն
ունենալ: Բացի ճշտութիւնից նա, ժամանակակիցների ասելով, այնպէս
էր կազմում իւր Ֆրազները, որ կարգալիս երաժշտական մելոդիա

դուրս դար: Նախադասութիւնն աւարտելիս նա ինքը բարձր ձայնով մի քանի անգամ կարդում էր և եթէ մի որ և է բառ կամ մի հնչիւն խանգարում էր այս մեղդիան, փոխում էր իսկոյն:

IV

Այս գրելիս սեղանիս վրայ դարսած ունիմ մի փոքրիկ կոյտ գրքերի, հինգ հատորներից բաղկացած. այս Գ. Ֆլոբերի հինգ բովանդակներն են «Տիկին Բովարի», «Սալամբո», «Չղաչական դաստիարակութիւն», «Սուրբ Անտօնիոսի փորձութիւնը», «Բովար և Պեկիւշէ»:

Ես թերթում եմ այս վաղուց ծանօթ հատորները և չեմ կարողանում զսպել հիացումս:

Ֆլոբերը դարիս ամենամեծ վարպետներից մէկն է:

Այստեղ այլ ևս Բալզակիին ահագոցիչ աշտարակները և եղիպտական պիրամիդները չը կան, — այստեղ մի նրբաշէն, մարմարիօնէ պալատ է, որի սքանչելի քանդակներն ու զարդարանքները ապշեցնում են մարդուս:

«Տիկին Բովարին» լոյս տեսաւ 1856 թւին:

Այս թւականը մի պարագլուխ է իրական բովանդակի զարգացման մէջ:

«Տիկին Բովարին» այն գրքերից է, որոնք դուրս են քաշում հեղինակին անցյալութիւնից և ուղղակի անմահութեան պատուանդանի վրայ դնում:

Անտարակոյս այսօր այս վէպը նատուրալիստի գոհարներից մէկն է, իսկ 1856-ին նա միակ գոհարն էր:

Այստեղ իդէալացումն, փանտազիա չը կայ: Այստեղ նկարագրում է իսկական կեանքը իւր գեղեցիկ և սգեղ կողմերով:

«Տիկին Բովարին» Փրանսիական նատուրալիստի զուլս-գործն է, ասում է զը Բրիւնըտիերը, այս բովանդակի պիտի մնայ իբրեւ գրական դպրոցի առաջին ամենաբարձր յայտնութիւն:

Այս առաջին աշխատութիւնով Ֆլոբերը մի զօրեղ գրական յեղափոխիչ է հանդիսանում: Միջավայրի կարճ և ազդու նկարագրութիւնը, գործող անձերի իրականութիւնը, իրանց հոգեբանական ճշտութիւնով — ամբողջ գրածքը դուրս եկաւ հեղինակի գրչի տակից իբրեւ ժամանակակից գրական դպրոցի յաղթանակ:

«Տիկին Բովարին» կնոջ անհաւատարմութեան (ադիւլտեր-adul-tère) պատմութիւնն է:

Անցքը պատահում է եւրոպական այն փոքրիկ գիւղերից մէկում: որոնք Ֆրանսիայում յայտնի են petits pays անունով: Այստեղ ապրում է բժիշկ Բովարին, որ առաջին կինը կորցնելով, ամուսնանում է Էմմայի հետ: Այս Էմման է տիկին Բովարին, բոմանի հերոսուհին: Տիկին Բովարին վեպի առանցքն է, որի շուրջը պտտւում են մնացած անձնաւորութիւնները: Ֆլորերը մի նոր ձև է գործ դնում: Նա վերցնում է Էմմային մանկութիւնից, ցոյց է տալիս մեզ նրա հոգեկան զգացմունքների զարգացումն, որոնք բնականաբար պիտի տանէին նրան զեպի ադիւլտեր (անհաւատարմութիւն):

Տասներեք տարեկան հասակում Էմման տարւում է մենաստան (այն ժամանակաշրջանի սեռը մենաստանումն էր միայն կրթւում): Սկզբում այս փակած կեանքը դուր եկաւ փոքրիկ Էմմային և նրա զգացուն զիւրաթեք ոգին այս խորհրդաւոր միջավայրում ընկնում է մի առանձին սքանչացման (էքստազի) մէջ: «Պատարագին ուշադիր լինելու փոխարէն» նա դիտում էր իւր աղօթադրքի զարգապատկերները, և նա սիրում էր հիւանդ Քրիստոսի դառը, որի սիրտը սուր նետերով ծակոտած էր, սիրում էր խեղճ Փրկչին, որ ընկճւում էր, խաչի ծանրութեան տակ... Խոստովանանքի զնալիս զանազան մանր մեղքեր էր հնարում, որպէս զի աւելի երկար ժամանակ մնայ չոքած, ձեռքերը միացրած, երեսը վանդակապատին, քահանայի շշուշի տակ: Նրբ քարոզների մէջ լսում էր Քրիստոսի համեմատութիւնը երկնային փեսացուի, երկնային ամուսնու, երկնային սիրահարի հետ, կամ երբ չաւիտեանական պսակի անունն ընկնում էր նրա ականջը, սիրտը լցւում էր անասելի քաղցրութիւնով:

Ահա մի գրչի շարժումով մի զգացուն հոգի նկարագրւած: Ինչպէս մարդ զգում է, որ գործ ունի մի նեարդային փոքրիկ արարածի հետ: Տիկին Բովարին իւր ժամանակաշրջանի հարազատ զաւակն է, նա կրում է իւր վրայ դարիս նեարդայնութեան (нервность) կնիքը: — Էմմայի բնաւորութեան այս առանձնաշատկութիւնը պիտի զեկավարի նրա բոլոր գործերը:

Եւ ինչպէս բնական են այս աղջկայ ոգու բնորոշ գծերը:

«...Նա արկածներ էր որոնում: Նա սիրում էր ծովը փոթո-

րիկներ չհամար, իսկ այն կանաչն էր միայն զուր զալիս նրան, որ բուսնում էր աւերակների մէջ: Ամեն ինչից անհրաժեշտաբար նա պիտի իւր համար մի օգուտ զուրս բերէր, և դէն էր զցում իբրեւ անօգուտ բան, ինչ որ կերակուր չէր տալիս նրա սրտին, որովհետեւ նա ոչ թէ զնահատում, այլ զգում էր, և մի պէջճաժ զիտելիս, նա միմիայն յուզմունքներ էր որոնում:

Այս զիւրազգացութիւնն աւելի ևս զարդանում է անկանոն և անխոր ընթերցանութիւնից: Մօր մահը մի մեծ հարւած էր Էմմայի փափուկ սրտին. նա դբում է հօրը, որ իրան էլ մօր զերեզմանում թաղեն և երջանիկ է, որ նրան խղճում են և հիւանդ են կարծում:

Այս էն Էմմայի մասին ունեցած տեղեկութիւնները:

Նա թողնում է մենաստանը: «Նրբ բժիշկ Շարլ Բովարին, նրա ապագայ ամուսինն առաջին անգամ եկաւ Բերտօ (զիւղը), Էմման իրան արդէն հիասթափւած էր համարում, կարծես ամեն բան տեսել էր արդէն և այլ ևս ոչ մի զղացմունք անյայտ չէր մնացել նրանից»: Սակայն, ինչպէս միշտ, մատաղահաս օրիորդը կամենում է Շարլի մէջ տեսնել իւր երազածը: Ամուսնութիւնը, ինչպէս և պէտք էր սպասէ, չի լցնում այն դատարկութիւնը, որ տիկին Բովարին զեռ օրիորդ ժամանակն զգում էր իւր մէջ, և Էմման աշխատում էր հասկանալ երջանկութիւն, կիրք և սիրարբեցութիւն բառերը, որոնք այնքան քաղցր էին հնչել կարգացած դրքերի մէջ:

Ընթերցողը լաւ զգում է, որ այս կինը երբեք բախտաւոր չի լինելու: Էմմայի ներքին աշխարհն այնքան հարուստ էր կրքերով, բուռն իղձերով, որ նրա ամուսինը չէր կարող համապատասխանել նրա հոգեկան պահանջներին:

Այսպիսի կնոջը մի հաստատակամ և զօրեղ մարդ պիտի պատահէր, որի բարոյական և ֆիզիքական ոյժի դէմ խոնարհւէր նա, զգալով իւր վրայ ամուսնու առաւելութիւնները:

«Չէ որ տղամարդն ամեն ինչ պիտի զիտենայ, չէ որ նա հոգեկան մեծ յուզմունքների հետ պիտի ծանօթացնի իւր կնոջ, բանայ նրա առջև գոյութեան բոլոր զաղանկները»: Այսպէս է մտածում տիկին Բովարին, այս է նրա իդէալական տղամարդը:

Եւ ի՞նչ ստացաւ այս երազածի փոխարէն: Մի գիւղական բժիշկի, որ վաղուց ետ է մնացել գիտութիւնից, որ ոչինչով չի հետաքրքրուում և, Բուան եղած ժամանակը, մի անգամ զոնէ չի մոնում թատրոն, որ կորցնելով պահանջ դէպի ինքնազգայուն, գնալով վարակել էր շրջապատող զուհիկ զաղափարներով, կոպիտ գիւղացի էր դառել իւր անհամ, անհետաքրքիր խօսակցութիւնով, որոնց մէջ փթած, հանրածանօթ մոքեր էր յայտնում: Եւ խեղճ հիասթափւած Էմման ի զուր էր որոնում նրա մէջ մի ձիրք, մի աչքի ընկնող ընդունակութիւն, մի կոոր ինքնուրոյնութիւն, որին կարողանար կաշել իւր իզէալը փրկելու համար: Բայց, Շարլը ոչ լողալ զիսէ, ոչ զինախաղ, ոչ հրացան բանացնել զիսէ և ոչ ձի հեծնել...

Տիկին Բովարիի սիրտն այսպիսով ամեն ինչ դործ դրեց իւր ամուսնուն սիրելու համար: Բայց Էմման զգում է, և ընթերցողն էլ զգում է նրա հետ, որ քանի զնայ, քանի որ մանրամասն ուսումնասիրի նա իւր ամուսնուն, աւելի կը հեռանայ այս անգոյն, դատարկ, անբովանդակ և տաղտկալի էակից:

Եւ յուսահատութեան մէջ խեղճ կիներն այս ճիշն է արձակում, ճիշ, որ խուլ բողբ է իրան կամաց կամաց տիրապետող ազուլտերի պահանջի դէմ:

—Տէր Ատուած, ինչի ամուսնացայ ես Շարլի հետ:

Նա համեմատում է իւր նոր ծանօթ արիստոկրատներին հետ, մի վիկոնտի, մարկիզ դ'Անդերլիլլիէի հետ, որոնց մէջ զանում է մի ինչ որ գրաւիչ յափշտակող բան, որ բացակայ է իւր ամուսնու մէջ: Մարկիզը հարուստ մեծատուն, մի վերին աստիճան կրթւած, նուրբ արիստոկրատ շարժումներով և ձևերով, կախարդիչ պերճախօսութիւնով, սրախօս լեզուով, մանր ոտերով, Պարիզի ձուլարանի միջով անցած կաւալեր էր: Էմման պիտի սիրէր նրան, որովհետեւ նա հակապատկեր էր իւր ատելի ամուսնուն:

Սակայն Էմման, այս շիտակ բնաւորութիւնը, չէր կարող հաշտւել իւր երկդիմի դրութեան հետ: Գուցէ Շարլն այնքան էլ անտանելի չէ, գուցէ զեռ հնար կայ սիրելու նրան և այդպիսով իւր պատիւը փրկելու:

Մի միջնադէպ յոյս է տալիս նրան: Դեղարար Համէի խորհրդով և յորդորանքով բժիշկ Բովարին որոշում է մի տղայի ծուռ ոտը

դրստել: Այս օպերացիան պիտի ընդարձակէր բժշկի հեղինակութիւնը: Շարլը պիտի դանակ բանեցնի, զուցէ առաջին անգամ իւր կեանքում, Շարլը վերջապէս մի մեծ գործ պիտի կատարի: Ահ, որքան երջանիկ է Էմման, ինչ յուզմունքով ընկնում է նա իւր մարդու վզովը, երբ սա, օպերացիան վերջացրած, նրա սենեակն է մտնում:

Վերջապէս, իւր ամուսինն էլ ուժեղ մարդ է, վերջապէս կարող է սիրել նրան... Յաւակցաբար, մի ուրիշ, աւելի սարսափելի, հիասթափումն սպասում էր տիկին Ռոլարին:

Մի քանի օրից յետոյ տղայի ոտն ուռչում է և կերպան սկսում է: Քաղաքից հրաւիրւած բժիշկը դատաւարտում է օպերացիան, որը մի մեծ աններելի սխալ է համարում: Եւ ահա Շարլն աւելի նսեմացած, աւելի փոքրացած է իւր կնոջ աչքին, որ յուսահատւած անդառնալի կերպով արւում է աղիւլտերին, մէկ սիրեկանից միւսին անցնելով:

V

Ես երկար կանգ առայ Էմմայի վրայ, որովհետեւ այս Ֆլորերի ամենահատուտ և ամենաքանդելի տիպերից մէկն է:

Ինչպէս տեսնում ենք, հեղինակը ներում է Էմմային իւր մեծ յանցանքը, նա բաց է անում մեր առաջ այս կնոջ հոգու ծաւթերը և հաստատում է, որ նրա անհաւատարմութիւնը ղէպի իւր ամուսինը մի անփախչելի չարիք էր, եթէ նկատի ունենանք Էմմայի նեարդացնութիւնը և հանգամանքների անհամապատասխան դարսումն:

Էմմայի հոգեբանութիւնը մեզ հասկանալի է և ուրեմն հեշտ:

Արդ, այդ տեսակ կինն անկարող է հոգեկան անդորրութիւն գտնել ամուսնական կապերը ծխտելով և օտարի սիրելով: Այսպիսի «ամբողջ բնութիւնները» ամբողջովին են արւում իրանց սիրուն: Էմման տանջւում է սոսիւլած լինելով բաժանել իւր սէրն առելի ամուսնու և սլաշտած սիրեկանի մէջ և, զլուխը բոմանալի մաքրելով լի, աղաչում է մարկիզին, որ փախցնի իրան մի անծանօթ երկիր, որտեղ նրանք կարող կը լինէին անարգել սիրել միմեանց:

Սակայն մարկիզը հեռանում է նրանից: Էմման սկսում է յաճախել Աէոնին, որ բնակւում է քաղաքում: Այս նոր աղիւլտերն էլ բաւականութիւն չի տալիս այս կնոջ իդէալին, նա

օրից օր աւելի և աւելի է զգում իւր սրտի դատարկութիւնը: Մի ռւրիչ ցաւ տանջում է նրան: Սիրեկանները նրան մեծ գումար են նստել. նա ընկել է վաշխառուների ծանկը, որովհետեւ վստահութիւն չունի ամուսնուց իւր պարտքերի վճարումն խնդրել: Մի օր դատաստանական աստիճանաւորները գալիս են Լվեր են գրում տան բոլոր իրեղէնները պատքերի փոխարէն: Եւման պարտատիրոջ մօտ է գնում, նրա ոտերն ընկնում, որ սպասել տայ, բայց բանկիրն ամօթալի առաջարկութիւն է անում: Նա վճռում է իւր սիրեկաններին դիմել — երկուսն էլ մերժում են օգնել նրան: Այն ժամանակ, անպատւած, նսեմացած, իւր ամենասուրբ զգացմունքները — որ նա չէր զլացել այս անխիղճ մարդկանց — ոտնաղոխ տեսած, տիկին Բոլարին, յուսահատութեան զազաթնակէտին հասած, անձնասպանութիւն է գործում...

Շարլ Բոլարին այն բազմաթիւ բժիշկներից է, որոնք զիտութիւնն արհեստի են վերածում: Նա իդէալ չունի, նրա ընդունակութիւնները սաստիկ սահմանափակ են, ինչպէս սահմանափակ է այն շրջանը, որի մէջ գործում է: Շարլը մոտաւոր զարգացումով, հոգեկան ձգտումներով անհամեմատ ցած է իւր կնոջից: Նա յուզմունքներ չի սիրում և չի որոնում, նրա կեանքը բուսական է: Սակայն այս, աւերես անտարբեր, մարդու սրտում մի անսահման փափկութիւն է տիրում, — բուռն սէր դէպի իւր կինը և անչափ ներողամտութիւն դէպի նրա սիրեկանը...

Մի չափազանց յաջող տիպ է դիւղական դեղագործ Համէն, որ ամեն բոլի աշխատում է իւր կարեորութիւնն ակներեւ անել: Նա ազատամիտ է, եզրիւններին հալածող, մի կիսագրագէտ դրչակ, որ կեղծ թղթակցութիւններ է գրում Բուանի լրագրում ու արհամարհաբար վիճում է դիւղական քահանայի հետ: Նա այնպէս է աչք զգում շարւած դեղաշիշերի վրայ, որ կարծես մարդկութեան փրկութիւն այս դեղերի լատիներէն անունների մէջն է...

Այս տիպերն ստեղծելով ֆլոբերն ապացուցեց, որ հարկ չկայ հրէշներ և հսկաներ ստեղծել վէպը հետաքրքիր դարձնելու համար: Նրա դրական ուղեղը պահանջում էր առօրեայ կեանքի նկարագրութիւն, առօրեայ մարդկան հոգեբանութիւն...

Մենք չիշխենք արդէն, թէ ինչ խնամքով ուսումնասիրում է

Ֆլորերը շրջանը, միջավայրը, որտեղ անցնում է գործողութիւնը: Այս նկարագրական մասը «Տիկին Բովարիի», ինչպէս նրա բոլոր բովանդակների մէջ, վարպետական կատարելագործութեան է հասցրած:

VI

Իբրեւ նմուշ Ֆլորերի պատմական վիպասանութեան յիշենք նրա հուշակաւոր «Սալամբո»-ն, որ լոյս տեսաւ 1863-ին:

Հեղինակը կամեցաւ զիտնական մեթոդ մտցնել պատմական բովանդակի մէջ:

Կարթագէնի վարձկան զօրքը Համիլկարի այգիում տօնում է Էրիքսի պատերազմում իւր տարած յաղթութիւնը: Այս մի խառնուրդ է ազգութիւնների, հագուստների և զէնքերի: Մենք ընկնում ենք մի առասպելական աշխարհ, խրւում պատմութեան խորքերը: Շնչառապառ դիտում է ընթերցողը այս գիւթական տեսարանը և անդգայաբար, մտքով յափշտակւած, թերթում է էջերը, սաւառնելով դէպի այն անծանօթ աշխարհը, որին՝ Ֆլորերի զօրեղ ձեռք յանկարծ քողաթափ է անում:

Եւ այնքան կենդանի է այս 5—6 էջում նկարագրած խրնջոքը, որ մենք պարզ տեսնում ենք տասնաւոր տարբեր տարրերից բաղկացած վարձկան զօրքը, տեսնում ենք բիւրաւոր զինւորների փայլուն հագուստները, մերկ գունաւոր հսկայական կուրծքերը և անդամները: Լսում ենք ծանր զէնքերի շառաչիւնը և խռպոտ ձայները, հոտոտում ենք Համիլկարի այգիների բուրմունքը:

Գիշեր է: Կիսախաւարի միջից տեսնւում է Համիլկարի մարմարիոնէ պալատը իւր սանդուխտներով և բարձր պատշգամբներով:

Գինու գոլորշիները թափանցում են օդը: Սալամբօն, Համիլկարի աղջիկը, իջնում է յանկարծ սանդուխտներից յաւերժահարսի նման: Սալամբօի հրաշալի տեսքին սիրահարւում է լիբիացի զինւոր Մաաթօն, և դառնում է ախոյեան քաջ Նարր-Հաւասին, նումիրացոյ զօրապետին, որին խոստացած էր Սալամբօի ձեռքը:

Համիլկարը բացակայ է: Վարձկանները, յոյն Սպենդիուսի դըրդումով, դարձնում են իրանց զէնքը Կարթագէնի դէմ: Մաաթօն Սպենդիուսի հետ սրբապղծում է տաճարը, անպատում է Տանիտին,

յափշտակելով Զախմֆը (Տանիտ աստուածուհու ծածկոցը) և փաթափելով նրա մէջ մանուկ է Սալամբօի ննջարանը: Բայց Սալամբօն նզովում է սրբապղծին ու Մաաթօն Զախմֆի պաշտպանութեան ներքոյ դուրս է գալիս քաղաքից, ամբոխին շշլած թողնելով: Վարձկանները պաշարում են քաղաքը և սարսափի մէջ են զցել նրան արգէն, երբ Համիլիարը վրայ է հասնում ու քաջալերում է ժողովրդին: Սակայն Վարթագէնը տագնապի մէջ է, զօրքերն ընկճւում են, ուտելիքը պակսում է, և պատերը թնդում են ահագին մեքենաների հարւածների տակ:

Վարթագէնը պիտի ընկնի, որովհետև Տանիտի Զախմֆը գողացած է: Գլխաւոր քրմապետ Սահարարիմը քաղաքի միակ փրկութիւնը Սալամբօից է կախւած տեսնում: Սալամբօն պիտի գնա Մաաթօի բանակը և իւր կուսութեան գնով փրկէ Զախմֆը: Մաաթօն սիրով արեւցած քնում է, և Սալամբօն փախցնում է սուրբ ծածկոցը: Բայց այս էլ չը կարողացաւ փրկել Վարթագէնը, որ այժմ պապակւել էր ծարաւից, որովհետև թշնամին ջուրը կտրել էր: Ուրեմն աստուածները բարկացած են քաղաքի վրայ և պէտք է իջեցնել նրանց բարկութիւնը:

Այստեղ նկարագրւում է մանուկների զոհաբերութեան սուկալի ծէսը: Զարհուրելի Մոլոխի փորը, կրակից կարմրած, ժամերով կլանում է անմեղ կենդանի երեխաներին, մինչդեռ փողերի ձայնը և քրմերի երգերը խեղդում են ծնողների յուսահատ ձիչերը և այրւող մարդկային մսի թժժոցը...

Վերջապէս աստուածները մեղմանում են: Վարթագէնը փրկւած է և գազան Մաաթօն գերի է տարւած:

Գերիների պատժի ժամը խփեց: Ամբողջ քաղաքը ոտի վրայ է: Համիլիարը, Սալամբօն, քուրմերը և մեծամեծները շարւած են պատուաւոր տեղերում: Մաաթօին դուրս են թողնում, ձեռները քամակին շղթայած, սարսափելի հարւածների ու խայթոցների տակ: Խեղաքարի նման վազում է նա երկու պատերի պէս շարւած ամբոխի միջով, և մինչդեռ նա առաջ է վազում, երկու կողմից անգութ ամբոխը պարզում է իւր ժանիքները, չանկում է նրա մերկ մարմինը, կաշու կտորներ է պոկում, և ամբողջ անձն վերք դարցնում: Խսկ երբ, ուժերն սպառւած, արիւնքամ եղած, դէմքն այլանդակւած,

Նա յանկարծ վիրաւորւած զաղանի նման գետին է փռւում, մտրակի հարւածները տեղում են նրա երեսին, կուրծքին և ամեն բարձրանալով մի կտոր միս պոկում մարմնից: Այն ժամանակ այս այլանդակ մարմինը սարսափելի տանջանքից և կաշից կարծես կեանք ստացած վեր է յատկում կրկին և առաջ մղւում: Բայց մի քիչ յետոյ կրկին կանգ է առնում, այլ ևս անկարող է առաջ գնալ, որքան էլ մտրակների հարւածները քրքրէին նրա մարմինը: Այժմ՝ նա կարմիր մսի մի կոյտ է դառել, մարմնի կտորները պատաստած շորերի նման կախ են ընկած, արիւնը շուրժ է վերքերից: Մաաթօին այլ ևս ձանաչելն անգամ անկարելի է, մարդկային ձեն, անդամ կորցրած է նա: Նա այժմ անվրդով կանգնած է մտրակների հարւածների տակ, կարծես կորցրել է զգացողութիւնը. — ոչ մի հնչիւն չի դուրս գալիս նրա բերնից, ոչ մի կարկամումն չի ձգձըգում նրա անդամները... Նա նայում է դէպի տախտակամած:

Յանկարծ այս ողորմելին, ետեւից արեան յետքեր թողելով, առաջ է վազում մինչև տախտակամածը և Սալամբօի ոտերի տակ վայր է ընկնում անշնչացած:

Պէտք է կարդալ այս դիւթալի գրածքը: Ընթերցումից յետոյ մարդ երկար ուշքի չի գալիս: Մի ամբողջ պատմական աշխարհ բացւել է նրա առջև, — հնութիւնը իւր յափշտակող սքանչելիութիւնով: Ամեն ինչ մեծ է այստեղ: Այս գիրքը հրաշալիների մի ժողովածու է, իւրաքանչիւր էջ մեզ մի նուրբ քանդակած պատկեր է տալիս հեռաւոր պատմական կեանքից և մենք, այս զարմանալի գիրքը ծածկելուց յետոյ, բոլոր տպաւորութիւններից խելքամաղ ենք լինում...

Անկարելի է բոլոր հրաշալի պատկերները յիշել: Սակայն այն էջերը, որոնց մէջ նկարագրւում է վարձկանների խնջոյքի տեսարանը, մանուկների զոհաբերութեանը Մոլոխին, կամ այն, որտեղ պատմւում է, թէ ինչպէս մահացաւ վարձկանների զօրքը մի կիրճում կարթագէնացիներից պաշարւած, վերջապէս առաջ բերած Մաաթօի պատիժը — այս բոլորը մի հանճարեղ վարպետի գործ է...

Իսկ Սալամբօի երեւոյթ վարձկանների խնջոյքի մէջ, իսկ փղերի պատերազմը, իսկ Սալամբօի տեսութիւնը Մաաթօի հետ այս վերջինի վրանում, նրանց սիրահարութիւնը և Չախմֆի յափշտակումն, կամ Մաաթօի և Սպենդիուսի քաղաք մոնետր մութ ջրուղիի մէջ լողալով:

VII

Բայց տեսէք հերոսների հոգեբանությունը:

Մի մեծ պատմական երևույթ մեծ յուզմունքներ մեծ կրքեր և է յարուցանում: Մի համայնական ոգի, ժամանակի ոգին, արապետում է զործող անձերի բնաւորությունը:

Ահա այս ահուելի Մաթթոն, որ հանդգնում է մոնել Տանիտի տաճարը և յափշտակել Զաիմֆը, չերկնչելով երկնքի բարկությունը, որ քիչ էր մնացել տապալէր Կարթագենի հանրապետությունը, ու մեծ քաղաքը մոխիր դարձնէր, ահա այս կիսատուած սանձուում, կաշկանդում է Սալամբոի սիրով: Այս սէրն է, որով կուրացած, նա կորցնում է ինքն իրան. Զաիմֆը յափշտակել է նրա բոլոր հոգեկան ոյժերը: Այս սէրն է, որ մարմինը քրքրւած, արիւնքամեղած, կիսամեռ Մաթթոնն ոյժ է տալիս վազել դէպի իւր սիրած էակը, որպէս զի նրա ոտի տակ հոգին աւանդի:

Ահա Սալամբոն, որ Զաիմֆը ետ դարձնելու համար չի վարանում զոհել իւր կուսությունը Մաթթոնին, նրա բանակը գնալով:

Ահա Սահաբարիմը, զլխաւոր քրմապետը, որ երևան է գալիս, իբրև ժամանակակից գիտությունն ներկայացուցիչ և որ կարծես կասկածում է իւր գիտեցածի մասին: Նա է խորհուրդ տալիս Սալամբոնն այս հերոսական քայլն անել:

Ահա Սպինդիուսը, հնարագէտ, և սատանա յոյնը, որ աջնքան նման է Ուրիսեսին:

Ֆլոբերի, ինչպէս և Բալզակի, մէջ բոմանտիկը և գիտնականը կողք-կողքի են ապրում, մէկը միւսին չի սպանում: Միայն Ֆլոբերն աւելի գիտնական է քան թէ Բալզակը, նրա մէջ բոմանտիկ ոգին աւելի ճնշւած է, քան թէ այս վերջին բոմանտիստի մէջ:

Մենք գիտենք, որ տիկին Բովարի-ի հեղինակը նկարագրական մասը բարձրացրեց մինչև գիտնական հետազոտությունն աստիճանը, բայց, հերոսների հոգեբանություններն ուսումնասիրելիս, մենք (զոնէ մի քանի զրքերում) հեշտությունով նկատում ենք, որ հեղինակը չի խուսափել բոմանտիստի վարակիչ ազդեցությունից:

VIII

Ֆլորեն անտարակոյս դարիս գրական «ոչնչականներից» (նիհիլիստ) և հռետորներից մէկն է: Նրա հերոսները խաբւած են իրանց յոյսերից և իրանց իդէալին չեն հասնում երբէք: Այսպիսի անձերին, կարծեմ Ալֆ. Դոդէն առաջինը կնքեց *ratés* անունով, որ մօտաւորապէս կարելի է «վրիպած» բառով թարգմանել:

Այս անյաջողութիւնը կեանքի մէջ, այս իդէալների մշտական փլատակումն նկատուում է Ֆլորենի բոլոր գործերում: Այս մեր դարի հիւանդութիւնն է, որ, Բուրժէի ասելով, իդէալի և իրականութեան մէջ եղած անհամաձայնութիւնից է առաջանում:

Տիկին Բովարին, չը գտնելով իւր երազած սէրը, թունաւորւում է հիասթափան մէջ: Մաաթօն («Սալամբօ»-ի մէջ) ահռելի կռիւներ է վարում Կարթագէնի կոյսի սէրը վայելելու համար, բայց բազմից, մի րոպէ իւր սիրուհուն մօտեցնելուց յետոյ, ընդմիշտ հեռացնում է նրանից:

«Զգայական դաստիարակութեան» մէջ գործող անձերը բոլորը «վրիպած»-ներ են՝ Ֆրեդերիկ Մորօն, տիկին Արնանը իրանց սիրոյ մէջ, Դելորիէն, Լուիզան, Պելլրէնը, տիկին Դամբրեօզը և ուրիշները:

„Je demande quelque chose qui m'exalte, qui m'enlève aux misères de ce monde“, ասում է Ֆլորենը իւր հերոսներից մէկի բերանով: (Ես մի բան եմ ուզում, որով կարողանայի յափըշտակւել, որ կարողանար հեռացնել ինձ այս ողորմելի աշխարհից): Ֆլորենի հերոսների հոգեկան աշխարհը երբէք չի լցւում: Ոչ սէրը (Էմմա), ոչ գիտութիւնը և աշխատասիրութիւնը (Բովար, Պէկիւշէ, Սահամբարիմ), ոչ փառքը և մեծութիւնը (Մաաթօ) բաւականութիւն չեն տալիս հիասթափւածներին և յուսահատւածներին:

Թուսաց գրականութեան մէջ այս ուղղութիւնը տիրապետում է Տուրգենեւի, Տոլստոյի բռնաններում: Այս տեսակէտից, Բուրժէի կարծիքով, Տուրգենեւի *НОВЫ* և *ДѢЛѢ* վէպերը կարելի է զնել «Զգայական դաստիարակութեան» «Տիկին Բովարի»-ի կողքին ¹⁾:

¹⁾ Յայտնի է, որ Տուրգենեւը ֆրանսիական չլուպին է պատկանում և սերտ կապած էր Ֆլորենի, Դոդէի, Զոլայի և միւս ֆրանսիական նատուրալիստների հետ:

IX

Ֆլոբերի դերը նատուրալիստի զարգացման մէջ ահագին է:

Նրա «Տիկին Բովարին» ժամանակակից բոմանի կատարելատիպն է, և կը մնայ իբրև այս վիպասանի ամենապահպանելի գործը:

Այս վէպով Ֆլոբեր հիմնեց օբյեկտիւ բոմանը:

Հեղինակի անձնաւորութիւնը չը պէտք է թափանցի նրա գրութեան մէջ, ինչպէս այդ նկատուում էր Բալզակի վէպերում: Այս վերջինը չէր թագցնում իւր համակրութիւնը կամ հակակրութիւնը ղէպի իւր հերոսները: Նա գնահատում է, գովասանում, կամ դատապարտում:

Ֆլոբերի գրութեան բոմանիստի անձնաւորութիւնը բոլորովին կորչում է: Նա միայն փաստեր է տալիս, միմիայն նիւթեր է ժողովում, — սրանց գնահատումն ընթերցողին թողնելով:

Նա որոշում է մի շրջան, որի մէջ քցում է մի շարք անձնաւորութիւններ, յայտնի հոգեբանական հիւսւածքով, առաջադրում է նրանց մի ինտրիգա և, ինչպէս ասում են, «ինքը զրադ է քաշում», թողնելով իւր հերոսներին գործել միջավայրի և իրանց հոգեբանութեան համեմատ:

Այս — Ֆլոբերի «գեղարւեստի անգիմութիւնն է», (impersonnalité de l'art), — սկզբունք, որ դրական բոմանի հիմունքներից մէկն է այսօր:

«Սալամբո»-ի հեղինակը, թողնելով Բալզակի «պատկերները», մեզ մի մեծ շրջանի հաւաք նկարագիրն է տալիս, այնպէս որ «պատկերները» կապում են միմեանց հետ և ձուլում են ընդհանուր պատմաձքի մէջ:

Մի երրորդ անհրաժեշտ նորութիւն, որ Ֆլոբերը մտցրեց բոմանի մէջ, — այս (ինչպէս յիշել ենք արդէն) հերոսների փոքրացումն է:

Ֆլոբերը մի առանձին ուշադրութիւն դարձրեց նկարագրութեան վրայ, որ կատարելագործւած «քանդակած» լեզւի շնորհիւ մնում է մինչև այսօր իբրև մի անխախտ հրաշակերտ արձան:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«ԵՂԻՇԷԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ» ըստ Անձևացեաց օրինակի.—
Ծանօթութիւններով և հայ-ուսերէն բառագրքով իւրոյս ընծացեց
ուսուցիչ Լազարեան Ճեմարանի Արևելեան Լեզուաց Խ. ՅՈՎՀԱՆՆԻ-
ՍԵԱՆՑ: Մոսկւա, 1892 թ. 8^օ, Ա--Ջ+391 էջ. --գինը 1 ռ. 50 կ.:

Խորենացուց փետոյ՝ Նղիշէն ամենապառաւոր սեղն է բռնում թէ
Ոսկեղէն դարու և թէ ընդհանրապէս հայ գրականութեան պատմութեան
մէջ: Գրած լինելով արձակ՝ պատմութեան ոճով, ոչ աղատ հետորական
աղբարանութիւններից և ասուածաբան նուրբ դատողութիւններից, —նորա
«Վարդանանց և հայոց պատերազմը» խկապէս ներկայացնում է մի վառ-
վռուն և կենդանի բանաստեղծութիւն՝ թէև սուանց չափ ու ոտիւ, ալս մի
վսեմ ազգալին վիպասանութիւն է ամենանշանաւոր մի ազգովին շարժման,
որի նմանը ոչ առաջ և ոչ փետոյ եղած չէ մեր պատմութեան մէջ: Եւ եթէ
աւսօր՝ 15 դար անցնելուց փետոյ էլ ամենուրեք դեռ կենդանի է ժողովրդի
մէջ կրօնական բռնութեան դէմ իւր անվախ մաքառողները մեծ չիշա-
տակը, — ում, եթէ ոչ Նղիշէին եւք մենք պարտական:

Այս իսկ պատճառով էլ Նղիշէն մեր նախնիքների համար եղել է
միշտ ընթերցանութեան ամենասիրելի գիրքը՝ թէ հնումը և թէ վերջին
դարերում, թէ իբրեւ ձեռագիր և թէ տպագիր: Արդէն մեր պատմագիր-
ների մէջ՝ գուցէ ամենքից բազմաթիւ ձեռագրեր Նղիշէինն են մեզ հասել:
Եթէ գիմենք տպագրական հրատարակութիւններին, կը տեսնենք, որ դոյա-
թիւը առնազը երկու տասնեակից պակաս չէ՝ հաշւելով միայն ընդդրի
տպագրութիւնը. իսկ թարգմանութիւնների հետ միասին մօտ 30-ի է հա-
նում, որ պատկառելի թիւ է մի մատենագրի ժողովրդականութիւնը փա-
լուն կերպով տպացուցանելու հաջերիս մէջ:

Աւելորդ չէր լինիլ աւտեղ երկու խօսք ասել Նղիշէի «Վարդանանց
պատերազմի» ընդդրի և թարգմանութիւնների հրատարակութիւնների մա-
սին, որ բաւական կարևոր խնդիր է գրական պատմութեան համար: Հ. Գ.

Զ. ի շատ կողմից հետաքրքրական «Հայկական Գոտենադրութիւնը» (Վե-
նետիկ, 1883 թ.) ախտն, որ աջս խնդրի վերաջ չէ դարձրել աչն ուշա-
դրութիւնը, որին նա արժանի էր Ք. Պատկանեանի (Видл. очерк. арм.
истор. Лт. 1880) ցուցակն էլ թերի է կազմած: Այդ մասին մի փորձ
է արել հանգուցեալ Մի.ք. Միանսարեանցը իւր բաղձոգրութեան Bibliographia
Caucasica et Transcaucasica I հատորում (Պետերբ. 1874—76), որ
մասամբ լրացնելով մեր ձեռքի տակ եղած աղբիւրներից և ժամանակա-
դրական կարգով դասաւորելով, առաջարկում ենք ահաւասիկ ընթերցո-
ղին՝ հաւատացած չ'ըլնելով սակաւն, որ մեր կազմած ցուցակը լիա-
կատար է:

1. Եղիշէի բնագրի հրատարակութիւնները.

I 1764, 4 ^o . Պռ. (Editio princeps)	XI 1859, 8 ^o (ամբ. մատ.) Վենետ.
II 1787, 16 ^o . Ս. Պետերբուրգ:	XII 1861, 16 ^o Թէպոս. (Անճե. օր.)
III 1787, 16 ^o . Նոր-Նախիջևան:	XIII 1861, 16 ^o Մոսկա:
IV 1813, 16 ^o . Պոլիս, («Հայկակ. Մատեն.» 1823):	XIV 1864, 24 ^o Վեն. (հ. մատ. չի.ք.):
V 1816, Կաղի, (միայն Միանս.):	XV 1865, 12 ^o Երուսաղէմ:
VI 1825, («Հայկ. Մատ.» չի.ք.)	XVI 1866, 16 ^o , Պոլիս:
VII 1828, 24 ^o .	XVII 1867, 16 ^o , Զմրուշիա:
VIII 1832, (միայն Ք. Պատկան.)	XVIII 1871, Պոլիս (միայն Диллент):
IX 1838, 8 ^o (ամբողջ մատեն.)	XIX 1879, 16 ^o Թիֆլիս (Անճ. օր.):
X 1852, 16 ^o (Հայկ. մատ. չի.ք.)	XX 1892, 8 ^o Մոսկա (Անճ. օր.):

2. Եղիշէի բնագրի թարգմանութիւնը հայ և օտար լեզուներով:

1. Անգլիերէն, Նէմանի, 1830, 4 ^o . Լոնդոն:	8 ^o , Թիֆլիս:
2. Իտալերէն, Կապելլետտի, 1840 8 ^o , Վենետիկ:	— Նոյնը, Գիլլէն, 1884, 8 ^o , Խարկով (ոչ լիակատար):
3. Ֆրանսերէն, Կապարաշի Կա- րապետ, 1844, 8 ^o , Փարիզ:	5. Հալ-Աշխարհիկ, Մ. Սիմէո- նեանց, 1863, 8 ^o , Թիֆլիս:
— Նոյնը, — Լանդլուա, 1868, Փարիզ:	— Նոյնը, Հ. Ղուկասեանց, 1891, 8 ^o , Թիֆլիս:
4. Ռուսերէն, Շանչեան, 1853,	

*
* *

Անցնենք այժմ Եղիշէի նոր հրատարակութեան, որի խորագիրը
գրած է մեր լուսածի գլխում:—«Մեր գրոց լեզուն, առում է ի միջի ալոց
հրատարակիչը իւր լուսաշարանում, նոյնպէս կ'ըստիկական է, ունի լատին
և լոյն լեզուների համարեա բոլոր լատիութիւնները... Սակայն մինչև այժմ
ոչ մի՛նք հաւոց հեղինակներից ծանօթութիւններով, բացառելով ճոխացրած
լաւմարցրած չէ աշակիւհաների դործածութեան համար: Այս զգալի սրակա-

տորդը լրացնելու գիտաւորութեամբ... քանի տարի զարանից առաջ մենք ձեռնամուխ եղանք այս դժւար գործին և լուսարանելով Նղիշէի պատմութեան բնագիւրը, գրեցինք պատմական, աշխարհագրական և մասամբ էլ լեզուադիտական ծանօթութիւններ, որոնց հետեւում է հայերէնից ռուսերէն բառգիրքը» (Յառաջաբ. էջ Ա.—Բ)։ Ուրեմն Նղիշէի նոր հրատարակութիւնը պատրաստուած է մանկավարժական նպատակով՝ իբրև ձեռնարկ մեր ուսումնարանների համար»։

Նոր լուս տեսած դասագիրքը և ձեռնարկը և աչն՝ մեր դասական մատենագիրների—անջքան կարևոր խնդիր է, որ առջ արդէն բաւական հիմն է մեզ համար մանրամասն քննութեան ենթարկելու Նղիշէի նոր հրատարակութիւնը։ Նթէ՛ որ և է մի ընդհանուր գրածի արժանաւորութեան կամ պակասութեան մասին չառ օգտաւէտ է լուրջ քննադատութիւնը՝ քաջալերելու կամ՝ ընդհակառակը, զգուշացնելու գիտմամբ, —ևս առաւել մի դասագրքի մասին, որ՝ մի անգամ մուտ գործելով դպրոց, առաջնորդ է դառնում և մի տեսակ պատգամ կրթող սերունդին երկար տարիճների ընթացքում։ Կաւ է, եթէ դասագիրքը հմտութեամբ է յօրինւած և նպատակադրմար՝ ձեռնհաս մասնագէտի աշխատութեամբ. հապա եթէ նա անխորձութեամբ է կազմւած, ձախ ձեռքով՝ ինչպէս ասում են, պակասաւոր և խառնափնթոր... Ահա ինչու համար մեծ զգուշութեամբ պէտք է ընտրել ամեն մի դասագիրք ու ձեռնարկ։

Տեսնենք ալժմ, որ աստիճան՝ եթէ ոչ կատարեալ, գոնէ կատարելագործւած է Նղիշէի նոր հրատարակութիւնը նախընթացների շարքում և որչափ չարմարաւոր է և գոհացուցիչ աչն նպատակին, որի համար նա ձեռնարկւած է։ Եւ որովհետև հրատարակութիւնը բաժանւած է երեք մասի—բնագիր, ծանօթութիւններ և բառգիրք, մենք էլ աչն կարգով կը խօսենք իւրաքանչիւրի մասին։

ա. Բնագիրը

Հրատարակիչը, ինչպէս երևում է գրքի խորագրից, Նղիշէի պատմութեան բնագիր է ընտրում «Անձեացեաց օրինակը», լուսանցքում նշանակելով Վենետի. տպ. (1859) տարբեր ընթերցումները։ Բայց թէ ինչ բան է «Անձեացեաց» ասած օրինակը, ինչ առաւելութիւններ ունի նա միւս օրինակների վերայ, ինչ հիմունքով անջ և ոչ անջ օրինակ է ընտրւած,—և ոչ մի խօսք չիւած չէ ոչ ջառաջաբանի և ոչ ծանօթութիւնների մէջ։—Մինչդեռ արժէր համեմատել Անձ. օրինակը I տպ. (Պոլիս) և Պետերբուրգեան (1787), որպէս և Վենետիկեան բոլոր հրատարակութիւնների հետ, և մանրաքննին ուսումնասիրելով նոցա տարբեր ընթերցումները՝ արդէն ընտրութիւն անել յօգուտ անց կտամ անց վարկանտին։ Իբրև օրինակ, թէ Անձ. ձեռագիրը կարելի չէ անպալման կերպով ընդունել իբրև միակ ճիշտ

և արժանահաւատ բնագիր Նղիշէի վարդանանց պատմութեան, վեր առնենք մի քանի տարբեր ընթերցած վեհեական տպագրութիւնից (1859), որոնք աւելի ճիշտ են երևում, քան Անձ. օրինակինը, որովհետև նոքա ստուգւում և հաստատւում են միւս պատմագիրների ընթերցածներով, որպէս և օտար աղբիւրներով. — Արդեանք (վեհ. տպ. էջ 60) և Արդեօնք (I տպ. էջ 78) տեղի անունը, որ հաստատւում է Փաւստոսից (Է, 6), — Անձ. օրինակը (էջ 73) ունի Սարդեանք, Նոյնպէս Դասան (վեհ. տպ. 39) աղղի անունը, որ ստուգւում է ասորի և արաբացի հեղինակներից (Mat. arm. яз. К. Патканова, II, 12), — Անձ. օր. ունի Դարսան (էջ 49): Դարձեալ վեհ. տպ. (էջ 20) հետաքրքիր ընթերցած վզուրկ հրամատար, որ աւելի մօտ է հին Պարսկ. framatar և նոր Պարսկ. buzurg framadar (Noldeke, Tabari, 9. Hoffmann, Auszüge... 293) — Անձ. օր. (էջ 27) ունի վ. հրամանատար՝ ըստ երևութիւն վետոյ սրբազրած:

Նթէ հրատարակիչը հարկաւոր էր համարել Նղիշէի տարբեր ընթերցածների վերայ մատնանիլ անել, պէտք էր, ինչպէս ասացինք, նախապէս քննական կերպով ուսումնասիրել նոցա, որից արդարև շատ բան կարող է պարզւել. և իմից աւելի, եթէ ոչ «Նղիշէի պատմութեան բնագրի լուսարանորից» պահանջելու էր ալտպիսի մի քննական աշխատութիւն: Ուրիշ տեսակ մենք չենք հասկանում՝ ինչ կը նշանակէ բնագրի լուսարան եւ: Իսկ եթէ նա բաւական էր համարել իւր մասնաւոր նպատակի համար միայն Անձեացեաց օրինակը, էլ ինչ հարկ կար համեմատել նրան միաջն վեհեական տպագրութեան հետ՝ մի կողմ թողնելով բոլոր մնացեալները:

Նւ զոնէ միայն ալ օրինակի հետ արած համեմատութիւնները ճիշտ լինէին և լիամասն. ալ էլ մի փոքրիկ ծառայութիւն կը լինէր Նղիշէի բնագրի ուսումնասիրութեան համար: Բայց ցաւակցարար աղպէս չէ: Նղիշէի նոր հրատարակութեան ընթերցողը պէտք է կարծէ, որ վեհեական տպագրութեան տարբերութիւնները Անձ. օրինակից տաւաւում են նրանով, ինչ որ ցոյց է աւել հրատարակիչը լուսանցքներում: Վը սխալէ: Ալ մասին փոքր ի շատէ ուղիղ դատարար կազմելու համար՝ աչքից անցնենք վարդանանց պատմութեան հէնց առաջին տողերը, որով Նղիշէն զիմում է իւր Մեկինաս Դաւիթ Մամիկոնեանին — էջ 9—11 և կը համոզւենք, որ 54 տողի մէջ մոռացած են և չեն լիւծած վեհ. տպ. 13 տարբեր ընթերցածները («Նթն») 3 անգամ, («արեւելաց»), («աջեւելութիւն»), («երկեւիւք»), («խառնութիւն»), («խառնութեան»), («էր»), («երրորդութիւն»), («և») 2 տեղ չէ ցոյց տւած և 1 տեղ չէ նշանակւած վեհ. տպ. բառերի դատարարութեան կարգը: Մի ալ օրինակ. բանանք բնագրի 27-րդ էջը և ստուգենք՝ արդեօք Միհրենբոսհի հալեթին գրած հուշակաւոր նամակը (էջ 27—29 Անձ. օր.) որքան ճիշտ է համեմատած վեհ. տպ. հետ. և ան

83 տողի մէջ 22 վարդանատ մոտացած են և չեն նշանակւած: Այսպէս պէտք է կարծել մեծ մասամբ և մնացած բնագիրը: Ահաւասիկ և վէն. տպ. մի քանի չափուէլ անունների տարբեր ընթերցածները՝ նոյնպէս չը վիշւած պ. Յովհաննիսեանցի համեմատութիւնների շարքում: Վաստն (39), Երամօնք (60), Արդեանք (60), Զողկերոտ (60), Սերայ (55), Ստահ-րաշապուհ (7), Վատդեաք (139) և այլն:— Էլ ինչու էր պէտք այսպիսի պակասաւոր համեմատութիւնների անել և թնջ օգուտ նոցանից:

Բացի վարդանաների թերութիւնից՝ բնագիրն ունի բազմաթիւ վրիպակներ, որոնք անշարմար են մի գասագրքի համար. դոցանից շատը չէ էլ մտած դրքի վերջում զետեղած վրիպակների աղիւսակի մէջ. օր. հէնց առաջին երեսներից աչքի են ընկնում—էջ 10, 11, 13, 14, 15 (երկու անգամ), 17, 18, 23, 25, 27, 28... զանց արած հրատարակչից: Բաւական տարժան և անշնորհալի աշխատութիւն կը լինէր 182 երեսից բազկացած բնագիրը նորից սրբագրել և՛ որ զլխաւորն է՝ համեմատել նրան թէոդոսիացում լոյս տեսած Անձնացեաց օրինակի հետ. բացի սորա-նից «աշակերտների դործածութեան համար» պատրաստւած ձեռնարկում պէտք էր բնագիրը դիւրընթեռնելի, աւելի խոշոր տառերով տպագրել, ընթերցողների դիւրութեան և լարմարութեան համար չեղանակները ամեն մի երեսի զլխին խորագրել (ինչպէս վէն. և թէոդոս տպ. մէջ) և վերջապէս բնագրի վերջում չառուկ անունների ցանկ (Index) դնել, որ մանաւանդ մի պատմական զրուածի համար անհրաժեշտ է և որ նոյն-պէս ունին Վենետ. և թէոդոս. տպագրութիւնները:

բ. Մանօթութիւններ և Յաւաջաբան

Նախ պէտք է մի ընդհանուր նկատողութիւն անել, որ լուսաւբա-նութիւն կամ մեկնութիւն մատենագրի իմաստների, սորան չա-տուկ ասացածների, խրթին ու զժւար ըմբռնելի դարձածների և առ-հասարակ ստուգաբանական, համաձայնական և ոճադիտական (стилистический) դիտողութիւնների—բնաւ. չը կա՛յսպէս հրատարակութեան ծանօթու-թիւնների մէջ, որոնց նիւթը տպաւում է միայն պատմական և աշ-խարհագրական անունների բացատրութեամբ: Մինչդեռ «Եւրոպայում և Ռուսիայում լոյս ընծայած կլասիկական լեզուների դասագրքերը», որոնց վերաջ պնդում է հրատարակիչը, — իսկապէս նպատակ ունին նախ և առաջ աշակերտին իրան պարզելու և հասկանալու նպատակով քերական-նական լուսարանութիւններ ընծայել, որոնք բնագրի ուսումնասիրու-թեան համար շատ կարեւոր են և աւելի հմտութիւն և փորձ են պահան-ջում, քան ալ և ալ պատրաստ ողբերգիներից մի քանի տասնեակ պատ-մական և աշխարհագրական ծանօթութիւններ հաւաքելը: Իսկ Նզիչէի բնագիրը՝ չը նախելով իւր վերին աստիճանի հետաքրքրական լուսաւբա-

կռթեան և զրաւիչ չարադրութեան, ունի դժարին և մեկնութեան կարօտ չափ զարձաճներ և հատաճներ:

Այսպէս ասելով Կոնստինի բան է ես բնաւ չեմ մերժում պատմական և աշխարհագրական ծանօթութիւնների կարեւորութիւնը. ընդհակառակը, դժբաւ են, որ կարծուր քերականական լուսարանութիւններից չեսող՝ լրացնում և ամբողջութիւն են տալիս աշակերտի գաղափարին իւր ուսումնասիրած մատենագրի մատին: Բայց ծանօթութիւն էլ կալ, ծանօթութիւն էլ, պէտք է բաւական փորձառութիւն բացատրութեան կարօտ նիւթերն ընտրելու և՛ եթէ ոչ ամեն մասում ինքնուրույն լինել, գոնէ բարեխղճութեամբ ուսումնասիրած լինել նիւթին վերաբերեալ գրականութիւնը, տեղեակ լինել բանասիրութեան վերջին արդիւնքներին և եթէ ալ և ալ՝ արդէն վաղ լոյս տեսած աղբիւրներից փոխ առնելով պէտք լինի կրկնել ո՛ր և է զխաղութիւն կամ բացատրութիւն, — գոնէ նախընթացներից ստոր պիտի չը լինի ալ՝ իւր ճշտութեան և գիտնաւորութեան ատրիճանով: Կարծում ենք, որ բաւական չափաւոր են մեր պահանջները:

Այս ընդհանուր նկատողութիւնից՝ անցնենք մանրամասնութիւններին և առաջ բերենք մի քանի օրինակ.

1. Կան ծանօթութիւններ թերի կազմած, ուր մանաւանդ նկատելի է անդիտութիւն հալ պատմութեան կարեւոր քննական գրաւորների՝ վերաբերութեամբ ժամանակագրութեան: Ծանօթ, 4-րդ, 5-րդ, 6-րդ — Տիրանի, Արշակի և Արտաշիլի (=Արտաշէս վերջին) թագաւորութեան տարիները նշանակած են հին թաւարդութեան հետեւելով, որ սխալ է, ինչպէս հաստատուն կերպով վաղուց ասացուցած է օտար պատմիչներից: Խնչպէս կարելի էր Մեծն Տրդատի թո՛ւ Տիրանի թագաւորութիւնը դնել 353—364 թ. և սորա որդի Արշակինը 364—380 թ., երբ որ բիւզանդական պատմութիւնից պարզ երևում է, որ Արշակ ժամանակակից էր, նաև դաշնակից Յուլիանոս կայսեր, որ վախճանեց 363 թ. Քրիստոսի. իսկ Արշակի որդին Պապ ժամանակակից էր Վաղեր կայսեր, որի օրով և մուտաւ 374 թ. (ըստ Գաթրճեանի), իսկ ինքը Վաղէս — 378 թ.: — Ուրեմն ո՛չ Տիրան կարող էր թագաւորել մինչև 364 թ. և ո՛չ Արշակ մինչև 380 թ.: — (Համեմ. Lebeau (S. Martin) Hist. du Bas-Emp., մանաւանդ հ. Յ. Գաթրճեանի Տիեզ. պատ. ևս և Langlois-ի աղիւտակը:

2. Մի օրինակ՝ թէ ինչպէս անփութ է օգտուած հրատարակիչը իւր ձեռքի տակ եղած և իւր ծանօթութիւնների մէջ որոշակի փշած աղբիւրներով: Ծանօթ, 124: Կամելով մեկնել՝ թէ ինչ է Վահագնեաց նախարարութիւնը, որ պատահում է բնագրի էջ 42, 85, 91, հրատարակիչն ասում է. Վահագնիք կամ (?) Հաւունիք հալոց նախարարների կարգն անցան Վաղարշակ առաջինի օրերում. նոցա անւամբ Աւարարտեան նահանգի գաւառներից մինը կոչւում էր Խաւունիք (հ. Խնճիճեան): Հ. Ալիշանը կարծում է (,) թէ հին Հաւունիքը ալժմեան վերին Բասենի արեւ-

լեան հարաւային մասն էր. (տես Ալրարատ, էջ 27.): Գահնամ. 55-րդ տեղն» — Նախ՝ Վահագնի ք և Հաւունի ք բոլորովին տարբեր նախարարութիւններ էին. դոցանից առաջինը նշանաւոր տոհմ էր՝ ըստ Խորենացու՝ Վահագնից ծագած և Գահնեմակում 9-րդ բարձն ունէր. իսկ Հաւունիք, Վաղարշակի օրով միայն առաջացած, բաւական աննշան տոհմ էր և Գահնեմակում 55-րդ բարձն ունէր: Երկրորդ՝ Հ. Խնձիճեան (Ստորագր. 380, Հաւունիք անւան ծանօթութեան մէջ) ասում է՝ թէ «ի մի ու մ (sic!) ձեռագրի Աշխարհ. Խորենացու գրի Վահագնի ք» (իսկ. Հաւունիք), — որ հարկաւոր էր նկատողութեան առնել. Երրորդ՝ Նոյն «Ալրարատի» վրած 27-դ էջում ահա ինչ է ասում բաղմահմուտ գիտնականը. «Յօրինակագիրս պէս պէս ընծայի անունդ՝ Հաւունիք, Հաւունիք, Հաւունիք և վրիպակաւ չփոթեալ (sic!) և բռնմն ընդ Վահունիս» — Ուրեմն էլ Խնչպէս կարելի էր ասել «Վահագնի ք կամ Հաւունիք», — նոյնացնելով երկու տարբեր նախարարութիւններ և ղեռ Ալիշանին էլ վկայ կոչել:

Նոյնպիսի անհողութեամբ կազմած են ծանօթ. 101. «Սարդեանք»՝ բառի և ծանօթ. 6-րդ Վառաձագունի միւս անւանակոչութեան՝ «Ստահրաշագուն» մասին, ցուց տալով առաջին բառի գործածութիւնը Փառտոսի մօտ և երկրորդինը (Ստահրաշագուն) Խորենացու «գր. III, գլ. ԾԸ. Վեն. 1843», ուր աչպիսի անուններ չեն պատահում. — Փառտոսի մէջ չկայ «Վարդեանք», այլ Արդեանք, աչպիսին աչն տարբեր ընթերցւածը, որ պատահում է Վենետիկան տպ. մէջ և որ չէ ցուց տւած նոր հրատարակութեան մէջ. իսկ Ստահրաշագուն լիշողը Խորենացին չէ, ինչպէս սխալմամբ մասնանիչ է անում հրատարակիչը, այլ Նոյն ինքն Նդիշէն՝ ըստ I տպ. (էջ 6) և ըստ Վենետիկեան (էջ 7), որ նոյնպէս մոռացւած է նոր հրատարակութեան մէջ: — Թերի և սխալ կազմած ծանօթութիւններից՝ բացի սոցանից, նշանակելու է — ծանօթ. 38, 50, 66, 67 և 74, 82... և այլն:

3. Մի ուշադրութեան արժանի կէտ էլ կայ նոր հրատարակութեան ծանօթութիւնների մէջ: Յայտնի է, որ ղեռ 1877 թ. Կ. Կոստանեանցը հրատարակեց իւր 3 հատոր «Հիւսւածքը», ուր մանրամասն կերպով ուսումնասիրւած է մանաւանդ Նդիշէի և Ղազար Փարոյեցու պատմութիւնը. բացի գրաբառ բնագրից (ա. գիրք)՝ նա տալիս է նորա աշխարհաբառ թարգմանութիւնը (բ. գիրք) և վերջապէս ծանօթութիւններ (գ. գիրք): «Հիւսւածքը», կարծեմ, վաղուց ընդունւած է մեր ուսումնարաններում իբրև ձեռնարկ. և մինչև որ նորանից գերազանցը լոյս չը տեսնի, նա կը մնայ ղեռ երկար: — Համեմատելով սորա ծանօթութիւնները պ. Յովհաննիսեանցի հրատարակութեան ծանօթութիւնների հետ՝ չարտնի բան է վերաբերեալ միևնույն ճիւղերին, — անկողմնապահ ընթերցողը կը համոզւի «Հիւսւածքի» գերազանցութեանը թէ լիամասնութեան և

Թէ աւելի զլոնուոր կերպով կազմած լինելու կողմից, թող որ պ. Կոստանեանցի զործը 15 տարի առաջ է լոյս տեսել: Օրինակի համար համեմատենք.—

Պ. Յովհան. Թ. 15, 16... 30, 44... 66... 90... 104... 115... 141... 206
և
Թ. Կոստան. (էջ. 65-69, 70-73, 78, 82-85, 104-105, 108-109, 111, 123-125, 116-121, 70-78

Աւելի աջող են նոր հրատարակութեան աշխարհագրական ծանոթութիւնները, որոնք թէև «Հիւսւածք» նման լիամասն չեն, աջնուամենայնիւ կարող են օգտուէտ լինել աշակերտին աջտեղ, ուր որ լուռ է «Հիւսւածք»:

4. Ծանոթութիւնների մէջ չեն մտել բազմաթիւ բառերի մեկնութիւններ՝ վերաբերեալ ժամանակակից հալ և պարսից կեանքին: Օրինակ՝ մոգական կրօնը, որ աջնքան մեծ հետաքրքրութիւն ունի, հրատարակիչը աւելորդ է համարել նաև երկտողով բացատրել, մինչդեռ պ. Կոստանեանցի «Հիւսւածք» նւիրում է ալդ ինդրին 10 երես: Բացի գորանից դեռ թիւրիմացութեան տեղիք է տալիս հրատարակիչը՝ պնդելով 53-րդ ծանօթ. մէջ ալդ կրօնի մասին, իբր թէ իւր հետևողներին նա «հրամայում էր գումի գով լանալ ձեռքերը և ոչ թէ ջրով»։—Այսպիսի ֆանատիկութեան նոյն իսկ մոգերն էլ չէին հասել. մազգէզանց դէնը պատւիրում էր լանալ ձեռքերը գումի գով, ալ, բայց ջրախառն (Տես Spiegel, Eran. Alter. III, 697—8):

Պարսից կրօնից զատ՝ բազմաթիւ բառեր պարսից և հայոց քաղաքական կազմակերպութեան, վարչութեան, պաշտօնների, նախարարական իրաւունքների մասին—որպէս՝ հրամատար, անդերձապետ, հազարապետ, Սպարապետ, Ոստան և Ոստանիկ, Ոստիկան, տուն արքունի, Գահնեմակ և ալն—կամ բնաւ մեկնած չեն և կամ թերի ու սխալ, ինչպէս օր. «Տանուտիրական դնդ» մասին տւած մեկնութիւնը (էջ 242), որից ընթերցողը միամտաբար պիտի եզրակացնէ, թէ Հալաստանում ալնքան տանուտիւրական գումի կար, որքան և տանուտէր, ալնքան՝ հարիւրներով. մինչդեռ ալդ գումից մի հատ էր, որ և կոչվում էր նոյնպէս «Մարդպետական» և «Ոստանիկ» (Տես Патк. Мат. арм. яз. II).

Մի երկու խօսք էլ ցառաջաբանի մասին:

1. Հրատարակիչը մի առ մի վիշում է ալն աղբիւրները, որոնցից նա օգտւել է իւր ծանոթութիւնները կազմելիս: Մեր կարծիքով՝ ալդ ծանոթութիւնները շատ կողմից աւելի պիտանի կը լինէին, լիամասն և գիտութեան տեսակետից աւելի ծանրակշիւ, եթէ հրատարակիչը ծանօթ լինէր և ձեռքի տակ ունենար Աւրոպայում վերջին 15 տարւալ ընթացքում լոյս տեսած ընտիր հետազոտութիւնները, որոնք՝ վերաբերելով Սասանեան պետութեան, ժամանակակից հայոց մասին էլ շատ բան են պարզում, գոնէ Spiegel (Eran. Alt.), Noldeke (Tabari, Art. Papakan), Gudschildt,

Hoffmann (Auszüge) և ալէն: Իսկ Բեկլիայի հալերէնագէտ Fel. Nève ունի հրատարակած զեռ. 1886 թ. մի բաւական ընդարձակ ուսումնասիրութիւն մասնաւորապէս Նզիշէի մասին (կենսագրութիւն, համառօտութիւն Վարդանանց պատերազմի, նորա արժէքը, հալ ազգի քրիստոնէական ոգին, պատմագրի նպատակը, լեզուն և ոճը), որ նոյնպէս անձանօթ է մնացել հրատարակչին:—Վերաբերութեամբ Диллет-ի Նզիշէի ուսանելն թարգմանութեանը, որ լոյս է տեսել 1884 թ. չը զիտենք՝ ինչու պէտք է ձեռք չընկնէր (Յառաջաբ. էջ 9.), քանի որ նա աչքքան հաղաղիւտ չէ:

2. Նզիշէի կենսագրութիւնը շատ թերի է կազմած և անգոհացուցիչ (Յառաջաբ. էջ 9.). պէտք էր դնէ «Սովերքի» (Ժա) մէջ լոյս տեսած փոքրիկ, բայց թէ ոճի և թէ բովանդակութեան կողմից ընտիր «Պատմութիւն ս. Նզիշէի վարդապետի» ամբողջապէս արտատպել: Բացի գորանից համակրելի մատենագրի արժէքը լիովին ըմբռնելու և նորա գործն ուղիղ գնահատելու համար անհրաժեշտ էր՝ դնէ համառօտ կերպով, պարզել Նզիշէի և Ղ. Փարպէցու զբաւմունքի փոխադարձ շարաբերութիւնը և իւրաքանչիւրի տեսակէտը, առաջ բերել նոյն Նզիշէի բնագրի ամբողջութեան խնդրին վերաբերեալ Թոմազ Արծրունու հաղորդած Բարսումազ Ասորու մասին որպէս և Պարսից կրօնի վերաջ Նզնիկի վրած հետաքրքրական տեղեկութիւնները:—Ծանօթութիւնների մէջ, ուր որ երբեմն 7 հրէս է ներառւում բանաստեղծական նկարագրութիւններին (ծան. 149, էջ 218—225), կարելի էր մի անկիւն գտնել և ալսպիսի կարեւոր խնդիրները համար:

գ. Բ ա ո գ ի Ր ք

Ո՛ր և է մատենագրի և մանաւանդ՝ դասական մատենագրի զբաւմունքը համար մասնաւոր բառարան կազմելը լաւ միտք է, եթէ իւրաքանչիւր բառ նոյն խմատով է մեկնած կամ թարգմանած, ինչպէս գործ է ածել աղբ մատենագիրը: Թողնենք աչն անտեղի դադաւարը, որով հալ ուսումնարանների համար «կլասսիկական լեզուների դասագրքերի» նման լուսաբանւած Նզիշէի պատմութիւնն առաջարկուում է հալերէնից ուսուցիչն բառարանով՝ առանց աշխարհաբառի. թողնենք ծանրանալ նաև բառարանակազմութեան ան տարրական պահանջների բացակայութեան վերաջ, որի շնորհիւ բառի մի քանի նշանակութիւն ունեցող ներութիւնները չեն որոշուում իրարից պատշաճաւոր կէտադրութեամբ, չը զանաազանելով նախ՝ բառի սկզբնական նշանակութիւնը, ապա տեխնիկական, ապա փոխաբերական, ապա որոշ դարձածի մէջ և ալէն¹⁾:—Բառարանի

¹⁾ Այս մասին մի օրինակ. տէս բառարանում. — «արտաքին»

գլխաւոր նպատակը պէտք է լինի առաջարկել բառի բուն և ճիշտ նշանակութիւնը՝ լինի դա հազեթէն աշխարհիկ, թէ ուսանելէն։ Այս տեսակետից նստելով Նզիշէի նոր հրատարակութեան բառարանի վերաջ փոքր խնչ մանրամասն պէտք է խօսենք, նկատի առնելով, որ այս բաժնի մէջ է իսկապէս երեւում հրատարակչի աւելի ինքնուրուշն աշխատութիւնը, եթէ բնագրի տարբեր ընթերցածներ նշանակելը մի տեսակ մեքենական դործ համարենք, որպէս և ալ և ալ աղբիւրներից ծանօթութիւններ ընտրելը լոկ փոխառութիւն։

1. Շատ բառեր և դարձածներ անճիշտ են թարգմանած ուսանելէն՝ աւելի նոյա ընդհանուր կամ հեռուոր իմաստը բացատրելով, քան բուն նշանակութիւնը հաղորդելով։

Ահա մի քանի օրինակ. բառարան, էջ 385.—«ցրուէր զառաջին հաստատուն երդումն—нарушилъ свою страшную (sic!) клятву». Ո՛ւր է ալտոկ страшный.

Էջ 315.—(Վառնալը ի պատերազմէն) «կորակոր և ոչ բարձրադուխ—возвратился побѣжденнымъ, а не побѣдителемъ». բոլորովին կորչում է Նզիշէի զեղեցիկ համեմատութիւնը։

Էջ 385.—«Ի խոր խոցեալ ի խորհուրդսն—застигнутый врасплохъ событиями», քանի որ Նզիշէն ուրում է ասիլ—սաստիկ, չարաչար վշտացած լինելով իւր սրտում—огорченный до глубины души, глубокого поражения въ самое сердце.—(Տես Հալկ. րաւ.)։

Էջ 271.—«Աղիքն գալարէին լսել զմոնչիւն բեկեղոյն—страшное потрясение овладевало человекомъ, слыша крикъ пораженныхъ».—ալս՝ միայն հեռուոր իմաստն է հաղորդում, և ոչ բուն նշանակութիւնը։ Գոնէ ասիլու էր—сердце сжималось, сердце разрывалось...

Էջ 269.—«Հալկում ի մի իշխանն անխառն—но повинуются единому властителю».—ան խառնն էլ թարգմանած և իմաստն էլ

языческій (sic!), ввѣшній, иноземный, наружный». բառի բուն նշանակութիւնն է наружный, որ ամենից վերջն է դրած. միայն փոխաբերական մտքով նա կարող է նշանակել «иноземный, языческій» և մանաւանդ недуховный, мірской, свѣтскій, որ էլ ցոյց տաւ բառարանում.—«Ապա-ժ ու ժ - пролитая кровь (sic!), отвратительный, нестерпимый». Ապա-ժ ու ժ կազմւած է ապա (բացասակ. մասնիկ) և ժ ու ժ (ժողով, համբերել, տանել)—բառացի՝ անտանելի կը նշանակէ և միայն փոխաբերական մտքով կարող է նշանակել չաղախ, թափւած արիւն։—Նոյն տեսակետից համեմատէ և առաջիկայ բառերը. բուռն, բացատրել, գործակալ, նորատիք, շարժ, պատշգամ, վնաս, օրապահ, և այլն և այլն։

չէ պարզած. արտեղ հակադրւած են—«տարերք խառնեալք...
և Աստուած ան խառնն» (ընագիր, էջ 35), որ պէտք էր ան-
պատճառ չեշտել:

էջ 318.—«Հաղարապետ—ВЕЛИКІЙ ВИЗИРЬ». —ուրեմն հալերը՝ հպատակ լի-
նելով պարսից, աջնուամենայնիւ ունէին իրանց մեծ վէզիրը,
որովհետեւ Հաղարապետի հաղարապետն ալ միջոցին վահան
Ամասունին էր: Բայց արդեօք նա մեծ վէզիրի, թէ ակ
պաշտօն ունէր:

էջ 389.—«քաղաքին—купленный дорогой (sic!) цѣной». ինչո՞ւ քո-
րոցի, երբ որ ալտեղ լով քսկենայի է նշանակում կամ քո-
քսկենայի—հակառակ «հալերի»-ին (наследственн. կամ
вотчина) և «պարզեական»-ին (дарственный). տե՛ս բնագիրը,
էջ 78:

2. Շատ դարձածներ՝ բնագիրը չը հասկանալու պատճառով, սխալ
են թարգմանւած ուսերէն. օրինակներ՝

էջ 390.—«ճակատ հարեալ և քօձի պատառեալ—сѣ поникшимъ че-
ломъ...». ինչո՞ւ поникшимъ, երբ որ խօսքը վիրաւորւած, ջարդ-
ւած ճակատի մասին է:

էջ 359.—«գանձանց պարմանն զմասն (տէ՛ք) — они себѣ причиня-
ютъ вреда (sic!)», մինչդեռ պարմանք պէտք էր ալտեղ՝
շօշափել, զգալ բալերի իմաստով թարգմանել, (տե՛ս Հալ-
բառ.) — они сами чувствуютъ (свою) гибель.

էջ 306.—«ընդունան եղեալ ի նոյն խորհուրդ — планы его оказались
тщетными», որ սխալ է. իմաստն է՝ Յաղկերտ նոյն ընդունան
խորհուրդների մէջ մնալով:

էջ 293.—«արկանէր (Արշէն) դուրս առաջի ուրացելուն վասակալ—выра-
жалъ соболѣзнованіе къ отступнику Васаку (?)». —
ամենեւին ոչ. Արշէն քահանան աշխատում էր շարժել վասակի
դուրս դէպի անմեղ ժողովուրդը:

էջ 340.—«ածէր զօրավարն (վարդան) զկաց մնաց զօրականին — полко-
водецъ позаботился снабдить войско правіантомъ (?)». —
կաց մնաց մնացորդ տակ է — остатокъ. իսկ правіантъ
լաւանի չէ թէ՛ թնչ տեղից է առնւած ¹⁾:

¹⁾ Արաբիսի անճշտութիւններ երեւի թէ առաջացել են Шаншиевъ-ի
Եղիշէի ուսման թարգմանութեան ազդեցութիւնից, որ խկապէս փոխա-
դրութիւն է և երբեմն շատ ազատ—ոչ թէ բնագրից, այլ Kabaragy
Garabed-ի առանց ալն էլ ազատ ֆրանսիական թարգմանութիւնից: Թը
համեմ. Եղիշէի բնագիրը—էջ 73 («ճակատ հարեալ»), 74 («կաց մնաց»),
76 («խորակոր») ... և Шаншиевъ-ի թարգմ. էջ 129, 131, 136...

3. Բառարանն առհասարակ թեքի է կազմած. բաղմամբիւ բառերի տակ չէ ցուց տւած բնագրի իմաստին համաձայն նշանակութիւնը, ուստի և չեն էլ կարող նորա ճշտութեամբ թարգմանել ուսուերէն, որով ուրեմն բառարանը չէ համապատասխանում իւր զլիսաւոր նպատակին: Օրինակներ.

—«Անորովալն—лишенный живота, чрева». Բնչպէս պէտք է թարգմանել «անորովալն զեք».—գնելու էր նաև безтѣлесный.

—«Գռնդ—отрядъ, полкъ». հապա «գռնդ հրեշտակայ».—նշանակելու էր նաև сонмъ (ангеловъ):

—«Երազագէտ—снотолкователь». Բնչպէս պէտք է թարգմանել բնադրի (էջ 19) «որոց ոգիքն թուլացեալ են... երազագէտ է աջնալիսին ի կեանս իւրում».—Այտուղ երազագէտ—երազահան ասել չէ, ալ Բնչպէս գեղեցիկ մեկնում է «Հալկ. բնագ.»—Իբր երազագէտ, չուղեալ մտտեօք»:

—«Կեանք—жизнь». Բացի այդ բնչհանուր նշանակութիւնից՝ Ազիչէն շատ տեղ գործ է ածում և՛ մասնաւոր իմաստով—գոյք, ստացւած—имущество, որ ցուց տւած չը լինելով բառարանում, թիւրիմացութեան տեղիք պէտք է տալ աշակերտին:

—«Թափանցանց—прозрачный, чистый». Թարգմանեցէք այս նշանակութիւնների համաձայն բնագրի (էջ 35)—«խիկ օդն թափանցանց է ընդ հուրն և ընդ ջուրն»:

—«Նորաթեք—свѣжій, неофитъ». Բնչպէս պէտք է թարգմանել «նորաթեք մարդ» (Աղամ). գնելու էր նաև դորան համանիշ նորաստեղծ բառի նշանակութիւնը: (Տես Հալկ. բառ.):

—«Սալապատակ—мостовая». Բնչպէս պէտք է թարգմանել այս փոխտիպական ներութիւնը. «խիկ զ'իվալք ծորելի բնութիւն ջրոյն՝ սալապատակ տրամացուցեալ հողոյն կալմամբ...» (բնագ. էջ 35):

4. Չը տեղաւորելով մի կողմից շատ բառերի՝ բնագրի իմաստին համաձայն նշանակութիւնները, միւս կողմից հրատարակիչը շատ չաճախ դնում է բառարանում 7—8 և աւելի տող պարզ և հասկանալի բնագրի ուսուերէն թարգմանութիւնը (որ սպարդիւն մի աշխատութիւն է և հազիւ թէ օգտաւէտ մանկավարժական տեսակէտից), փոխանակ մի երկու խրթին բառի կամ դարձածի իմաստը միայն պարզելու և թարգմանելու: Օրինակները տես բառարանում: Միևնույն ժամանակ այդ թարգմանութիւնների մէջ նկատուում են սխալներ ուսուերէն լեզուի դէմ. օրինակի համար տես էջ 277, 323, 246, 248, 343, 259....

5. Աւերջապէս պէտք է նկատել և այն, որ բառարանը չէ ամփոփում բնագրում պատահած բոլոր բառերը, գոնէ առանց մանրամասն հետազոտութեան՝ պատահամբ գիտեցի ևս մի քանի բառերի բացակայութիւնը. — անխառն, արհաւիրք, գանձ, կալծ, ուղեղ, սենեկապան... կարելի է էլի գտնւեն պակաս բառեր:

Բնագրի տպագրական սխալներն մասին վերն արդէն վիշ-
ցիւ. բառարանի մէջ էլ շատ կտն սղղակիս սխալներ (կողմիտ՝ լոյն բառերի
և մանաւանդ մի դէպքում—հայերէնի մէջ)—չը տեղաւորած վրիպակների
աղիւսակում:

Այսպիսի թերութիւններով բառարանը, որ՝ կազմած լինելով Կատ-
կապէս միայն Նղիշէի բնագրի վերայ, աչնու ամենաչնիւ մա-
տենագրին չատուկ՝ լեզու ու ոճերի բոլոր նրբութիւնները լիովին չէ
առաջագրում,—հազիւ թէ զոհացուցիչ լինի մեր ուսումնարանների համար:
Թողնենք թանգ դնոց և սակամատչելի Հալիկազ. բառգիրքը՝ ազդ
արդարեւ գանձարանը հալ լեզուի, որ տալիս է մեզ համարեա ամեն մի
բառի ճիշտ մեկնութիւնը և նշանակութիւնը՝ մատենագիրների մանրա-
մասն վրիպութիւններով հանդերձ. (ուստի և չենք հատկանում, ինչ մաքով
է ասում Նղիշէի հրատարակիչը (Յառաջաբ. բ.), թէ նա «նապած» է.)—
Նան խու գաբա շեանի բառարանում (որին՝ մեր համոզմունքով, աւելի
կը վազելէր հնացած խօսքը՝ մանաւանդ ուսուսիւնի վերաբերմամբ), նան
Խուղարաշեանի բառարանում Նղիշէի բառերի և դարձեալների ուսուսիւն
նշանակութիւններն աւելի պատշաճաւոր և լիտման են, քան թէ ազդ
կատարած է նոր հրատարակած Նղիշէի մասնաւոր բառարանում:
(Համեմատէ՛ զոնէ վերը լիշած բառերը—բարձրագլուխ, թափան-
ցանց, կաց մնաց, կորակոր և ալն): Խուղարաշեանի աշխատութեան
հազւագլուխ լինելն էլ (չառաջաբ. բ.) ծանրակշիւ չարժանի չէ թե-
րատ և պակտաւոր բառարան լորինելու, քանի որ մեր ազգային դպրոց-
ներում Խուղարաշեանը գործածելի չէ:

Պէտք է մի քանի խօսք ասել և՛ բառարանի լեզւագիտական
համեմատութիւնների սուրթով: Գիտելու է մի անգամ ընդմիջոյ, որ ազդ
համեմատութիւնները բոլորովին անտեղի են աչնակիսի դատադրում, որ
անտորձ, լեզւագիտութեան դեռ բոլորովին անպատրաստ աշակերանների
համար է նշանակած: Այս մի աչնակիսի ճշմարտութիւն է, որ «վրատիկա-
կան լեզու» ոչ մի ուսուցիչ չէ կարող ուրանալ, որպէս և չէ կարելի ու-
րանալ, որ լեզւագիտութիւնը շատ հետաքրքրական դիտութիւն է, թէ և նա
էլ իւր տեղը, իւր աւանդութեան չափն ու ոահմանն ունի: Մեր կարծի-
քով՝ շատ աւելի օգտաւէտ կը լինէր և ուսումնասիրութեան համար աւելի
նպատակաւորմար, եթէ՝ փոխանակ դեռ չը հատուտած, դեռ վիճելի (օրի-
նակ Ս. Բուզգէի եղրակացութիւնները), շատ անգամ նան խառնաշփոթ
լեզւադիտական համեմատութիւնների,—հրատարակիչն առաջարկէր բա-
ռերի կազմութիւնը և ստուգաբանութիւնը:

Իջնելով լեզւագիտական համեմատութիւնների մանրամասնութիւն-
ներին, պէտք է աչնու ամենաչնիւ մի երկու համառօտ դիտողութիւն անել:
ա.—Այստեղ բոլորովին չէ պարզւած մի շատ կարեւոր կէտ. կան հա-
լիէն բառեր, որոնք ազգական են միւս հնդկի եւրոպական լեզուներ-

րին, սույս շարքում հալերէնը իւր ինքնութիւնը, սեպհական տիպարն ունի և իւր անկախ տեղը, մօտենալով աւելի Նւրոպական խմբին և մասնաւորապէս Յունականին և Սլաւո-Լիթւանականին:—Կան և բաւականաչափ աշնպիտի հալ բառեր, որոնք ուղղակի փոխ և ն առնւած՝ մանաւանդ իրանական լեզուներէ, որոնց մէջ հին պարսկէրէնը, պահլաւ, պարսի (կամ Հուգլարէն) և Նոր-Պարսկէրէնը շատ անգամ խառն և շփոթ դետեղւած են Բառարանում՝ առանց ս'ընշակին շանակելու: Գործից անտեղեակ մարդը չը պիտի կարողանայ ազգակցութեան և փոխառութեան աչք կարեւոր խնդիրն ըմբռնել բառարանի միջոցով, որովհետեւ դորա համար սրեւ է մեկնութիւն կամ հրահանգ ցոյց տւած չէ:

բ.—Հալերէնի մերձաւոր ազգակցութիւնը Յուն և Սլաւոն լեզուներին հետ, Սլաւոնականի կարեւորութիւնն իրրեւ արմատ հին ու նոր ուսուրէնի և վերջապէս կլասիկական (յուն և լատին) լեզուների աւանդութիւնը գիմնադիրոններում, - բաւական ծանրակշիռ փաստեր են, որոնց հիմամբ հալերէնի հետ բազմաթիւ փոխառ լեզուների համեմատական նիւթերին մանաւանդ կարեւորութիւն պիտի տրւէր: Մինչդեռ մի քանի առանձնակ առնադործածական բառեր ենք մենք նշանակել Բառարանում, որոնց մօտ պակասում են հալերէնին ազգակցից՝ Սլաւոն, Յուն և Լատին ձեւերը:—միւս կողմից փոխ առնւած հալերէն բառերի տակ մի առ մի նշանակւած են համանման Սանսկրիտ, Չինոյ, Պարսիկ ձեւերը, որ բոլորովին աւելորդ էր:

Ն գր ա կ ա ց ու թ իւ ն

Բոլոր մեր ասածներից եզրակացնում ենք.

1. Բնազգիւր:—Անձնացիաց օրինակի համեմատութիւնը Վենետիկեան տպագրութեան հետ շատ պակասաւոր է. Նզլիչի տարբեր ընթերցւածները քննական կերպով ուսումնասիրւած չեն. նոր հրատարակութիւնը հենքի վերաջ առաւելութիւն չունենալով՝ դեռ սոյն պակասն ունի, որ անփութ կերպով է հրատարակւած վարիանտների կողմից և բացի դորանից բաւական տպագրական սխալներ ունի, որոնցից նոքա զերծ են:

2. Ծանօթութիւնն Իւրիմջ բոլորովին բացակայ են քերականական լուսաբանութիւնները, որոնք դասադրքի համար կարեւորագոյն են:—պատմական ծանօթութիւնները կազմելիս պէտք էր տեղեակ լինել նորագոյն կարեւոր հալ և օտար հետազօտութիւններին և աւելի հեշտութեամբ և զրուշութեամբ օգտւել նախկին՝ աւելի լիակատար համանման հրատարակութիւններէ, աւելի նոցա լրացնել ձգտելով, քան կիսատ, թերատ կրճատելով:

3. Բառարանը՝ բացի աշխարհարառի բացակայութիւնից, անխորձ ձեւքով է կազմւած, թերի է և անգոհացուցիչ—շատ անգամ բառի բուն

Նշանակութիւնը չը տեղաւորելով, չաճախ՝ բառի կամ վարձւածի ընդհանուր իմաստը միայն հաղորդելով, փոխանակ բառացի և ճիշտ թարգմանութեան բաւական ստէպ՝ անճիշտ ու սխալ թարգմանելով դոցա ռուսերէն։ Լեզուագիտական համեմատութիւններն անտեղի են «աշակերտների գործածութեան համար»։

Քննական կերպով ուսումնասիրւած Եղիշէի բնագրի, որ միննոյն ժամանակ հմտութեամբ լուսաբանւած լինէր կարեւորագոյն ծանօթութիւններով,—մենք արդարեւ կարօտութիւն ունինք։ Եթէ ձգտում և պահանջ կար՝ գոհ չը լինելով հին փորձերով, նորը կազմել, պէտք է որ ապա նորը իւր *raison d'être*-ը—գոյութեան իրաւունքն ունենալ հսկրի շորքում՝ եթէ ոչ գերազանցելով նոցա, գոնէ և ոչ զիջանելով։ Այս օրերս լուս տեսաւ Եղիշէի նոր հրատարակութիւնը «ճոխացրած ծանօթութիւններով և բառգրքով»։ Բայց այդ կարօտութիւնը՝ մեր կարծիքով, նույնչափ զգալի է և անհրաժեշտ անժամ, որ չափ և առաջ։

ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՅՑ:

ЕРЛИЦКІЙ, А. Ф.—О причинахъ душевныхъ болѣзней.
Публичная лекція (հոգեկան հիւանդութիւնների պատճառների
հասին, հրապարակական դասախօսութիւն Ա. Ֆ. Երլիցկու)։

Պ. Երլիցկու դասախօսութիւնը «հոգեկան հիւանդութիւնների պատճառների մասին» որ, նա կարդացել էր սոն փետրւար ամսին Պետերբուրգում լոգուտ սովեակներին՝ մօտ օրերս լոգ տեսաւ առանձին բրոշւրով նոյն բարեգործական նպատակով։

Վերոյիշեալ դասախօսութեան նիւթը աչնքան հետաքրքրելի է, որ աւելորդ է ծանօթացնել նրա հետ հաւ ընթերցողին։

Պ. Երլիցկին նախ և առաջ ուսումնասիրում է ժառանգականութեան նշանակութիւնը, ֆիզիկական և հոգեկան չափութիւնները անցնում են ծնողներից դէպի որդիք։ Նրա ատելով ժառանգականութիւնը առաջին տեղն է լւնում հոգեկան հիւանդութիւնների բոլոր չափերի պատճառների շարքում։

Ժառանգական նախատրամադրութիւնը (предрасположение) դէպի հոգեկան հիւանդութիւնները շատերի մօտ մնում է առժամանակ թաղուն և միմիայն կեանքի որոշ ժամանակամիջոցներումն են նոքա երևան գալիս։

Ընդհակառակն—ուրիշների մօտ ժառանգական նախատրամադրութիւնը դէպի հոգեկան հիւանդութիւնները երևում է որ և է ալլանդակութեամբ օ, ր, անհամար ֆիզիկական կազմածքի, զ, օ, երեսի, բերանի, ատամների աչքերի, գանգի ալլակերպութիւններով և ալլն։

Ջղային սխտեմը, հոգեկան մթնոլորդը և բարոյականը աղպիսի անձների մօտ ալլակերպած է լինում։

Աղպիսիները որոշում են հոգեկան գործունէութեան բթութեամբ, կամ նոյն հոգեկան գործունէութեան ուժեղանալովը և չաջորդող թուութիւնով։ Աղպիսի անձները անկարող են լինում կառավարել իրանց կամքը, բանականութիւնը և զգացմունքները, Ժառանգականութեան դերը հոգեկան հիւանդութիւնների մէջ երկու տեսակի է լինում։ Առաջին տեսակին պատկանում են աչն դէպքերը, երբ ժառանգականութիւնը հող է պատրաստում հոգեպէս արագ հիւանդանալու համար, երկրորդ դէպքում ժառանգականութիւնը ինքն ըստ ինքեան հիւանդանալու պատճառ է լինում։

Կալ մի ամբողջ շարք հոգեկան հիւանդութիւնների, ուր միմիայն ժառանգականութիւնն է հիւանդանալու պատճառ հանդիսանում։

Բոլոր վերոյիշեալից պ. Երլիցկին աչն եզրակացութիւնն է անում որ ամուսնութեան պտուղ ժառանգներին՝ հոգեկան հիւանդութիւնների նախատրամադրութիւնից ազատ կացուցանելու համար՝ պէտք է լինի աչնպիսի ծնողների ընտրութիւն, որոնք ժառանգականապէս առողջ են։

Հոգեկան հիւանդութիւնների միւս պատճառները, որոնց ակնարկում է

պ. Երվեցիկին, սրանք են՝

1) Անկանոն դաստիարակութիւն,

2) Հակաառողջապահական պաշտօններ դաստիարակութեան միջոցին,

3) Պատանեկական հասակ սեռական հակումների ազդեցութեան ներքոյ,

4) Չափազանցած մտաւոր աշխատութիւն հակաառողջապահական, բարոյական և ֆիզիկական պաշտօններին հետ միաժամանակ,

5) Մարդկային գործունէութեան չափազանցած մրցումն,

6) Մի քանի մաշող հիւանդութիւններ,

7) Ուղեղին վնասելը,

8) Զղակին հիւանդութիւններ՝ խտերիւ և էպիլեպսիա:

9) Սիֆիլիս,

10) Ալկոհոլիսմ:

11) Մորֆինիսմ և վերջապէս՝

12) Ծերութեան հասակ:

Բրոշիւրի վերջումը կան երկու տոհմադրական աղիւսակներ, որոնք պատկերացնում են պ. Երվեցիկու ասածները ժառանգականութեան մասին:

Առաջին աղիւսակում ցուցակագրւած են Յուլիոս Կեսարի և Օկտաւիանոս Օգոստոսի ալլասեռւած չնորոշները:

Միւս աղիւսակը կազմւած է նոյն կերպով՝ վերաբերմամբ աւատրիական տոհմի սպանիական գահի ժառանգներին: Այլ աղիւսակները լուսաբանում են ժառանգականութեան աւերիչ ներգործութիւնը հողեկան հիւանդութիւնների և բոլոր հոգեբանական ախտերի նկատմամբ:

Բժիշկ Ն. Ումիկեան:

Նոր ստացւած գրքեր

1) ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ լիշատակարանը: Հրատարակեց իւր լաւաջաքանով Կարապետ ԿՈՍՏԱՆԵԱՆՅ: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանցի, 1892 թ., գինն է 25 կոպէկ:

2) ԳԱՐԵԳԻՆ ՍԱՐԿԱՒԱԳ. — «Սասմայ ծուեր, Սասունցի Դաւիթ» (Ժողովրդական վէպի երկու նոր վարիանտներ): Հրատարակութիւն Թիֆլիսի Հայ. Գրք. Հրատ. Ընկ.: Թիֆլիս, տպ. Շարաձէի, 1892 թ., գինն է 50 կ.:

3) ՊԱՐՈՆԵԱՆ, Յ. Յ. — «Հոսոսի ձեռատետրը», «Պտույտ մը Պոլսոյ Թաղերու մէջ» և «Խիկարի գուշակութիւն», մի գրքում ամփոփած, հրատարակութիւն Թիֆլ. Հայ. Գրք. Հրատ. Ընկերութեան: Թիֆլիզ, տպար. Շարաձէի, 1892 թ., գինն է 1 ռուբլի:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Հայոց Բարեգործական Ընկերութիւնները ընդհանրապէս և Թիֆլիսի Հայու-
հեաց Բարեգործական Ընկերութիւնը մասնաւորապէս:

Ընկերութիւններ հիմնելու գործում տաճկահայերը արեւելեան հայերիցս առաջ են եղել. «ընկերութիւն» անունը նոցա մէջ շատ ժողովրդական է. կը հաւաքւեն մի որ և է զազափարի անունով, ընկերութեան մի կանոնագիր կը կազմեն, անպատճառ մի թունդ ազգասիրական անունով կը մկրտեն նորան, յետոյ նորից կը հաւաքւեն և, գործունէութիւն չունենալու պատճառով, կը սկսեն կանոնագիրը «կատարելագործել», այսինքն հիմնադրութեան միտքն ու ուղղութիւնը փոխել, մինչև որ կ'երկպառակուեն անդամները և ընկերութիւնն այսպէս կամ այնպէս կը քանդուի:

Նս այսպիսի մի կարծիք կազմել եմ պոլսական ընկերութիւնների մեծամասնութեան մասին, տեսած լինելով զլիսաւորապէս տաճկահայերի ձեռքով հիմնւած մի ընկերութիւն Պարիզում, 1879 թէ 1880 թւականին, «արդեամբ և ջանիւք այս ինչ անունի» (իսկական անուն ազգանունով այդպէս էլ տպւած էր կանոնադրութեան մէջ): Սկզբում որոշւեց և տարեց որ նորա նպատակը պէտք է լինէր «միջոց տալ հայ մանկուոյն Եւրոպայի բարձրագոյն ուսումնարաններում ուսում ստանալ»: Սկսեցինք պրոպագանդ անել, անդամներ գտնել, փողեր հաւաքել. և հաւաքւեց էլ տասը հազար ֆրանկից աւելի զումար, որ ստացաւ ընկերութեան վարչութիւնը: Ան-

ցաւ մի տարի, և ես, նորից Պարիզում գտնւելով, իբրեւ անդամ հրաւիրեցի ընդհանուր ժողովի՝ կանոնադրութիւնը վերաքննելու համար: Ոչ մի «հայ մանկուոյն» որ և է կուգէկ ու սանտիմ չը տւած բարձրագոյն ուսում ստանալու համար՝ կանոնադրութիւն էին ուզում փոխել: Զը դիտեմ մեր մի քանի ընկերների բողոքն այդ ժամանակ ինչ հետեանքի հասաւ, բայց Ֆակտը սա է, որ երբ մի երրորդ անգամ Պարիզ եղաց, ընկերութեան նոր տպւած կանոնադրութեան մէջ նպատակը որոշւած էր այսպէս՝ թէ ընկերութիւնը հայ մանկուոյն միջոց տայ Ֆրանսիայում բարձրագոյն ուսում ստանալու: Եւրոպան դարձրել էին Ֆրանսիա, Ֆրանսիան էլ ուզում էին դարձնել Պարիզ...

Ճիշդ է որ այդ ժամանակները Ֆրանսիական հանրապետութեան սահմանադրութիւնը փոխելու վէճեր կային քաղաքական շրջաններում, և պարլամենտը տեղափոխեցին Վերսալից Պարիզ...

Երեւի ի միջի այլոց դորա նման պատճառներով, այսինքն փոխամտութեամբ պէտք է մեկնել, թէ ինչու Տաճկաստանում, Պոլսում՝ հայկական ընկերութիւնները սունկերի պէս բուսնում են, բայց և շուտով թառամում, անցետանում:

Թէ որքան այդ նկատողութիւնը տեղին է Պոլսում 1878 թւականին ծագումն առած «Ազգանւէր Հայունհեաց Ընկերութեան» նկատմամբ, այդ չը դիտեմ: Ինձ գոնէ յայտնի չէ նորա այժմեայ գոյութիւնը. նորա մասին բան չի լսում և երբեք նորա գործունէութեան հաշիւը ձեռքս չի ընկել: Բայց որքան լաւ նպատակով նա հիմնւեց, քանի որ այդ նպատակը եղել է Թիւրքա-Հայաստանում իգական տարրական դպրոցների համար վարժուհիներ պատրաստել:

Թողնելով ժամանակին այդ ընկերութեան մասին տեղեկութիւններ հաւաքել, անկարելի չէ իմանալը, որ 1878 թւականին Պոլսում հիմնւած այդ «Ազգանւէր Հայունհեաց Ընկերութեան» վարչութեան յորդորներին ենք պարտական, որ այսօր Կովկասի հայերս ունենք կանանց մի հատիկ ընկերութիւն, այն է Թիֆլիսի Հայունհեաց Բարեգործական Ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը հաստատւեց զեկտեմբերի 31-ին 1881 թւականին և որի բացումն տեղի ունեցաւ մարտի 7-ին 1882 թ.:

Ահա ուրեմն այն զեպքերից մէկը, ուր մեր գործերի համար

խթանն ստացել է տաճկա-հայերից և ոչ ուղղակի մի որ և է օտար ազգից կամ ինքնաբերաբար:

Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մեր սակաւթիւ հայկական ընկերութիւններից մէկն է. բացի նրանից մենք ունենք միայն Բաքուի Մարդասիրական Ընկերութիւնը, որ ճիւղեր չունի, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը Կովկասում, որ մօտ քսան փոքր, մեծամասնաբար շատ չնչին ճիւղեր ունի, և Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը: Աւայժմ միայն այդքանը. մինչև որ կը յաջողի Հայոց գրադէտների Ընկերութեան հիմնելը: Համեմատած այն կարիքների հետ, որ ունի հայկական կեանքը, այդ շատ քիչ է, մանաւանդ որ եղածներն էլ զարմանալի քիչ գործ են կատարում: Եւ ինչ կարող է կատարել այդ ընկերութիւնների ունեցած տարեկան եկամուտներով: Հնագոյնը մեր հայկական բոլոր ընկերութիւններից՝ Մարդասիրականը, որ Բաքուի պէս ոսկէ քաղաքում է գործում, ամբողջ 25 տարւայ ընթացքում մնիւել է մօտ 123 հազար ռուբլի միայն, ասել է միջին թւով տարեկան դեռ ոչ իսկ լիակատար 5000 ռուբլի: Այժմ նորա տարեկան եկամուտը մի ինչ որ 7 հազար ռուբլի է: Նա փողի աղքատութիւնից չէ, այլ ողու ու մոքի աղքատութիւնից. այդպիսի մի ողորմելի բիւջետով է գործել մի ընկերութիւն, որ մեզանում հանրահռչակ է դարձել, և մի քաղաքում, որ տիեզերահռչակ է. մի քաղաքում, ուր այդ ընկերութեան անդամներից շատերն իրանց տարեկան եկամուտների շնորհիւ Կովկասում փողի իշխանների անուն են վայելում: Այնուհետեւ Կովկասի հայերի ամենամեծ ընկերութիւնը՝ Բարեգործականը, որ մօտ քսան ճիւղեր ունի Կովկասի այլ և այլ քաղաքներում, գործում է տարեկան մի. ինչ որ 12 հազար ռուբլի տարեկան եկամտով, որից հինգ հազարն ընկնում է Կովկասի մայրաքաղաքի և ամենահայաշատ ու ամենազարգացած Թիֆլիս քաղաքի ճիւղին, որ կենտրոնն է ամբողջ ընկերութեան. Հայոց Հրատարակչական ընկերութիւնը իւր տարեկան ոչ աւելի քան 3—4 հազար ռուբլու շրջանառութիւնով, և վերջապէս Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը, որի նորերս լրացած տասնամեակի հաշից 1) իմանում

1) Տասնամեակ Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան 1882 թ. մարտի 7—1892 թ. մարտի 7-ը, Թիֆլիս, տպ. Արօր, 1892 թ.:

ենք, որ տասը տարում նա մնել է ընդամենը 35,238 ռուբլի, տարեկան, ուրեմն միջին թուով 3,500 ռուբլուց մի փոքր ավելի, իսկ համաձայն իւր 1891 թվականի հաշիւի, նորա մնալու ոչ ժն այժմ է 5755 ռուբլի: Այսպիսով ուրեմն մեր բոլոր չորս հասարակական հիմնարկութիւնները՝ գործում են տարեկան ոչ ավելի քան 28, առ առաւելն 30 հազար ռուբլիով:

Դա շատ քիչ է, և եթէ դորանում կայ մի միութարական կողմ, այդ այն է, որ բացի Բաքւի Մարդասիրականից, մնացած բոլոր ընկերութիւնները նոր հաստատութիւններ են, այնպէս որ դոցա առաջին տասնամեակները միայն այս վերջին երկու տարիներում լրացան: Վերջին տասը տարին հայերս սկսեցինք ծանօթանալ հասարակական հիմնարկութիւնների հետ, եթէ մի կողմ թողնելու լինենք դպրոցական հաստատութիւնները. այդ տասնամեակում նոքա ծանօթացան ժողովների կարգ ու կանոնների հետ, քանի որ կանոնադրութիւններով և ժողովներով գործելը մի առանձին կրթութիւն է պահանջում, մի կրթութիւն, որ վերին աստիճանի յատուկ է եւրոպական քաղաքակրթութեանը և շատ խորթ ու օտար՝ ասիական աւանդութիւններին, որոնց արդիւնք ենք մասամբ նաև հայերս:

Այժմ, երբ այդ ընկերութիւնները մտել են իրանց գոյութեան երկրորդ տասնամեակը, պէտք է յուսալ որ նոքա իրանց երկրորդ տասնամեակի հաշիւներում մեր առջև կը դնեն այլ թւանշաններ, որոնցից երեւոյ ավելի մեծ զնահատութիւն իւր բարիքների հասարակութեան այլ և այլ խաւերի կողմից: Մեզ թւում է որ այդ ընկերութիւնները աչքի ընկնող ծառայութիւն կարող են անել, եթէ նոցա տրամադրութեան ներքոյ դնուի տարեկան ոչ թէ 30 հազար, այլ մի քանի հարիւր հազար ռուբլի: Ես գիտեմ որ այդ պահանջը ամենքին կը զարմացնի իւր անչափաւորութիւնով. շատերի վերայ նա միայն ժպիտ կը բերի. բայց ո՞վ միայն կշռել է, թէ ի՞նչ մեծ ակնկալութիւններ են դրւած նոցա վերայ, նա չի զարմանալ մեր ասածի վերայ: Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան վերայ ամեն մի անկարող համայնք ակնկալութիւն ունի, թէ նա կ'օգնի իրան ուսումնարան հիմնելու և պահպանելու. բայց մենք մինչ հազար գիւղ ունինք, ուր տարրական ուսման հոտն անգամ չի առնւած. և երբ ես ասում եմ հազար գիւղեր, այդ

չը պէտք այնպէս հասկանալ թէ ես ուզում եմ դորանով ոչոք տալ իմ ոճին ու բառերին. ես այդ ասում եմ բառացի մոքով: Մի միլիոն ազգաբնակչութեան վերայ եթէ, ստատիստիքական հաւանականութեամբ, ընդունելու լինենք 130.000 երեխաներ, կը տեսնենք որ այժմ զոյութիւն ունեցող մեր բոլոր ծխական և թեմական ուսումնարաններում ուսանում են այդ թւի մի տասնութիւն երորդը ($\frac{1}{11}$), մօտ 12,000 հոգի թէ արական և թէ իգական սեռի, իսկ հայոց ուսումնարաններ ունենք միայն շուրջ 160. հետեւապէս մենք տասն անգամ աւելի շատին կարօտ ենք, ուրեմն մենք կարօտ ենք մինչ 1,500 ուսումնարանների որ հայոց մէջ տարրական ուսումն ընդհանուր կերպով ծաւալի, որ և բոլոր համայնքների փափազն է: Եւ որքան էլ չափաւորելու լինենք մեր պահանջը, էլի կը տեսնենք որ եթէ ոչ 1500, զոնէ դորա կէսը, եթէ մի դասարանով լինին, կը պահանջեն ամենահամեստ հաշւով 375,000 ռուբլի տարեկան, իսկ եթէ երկդասարանեան լինեն՝ 700.000 ռուբլի տարեկան: Ի նկատի առէք որ այն տեղերը, ուր ուսումնարաններ չկան, միայն աղքատ և բարոյով յետ ընկած տեղերն են, հետեւապէս նոցա հասարակութիւնների վերայ յոյսեր զնելն առայժմ ապարդիւն բան կը լինէր: Մեր այդ երկու Բարեգործական Ընկերութիւնները հէնց նորա համար են, որ ի միջի այլոց օգնութեան հասնեն այդ տեսակ հասարակութիւններին. հետեւապէս նոքա պէտք է պահանջւած գումարների զէթ կէսը մատակարարել կարողանան: Ի՞նչ զարմանալու բան կայ ուրեմն, երբ մենք ասում ենք թէ զոյութիւն ունեցող այժմեան հայկական ընկերութիւնները պէտք է տարեկան ունենան ոչ թէ մի քանի տասնեակ հազար, այլ զոնէ մի քանի հարիւր հազար ռուբլի տարեկան եկամուտ: Ի նկատի առէք որ հէնց այդ չիշած երկու ընկերութիւնների համար ուսումնարաններ պահպանելը նպատակներից մէկն է և ոչ միակ նպատակը:

Այժմ, եթէ մասնաւորելու լինենք մեր խօսքը Թիֆլիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան վերայ, չենք կարող չը վկայել, որ իւր սուղ միջոցներին նա լաւագոյն գործադրութիւն է տուել. տեսնելով որ միջոցներ չունի կանոնադրութեամբ իրան տրւած

իրաւունքները բանեցնել, տարածելով իւր խնամքը շատ ուսումնարանների վերայ և լայն ծաւալով ուրիշ բարեգործութիւններ անել, նա հէնց առաջին տարւանից իւր բոլոր խնամքը թափել է Քրիստի ծխական ուսումնարաններից մէկի վերայ, յաջողացնելով 1888 թւականին բաց անել նաև մի «Կարուձևի և Ձեռագործի» դպրոց, վերջինս նահանգական իշխանութեան թոյլտուութեամբ: Եւ ահա այսպիսով Հայունեաց Բարեգործական Ընկերութիւնը կառավարում է մի (ս. Նշանի) միդասեան եկեղեցական-ծխական դպրոց երեք բաժանմունքներով և մի «Կարուձևի և Ձեռագործի դպրոց», որ մի հատիկն է հայերիս բոլոր ուսումնարանների մէջ և որը նմանութիւն ունի Քրիստում դոյութիւն ունեցող «Կանանց արհեստադիտական քաղաքային ուսումնարանի» հետ (Городская женская профессиональная школа): Որպէս առաջինը և միակը իւր տեսակում, մենք աւելորդ չենք համարում ծանոթացնել Ընկերութեան «Կարուձևի և Ձեռագործի» ուսումնարանի այն կանոնադրութեան կարևորագոյն կէտերի հետ, որ հաստատուած է 1890 թ. ապրիլի 21-ին Կովկասի Ուսումնարանական շրջանի հոգաբարձու պ. Կ. Պ. Եանովսկու կողմից:

Դպրոցի նպատակն է ձեռագործութեան ճիւղերի վերաբերեալ վարպետուհիներ պատրաստել (Կանոնադր. § 1):

Դպրոցում աւանդելիք ուսման տեւողութիւնը երեքամեայ է (§ 2):

Դպրոց ընդունւող աղջիկների հասակը 14 տարեկանից պակաս չը պէտք է լինի և զրանք պիտի իմանան հայոց եկեղեցական-ծխական միդասեան կամ սկզբնական (պետական) դպրոցների դասընթացքը (§ 10):

Սկզբում դպրոցում աւանդում են. 1) ընդհանրապէս ձեռագործութիւն (կար, գործել, ասղնեգործութիւն, հարթակար և այլն), 2) նկարչութիւն, 3) հաշւապահութիւն, 4) առտնին տնտեսութիւն կամ տնարարութիւն. ապազայում կարելի է ուրիշ արհեստներ ևս մացնել (§ 14):

Օգտւելով կանոնադրութիւնից ներկայ 1892 թ. մայիսին Ընկերութեան Ընդհանուր ժողովի վճռով, նախաձեռնութեամբ տիկին Վառլաուէ Ռոտինեանցի, պէտք է սկսեն խոհարարութեան դաստաւութեան առաջին փորձերը թէ՛ դպրոցի սանուհիների և թէ՛ այլ ցանկացողների համար:

Այսպիսով մենք տեսնում ենք որ ընկերութիւնը, փոխանակ ցրւելու իւր շատ սուղ միջոցները, կենտրոնացրել է իւր գործունէութիւնը, ստեղծելով Հայերիս մէջ չեղած մի օգտակար ուսումնարան, որտեղից անշուշտ կը դուրս գան. 1) մեր օրիորդական ուսումնարանների համար հարկաւոր կարուձևի և ձեռագործի հայ վարժուհիներ, 2) կեանքի մէջ անկախ աշխատանքի ընդունակ աղջիկներ և կանայք:

Մեր ընթերցողներին անշուշտ բաւականութիւն կը պատճառի իմանալ Հայունեաց Բարեգ. Ընկերութեան «Կարուձևի և Ձեռագործութեան դպրոցի» առաջին շրջանաւարտների վիճակը: 1890/91 թւականին 7 աշակերտուհիներ աւարտեցին դպրոցի եռամեայ դասընթացը վարպետուհու օգնականի կոչումով, որից յետոյ աւարտելով դպրոցի մասնագիտական բաժանմունքը, վարպետուհու վկայականներ ստացան: «Այդ շրջանաւարտներից 3-ը պատկանում էին արհեստաւորաց դասակարգին, 3-ը վաճառականական և 1-ն էլ ուսուցչի աղջիկ էր: Դրանցից մէկը շուտով իւր սեպհական արհեստանոցը բացեց Քիֆլիսում, մինը պատուէրներ էր վերցնում տանը կարելու, մէկը Շուլաւէրի օրիորդաց ծխական դպրոցի ձեռագործութեան վարժուհու պաշտօնն ստանձնեց, մինը ժամանակաւորապէս ձեռագործութեան վարժուհու պաշտօն էր կատարում Ս. Նշանի դպրոցում և վերջապէս 3-ը մնացին հէնց դպրոցում»:

Արդարեւ կարելի է շնորհաւորել Հայունեաց Բարեգործական Ընկերութեանը իւր սուղ միջոցների այն գործադրութեան համար, որ նա արել է, բաց անելով արհեստագիտական այն դպրոցը, որ նա անւանել է «Կարուձևի և Ձեռագործի դպրոց», բայց ուր ժամանակով կարող են մուտք գործել նաև այլ կանացի արհեստներ:

Բայց և այնպէս Հայունեաց Բարեգործական Ընկերութիւնը չը պէտք է մոռանայ որ նորա նպատակներից մէկն է չունենոր համայնքներին օգնել աղջիկների դպրոցներ հիմնելու կամ պահպանելու, արդարացնելով այն բարեգործական անունը, որ կրում է այդ Ընկերութիւնը: Թէ որքան Ընկերութեան ծրագրի մէջ պէտք է մտնի իւր նիւթական միջոցները տասնեակներով, անգամ հարիւրներով բազմապատկել, այդ արդէն նորանից է երևում, որ մեր վերելի դանգաւորը հայ դպրոցների սակաւութեան մասին աւելի ևս

տեղին է աղջիկների վերաբերեալ: Համաձայն Ս. Էջմիածնում: Նորերս հրատարակած պաշտօնական թւերին, այն ողորմելի տասնեակ հազար (ծիշղը 10.024) աշակերտներից, որ ուսանում են Ռուսաստանի Հայոց ծխական-եկեղեցական ուսումնարաններում, աղջիկներ միայն մօտ 4.000 էին 1889—90 թվականին (ծիշղը 3.965): Լուրջ կերպով այդ մասին մտածելու ուրեմն տեղիք կայ:

Լ Ո Ւ Ս Ի Ն Ի:

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԽՈՒՆԵՐԱ

ՆՐՈՒԱՆԳԻ ՂԱԶԱՐԵԱՆԻ

Այն տեսակ սարսափահար ժողովրդական դժբաղդութիւնները, ինչպէս են սովը, ժանտախտը, խոլերան—մարդոց ակամայ ստիպում են, առժամանակ զոնէ, մոռանալ իրանց սեպհական զբաղմունքները, իրանց կեանքի հոգսերը՝ և մտածել ուրիշների վրայ: Այդ ժամանակաւոր ինքնամոռացութեան հետեանքն աչն է լինում, որ հասարակութեան մէջ ապրող և կեանքի բոլոր երջանկութիւնները մշտապէս վաշելող «արտոնացեալ» դասակարգը՝ համարեա անգիտակցօրէն՝ բաց է անում իւր վտղի տուպակը և սկսում է բարեգործութիւնով զբաղել: Կեռ ևս շարունակում է Ռուսաստանի սովը, դեռ ևս կաւսրութեան ամեն կողմից աշխատում են օգնութեան ձեռք կարկառել Ռուսաստանի խեղճ գիւղացուն սովամահ լինելուց աղատելու համար,— և ցանկարժ Կովկասում ցայտնւում է մի նոր հրէշ, մի նոր ժողովրդական աղէտ—խոլերան, որ սպառնում է տարածւել ամբողջ Ռուսաստանում և, մէկ դժբաղդութեան վրայ աւելացնելով մի ուրիշը, աւելի սոսկալին՝ ժողովրդի տանջանքների զարհուրելի բաժակը լցնելու է մինչև պռունկները... Շատ էլ զգալուն սրտի տէր չը պէտք է լինել՝ աչս հանդամանքներում խեղճերի դրութիւնն զգալու, հասկանալու համար: Սովի, խոլերայի և առհասարակ ժողովրդական մեծ դժբաղդութիւնների երևութը կարծես մի գիւթական դաւաղանի հարւածով պատառում է այն ստունութեան և անտարբերութեան հաստ վարագույրը, որ սովորաբար ծածկում է բաղդաւորների աչքերից միլիօնաւոր թշւառների կեանքը իւր բոլոր ողբալի մերկութեամբ: Կեանքի խաղաղ և առօրեայ պայմաններում, երբ չը կալ բարձրաձայն գոռացող և աղաղակող չարիք, երբ մարդիկ հնազանդ («ճակատագրի») անողք որոշմանը, ապրում և մի կերպ քաշ են տալիս իրանց ողորմելի գոցութիւնը—այդ տեսակ, ըստ երևութին՝ բնական պայմաններում, մարդոց մէջ չի լինում ոչ խիղճ, ոչ կարեկցութիւն և ոչ ուրիշի ցաւերը հասկանալու ընդունակութիւն: Իմ ասածը չափազանցութիւն չէ. «գոցութեան կռիւ» կոչւող բնագիտական տերմինը, իւր աշխարհ

հասարակական մտքով, ենթադրում է մարդոց մէջ թէ անհատական և թէ զսոսակարգալին սարսափելի եսականութիւն: Ուշադրութեամբ դիտեցէք մարդոց առօրեայ կեանքը, հետեցէք նրանց ապրուստի պայմանների գլխաւոր, ղեկավարող մօտիւններին, սւտեմիտիքեցէք թէ անհատների և թէ զանազան զսոսակարգերի փոխադարձ տնտեսական լարարերութիւնները—և դուք սարսափով կը նկատէք, թէ սր աստիճան եսական է ալժմեան մարդկութիւնը, թէ սրալիսի գաղաճալին կռիւ է մղում հասարակութեան մէջ իւրաքանչիւր անհատ և իւրաքանչիւր զսոսակարգ՝ իւր սեպհական շահերը, իւր սեպհական կեանքի բարեկաւութիւնն ու լարմարութիւնները պաշտպանելու համար: Ամեն ոք իւր վրա է մտածում, ամեն ոք «իւր կողմն է քաշում»—ինչպէս ասում է մեր ժողովուրդը: Ֆրանսիացի նշանաւոր մտածող Շարլ Լետուրնո, իւր «Evolution de la morale» անունով յարադրութեան մէջ, մեր ալժմեան կեանքի ընդհանուր բարոյական գոյնը որոշում է հետեւալ կերպով. «բարոյականութեան սկզբունքները, օրէնքի, ճշմարտութեան գաղափարները—լոկ խօսքեր են մեր ժամանակում, նրանք շարունակ դուրս են գալիս մարդկանց բիրանից, առանց գործնական մի հետեւանքի, առանց իրականապէս երեւալու մեր ամեն գործերի և վարմունքների մէջ: Ասել մի կերպ և գործել ուրիշ կերպ—ահա մեր ժամանակի մարդկանց սկզբունքը»: Նոյն շարադրութեան մէջ մի ուրիշ տեղ՝ Լետուրնո հետեւալ միտքն է յայտնում մեր ժամանակի տնտեսական-հասարակական պայմանների աւթիւ. «Տնտեսական և սոցիալական անկարգութիւնները բարձրաճախ խօսում, բողբոմ են ամեն տեղ: Արդիւնաբերական և վաճառականական ոգին աւելի և աւելի տարածելով՝ փչացնում, վարակում է մարկանց բարոյական զգացմունքները: Մարդը կատարեալ ստրուկ է իւր շահադիտական կրքերի առաջ, նա ոչ թէ տիրում, կառավարում է բնութեան հարստութիւնները, այլ ընդհակառակ՝ հարստութիւնը, ոսկին ու արծաթն իշխում, կառավարում են մարդու հոգին, նրա մտաւոր և բարոյական ընդունակութիւնները: Վարձկանութիւնը, փողի, կապիտալի ծառայելը մի նոր տնտեսական ախտ է, որ առաջ է բերում ժամանակիս տիրապետող հասարակական հիւանդութիւնը—անգործ պրոլետարիատ: Աղքատների և պարսպ մնացած աշխատաւորների թիւը օր աւուր աւելանում է, շատանում է արդէն: Հասարակ ժողովուրդը, ահագին միլիոններով՝ հալւում, մաշւում է դառն աղքատութեան ճանկերում... Տղիտութիւնն ու անասնական անբարոյականութիւնը, ծանր չեղտով ճնշում են ժողովրդի միտքն ու հոգին...» Ե. Լետուրնօի վերոյիշեալ մտքերն աւրող ճշմարտութիւններ են պարունակում իրանց մէջ, և ես համոզւած եմ, որ ընթերցողը մի բոպէ անգամ չի կոսկածելու դրանում: Այո... Եւ այդ ճշմարտութիւնների ամբողջ ողբերգական իրականութիւնը մարդոց առջև երևում, չօչափելի է դառնում աչն ժամանակ, երբ կեանքի տնտեսական և սոցիալական անկարգութիւններն առաջացնում

Քնն սով, խոլերա, ժանտախտ... Դնչու սովի ժամանակ զիւղացին է քաղցից մեռնում, ինչու խոլերան և ժանտախտը կոտորում են հասարակութեան ստորին—բանւոր և մշակ դասակարգը... «Պարիզում խոլերայի ժամանակ»,—ասում է իմ ծանօթ բժիշկ Լ.—«մեռնողները միայն հասարակ դասակարգի մարդիկ էին, իսկ հարուստ և ազատ դասակարգը՝ չէր մեռնում»: Բազուից եկած լուրերը միանգամայն հաստատում են, որ խոլերան ջարդում է մշտնիւրիւն, համալնիւրիւն, իսկ ազատ մարդիկ, կամ փախչում են քաղաքից, կամ թէ չէ՝ ամեն տեսակ չարամարտութիւններով շրջապատում են իրանց և ոչ մի խոլերա նրանց չի համարձակւել մօտենալ... Նրանք կամ բոլորովին չեն վարակւում, կամ թէ որ վարակւում են—կարողանում են ազատել մեռնելուց: Դնչո՞ւն է սրա գաղտնիքը: Նոյն բանը պատահում է և բոլոր պատուհանների ժամանակ. սովի, խոլերայի, ժանտախտի և այլ տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ:

Բազուից եկած մի երկտասարդ՝ հետեւեալ գէպքն է պատմում աշտուղի հարուստ գործարանատէրերի կեանքից. «Տուգերից» մէկը, որ լսում է խոլերայի դէպքերի մասին Բագում, սատուկ վրդովւած հարց ու փորձ է անում իւր բարեկամներին ու ծանօթներին, թէ ովքեր են խոլերայից վարակւողներն ու մեռնողները: Նրա ծանօթներից մէկը հաւատացնում է նրան, որ հիւանդացող և մեռնողները միայն մշակ, բանւոր դասակարգին պատկանողներն են... Հարուստ գործարանատիրոջ ուրախութեանը չափ չէ եղել՝ աչք տեղեկութիւնը լսելուց վտուց և նա աշտուղի սկսել է միայն հող տանել այն մասին թէ՛ ի՞նչ կը լինի գործարանատէրերի զրուցիւնը, եթէ Բագւի բոլոր մշակներն ու բանւորները խոլերայից մեռնեն:

Տնտեսական խորը և անհաշտելի անտապնիզմը, որ աշնպէս խիստ կերպով բաժանել, հեռացրել է միմեանցից հասարակութեան երկու դասակարգերը՝ սպառող փոքրամասնութիւնը և արդիւնաբերող աշակին մեծամասնութիւնը, աչք տնտեսական անարդար և հակամարդկային անտապնիզմը իւր ազդեցութեան անջնջելի կնիքը դրել է չիչեալ երկու դասակարգերի վրայ: Նւ աչք անտապնիզմն աւելի խոր, աւելի աչք ծակող է Բագւի նման արդիւնաբերական կենդրոններում: Ներկայումս ամեն տեղ տիրապետող փողատիրական արդիւնաբերութիւնը, որով հարուստ փողատէրը, կամ կապիտալիստը իւր փողի շնորհիւ կարողանում է ստրկացնել հազարաւոր աշխատող ձեռքեր, հարստահարելով նրանց իւր օգտին, ծառայեցնելով նրանց իւր ունեցած փողին—աչք արդիւնաբերական սխտեմը ոչ միայն տնտեսապէս քաջքաջում, աւերում է աշխատաւոր ամբողջի կեանքն ու ապրուստը, այլ և հասցնում է նրան ամենաստոր բարոյական դրութեան: Բագւի գործարանատէր աղան, որ սովոր է ամենապէս օր տեսնել իւր ձեռքի տակ բազմութիւ մարդկային կերպարանքներ, որոնք ցնցոտիներով պատած, բոկոտն և գլխաբաց աշխատում են նրա գործարանում օրական չոր հացի համար, որոնց կեանքը, գոյութիւնը

ճակատագրական կերպով կապւած է աղալի հետ, նրա գործարանի, նրա կոպէկների հետ, — աղ աղան, օգտւելով իւր բաներների ֆիզիկական ուժից, մինեռն ժամանակ լցւում է յորը արհամարհական զգացմունքով դէպի իրան հարստացնող, իւր գործն առաջ տանող բաներ մշակները, Հարստութեան, փողի տեսակէտը, որից գործարանատէր հարուստը նայում է մշակների, բանւորների և արհեստաւորների վրա՝ սատիկ ստորացնում է, նրա աչքում ամեն գործունէութիւն, ամեն տեսակ պարագմունք, որ շատ հարստութիւն, շատ փող չի տալիս մարդուն։ Փողի, կապիտալի տեսակէտից, բանւորն աշխատի ստոր, աշխատի չնչին է համեմատուելով իւր աղալի հետ, որքան որ նրա ստացած օրական «գլխատուլի» քիչ է աղալի օրական ստացած օգուտից։ Նւ եթէ, օրինակի համար՝ ենթադրենք, որ մշակը իւր աշխատութեան համար օրական հարիւր անդամ քիչ փող է վաստակում քան թէ նրա գործարանատէրը, ուրեմն փողի բարոյակահոթեան տեսակէտից՝ գործարանատէր աղան, իբրեւ մարդ, հարիւր անգամ աւելի բարձր է, քան թէ նրա գործարանում աշխատող մշակը, կամ բանւորը... Այս փողի բարոյականութեան տեսակէտը միակ չափն է, որով ներկաւ արդիւնաբերական և վաճառականական աշխարհում զնահատուում են մարդկային անհատները։ Այդ նոյն դնահատութեան չափը, նոյն փողի բարոյականութեան տեսակէտն ընդհանրացած է ներկայումս և բոլոր միւս հասարակական դասակարգերի մէջ։ Այսպիսով առաջացել է արդի հասարակութեան մէջ փողի, հարստութեան դեւիզը, որ դեղեցիկ կերպով արտայայտւում է թիֆլիսցի հալ վաճառականի խօսքերով. «առանց փող — դիւի մէ դրոշ»։ Ամեն մարդ աշխատում է՝ հարստութիւն դիզել։ Նւ այդ փող աշխատելու ընդհանուր տենդային ձգտման մէջ — վաճ նրան ով որ ընդունակ է մրցելու, վաճ նրան ով որ չունի աշխատելու թիւնը, դիւրաթեքութիւնն ու աչքաբացութիւնը, ինչ որ անհրաժեշտ է ամեն մի վաճառականական — արդիւնաբերական գործի մէջ աջողակ լինելու համար։ Փող դատելու, հարստանալու ձգտման մէջ ամենից թուլ, ամենից անընդունակ և լետ ընկած դասակարգը — մշակները, բանւորները, արհեստաւորներն ու դիւղացիներն են, որոնք, ընդհանուր անունով՝ կոչւում են «հասարակ դասակարգ»։ Այդ հասարակ դասակարգն է, որ զուրկ է թէ փողից, թէ խելից և թէ գիտութիւնից, աղ դասակարգն է, որ իւր ծաւրալի աղքատութեան պատճառով՝ դատաւարուած են ընդհանուր հասարակական ամեն տեսակ ճնշումներին ու դրկանքներին։ Հասարակ դասակարգի ապրուստը, նրա նիստ ու կացը, նրա մտաւոր-բարոյական աշխարհն աշխատի սարսափելի կերպով տարբերւում են միւս՝ հարուստ դասակարգի կեանքից և սովորութիւններից, որ ես աւելորդ եմ համարում անգամ համեմատութիւն անել այստեղ և դուրս բերել նրանց ծաւրալի հակապատկերները... Միայն ես ուզում եմ ընթերցողի ուշադրութիւնը դարձնել աշխատանքի վրա, որ հասարակ դասակարգը, իւր չքաւորութեան և

տգիտութեան պատճառով, աջնքան թուլ, անզօր և անպաշտպան է կեանքի մէջ, նրա ապրուստի բոլոր պայմաններն աշխատեց փնտրելու և անհաշիւ նրա թէ մարմնի և թէ հոգու վրայ, քիչ բաւական է մի թեթեւ բնական անպարմարտութիւն—մի երաշտութիւն—և հասարակ դասակարգը սովորած է լինելու, մի օրինակ խոլերալի—և հասարակ դասակարգը տասնեակներով, հարկւներով վարակւած, մեռնում է խոլերալից: Բանւորների, մշակների, արհեստաւորների և գիւղացիների անպաշտպան, նւազած ու չարչարած կեանքը սաստիկ տրամադրւած է ընդունելու, դարդացնելու իւր մէջ ամեն տեսակ հասարակական արտեր, ամեն տեսակ թէ բարոյական և թէ ֆիզիկական էպիդեմիաներ: Եւ այդ խոլերան ջարդում է Բագրի հասարակ դասակարգը.—որովհետեւ հասարակ դասակարգի կեանքը թէ աղքատութեան և թէ տգիտութեան կողմից՝ ամենալաւ միջոց է խոլերալի զարգանալու համար: Ի հարկէ այժմ, երբ խոլերալի սարսափն ամեն տեղ տարածւած է, երբ հարկաւոր է ուղղակի հիւանդութեան դէմ կռուել,—այժմ անհրաժեշտ են ամեն տեսակ բժշկական—դեղինֆեկցիական միջոցներ: Բաց չարիքի դէմ առնելու իսկական միջոցը՝ դեղինֆեկցիան խօսք է, չարիքի դէմ առնելու իսկական միջոցն աչն մասնաւոր զգուշութեան կանոններն էլ չեն, որոնցով այժմ լցւած են Թիֆլիզի լրագիրները: Խոլերալի դէմ կռուելու և վարակելուց ազատ մնալու համար՝ Թիֆլիզի մամուլը խորհուրդ է տալիս հասարակութեանը վերին աստիճան մանրակրկիտ առողջապահական խրատներ—մաքուր ուտել, մաքուր հագնւել, տուն-տեղը չափազանց խտտակ պահել, հում ջրի տեղ թէ՛ խմել, ճաշի վրայ կարմիր գլինի գործածել, բոլոր ուտելիքների ամանները դեղինֆեկցիալի ենթարկել, հացը և միւս ուտելիքները ապակե զանկալի տակ պահել... և այլն և այլն: Բաց ում համար են տուում այս խրատները.—ի հարկէ ոչ ամբողջ համար: Ամբողջ աղ խրատներից ոչ մէկը չի կարող հասկանալ և կատարել: Շատ հեշտ բան է ասել՝ մաքուր ուտել, մաքուր հագնւել: Միջոց ունեցող հարուստներն առանց խոլերալից վախենալու էլ՝ մաքուր ու սննդաբար կերակուրներ են ուտում, շաքարով մի անգամ բաղանիք են գնում, ձիւնի նման մաքուր սպիտակեղէն են հագնում և սաստիկ խտակ, ամենափառաւոր դահլիճներում, կաբլինտներում և ննջարաններումն են ապրում: Նւ հէնց աղ է պատճառը որ խոլերան նրանց տանը չի մօտենում: Իսկ աղքատ մշակներին, բանւորներին, արհեստաւորներին խորհուրդ տալ՝ մաքուր ուտել, մաքուր հագնւել, կոնեակով սուրճ խմել...—ճշմարիտ՝ ծիղաղելի է, և մի դառն հեգնութիւն է նրանց աղքատութեան, թշուառութեան վրայ: Իսկ խոլերալով հիւանդացող և մեռնողները՝ մշակներն են, համալները, բանւորները, արհեստաւորներն են,—մի խօսքով՝ ամբողջ աղքատ դասակարգը: Նւ եթէ գիտութեան և հարստութեան բարիքը վաղուդ արտոնացնալ դասակարգը հասկացել է, որ մաքուր ուտել և խմել, մաքուր հագնւել և առհասարակ մարդավայել կեանք վարելն անհրաժեշտ պալ-

մաններ են՝ խոլերայից չը վարակւելու համար,— թո՛ղ ուրեմն ապա միջոցը տան բոլոր խեղճերին և կարօտեալներին. թո՛ղ միջոց տան՝ ցեխի և ապականութեան մէջ՝ քաղցածութիւնից և անտանելի կարիքից տանջուողներին՝ մարդավազել կեանք վարել,— մարդավազել սննդաբար կերակուր ուտել, մաքուր հագուստ և սպիտակեղէն ունենալ: Ժողովրդի ծալապէզ տնտեսական անապահով դրութիւնը՝ թո՛ղ դոնէ աչս տեսակ տաղնապալի դրութիւններում՝ բարձր դասակարգի, հարուստների և գիտունների ուշադրութեան առարկալ լինի: Օգնեցէք ժողովրդին գոնէ աչն ժամանակ՝ երբ նա կոտորւում է ճանճի պէս, օգնեցէք իրական, կենսական, տնտեսական միջոցներով— և ապա օգնութեան եղանակը դուցէ մի դաս լինի մեզ համար, ապագայում ևս, աղէտներից և համաճարակ հիւանդութիւններից լեռոյ էլ՝ մտածելու ամբոխի տնտեսական դրութեան վրայ, աչն մոռացւած և ոտքի տակ գնացած ամբոխի, որ, աչսպէս թէ աչնպէս, զոհ է դառել մեր երջանկութեան, մեր մտաւոր ու ֆիզիկական բարեւաւութեան շահերին:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Լոմբրոզոի լուրածները կանանց անզգայականութեան մասին, ամբոխի և պարլամենտարիսմի մասին: Հիւսիսային Ամերիկան և Ռուսաստանը: Նիցշէն Վազնէրի մասին: Կրկեսապետ Ռէնց: Մուսկէի չիչատակարանից: Ստատիստիկոս Բոդիօն Խտալիայի մասին: Անգլիական գաղթականութիւնները: Քաղաքական կազմը: Անգլիայի ելմտացուցը: Մարմնամարզական մրցումները Անգլիայում:

Խտալացի պիտնական Լոմբրոզոն ամիս չի անցնում, որ գիտնական աստուռով մի նոր լուզիչ լուրած չը տալի եւրոպական ամսագրերում:

Fortnightly Review'ի ¹⁾ մարտի տետրում նա աշխատում է՝ հիմնւելով թւերի վրա՝ մինչև ալժամ կնոջ զգայականութեան մասին մեր ունեցած կարծիքները փոխադրել: Լոմբրոզոն ապացուցանում է, որ կինը թէ ֆիզիկապէս, թէ բարոյապէս տղամարդուց պակաս զգայականութիւն ունի:

«Մինչև ալժամ կարծում էին, ասում է գիտնականը, որ կնոջ ուղեղը շատ է պակաս տղամարդու ուղեղից և միմիայն նորերս են նկատել թէ այդ հաշիւը սխալ է արւած, որովհետև համեմատելիս՝ ի նկատ չէր առնւած տղամարդու և կնոջ մարմնի ծանրութեան, տարիքի և հասակի տարբերութիւնը և այսպէս՝ երևաց որ տղամարդու և կնոջ ուղեղի տարբերութիւնը շատ չնչին է:

«Տարօրինակ է թւում, չարունակում է Լոմբրոզոն, որ կնոջ ֆիզիկական և բարոյական չտեղութիւնների մասին չեն արւած մինչև ալժամ ճշգրիտ հետազոտութիւններ: Կարծես թէ նա ապրում լինէր ոչ թէ մեղ հետ, այլ մի ուրիշ մոլորակի վրա:

¹⁾ The physical insensibility of woman (կնոջ ֆիզիկական անզգայականութիւնը):

«Ես ինքս դիմել եմ Վերերի էտեղիումտրին (զգալաչափ) և հարկւրից աւելի փորձերից եղրակացրել՝ որ (ի բաց առեալ ջահէլ օրիորդներին, որոնց զգալականութիւնը վերին աստիճանի նուրբ է) զգալականութեան չափը և ցաւի ըմբռնողութիւնը ցուցամատեների ծալքերում գրեթէ կրկնակի բուժ է կանանց մօտ քան տղամարդկանց: Բարձր դասակարգերի կանանց մօտ դա է 2,0 միլլիմետր, իսկ մշակ կանանց մօտ՝ 2,6 միլլիմետր, մինչդեռ տղամարդկանցը է 1,6 միլլիմետր: Նիկոլ և Բալէվի արած նորագոյն փորձերից երևում է, որ ընդհանրապէս կանանց հոտառութիւնն աւելի պակաս և թույլ է քան տղամարդկանցը:

«Ներքտրական ալգումետրի փորձերից երևաց, որ 50 մշակ կանանց մօտ ընդհանուր զգալականութիւնը 90 միլլիմետր էր և ցաւի զգալականութիւնը 53 միլլ, մինչդեռ 50 մշակ տղամարդկանց մօտ էր 94 և 34, ջահէլ տղամարդկանց մօտ 95 և 78, իսկ ջահէլ օրիորդներին մօտ 91 և 70:

Բաւականանալով իւր փորձերի ցուցմունքներով՝ Նա բերում է վկայութիւններ հոշակաւոր վիրաբույժ Բիլլրոտի, որի ասելով՝ կանաչք պակաս զգալուն են և աւելի հեշտութեամբ ցաւեր տանող: Այսպէ՛ի ասելով՝ կինը զարմանալի անզգալ է, կարծես վիրաբույժի դանակը ոչ թէ ալդ կնոջ մարմինն է կտրտում, այլ մի ուրիշինը: Զի ո՞ր դա՛ն օ՛ր վկայութեամբ՝ երկունքի մէջ կինն աւելի քիչ ցաւ է զգում քան վախենում:

Ատամնաբույժ Մարտինիի ասելով՝ կինն աւելի արիւնքեամբ և հեշտութեամբ է տանում ատամնահանութեան ցաւերը, իսկ բժ. Բեւլա՛ն աւելացնում է թէ տղամարդիկ ալդ դէպքերում աւելի լաճախ են ուշաթափում:

Բարդական զգալականութեան մասին խօսելիս—լամբրոզոն առաջ է բերում Բալզակի խօսքերը, թէ կինը տղամարդուց աւելի շատ է խուսափում և վախենում անախորժութիւններից, բայց երբ սոքա տեղի են ունենում՝ աւելի հեշտութեամբ է դիմանում նրանց:

Թէ ֆիզիկական և թէ բարդական զգալական պակաս աստիճանի լինելն է, որ կինը աւելի երկարակեաց է քան տղամարդը: Միմիալն մինչև 20 տարեկան հասակը—կանաչք շատ քիչով աւելի են մեռնում քան տղամարդիկ: Աջնուհետև՝ 20 տարեկանից մինչև 50 տարին—կնոջ մահացութիւնը շատ է պակասում: Անվիճելի է որ կնոջ երկարակեցութիւնը ատ աւելի մեծ է քան տղամարդունը: Եւ չը խօսած այն բանի մասին որ ինքնասպանների թիւը կանանց մէջ շատ և շատ պակաս է, եթէ ի նկատ առնել կնոջ ֆիզիկական համեմատական թուլութիւնը և ծննդաբերութեան ժամանակ եղած վտանգը—կնոջ երկարակեցութիւնն աւելի ևս կ'որոշւի. և լամբրոզոն հակած է այս հանդամանքը բացատրելու կնոջ պակաս զգալնութիւնով:

Բարդական կեանքի համար կինն աննպաստ պայմանների մէջ է: Եւ իրաւ, զարմանալ սխտը է, թէ ինչպէս է դիմանում հպատակած, լաճախ.

հալածած և բարձի թողի արած կինը — երբ նաև թաղամասում և անհատ-
նում է նրա գեղեցիկությունը: Քանի քանիներին է վիճակած ու էրը — որ
միակ և վերջնական նպատակ ու իմաստն է կնոջ համար: Այսպես գեղեցիկ
մարդու և կնոջ համար գործ է ածում երկու չափս, երկու կշիռ. այն-
ինչ որ սղամարդու համար մեղք է — կնոջ համար աններելի լանցանք է:
Ինչու կանայք չեն կարողանում իրանց պահել տխուր բոլորներին: Այդ
հարցին լոմբրոզոն պատասխանում է, ապա, սղամարդու ուղեղն աւելի
շատ է ընդունակ ընդլիմանալ գեֆիլիտիս և կիսաուեֆիլիտիս երևույթները
քան կնոջ ուղեղը, և երկրորդ՝ որ սղեղում կնոջ կրթությունն այլ էր քան
սղամարդուը և նպատակ ունի՝ զարգացնել գլխաւորապէս շնորհալիութե-
թիւնն ու նաղելիութիւնը փոխանակ արիութեան և ուժի: Այդ թէ ոչ
կանայք ճանաչում են իրանց արտասուքի զօրութիւնը և լաճախ սովորում
են նրան առաջ բերել պահանջած ժամանակին:

Քանի քանի գիտնական վարձեր են եղել, երբ կինը լալուց լետուց
հէնց խկոյն ծիծաղել է:

— Այն հանգամանքից, որ կինը հաշտում է և բաղմանութեան հետ և
միակնութեան հետ, լոմբրոզոն եղբայրացնում է որ դա ապացուց է մի
լալտնի աստիճանով կանանց ֆիզիկական բթաթեան և անսարքեութեան
(равнодушие):

Այնուհետև անխոնջ լոմբրոզոն գիտեցել է Պարիզի «Նուվել Սեկլու»-ի
մէջ մի ոչ պակաս հետաքրքրաշարժ լուր՝ որ և կրում է հետեւեալ վերնագիրը՝ La foule révolu-
tionnaire et le parlementarisme (լեղախմբական ամբոխը և պարլա-
մենտարիսմը): Ահա այդ լուրի օտարտի եղբայրացութիւնը:

«Ժողովների բաղմամարդութիւնը չի առաջ բերում լուսաւորութիւն և
իմաստութեան ամենաշատ չափսը, այլ այս վերջինների արժանաւորու-
թիւնը կախած է աւելի պակաս խորհրդատուների թւից: Այն բոլոր խոր-
հուղների, լանձնաժողովների և մասնաժողովների մասին — որոնք կաղնում
են ոչ թէ մի անհատի կամքի համաձայն, այլ հասարակաց ձայնաւո-
թեամբ — կարելի է ասել թէ իշխանութիւնը դանդաղ է անպատասխանա-
տուների ձեռքում:

«Այն պատերազմ լալտարարող վճիռները, որոնք լալանում են պար-
լամենտական ժողովներում, աւելի շուտով են ընդունում այդ ժողովի կող-
մից, քան մի անհատի կողմից, քանի որ ժողովի ամենալն մի անդամն
ամբողջ պատասխանատուութեան մի մասն է միայն ընդունում իւր վրա,
իսկ անհատը պատասխանատուութեան ամբողջ ծանրութիւնը իւր վրա
զգալով՝ աւելի հակամէտ կը լինի գէպի խաղաղութիւնը, քան թէ
իմաստուններից կաղնած մի ժողով: Ի՞նչպէս է ապացուցանում լոմբրոզոն
իւր ակաւելտը:

«Բաղաքական լանցանքների պատահական պատճառներից ամենաաղ-

րեզնէ և վարակիչ չափշտակումն, որ առաջ է դալիս հէնց բազմամարդութեան ժողովեալուց: Եւ իրաւ՝ չափ անգամ աստտամբութիւններն ուրիշ պատճառ չեն ունեցել, եթէ ոչ պատահական ժողովներ մի չալանի վայրում (սոնալաճառ, տօն և այլն) — մանաւանդ ամառը և եթէ այդ ժողովները պաշտօնաւորեւ են մի ընդհանուր քաղաքական զրդմամբ ¹⁾:

«Այդպիսի զէպքերում հաստատական մարդու խօսքերն աննկուն կերպով իբրեւ մի ներշնչումն ի վերուստ, ազդում, ներգործում են ամբոխի վրա, որ հակամէտ է զէպի նորութիւն, ոճնի վառ երևակայութիւն, հաւատ — բաց զրեթէ միշտ սոգէտ է: Այդ րոպէին՝ Պալիեզէի ասելով կատարում է մի տեսակ բարոյական արեւոյդութիւն, երբ առաջնորդողի (ВОЖДЕ) օրինակին միանում է և փոխադարձ գրգռում: Ամբոխն ինքն իրան աւելի համարձակ է զդում և կատարում այնպիսի բաներ, որ, առանձնապէս վերցրած, ոչ ոք չանձն չէր առնիլ:

«Արա բացատրութիւնը տալիս է Սեդեւէն իւր՝ «Յանցաւոր Ամբոխը» զրքի մէջ այսպէս. «Ամբոխը ներկայացնում է իրանով մի հոգ, որի վրա շատ հեշտութեամբ զարդանում է չարութեան մի կրօնը, իսկ բարութեան մի կրօնը զրեթէ միշտ մեռնում է՝ ապրելու համար պաշտօններ չը գտնելով»:

«Սրա պատճառն այն է, որ նախ՝ ամբոխը կազմւած է պէսպէս և իրար հակառակ տարրերից. դուրս ունեցողների մօտ կանգնած են լինում անգութները և անտարբերները, չիտակ մարդկանց մօտ շրջմոլիկի կամ ոճրագործի մէկը. երկրորդ՝ ամբոխ կազմող մարդկանց բարի չատկութիւններն իրար ջնջում են փոխանակ միաւորեւելու: Եւ այս հանգամանքը կատարում է մաթեմատիկական ճշտութեամբ, քանի որ միջին թիւը չի կարող ամբողջ թիւն հաւասար լինել, կամ նրանից էլ մեծ, և քանի որ ամբոխի չատկութիւնների միջին թիւը կազմւած չի լինիլ նրա միմիայն լաւ չատկութիւններից, այլ և վատերից, և կ'ստացւի մի միջին թիւ՝ հաւասար ամբոխի միջին չատկութիւնների:

«Ժողովի մի որոշումը կարող է հակառակ լինել այդ ժողովը կազմող առանձնապէս վերցրած ամեն մէկի կարծիքին:

«Սրա օրինակները մենք տեսնում ենք՝ գեղարւեստական, գրական, արդիւնագործական չանձնաժողովների վճիռներում:

«Նոյնն են ներկայացնում երբեմն և քաղաքական ժողովները, երբ այնպիսի որոշումներ են ընդունում, որոնք միանգամայն ընդդէմ են ժողովի մէջ եղած մեծամասնութեան կարծիքներին և ցանկութիւններին:

«Այս առաջ է դալիս այն հանդամանքից որ ժողովների խմբումներում

¹⁾ Բոլոր կառավարութիւնները ճանաչել են այն իրողութիւնը և միշտ աշխատել են յրեւել ամբոխը, որ այսպէս թէ այնպէս ժողովեւ է մի որոշ բնազդմամբ:

ընաւորութիւնների ամենալաւ և ամենաբարձր տիպարները—որոնք ստեղծ-
ւել են դաստիարակութեան և կրթութեան շնորհիւ բարձր շրջաննե-
րում—էջ Գ օ. ք ա ն ու մ են՝ չվւելով միջին տիպարների հետ—տիպարների,
որոնք չատուկ են ընդհանրութեան, և վերջ ի վերջոյ ցաղթող են հանդի-
սանում վերջինները, իսկ առաջինները մնում են ստւերի մէջ, Ան-
հատի բարի չատկութիւնները կորչում են նաև մի ուրիշ պատճառով.
նա՛ որ բարի է, ողորմած է—համարձակութիւն չի ունենում իբր ազդ-
պիտի մէկը հանդիսանալ ամբոխի մէջ, որ մի գուցէ իրան վախկոտ ան-
ւանեն: Եւ իրաւ՝ գրգռած ամբոխի մէջ շատերն իրանց համոզմունքի հա-
կառակ կամ կեցցէ կամ կ'որչի են ազազակում միմիայն վախից՝ զանա-
զանելու, աչքի ընկնելու և կամ խօսքից անցնում են գործի՝ պարձեալ
ամբոխին իւր համամիտ լինելը ցոյց տալու համար:

«Քանիսը զօրութիւն և ուժ են ունենում գիմարելու և գրգռած ամ-
բոխի հակառակ մի գրութիւն բռնելու:

«Ա) Եւ ար մեծամասնութիւնը զգալով հանդերձ թէ ինքը վատ է անում՝
հետևում է ամբոխի հոսանքին: Այլ մեծամասնութիւնը գիտէ որ հակա-
ռակութիւնը մի վտանգաւոր խաղ կը լինի իրանց կողմից: Այսպիսի դէպ-
քերում անհատի բարի չատկութիւնները խեղդւում են և չաղթում են
չար կրքերը:

«Կա՛ նաև մի ուրիշ և աւելի նշանաւոր պատճառ և դա է տպաւորու-
թիւնների ու զգացմունքների վարակիչ լինելը, որ վտանգաւոր է դարձ-
նում ամենալն մի համախմբումն մարդկանց:

«Բացառական դէպքերում մարդկային օրդանիստի աչք չատկութիւնն
ստանում է սուր կերպարանք՝ զառնալով մի վարակիչ հիւանդութիւն և
պայմանաւորում ոչ միայն կրաւորականութիւնը, որով մարդիկ լոկ հան-
դիսատեսներ են լինում զարշնլի տրարողութիւնների, այլ և նրանց ներ-
գործական գրութիւնը»:

Թւում է սակաւն, որ Լամբրոգոլի այս հետաքրքրական մտքերը միա-
կողմանի են. ընդունելով անգամ տպաւորութիւնների ու զգացումների
վարակիչ լինելը՝ դժար է ասել որ մարդկանց համախմբումները վնասա-
կար են. չէ՛ որ բարի գործերի համար վերուշեալ վարակման սկզբունքը
կունենալ և բարի հետեանքներ. և ինչքան որ մի ամբոխի միջին չատկու-
թիւնները թուլ և բխայած լինին՝ եթէ տեղի ունենալ մի ազգասիրական,
բարեգործական հրաւեր ամբոխի անդամներից մէկի կողմից—աղ հրաւերը
հրճանքով կընդունէի, ուրեմն և ամբոխի ցածր չատկութիւնները խեղդած
կը մնան: Քանի՛ հարկը հազար համախմբումների լաւ գործեր են կատարել՝
ստեղծելով զանազան ընկերութիւններ, հաստատութիւններ, ազգեր ազա-
տել: Ահա այս տեսակէտից նախելով՝ հո ասացի որ Լամբրոգոլի տեսակէտը
միակողմանի պէտք է համարել: Իսկ ինչ վերաբերում է պարլամենտարիստին,
այլ գիտողութիւնները գրեթէ զերօր նշանակութիւն ունեն ալն պատճառների

զիմաց, որոնք խօսում են նրա օգտին և որոնք արտապաշտած են քաղաքական նշանաւոր գրողների գրած քննութիւնը:

—1861—65 թ. Ամերիկային Հիւսիսային և Հարաւային նահանգների իրար հետ ունեցած արիւնահեղ պատերազմի ժամանակ սեւամորթ ճորտերի աղատութեան պատճառով—եւրոպական պետութիւնները տեսակ-տեսակ միջամտելու ցուցիւր արին:

Անգլիան և Ֆրանսիան Հարաւային նահանգներին կողմն էին պահում, իսկ Ռուսաստանը հանդուցեալ Ալեքսանդր II-ի ձեռքով ուղարկած նաւատորմիցով օգնեց Հիւսիսային նահանգներին իրանց ձեռնարկութիւնը չաղթութեամբ վերջացնելու Հարաւային նահանգների դէմ:

Ռուսիայի ալս պատմական միջամտութիւնը հիմք ու պատճառ դառաւ վերաբերմունքին, որ տեղի ունեցաւ Ամերիկայում Ռուսաստանի սովեալ նահանգներին օգնելու գործում:

Հիւսիսային նահանգներն աւելի մեծ սիրով վերաբերեցին դէպի գործը: Հիւսիս-արեւելեան խոշոր ջրաղացատէրերի չատով լրագրի՝ էդգար անոնով խմբագիրն առաջինն եղաւ չորդոր կարդացողներից: Նա փաստաբանում էր օգնութիւն հասցնելու անհրաժեշտութիւնը, ասելով որ Ռուսաստանի սովի պատճառով է որ ամերիկացիք իրանց հացը թանկ են ծախում և մեծ կորուստ չեն արած լինիլ ամերիկացիք՝ եթէ իրանց առատ օգուտներից մի չնչին մասը հանելու լինեն ի նպաստ ուստ սովեալների: Նա զիմումներ արեց զանազան բարձրագիւր անձինքներին: Ծովային մինիստրը չափանել էր իրան զիմած մի սենատորի թէ Ամերիկան միշտ կը լինի Ալեքսանդր II-ի վարժունքն ամերիկական հերքին երկպառակութիւնների միջոցին: Ամերիկական սենատում առաջարկեց 100.000 դոլար ¹⁾ նշանակել պետական գումարներից չորսու ուստ սովեալների: Այդ առաջարկութիւնն ընդունեց խիղին, — բաց պալատում այդ առաջարկութիւնը մերժեց զանազան պատրասկների տակ:

Այս մերժումը մի մեծ դարկ ուեց հասարակական ղգոհութեան և ապա սկսեց մասնաւոր օժանդակութիւնների կազմակերպութիւնը: Ամերիկական «Կարմիր Խաչի» ընկերութեան նախագահուհին՝ Կլարա Բարտոնը՝ ծանօթացրեց լրագիրների միջոցով սովեալների դրութեան և օգնելու անհրաժեշտութեան հետ:

Պերճալսոս եպիսկոպոս Ֆիլիպս Բրոուքսը (Phillips Brooks) հրաւիրեց Նիու-Իօրկ. սրա քարոզները լսելու համար ժողովում էր միշտ ահագին բազմութիւն:

¹⁾ Դոլլար=մօտ 1 ո. 75 կոպէկի:

Ֆիլադելֆիայի քաղաքապետը ժողով կազմեց քաղաքային տան մէջ և առաջին նիստում վճռեց նաւեր վարձել հաց հասցնելու համար սովեալ նահանգներին Ֆիլադելֆիա քաղաքի հաշուով: International Navigation Company ¹⁾ առաջարկեց Ֆիլադելֆիայի կոմիտեային իւր նաւերից մէկը (Լինդիանա) պակսեցրած գնով:

Բաղդինուրա քաղաքը չուղեց ետ մնալ Ֆիլադելֆիայից: Atlantic Transport Line նաւադնացական ընկերութեան նախագահ Բեկէրը՝ Էդգարի կարգադրութեան տակ զրեց «Միսսուրի» նաւը նմանապէս պակսեցրած գնով (20.000 դոլ. զանազանութիւնը իւր վրա առնելով):

Նիու-Խորկի կենդրոնական երկաթուղային ընկերութիւնը լանձն առաւ բոլոր կապարաններից ստացած հացը ձրի հասցնել նաւերը:

Ընդհանուր հոսանքին չեն մասնակցում միմիայն Նիու-Խորկի բապտիստները, որոնք հաւատացած են թէ Ռուսաստանին ալցելած սովը մի պատիժ է Նախախնամութեան:

Ռուսաստանն ալցելած միտ իզաբելա Հապոտէ ամերիկոսի գրողն սկսեց մի շարք դատախօսութիւններ Ռուսաստանի մասին, չորսըրեւով նպաստել սովաւններին՝ ժողոված գումարները հասցնելով կոմս Լե Տոլստոյին:

Մինչդեռ վազների երաժշտութիւնը լալթութիւններ է անում Գերմանիայից դուրս և ընդհանուր հետաքրքրութեան արժանանում, մինչդեռ Գերմանիայում՝ գերմանացիք, «անեղրի և խորհրդաւորի» ալց սիրահանները, չարունակում են երկրպագել վազների երաժշտութեանը — հանդէս եկաւ գերմանացի մէկը, որ միանգամայն ջախջախել կամեցաւ վազներակնութիւնը: Այդ մէկն է — մետաֆիզիկոս, փիլիսոփայ, կրիտիկոս, բանաստեղծ և միևնույն ժամանակ՝ երաժիշտ Նիցշէն ²⁾: Նրա ասելով՝ վազները մի հիւանդութիւն է. «ես նրան ատում եմ, բայց միմիայն նրա երաժշտութիւնն եմ կարող տանել ու լսել», ասում է նա:

վազների գերիշխող գաղափարն է որ ըստ Նիցշէի տեսակ տեսակ ձեակերպութիւններով երևում է նրա բոլոր գրածքներում՝ վազների ամենայն մի օպերայում որ և է մէկն ազատում, փրկում է:

«Պարսիֆալ»-ի մէջ ազատում է մի սերունդի (courtisane) մի բարի երիտասարդի ձեռքով: «Les maîtres chanteurs»-ի մէջ ազատում է մի գեղեցիկ մատաղ օրիորդ մի պերճափալ ասպետի ձեռքով:

Բայց, եղրակաջնում է Նիցշէն, վազների հետ համեմատած միւս

¹⁾ Միջազգային նաւադնացութեան ընկերութիւն:

²⁾ Nietzsche — la Cas Wagner.

երաժիշտները՝ երաժիշտներ չեն: Նթէ նա սպանեց երաժշտութիւնը՝ մեղը աշնքան իրանն է, որքան և ժամանակինը: Նրանք, որոնք իրանց նրան զիմադրում են՝ աւելի անգէմ, անորոշ և անզօջն երաժշտութիւն են հեղինակում: Խոյ վաղներն ինքն է ամենը, վաղների անկումը կատարեալ է, բարեօթար է, համողած, օգտաւէտ:

—Բերլինում նորերս վախճանւել է Էրնեստ Ժակոբ Ռենց—հիմնադիր ցիրկի—որ և իւր անունն է կրում: Ներառաւրդ ժամանակ նա պարում էր թոկի վրա, մարմնամարդական հունարներով շլացնում տօնավաճառներում: Նա լաւանի դարձաւ իրրն ձիւր սանձահարող, իրրն անման մի ըմբիշ, անզուգական թուիչքներ անող: Ոչ ոք նրա նման չը գլխէր օգտւել ռեկլամներին: Նա թողել է միլիօնանոց մի ժառանգութիւն:

Ապրը և կախրուհին լաւանել են նրա ժառանգներին իրանց «ցաւակցութիւնները»:

—Երեւելի Մուսկէի մահաց լետոյ լոյս են ընծաւում նրա լիշողութիւնները նրա մըած պատերազմների մասին:

Սրանցից երեսմ է որ հանգուցեալ մարշալի հալը՝ ընիկ պրուսացի, 13 տարի պրուսական զինւորական ծառայութեան մէջ մնալուց լետոյ ընդունել էր դանիական հպատակութիւն (մի հանգամանք, որից օգտւելով շատերը սխալմամբ պնդում էին թէ մարշալը դանիացի է): Վերին աստիճանի հետաքրքրական է որ երբ Ֆրիդրիխ Թագաւորը Նապոլէօն I զաշնակիցներից մէկն էր՝ մարշալ Մուսկէի հալը կուտամ էր պրուսացիների գէմ ֆրանսիացի մարշալ Գալուսի հրամանատարութեան ներքոյ:

Առաջ բերենք մի քանի ընդորոշող գծեր ալը երեւելի գերմանացի զինւորականի մասնաւոր կեանքից: Գեռ 1891 թ. նա հպարտանում էր աշն վերարկուն կրելով, որ վրան ունէր 1857 ին թագաժառանգին Անգլիա ուղեկցելիս: Նրկու ձեռք զգեստից աւելի երբէք չէր ունենում: 68 տարեկան նա սկսեց ծառեր տնկել Արաւլատու և չէր կշտանում նրանց խնամելով:

Նրա սէրը դէպի երեխայք—անսահման էր, նա խաղում էր իւր ութ թռուների հետ երեխայի պէս՝ չը նաւած իւր պատկառելի տարիքին: Բոլոր միջատներից նա ատում էր միաշն ճանճերին և նրանց հետ պատերազմում էր նոյն իսկ ճաշի սեղանի վրա՝ բաժակներ և ամաններ կոտորելու ըրակով:

Իւր հիւրերին նա սիրում էր ցոյց տալ իւր ծառատունկը և կառքով նրանց տանելիս ինքը սիրում էր նստել կառապանի մօտ: Պատանկութեան հատակում նա ոտանաւոր էր չօրինում: 90 տարեկան հասակում՝ նա թարգմանում էր գերմաներէնի անգլիացի բանաստեղծ՝ Թոմաս Մօրին ¹⁾։

¹⁾ Thomas Moroe.

Նրեկոնները նա սիրում էր մի երկու երեք վիստի թղթախաղ խաղալ, բայց միշտ անհերքելի սխալներ գործելով: Իւր ասելով՝ թղթախաղը նրան հանգստացնում էր և այդ զբաղմունքին նա իրաւ նւիրում էր ոչ միայն գիւղական կեանք վարելիս, այլ նաև վերսալի ումբակոծութեան օրերին: Մոլովէն վախճանեց 24 լուսնարի 1891. Նրա վիշտը թիւնները մի պրակը՝ «Մխիթարական մտքեր հողեղէն կեանքի և չաւտնական կեանքի ակընկալութեան մասին»՝ տոբագրւած հոկտեմբեր 1890 թ. մեծ գարմանք պատճառեց ամբողջ Գերմանիայում՝ նոր լսելով լուսաւորելով մարչալին:

Ահա նրա վիլլիտոիակական մտքերից մի քանիսը:

«Քանականութիւնը չի ճանաչում ոչ մի հեղինակութիւն և ինքն անպայման իշխող է. E pur si muove ¹⁾»:

Մտածող խելքը թախառում է անսահման հեռաւորութիւնների մէջ, ուր փախում են աստղերը. նա որոնում է ամենախաւար կեանքերի մէջ չատակը, առանց սրան գտնելու, ոչ մի տեղ սահման, այլ ամենուրեք միևնույն կանոնը — աստածային մտքի այդ ուղղակի արտայայտութիւնը:

Իրաւ է բանականութիւնը չի կարող ըմբռնել իրերի ծագումը, բայց ոչ մի տեղ նա չի հակասում աչն կանոնին, որ առաջնորդում է ամենին: Բանականութիւնը և երկրի կանոնը միանման են և նոցա աղբւրքը մի պէտք է լինի: Մինչև անգամ եթէ որ և է ստեղծագործութեան անկաստարելիութիւնը բանականութեանը հեռացնում է ճշմարտութեան ճանապարհից, աչնու ամենաչնիւ ճշմարտութիւնն է նրա միակ նպատակը:

Քրիստոնէութիւնն աշխարհքը բարբարոսութիւնից բերել հասցրել է քաղաքակրթութեան: Նրա զարեօր ջանքերը ոչնչացրին սարկութիւնը, աղնացրին աշխատութիւնը:

Մենք կարող ենք ընդունել հաւատի հանդանակն աչնպէս՝ ինչպէս ընդունում ենք մի հաւատարիմ ընկերոջ հաւատիքներն առանց նոցա քննելու, բայց բոլոր դաւանութիւնների կորիզը նրա ուսուցանող բարոյականութիւնն է և քրիստոնէական բարոյականութիւնը՝ ամենամաքուրը և ամենապտղաբերն է:

Սակաչն ումանք ուսերը վեր են քաշում բարոյականութեան մասին խօսելիս. աւելի էական են համարում ձեւը, որի տակ նա ներկայանում է: Նա վախ եմ կրում մի գուցէ չօչալիւլի (lachaire) սիրահար Նախանձախնդիրները, կամենալով բռնի ընդունել տալ հաւատն առանց համոզել կարողանալու, վերջ ի վերջոյ գուրա քչեն քրիստոնեաներին եկեղեցիներից:

Ամենաչն մի անկեղծ աղօթք, լինի նա ուղղւած Բուդդային, Ալլահին թէ Նիկիային, չէ որ հասնում է միևնույն Աստուծուն — քանի որ աղ-

¹⁾ «Աչնու ամենաչնիւ նա (երկրագունդը) պտըտում է (մահաւան դատապարտւած Գալիլէյի խօսքերը գլխահատ լինելու րոպէին):»

պիտին միայն մեկն է. Այդիօք մալըը չէ լսում ձիչը երեխայի՝ ինչ լիզւով որ սա արտասանելիս լինի նրա անունը:

Խիզճն ալն անկաշառ և անսխալական պատաւորն է, որ քարոզում է նոյն բարոյականութիւնը թէ քրիստոնեային, թէ հրեային, թէ կռապաշտին և թէ վալդիսիւներին: Քաղաքակրթութեան նաև ամենատարածութիւններն լրա զանազ ազգերի մէջ՝ բարբի և չարի պաշտօնները նոյնն են, ինչ որ մեզանում: Նոքա ևս չար են անւանում անհաւատարմութիւնը, դաւաճանութիւնը և խարէութիւնը և սուրբ են համարում զաւակների ու ծնողների մէջ կոտորելը...

Մոլակէն հաւատում էր Աստծուն և չափանական կեանքին:

—Նորերա լոյս տեսած մի գրքից ¹⁾ երևում է, որ սուսլին շարաթաթերթը հրատարակել է Վիեննայում 1615—1616 թ., ալեուհեռ Ֆուլպաքաղաքում 1619, Էրֆուրտ քաղաքում 1620. Անտարակն քաղ. 1626 և Ֆրանսիայում 1631: Այս վերջինիս հիմնադիրը, որ և լատին էր իրր կանոնաւոր, խելացի և կենդանի ոճով խմբագրող մէկը, էր Տէօֆրաստ Ռենոդոն, որի վշատակը չաւերժացնելու համար մտադիր են մի արձան դնել Պարիզում:

Անցեալները մի գիրք է հրատարակել, որ սոսկ թւերով պատկերացնում է ալն փոփոխութիւնը, որին ենթարկւել է Խաալիան—իւր ազատութիւնը և միութիւնը ձեռք բերելուց՝ ալն է 1861 թւից վետոյ:

Այդ գրքի հեղինակը՝ Լ. Բոդիօն ²⁾ է, որին կոչում են «Թւանշանների թագաւոր»:

Խաալիայի բնակիչների թիւը ներկայումս հասնում է 31 միլիօնի: Բնակիչների աճումը հաւասար է հազար հոգու վրա 10—13 հոգի տարէնը, ասել է նոյնքան, որքան Անգլիայում, Գերմանիայում և Շվեյցարիայում, մինչդեռ Ֆրանսիայում մեռնողների թիւը 1890-ին գերակշռում էր ծնունդների վրա: Գաղթականութիւնը հաւասար է $3,88\%$, մինչդեռ Ֆրանսիայում դա միանգամալն անծանօթ է: Խաալիայի առողջապահական դրութեան լաւանալը երևում է հետեւեալից. 1888 թ. տենդից (malaria) զոհ էին գնացել 21.033 հոգի, իսկ 1890՝ 15.624 հոգի, ծաղկից մեռել էին 18.110, իսկ 1890՝—7.210 հոգի:

Արաղի գործածութիւնը Խաալիայում չի տարածւած նման միւս երկիրների: Սպիրտալի խմիչքների գործածութիւնից (алкоголизм) մեռել

¹⁾ Geschichte der Wiener Journalistik bis 1848. von Zenker.

²⁾ L. Bodio. Di alcuni indici del movimento economico in Italia. 1891.

են խտալիալում 14 հոգի (1 միլիոն հոգուց), մինչդեռ Պրուսիայում 22, Բելգիայում 51, Անգլիայում 54, Շվեդիայում 66:

Խտալիան հրատարակեց 6—12 տարեկան երեխաների ուսումը պարտաւորեցուցիչ: Նա տարեկան 3 միլիոն լիրա ¹⁾ այդ նպատակի համար տալիս է անկարող համալսելիքին: 1862 թ. տարրական ուսում էին ստանում 1.008.674, իսկ 1888-ին 2.307.982: Անգլիայում նորակոչների տոկոսը պակասել է $52\frac{0}{10}$ -ից՝ $42\frac{0}{10}$: Մինչդեռ նոյն այդ տոկոսը հաւատար է՝ Ֆրանսիայում— $9,5\frac{0}{10}$, և Գերմանիայում նոյն իսկ $1\frac{0}{10}$ պակաս, իսկ 1) Աւստրա-Հունգարիայում 2.— $36\frac{0}{10}$:

Խտալիան տարեկան մսխում է տարրական ուսումի վրա 62 միլ. լիրա, ասել է՝ մի հոգուն 2 լիրա: 1887 թ. Ֆրանսիան մսխել է նոյն բանի վրա 173 միլ. Ֆրանկ, Շվեդիայի 18 միլ. Բելգիան 27 միլ. և Պրուսիան 120 միլ. մարկ:

Միջին կրթութեան վրա Խտալիան մսխել է 1889 թ. 22.306.534 լիրա և ուսանողների թիւը եղել է արքունական գիմնապիաներում և լիցեոններում 13.857 հոգի:

Բարձրագոյն ուսում ստանում էին 1867 թ. 11.063, իսկ 1889 19.539 հոգի:

Խտալիայում գոյութիւն ունեն 21 համալսարաններ, որոնցից 17 արքունական են, իսկ չորսը մասնաւոր և քաղաքային ընկերութիւններին:

Խտալիայում գործում են մօտ 22 հազար բարեգործական ընկերութիւններ, որոնց գրամաղլուխն է մօտ 2 միլիարդ ²⁾ լիրա:

1889 թ. գոյութիւն ունէին 4.898 փոխադարձ օգնութեան ընկերութիւններ, որոնցից 92-ը մշակիների ընկերութիւններ, 161 արհեստաւորների, 208 գիւղական, 681 սպառողների, 69 ընկերութիւն մշակիների համար տներ կառուցանելու:

Այս վերջին տեսակի ընկերութիւնները շատ են գնահատւած և նորա գործում են այս եղանակով: Քանի որ տունը չիւնում է՝ ընկերները վճարում են շարժական մօտ 2 Ֆրանկ ³⁾ ընկերական գանձարանին: Երբ չիւնած են լինում բաւականաչափ սենեակներ՝ վիճակ են գցում և բախտաւորները իսկոյն ևեթ տեղաւորում են եղած ընտելարաններում: Տան չիւնութիւնը շարունակւում է մինչև որ բոլոր անդամները սենեակներ են ստանում, իսկ զրա համար բոլոր անդամները մինչև այդ ժամանակ շարունակւում են իրանց անդամավճարը:

Մարդասպանութեան կողմից Խտալիան առաջնակարգն է եւրոպա-

1) Լիրա=1 ֆրանկի:

2) Միլիարդ=1000 միլիոնի:

3) Այժմեան կուրսով մօտ 80 կոպ:

կան պետութիւնների մէջ: 1889 թ.՝ Խաղիւսում սպանութիւն է կել (100 հազար հոգու վրա) 8,05, մինչդեռ Ֆրանսիայում—1,46, Աւստրիայում—2,16, Գերմանիայում—0,92, Անգլիայում—0,40, Իրլանդիայում 0,85: Սակայն, աւելացնում է, Բուլիօն 160, մարդասպանութիւնից Խաղիւսում տեղի են ունենում 35՝ վրէժխնդրութիւնից (հռչակաւոր vendetta), 19՝ հափշտակութիւնից (запальчивость), 10՝ սէրից:

Մինչդեռ Ֆրանսիայում սպանութիւնն աւարառութեան նպատակով կազմում է 26,05%, Խաղիւսում նոյնը հաւասար է 15,7%:

Յանած հողի տարածութիւնը 1890 թ. Խաղիւսում էր մօտ 2 միլիօն հեկտար: Գիւղական արտադրութիւնը (ցորեն, կտաւատ, միրգ, զինի, ձէթ, բոժոժ, թամբաքու և այլն) զնահատւում էր մօտ 3 միլիարդ 257 միլ. լիրա: Բացի զրանից՝ անտառներից եկամուտ 88 միլ. և մօտ 1.179 միլիօն ծախած տաւարից կաշուց և այլն:

Մինչդեռ ամուսն սպառում էր Խաղիւսում տարիներ առաջ մի-միայն 800.000 տոնն ¹⁾), ներկայումս աղ թիւը հասել է 5 միլիօն տոննի: Հաշւած է որ Խաղիւսի բոլոր արդիւնաբերող ոլորտը հասնում են 756.502 ինդիկատորական ուժի:

Խաղիւսում հովազորութեամբ պարապում են 48.980 մշակներ: 1890 թ. ստացւել է՝ հանքեցից 54 միլիօն լիրա, բուլգործարաններից (металлургическ. заводы) 115 միլիօն լիրա, ածխահանքերից 100 միլիօն լիրա և աղահանքերից 44 միլ. լիրա: Այս տեսակի արդիւնագործութիւնը մի մշակի վրա միջին թւով ընկնում է Խաղիւսում—1.093 ֆր., Բելգիայում—1727 ֆր., Ֆրանսիայում—2.398 ֆր. և Անգլիայում—2.586 ֆրանսիկ: Միջին թւով մշակի վարձը 2 ֆրանկից 4 ֆ. է:

1889 թ. Խաղիւսի նաւատորմիղը բաղկացած էր 279 շոգենաւերից, 182.249 տոնն բարձեւու կարողութեամբ և 6.442 կազմաւոր նաւերից 642.225 տոնն բարձեւու կարողութեամբ: Բացի զրանից՝ ձկնորսութեամբ պատապում են 19.387 նաւակներ միջին թւով 2¹/₂—3 տոննանոց:

Նրկաթուղային զիծը հասել է ներկայումս 12.878 կիլոմետրի: Նրկաթուղային զուտ արդիւնք հաշււում է՝ Խաղիւսում 2%₀, Ֆրանսիայում—3.69%₀, Գերմանիայում 5.35%₀ և Անգլիայում 4.21%₀:

1890 թ. Խաղիւսի վճարեց 159.414.891 լիրա իբր տոկոս իւր արած պարտքերի:

1885 թ. Խաղիւսի ելմտացուցը փակւած էր 4 միլիօն աւելորդ մի գումարով, 1886 թ-ից երբ Խաղիւսի սկսեց մեծ պետութեան դեր խաղալ և դաշնակցութիւնների հաստատել միջին եւրոպական պետութիւնների հետ—աղ ժամանակից նրա ելմտացուցը միշտ մի բաց (дефицитъ) էր ունենում, որ 1889 թ. հասել էր 234 միլիօն լիրայի:

¹⁾ Տոննը=1000 կիլոգրամի, իսկ 16,4 կիլոգր=1 փութ:

Այդ պարտք արած փողերով խաւիւրան սպառազինւեց և ալժմ ունի 712 հազարանոց մի զօրք (1.288.370 արձանագրւած զօրքի ընդհանուր զոււարի մէջ):

Համեմատութեան համար դենք աշտեղ միւս երկրների զօրքերի թւերը. Ռուսաստանն ունի 2.039.606 ռազմական (военная) զօրք պատերազմի ժամանակ, Ֆրանսիան—1.594 հազարանոց զօրք, Աւստրիան—1.260.000, Գերմանիան 1.437.514 և խաւիւրա 712.000:

Խաւիւրալի Նաւաստորմիլը ըաղկացած է, բացի 127 միւնակիրներից (миновоска), 22 զրահաւոր նաւերից, որոնցից 11-ը զինաւորւած են ալնպիսի թնդանօթներով, որոնք կարող են թափանցել 70—90 սանտիմետր հաստառութիւն ունեցող զրահ: Ի վերջոյ, Բողիօ'ի ասելով, խաւիւր հարստացել է ալս չափով՝

1875—1880 Նրա մասնաւոր հարստութիւնը դնահատուով էր 45 մլ լիարդ:

1880—1885 թ.—51.1 մլլիարդ և

1880—1890 թ.—54.4 մլլիարդ լիւրա կամ ֆրանկ:

—Պաօլօ Մոնտեզագայալի խոստացած գիրքը, թէ «Բնչպէս պէտք է կլին առնել»¹⁾ նորերս լոյս տեսաւ: Յարգելի գիտնականը նոր բան չասելով հանդերձ՝ կրկնում է շատ ճշմարտութիւններ, որոնք իսկապէս արժանի են կրկնելու: Օրինակի համար, նախ պէտք է լինի սէր և ապա պսակ, չը պէտք է ամուսնանալ ոսկու քաղցրից. սիրահարւած մէկը լաւ կանի եթէ մի թեթեւ ճանապարհորդութիւն անի իւր սէրը չափանելուց առաջ:

Ամուսնութեան կողմնակից լինելով հանդերձ՝ նա ակնարկում է շատ գովարտութիւնների և խոջնդոտների վրա՝ ամուսինների հոգու, մարմնի և բնաւորութեան մէջ մի համերաչխութիւն կաշաղցնելու և ներդաշնակութիւն չառաջ բերելու նկատմամբ, ալնպէս որ կլին առնելու արհեստը մնում է էլի չը լուծւած և դժար իրականացնելու մի արհեստ:

Փոքրիկ Մեծ Բրիտանիան իւր անսահման դաղթականութիւններով և կողոնիրաներով զրաւում է իւր վրա ամենքի լուրջ ուշադրութիւնը. և իրաւ Բնչպէս է կարողանում մի երկիր՝ 300.000 քառ. կիլոմետր տարածութեամբ և 35 միլիոն բնակիչներով կառավարել ալնքան ալլացեղ աղգեր, որոնց բնակատեղին հաւասար է ամբողջ Երկրի գրեթէ հինգերորդականին: Այս խնդրին վերաբերեալ մի նոր²⁾ ուսումնասիրութիւն պարզում է մի քանի կէտեր:

¹⁾ L'arte di prendere moglie (կլին առնելու արհեստը):

²⁾ De L'Empire colonisel anglais par A. Mills.

Անգլիայից կախում ունեցող 56 կոմսիաները բաժանուած են 3 կարգի: Առաջին կարգում ամենատառար թւով պատկանում են ալն կոմսիաները, որոնք կառավարւում են մետրոպոլիտայից ուղղակի նշանակւած ազնւոհներէ միջոցով և որոնք ծառայում են կամ զինուորական նպաստակի կամ ծովալին կապարանի և կամ մթերքի և պաշարեղէնի՝ ամբաբանոցներէ:

Երկրորդ կարգին պատկանում են Նրանք, որոնք մասամբ միալն մասնակցում են իրանց գործերի տնօրինելում:

Երրորդի կարգին պատկանում են Նրանք, որոնք վաւելում են ինքնավարութիւն իշխանական բոլոր չատկանիչներով և որոնք պատասխանատու են իրանց self government (ինքնավարութիւն) համար: Աւելի որոշ առած. 1) նրանք որոնք խնամքի տակ են (շողկատանը), 2) նրանք, որոնք երկրորդ աստիճանի վրա են և 3) նրանք, որոնք ընդունակ են կառավարելու առանց օգնութեան և խորհրդի՝ Կանադա, Աւստրալիա և Կապր Հարաւային Ամերիկայում:

Ձանազան ժամանակներում՝ կառավարելու 3 կարգեր են առաջարկւած:

Առաջին հեղինակը պատկանում է լորդ Roseberry'ին: Դա է Tede-ratation Impériale'ը (կայսերական դաշնակցութիւն), որի հիման վրա—կայսերութեան բոլոր պետութիւնները իրար մէջ պայման են կապում ընդհանուր շահերի պաշտպանութեան համար: Բոլոր աշտիտի կանտոնները (նման Միացեալ Նահանգներին 1776—1787 և Շւէյցարական կանտոններին մինչև 1848) կ'ուղարկէին իրանց ներկայացուցիչներին որոշւած կենդրոնական ժողովատեղը, ուր կը վիճէին պետական (imperial) գործերի մասին: Այս դէպքում Անգլիայի իրա նշանակութիւնը կը լինէր շատ աննշան:

Երկրորդ եղանակի առաջարկողն էր Charles Tupper: Այս եղանակի հիման վրա—կենդրոնական ժողովատեղին պիտի ուղարկէին միաձայն պատգամաւոր 3 մեծ գրողպալաներից (Ամերիկա, Աֆրիկա, Աւստրալիա), որոնք ձայն կ'ունենային միալն պետական գործերի վճռելում:

Ոչ առաջին և ոչ երկրորդը չեն ընդունել. դործադրւում է 3-րդ եղանակը որ ահա 50 տարի է արդէն չաջողութեամբ դործադրւում է: Դա պատասխանատու կառավարչութիւնն է—վերանորոգւած 1840 թ. Կանադայում: Ազատութիւն և ասպանութիւն—ահա սրա երկու չատկանիչները:

Անգլիան շատ լաւ է ըմբռնել ալս եղանակի առաւելութիւնները. նա բնաւ չի խառնւում ներքին խնդիրներին մէջ և ուղղութիւն է տւել միմիալն արտաքին քաղաքականութեանը:

Կոմսիաները իշխան են ներքին գործերում, և վաւելում են քաղաքական, զինուորական և տնտեսական ազատութիւն: Նրա պարլամենտը բաղկացած է երկու ասեաններից (Chambres), որոնք օրէնքներ են տալիս երկրին՝ նման Անգլիական Westminster-ի պարլամենտին:

Գլխից նա պաշտպանած է ամենայն չարձակումից, անգլիական կոլոնիալի վրա չարձակողը չարձակում է Անգլիայի վրա: Բարձր իշխանութիւնը վտանգի դէպքում պատկանում է թագուհու ներկայացուցչին — կառավարչին (gouverneur): Կառավարչի ներկայութիւնը կոլոնիալում և ամենայն մի կոլոնիալի պարտականութիւնը Անգլիական կառավարութեան ներքոյ դնել պահանջած զօրքը, որ գործ կը դնւի պետութեան որ և է նպատակի հետոյ, ահա այն երկու միջոցները, որոնցով պաշտանաւորում է Միտրոպոլիտի իշխանութիւնը:

1867 թ. Արլիսիսիայի թէոդորոս նեպուշը (թագաւորը) Վիկտորիա թագուհու ձեռքն էր ուղել, ծագեց պատերազմ և Հնդկաստանից բերած զօրքերով չաղթեց նեպուշը և սպանեց: Աւտորալիայից զօրք բերեց Արաբի Փաշայի զէմ կուելու համար Եգիպտոսում: Նորագոյն օրինակը Նոր Երկրում պատահած դժուարութիւններն են տեղական վարչութիւնների կողմից ընդդէմ ֆրանսիացիների ձկնորոնութեան: Իսկոյն Անգլիան միջամտեց իւր կոլոնիալի կողմից և գործը հաշտութեամբ վերջացաւ:

— Ապրիլի 11-ին Գոշէնը ներկայացրեց 1891-92 թ. Անգլիայի պետական ելմտացուցը և դաւ 1892-93 թ. նախահաշիւը: Անցեալ տարեւ ելմտացուցից երեսց որ մուտքից հանելով եւքը՝ մնացել է մի աւելորդ գումար 1.067.000 ֆունտ ստերլինգ¹⁾: Աւելորդ մի գումար սպառում է և 1892-93 թ. նախահաշիւով բաց միմիայն 224.000 ֆունտ ստերլինգ:

— Ապրիլ ամսին տեղի ունեցան Լոնդոնում Օկսֆորդի և Կեմբրիջի համալսարանականների սովորական matche (մրցումը), աչա նաւագնացական և մարմնամարզական մրցումները տեղի են ունենում ամենայն տարի և մեծ հետաքրքրութիւն պատճառում հասարակութեան:

Նաւագնացական մրցումները կատարւում են Տեմզա գետի վրա՝ 4 $\frac{1}{2}$ մղոն²⁾ տարածութեան վրա: Օկսֆորդի ուսանողները հաղնւած են լինում միշտ մութ կապուտ, իսկ Կեմբրիջի ուսանողները՝ բաց կապուտ: Նոյն իսկ չներին և ձիերին ալդ երկու զոյներով են զարդարում՝ նալած թէ ո՞ր կողմին են պատկանում սրանք: Տեմզա գետի երկու ափերը ծածկւած են հազարաւոր ամբոխով, չաղթութիւնը որ, ի դէպ ասած, շատ փառաւոր էր և որի նմանը 43 տարուց հետէ տեղի չէր ունեցել, տարան Օկսֆորդի համալսարանականները, որոնք չիչեալ տարածութիւնը թիաւոր նաւակով կարեցին 19 րոպէ 21 վայրկեանում:

Մարմնամարզական մաչերը (mtache) կաշանում են զանազան մրցումների մէջ՝ ցատկելու և փախչելու: Օկսֆորդի մի ուսանող մի չը տեսնւած և չը լսւած թուիչք արեց, որի երկայնութիւնը հաւասար է 23 ոտնա-

¹⁾ Ներկայ կուրսով 1 ֆունտ ստերլինգը արժէ 9 ռուբլի 50 կ. թըղթադրամ:

²⁾ Անգլիական մղոն = 1.609 մետր:

չափի և 5 մատնաչափի: Ամբրիջի ուսանողներից կալին ալիպիսիները, որոնք $1\frac{1}{4}$ մղոն վաղելու համար գործադրեցին $49\frac{1}{8}$ վաղրկեան, իսկ ամբողջ մի մղոնի համար գործադրել են 4 լուպէ 2 $\frac{1}{3}$ վաղրկեան:

Մի նոր անգլիական գիրք Գիկկենսի մասին պարունակում է իւր մէջ նաև հետևեալ անցքի պատմութիւնը:

Նրևելի անգլիացի վիպասանը, (որի բազմահատոր թարգմանութիւններից — ամօթով խոստովանած — և ոչ մէկը չունինք հաւերս) մասնակից էր մի անգամ մի կրիկետ խաղի, մի խաղ որ շատ սիրւած և տարածւած է Անգլիայում. երբ լանկարծ հանդիսականների շարքերը ձեռքում է մի հսկազ զինւորական, մօտենում Գիկկենսին և ասում. կարո՞ղ եմ ես նախը Ձեզ վրա, պարոն: — Ի հարկէ, պատասխանում է կարմրելով վիպասանը: Զինւորականը նայում է վրան ուշադրութեամբ բոլորեալ ալիպիսինի կանգ առնում, զինւորական պատիւ տալիս և հեռանում ստելով. Աստուած Ձեզ օրհնէ, պարոն:

Մալիս 11 լոնդոնում կապացած աղգալին բաճառողներին ընկերութեան ժողովին — պրոֆեսոր Մինաս Չերազ հաղորդեց մի քանի անտիպ հաջ հեքիաթներ և աւանդութիւններ: Ներկա ֆոլկլորիստներին շատ դուր եկաւ Barogh Assadour'ի ¹⁾ մասին հաջ հեքիաթը և նրանք միաբերան վկայեցին, որ դա գերազանցում է իրանց բոլոր ծանօթ թէ Արեւելքի և թէ Արեմտքի հեքիաթներից:

Ներկազ գտնուող հանդիսականներից մէկը պ. Գ. Յակոբեանը նմանապէս պատմեց մի հաջ հեքիաթ՝ մահմեդականութիւն ընդունելը մերժող մի հրեայի մասին:

Պր. Չերազի դասախօսութիւնն արժանացաւ բոլոր ներկազ եղած հասարակութեան հրապարակական շնորհակալութեան:

— Լոնդոնի լեզուագիտական ընկերութիւնը մի ժողով է ունեցել մալիս 13 University College'ում: Գասախօսում էր հաջ հասարակութեան լաւ ծանօթ հայադէտ պ. Գ. Շուրմալֆը՝ նիւթ ունենալով 1) հալոց բառերու և սոցա գրականութեան մասին, 2) հաջ լեզւի քերականական կազմակերպութեան մասին և վերջապէս 3) հաջ լեզւի զիրքի մասին համեմատական լեզուագիտութեան մէջ:

Յարգելի պրոֆեսորը, հիմնւելով նորագոյն հետազոտութիւնների վրա՝ դատում է հալոց լեզուն արիական եւրոպական լեզուների շարքում, այն է իրանական և ուլա-լիթովական լեզուների մէջտեղում: Իւր գասախօսութեան միջոցին չարդելի ֆրանսիացի պրոֆեսորը մի քանի ակնարկութիւններ արեց հայերի ներկազ քաղաքական դրութեան մասին: Պրոֆեսոր Շուրմալֆը

¹⁾ Սխալ տառադարձութեան հետևում է և պ. Մ. Չերազ. Barogh Assadour պիտի նշանակի՝ պարոզ Ասատուրը:

միակ օտար հայագէտն է, որ ուսումնասիրում է միաժամանակ թէ հայերէն գրաբառը և թէ աշխարհաբառը:

Ապա պ. Մ. Զերազ մի որոշ գաղափար տալու համար արեւմտեան հայ լեզւի ուրուստանութեան մասին, մի ընթերցանութիւն է անում և լետոյ հայերէն մի ճառ արտասանում, որի մէջ գտնում է պ. Շոռամալֆի ուսումնականութիւնը՝ համեմատութեան հետ միաժամանակ, դանդատում է անգլիացիների հայերէն լեզւով չը հետաքրքրուելու մասին և ապա առաջարկում է ընկերութեանը՝ տպագրել պ. Շոռամալֆի դասախօսութիւնը, որ և ընդունում է միաձայն: Մի ուրիշ հալի հայերէն ճառից լետոյ—ժողովը պրում է ուրախ սրտով:

Ֆ.

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

IV

Շահլամեանը մեզ մօտ երկու կոնցերտ տւեց:

Խնչպէս որ ասել էի Նախընթաց անգամ՝ առաջին կոնցերտին թատրոնը ծալրէ ի ծալր լիքն էր. աչն ինչ երկրորդ կոնցերտին — թատրոնի դահլիճը կիսով չափ դատարկ էր: Ինչո՞վ բացատրել այս հանգամանքը: Նրանով որ Շահլամեանը դուր չեկաւ հասարակութեանը: Ապա ինչո՞ւ նրա մասին աչնքան շատ գրւեց թէ տեղական և թէ օտար մամուլի մէջ: Միմիայն նրա համար որ Շահլամեանը տիրապետում է մի հրաշալի, զօրեղ և ներկալ ժամանակներում հազազիւտ մի տենոր ձայնի, Բալց ջոկ բան է՝ լաւ ձայն ունենալը, և ջոկ բան է — նրանից օգտուել իմանալը: Շահլամեանը տէր է լիապէս առաջինին և գրեթէ դուրկ երկրորդից: Համարեա նոցնը՝ եթէ մի միջակ երաժշտի ձեռը տալու լինինք մի հիանալի երաժշտական գործիք: Պարզ ասելով Շահլամեանը շատ քիչ երաժշտական հոտառութիւն ունի:

Եթէ մեր հասարակութեանը առիթ տրւէր Շահլամեանին լսելու օպերայի մէջ, այսինքն մի խմբի մէջ, երգիչների շրջանում, Նադալսմբի ձայնակցութեամբ, երգիչը դուր կը գար հասարակութեանը անհամեմատ աւելի պատճառ որ օպերային երգչի համար աւելի կարևորը ձայնն է քան երգել իմանալը. իսկ կոնցերտային երգչի համար ամենաանհրաժեշտը երգել իմանալն է: Թիֆլիսցիներին լաւ ծանօթ տենոր Լոզի՛ն և բարիտոն Պրեանիչնիկովը իրանց ձայների կէսը կորցնելով հանդերձ — վաղելում էին հասարակութեան համակրութիւնները և մինչև օրս շարունակում են անուն վաղելել իբրև կոնցերտային նշանաւոր երգիչներ — հէնց աչն պատճառով որ նրանք երգել զիտեն: Եթէ նրանց տրւէր Շահլամեանի ձայնի կէսի կէսը — նրանք հրաշքներ կը գործէին: Անշուշտ՝ կարելի է չուսալ, որ և Շահլամեանը գտնւելով բնմի վրա (աչն էլ Պետերբուրգի), ձեռք կը բերի մի չարտի աստիճանով երգել իմանալը և հէնց դրանով կ'ուղղի իւր անցած և ներկալի համար արդէն հնացած իղէալական դպրոցը: Նոցն իսկ իւր ալի կոնցերտներում երգած կտորներն ընտրութիւնը վկայում է մեր

երգչի անձաչափ լինելը: Առաջին որ զանց արած լինելով բաղմամբիւ կոնցերտալին պիւններ, նրա ընտրած երգածները մեծ մասամբ զանազան բոմաններ և օպերալին եղանակներ էին. և երկրորդ նրա ալդ երգած եղանակներն ալնպիսի հնացած օպերաներից էին, որոնց իսկ գտնւթիւնը վոքր ի շատէ երաժշտական ժամանակակից մարդիկ միանդամալն իրաւունք ունին մոռացած լինելու: Օրինակի համար Տրախաուոսն և մամաւորապէս Ֆաւորիտա՛ն: Ի՞նչ բանի համար էր ընտրել մեր երգիչը Ֆաւորիտա՛ն: Իւր ձայնի ուժեղութիւնը ցոյց տալու համար բարձր դո՛ր մէջ: Եւ ի՞նչ դուրս եկաւ: Ալն որ հասարակութիւնը բաւականին անտարբեր կերպով ականջ դրեց ալդ դո՛րն առանց հրապուրելու: Եւ միթէ իրաւունք կաջ հրճւանքի ցոյցեր պահանջելու մի հաս նոտալի համար: Այ, երգեցողութիւնը ֆոկուս չէ:

Բացի անձաչափ ընտրութիւնից, Շահլամեանն աղացուցեց որ նոյն իսկ իւր ալդ ընտրածները նա ըստ հարկին չէր մարտել: Նրգիչների մեծամասնութեան նման նա չալտնի զարձրեց թէ բոլորովին չը զիտէ չարդել հեղինակների ընտրած և ընդունած նշանները, դաշնակութիւնը (ритмъ, rythme) և չափերը: Այս պատճառով պիւններից մի քանիսն իրանց մասերում ալանդակւած էին չը ձանաչւելու աստիճանի չափ:

Շահլամեանի գործածած միակ ձևը սա է. նա կամ վերցնում է աստիկ forte՛ւ (բարձրաձայն) և իսկոյն արագ անցնում pianissimo՛ի (ցածրաձայն, մեղմ ձայն), կամ հակառակն անում:

Տիրապետելով մի գորեղ ճնշաութեան, որ շատ անհրաժեշտ է առաջնակարգ երգչի համար—Շահլամեանն ի չափն է գործ ածում իւր ալդ ընդունակութիւնը՝ արագ կերպով forte՛ից piano՛ին անցնելու համար, կանգ առնելով երկար, աւելի քան հարկաւոր է մի նոտալի վրալ: Այս ամենը շատ կարեւոր և շատ լաւ է եթէ անւում է ժամանակին և տեղին. իսկ անդադար արագ ալդ ֆորտէ՛ից պիանո՛ի և պիանո՛ից ֆորտէ՛ի անցնելը (модулирование) թէ րոյնեցնում է լսողութիւնը և թէ պակաս երաժշտական է:

Շահլամեանի՝ իւր կոնցերտներում երգած հալ եղանակներից և ոչ մէկն ինձ գուր չեկաւ նրա երգած մեկնութեամբ (интерпретация): Եթէ նա նրանց երգէր աւելի պարզ, առանց ցանկութեան իւր անվերջանալի՝ ֆորտէ՛ից պիանո՛ն և պիանո՛ից ֆորտէ՛ի արագ ելեջները ցոյց տալու համար—նրանք անշուշտ առաւել շատ գուր կը գալին թէ ինձ և թէ շատ շատերին: Ընդ սմին ես առիթ ունեցալ կրկին համոզւելու որ հալ լեղուն շատ զեղեցիկ է երգեցողութեան մէջ: Աս մտաբերեցի անցեալ ձմեռ մեզ հիւր եղած բարիտոն Նղիաղարեանցին: Ի՞նչպիսի զանազանութիւն երգել իմանալու մէջ: Թէ և Նղիաղարեանցի ձայնը միջակ կարողութեան է և այս կէտում տեղի է տալիս Շահլամեանի ուժեղ ձայնին, ալնու ամենալին շատ ասիւրբեկի էր լուի Աղիաղարեանցին թէ օպերաներում և թէ մամաւորա-

պէս կոնցերտներում: Անկասկած է որ նաև Եղիազարեանցին չի կարելի
կատարելագործած կոնցերտային երգիչ համարել սակայն նա վերին
աստիճանի երաժշտական է և նրանից շատ շուտով կը կազմւի մի շնոր-
հալի արտիստ: Իսկ Շահլամեանը կարօտ է դեռ երկար կատարելագործու-
թեան՝ երաժշտականութիւն ձեռք բերելու համար:

Շահլամեանից չետոյ Թիֆլիսում կոնցերտ տւին ու. պ. պ. Վարդիկեան
և Պոպով, մասնակցութեամբ ջութակահար Ասատուրովի: Եւ չը կարողա-
ցա՞յ ներկայ լինել այդ կոնցերտին. ասում են շատ քիչ մարդ էր ժողով-
ւել նրանց լսելու:

Յունիս 22, 1892 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Միջազգային քաղաքականութեան դրութիւնը. քաղաքական այցելութիւններ. Գերմանիայի դիրքը եռապետութեան մէջ. Կոմս Կապրիւին և իշխան Բիւմարկը. Լուբէի մինիստրութիւնը Ֆրանսիայում. անիշխանականները. մայիսի 1-ի բանտրական տօնը. պապը և կղերականները Ֆրանսիայում.— Դի Ռուդինի անկումը և Զիլլետտի մինիստրութիւնն Իտալիայում.— Սահմանադրական ճգնաժամը Բելգիայում.— Ընտրողական պալքարը Անգլիայում.— Վլադստոնի ընտրողական շրջանը:

Քաղաքական միջազգային յարաբերութիւնների մէջ ոչ մի փոփոխութիւն: Առաջւայ նման միջին Եւրոպայի երեք միապետութիւնները սերտ կապերով կապւած են միմեանց հետ և առաջւայ նման Ֆրանսիայի ու Ռուսիայի բարեկամութիւնը շարունակում է: Թէ առաջինների և թէ երկրորդների բարեկամութիւնը դաշնակիցներն աշխատում են այլ և այլ ցոյցերով տեսանելի դարձնել ընդհանրութեան աչքում և չթող տալ, որ ցոյցերի պակասութեան պատճառով՝ կարծիք կազմել թէ դաշնակիցները կամ բարեկամներն իրար հետ իբր թէ լարւած դրութեան մէջ են: Այսպէս, երբ ռուսաց կայսրը իւր աներոջ ու զոքանչի՝ Դանեմարքի թագաւորական զոյգի՝ ամուսնութեան յիմնամեակը տօնելու պատճառով Կոպենհագէն գնաց (թագաւոր կայսրուհու հետ), կայսրը Գերմանիայի մօտիկութիւնից օգտուեց Կիլի նաւահանգստում տեսնել գերմանական կայսրի հետ, փոխարէն այն այցելութեան, որ Վիլհելմ II արել էր ռուսաց կայսրին Պետերբուրգում 1888 թւականի ամռանը. բայց որպէսզի ծուռ մեկնութիւններ չտան այդ տեսակցութեան, կայսրը յաճնարարեց մեծ իշխան Կոնստանդինին հէնց նոյն այդ օրերն այցելել Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կարնօին Նանսիում, ուր նախազանք եկած էր, յունիս ամ-

սին, համալսարանական տօնին մասնակից լինելու համար: Նկատելու է, որ թէ և բնական կը լինէր եթէ ռուսաց կայսրը իւր այցը վերադարձնէր Բերլինում, բայց այդ չկատարեց այս անգամ քաղաքական լարածութեան պատճառով:

Նման մի ցոյց պէտք է համարել նա և Խալիպի թագաւորական զոյգի այցելելը գերմանական կայսերական զոյգին, նոր տոմարով յուլիսի սկզբներին: Այդ այցելութիւնն արեց փոխարէն Վիլհելմ II-ի այցելութեան, որ վերջինս արել էր նոյն 1888 թականին Հռոմում: Այդ այցելութիւններով նոր տարր չի մտնում քաղաքական յարաբերութիւնների մէջ, այլ միայն նորից վկայում է այն, ինչ հաստատուած էր մինչև այժմ:

Բայց այստեղ տեղն է յիշատակել, որ եռապետական դաշնակցութիւնը, որ Բիսմարկի հանճարի ստեղծագործութիւնն է, թէ և կայուն է և շարունակուում է նոյն շաւղով իշխէս առաջ, բայց այն հեղինակաւոր առաջնորդող զերը, որ կատարում էր Գերմանիան այդ դաշնակցութեան մէջ Բիսմարկի օրերով, նա այդ առաջնորդող դերում թուլացել էր Բիսմարկի յաջորդ կոմս Կապրիւլի ժամանակ: Շատ շատերը կարող էին կարծել, որ Գերմանիայի դիրքի մէջ ոչինչ չպէտք է փոխէր, քանի որ նրա զինուորական ոյժը շարունակում էր մնալ նոյնը ինչ էր առաջ, բայց իրողութիւնն ակնյայտնի կերպով ապացուցանում է որ բանը միայն Ֆիզիքական ոյժի մէջ չէ, այլ և կառավարողների տաղանդի մէջն է: Եռապետութիւնը թէ և կայ առաջւայ նման, և թէ և մանաւանդ Գերմանիայի ու Աւստրիա-Ունգարիայի դաշնակցութեան հիմքը շատ և շատ ամուր է և չկայ որ և է հիմք կասկածելու նորա երկարամեայ տևողութեան մասին, բայց շատ նկատելի է այժմ ղեկավարող ոյժի բացակայութիւնը, ոյժ, որ կարողանար համարձակ քայլեր անել թէկուզ օրինակ հէնց այդ դաշնակցութիւնն աւելի ամրապնդելու համար: Այդ զգացմունքը, ղեկավարող ոյժի բացակայութեան զգացմունքը, առիթ դուռ վերին աստիճանի բուռն կերպով արտայայտւելու հէնց այս օրերս: Հէնց այն ժամանակ, երբ Խալիպի Ումբերտո թագաւորը իւր ամուսին Մարգարիտ թագուհու հետ գտնւում էր Հռոմում և Բերլինում, որպէս հիւր Վիլհելմ կայսրի, նոյն այդ ժամանակ իշխան Բիսմարկը, իւր որդի կոմս Հերբերտի

ամուսնութեան առիթով աւարիական ազնական Հահլիի դստեր հետ, գտնուում էր Վիեննայում, իսկ յետոյ Սակսոնիայի մայրաքաղաք Դրեզդէնում և Բաւարիայի մայրաքաղաք Միւնխէնում: Արդ, սա մի ճշմարտութիւն է, որ Բիւմարկը կլանեց բոլոր ազգաբնակչութիւնների ուշադրութիւնն այնքան, որ Ումբերտո թագաւորի համար այլ ևս շատ քիչ տեղ մնաց հետաքրքրութեան համար: Այդ խոստովանում են իրանք գերմանացիք, քանի որ Բիւմարկը Վիեննայում, Դրեզդէնում և Միւնխէնում բնակիչների կողմից ընդունել է չլսած ուղերթութեամբ, եւ ասում եմ թէ այդ խոստովանում են գերմանացիք, բայց պէտք էր ասել՝ գերմանացոց այն մասը, որ հակառակ էր Բիւմարկին, որովհետեւ գերմանական ազգի միւս մասը մինչև օրս չի կարողանում հաշուել այս մտքի հետ թէ Պրուսիայի մի թագաւոր և Գերմանիայի մի կայսր կարող էր եղածի պէս բիրտ կերպով հառացնել այն մարդուն, որ ստեղծողն է գերմանական միութեան և որի վերջին քսան տարւայ զործունէութիւնն այդ միացած հայրենիքի ներքին և արտաքին ոյժը հաստատելու վերայ էր ուղղած, առանց արկածախնդիր պատերազմների յետևից ընկնելու: Որ Բիւմարկը ժողովրդական է, այդ անկասկած ապացուցւեց յիշած ցոյցերով, որոնք ուղղած էին կողմնակի կերպով նաև Վիլհելմ II-ի և կանցլէր Կապրիւիի դէմ, որոնք վերջին ամիսներում մի խոշոր պարտութիւն կրեցին նաև մի ներքին բայց չափազանց կարևոր խնդրի առիթով. դա էր ժողովրդական դպրոցների խնդիրը, որի յիշատակելովը մենք վերջացրինք մեր անցեալ անգամայ քաղաքական տեսութիւնը: ¹⁾ Յգուում ենք դէպքից այստեղ ասելու, որ ներկայացւած էր պրուսական պարլամենտին լուսաւորութեան և դաւանանքների միաստոր կոմս Յեդլիցի կողմից և որի հետ իրան համերաշխ ցոյց տուեց կոմս Կապրիւին, չգիմացաւ ազատամիտների զօրեղ դիմադրութեան և կառավարութիւնն ստիպւած եղաւ օրինադիժը յետ վերցնել՝ չուզենալով ծայրահեղութեան հասցնել ժողովրդական զրգումունքը և ազգի լուսաւոր մասի զայրոյթը դպրոցական մի օրինազծով, որ, բոլորովին հակառակ դարուս ոգուն, դպրոցը նորից կը զգէր այլ և այլ կրօնական դաւանքների ազդե-

¹⁾ «Մուրճ» 1892 № 2.

ցութեան ներքոյ: Դպրոցական գործն այն մեծ գործերիցն է, որոնց շահերը պաշտպանելու համար կուսակցութիւնները նոր փոփոխութիւններ են կրում, իրար մօտիկ բայց մրցող կուսակցութիւններն իրար ձեռք են տալիս: Եւ ահա ընդդէմ կաթոլիկ կուսակցութեան և պահպանողականներին, որոնք պաշտպանում էին կոմս Յեդլիցի օրինագիծը, այդ խնդրում միացան ազգային լիբերալ և գերմանական-ազատամիտ և ազատ-պահպանողական կոչւած կուսակցութիւնները (National-liberale, Deut. ch-Freisinnige, Freisconservative), որոնք և յաղթութիւնը տարան: Կոմս Յեդլից մինիստրը հեռացաւ իւր պաշտօնից, իսկ կանցլէր Կապրիւլին, որ պրուսական մինիստրութեան նախագահն էր, վերին աստիճանի խաչատուակած լինելով՝ ստիպւած եղաւ խոտովանել իւր անկարողութիւնը և թողնել պրուսական մինիստրութիւնների նախագահութեան պաշտօնը, հակառակ Բիսմարկի հայեացքին, որի համաձայն գերմանական կանցլէրն անպատճառ պէտք է լինի նա և պրուսական մինիստրութիւնների նախագահ և պատասխանատու մինիստրը թագաւորի առաջ:

Կոմս Կապրիւլի այդ զարհուրելի պարտութիւնը խլեց նրանից հեղինակութեան այն թոյլ մասը, որ նա կարող էր ունեցած լինել առաջ, և զարմանալի չէ, եթէ մանաւանդ այդ դէպքից յետոյ իշխան Բիսմարկի երեսն աւելի ևս մեծ փայլով նկարած լինի մանաւանդ՝ ազատամիտ կուսակցութիւնների մի մեծ մասի աչքում, որոնք յանձին նորա տեսնում են ոչ միայն հիմնադրին կայսերութեան, այլ և ժամանակակից գէթ չափաւոր պահանջների զօրեղ ջատագովին: Ինքը Բիսմարկը իւր այս վերջին այցելութիւնների միջոցին յայտարարեց իրան «ներկայացուցիչ անցած ժամանակի» (Vertreter einer abgeschlossenen Zeit), այսինքն, ի հարկէ, այն զաղափարների, որ նա պաշտպանել է իւր պաշտօնավարութեան ժամանակ:

Մինիստրական նոր կազմակերպութիւնը ֆրանսիացում, Լուբէի մինիստրութիւնը, աւելի ցոյց տւեց իրան, քան հիմք կար սկզբում կարծելու. անկասկած այդ նրանից է որ Լուբէի մինիստրութիւնը,

որի մէջ մտան նախորդ մինիստրութեան ամենազլխաւոր անդամները (բացի Կոնստանինց), շարունակութիւն էր Ֆրէյսինէի մինիստրութեան, քանի որ Ֆրէյսինէն, Ռիբօն, Ռուլիէն, Բուրժուան շարունակում են իրանց նախկին սլաշտօնները, առաջինը, ի հարկէ, որպէս սոսկ պատերազմական մինիստր: Առհասարակ պէտք է ասած, որ Ֆրանսիայում մինիստրական փոփոխութիւններն ընդհանուր առմամբ, սխտեմների փոփոխութիւններ չեն նշանակում, որպէս այդ կայ Անգլիայում, ուր մինիստրութեան փոփոխութիւնը ներքին և շատ անգամ նաև արտաքին քաղաքականութեան փոփոխութիւն է: Եւ այդ բնական է. Ֆրանսիայում որոշ և իրար դիմետրապէս հակառակ մեծ կուսակցութիւնները երկու են՝ հանրապետականներ և միապետականներ: Այդ երկու մեծ կուսակցութիւններն իրար հետ չեն կարող մրցել, որովհետև ազգը իւր ամենամեծ մասով հանրապետական լինելով, պարլամենտն ուղարկել է միշտ մեծամասնաբար հանրապետական ներկայացուցիչներ, որոնց ամենազլխաւոր զործը մինչ այժմ եղել է հանրապետութիւնն աւելի ու աւելի հաստատել և միապետական ու միապետականների հետ մինչ այժմ դաշնակից նաև կղերական ողին հալածել: Եւ քանի որ հանրապետութեան այդ ներքին թշնամիները մինչ այժմ դեռ ևս բաւականին զօրեղ են եղել ապագայի համար վտանգ սպառնալու չափով՝ այդ պատճառով նաև այլ և այլ իրար յաջորդող մինիստրութիւնների ամենազլխաւոր խնդիրներից մէկը եղել է միապետականութիւնը և կղերականութիւնը հալածելը: Եւ բնական է որ այդ իրար յաջորդող մինիստրութիւնները չէին կարող սկզբունքի խնդիրներում իրարից շատ տարբեր լինել, դիմետրապէս իրար հակառակ կառավարչական ու քաղաքական սխտեմներ ունենալ: Ֆրանսիական մինիստրութիւններն իրարից տարբերել են միմիայն նրանով, որ մէկի մէջ աւելի են եղել չափաւոր հանրապետականները, իսկ միւսում աւելի են եղել հանրապետական-արմատականները, որոնք իրար բարեխառնել են հանրապետական ընդհանուր կուսակցութեան մէջ մեծամասնութիւնն իրանց կողմն ունենալու համար, մինչև որ որ և է շատ անգամ երկրորդական ոչ սակաւ անձնական մի խնդրի համար կուսակցական տարածայնութիւն կը ծաղի և մինիստրութիւնը, մեծամասնութեան լիակատար հաւատը և վստա-

հուլիսին կորցնելով՝ կը փոխարինուի մի ուրիշ և մեծամասնաբար նախորդին նման մինիստրութիւնով:

Լուրէի մինիստրութեան առաջին փորձաքարը եղաւ մայիսի 1-ի բնաւորական տօնը, որ պէտք է տօնէր միաժամանակ բոլոր քաղաքակրթած երկիրների բաւարարների կողմից: Այդ տօնի նշանակութիւնը շատ կասկածաւոր էին դարձրել անիշխանական կոչւած կուսակցութեան մարդիկ, որոնք մայիսի մէկից սկսել էին մէկը միւսի չտուելից դինամիտային պայթուիւթեր գործել Պարիզի ալ և ալ փողոցների շինութիւններում, պայթուիւթեր, որոնք սարսափի մէջ զցեցին մանաւանդ Պարիզի բնակիչներին: Լուրէի մինիստրութիւնը, առանց որ և է երկդիմութեան, սկ եց հալածանք անարխիստների դէմ, որոնց մէջ մանաւանդ նշանաւոր էր ձեռքակալւած Ռաւաշոլը: Շնորհիւ աչալուրջ կարգադրութիւնների՝ մայիսի մէկի տօնը խաղաղ անցաւ Պարիզում, որպէս խաղաղ եղաւ և մնացեալ Եւրոպայում:

Նոյն այդ մայիսի 1-ին ամբողջ Ֆրանսիայում կատարւեցին համայնական ընտրութիւններ: Ֆրանսիան, որ թէև շատ կենտրոնական կառավարչական սխտեմ ունի, բայց ունի նաև համայնական ինքնավարութիւն, որի համար երկիրը բաժանւած է 36,134 համայնքների, իրանց համայնական ինքնավարութիւնով: Նոցա մէջ են Ֆրանսիայի 359 նահանգական և դաւառական գլխաւոր քաղաքները, բացի Պարիզից, որ համայնական կառավարութեան տեսակէտից ալ սխտեմի է ենթարկւած: Մայիս 1-ին ընտրւեցին համայնական ինքնավարութեան անդամները. իսկ մայիսի 15-ին ընտրւած ձայնաւորներն ընտրեցին համայնքների մէր'եր (համայնագլուխներ և նոցա օգնականներին (adjoints) և քաղաքագլուխներ): Պէտք է ասած որ թէև համայնական ընտրութիւններն ինքն ըստ ինքեան քաղաքական բնաւորութիւն չունին, բայց և այնպէս երկրի և պարլամենտի մէջ զոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութիւններն իրանց զրոշմն են դնում նաև համայնական ընտրութիւնների վերայ: Այդտեղ էլ կան միապետական ու կղերական և հանրապետական կուսակցութիւններ: Եւ բնական է որ երկրում մեծամասնաբար հանրապետականներ լինելով, համայնական ընտրութիւններին էլ մեծամասնաբար ընտրւում են հանրապետական ձայնաւորներ: Բայց և այնպէս այս տարի կատարւած ընտրութիւն-

րին շատ նկատուեց հանրապետականների յառաջդիմութիւնը համեմատած նախկին զրութեան հետ:

Փետրւարի 16-ին Հռոմի պապի էնցիկլիկայի հետ, որ նա ուղղել էր Ֆրանսիական հոգևորականութեան՝ հանրապետական սահմանադրութիւնն ընդունելու մասին՝ ծանօթացրել ենք «Մուրճ»-ի ընթերցողներին, որպէս արդէն ծանօթացրել ենք այն յայտարարութեան հետ, որ, իբր պատասխան պապի էնցիկլիկային, արեցին Ֆրանսիական հինգ կարգինալները: Պապը մի նամակով Ֆրանսիական կարգինալներին, տպւած մայիսի 7-ին Պարիզի թերթերում, նորից յիշեցրեց փետրւարի 16-ին տւած իւր էնցիկլիկայի իմաստը, բայց աւելի էլ խիստ խօսքերով: Բացի դորանից նոյն մայիսին Պարիզում գումարւած կաթոլիկական կոնգրէսին իւր օրհնութիւնը պապը հեռագրով ուղարկեց պայմանով, որ այդ կոնգրէսը կը խոստովանուի հանրապետութիւնը. մի իրողութիւն, որ մեծ շփոթմունք գցեց կոնգրէսի անդամների մէջ: Միայն թէ չը մոռանանք որ պապը, պատւիրելով հոգևորականութեան ընդունել հանրապետութիւնը, չի պատւիրում ընդունել նաև հանրապետութեան բոլոր օրէնքներն իբրև լաւ օրէնքներ. նա միայն ասում է թէ հանրապետութիւնն օրինաւոր կառավարութիւն է, նորա տւած օրէնքներն օրինաւոր են, բայց յորդորում է կաթոլիկութիւնից իրանից որպէս վատ ճանաչւած օրէնքների դէմ՝ կռւել սահմանադրութեան տւած ճանապարհներով և ոչ թէ աշխատեն իրանց համար վատ օրէնքների դէմ կռւել՝ հանրապետութեան տեղ միապետութիւն հաստատելու աշխատելով: Պապը որոշում է սահմանադրութիւնը՝ օրէնադրութիւնից, ընդունելով սահմանադրութիւնն ընդունելի, իսկ հանրապետութեան տւած օրէնքները՝ անընդունելի ու վատ կաթոլիկութեան համար: Յիշատակելու արժանի է այն, որ միապետական և կղերական առաջնորդներից պարլամէնտում մեծ նշանակութիւն ունեցող կոմս դը Մեոնը (Meun), հնազանդ պապի պատուէրին՝ արդէն իրան յայտարարել է հանրապետական, միանալով նոցա հետ, որոնք կամեղում են կոգմէլ պարլամէնտում թէև հանրապետական բայց պահպանողական կուսակցութիւն:

Իտալիայում Ռուզինիի մինիստրութիւնն ընկաւ, այդ մինիստրութիւնը յաջորդել էր Կրիսպիի շատ աւելի զօրեղ և որոշ քաղաքականութեան հետևող մինիստրութեան: Ռուզինին չունէր Կրիսպիի նման ընդհանուր լայն կառավարչական հաջեացքներ և միակ բանը, որին խստութեամբ հետևում էր, դա էր պետական զանձարանի խնայողութիւնը, որ անհրաժեշտ էր դարձած Իտալիայի պետական ելմացոյցի մեծ բացերի պատճառով: Դի Ռուզինին ընկաւ Ջիովետտիի յարձակումների ներքոյ, որ և փոխարինեց նորան երկրի կառավարութեան մէջ մայիսի միջերգում: Ջիովետտին դեռ ևս երիտասարդ մարդ է առանց մեծ անցեալի. նորա առաջին մինիստրական յաղթանակն աչն եղաւ, որ պարլամէնտի սուար մեծամասնութեամբ ընդունեց նորա առաջարկութիւնը՝ կէս տարով կրեզիտ վաճելել առանց որ բիւջետը քննւած և հաստատուած լինի պարլամենտից:

Բելգիայում հասել է սահմանադրական կրիզիսի ժամանակ: Այդ երկրին, որ 30-ական թւականներից սկսած կառավարւում էր մի անփոփոխ սահմանադրութիւնով, այժմ մի վտանգ է սպառնում, եթէ միայն պարլամէնտի ազգային ներկայացուցիչներին, որ կաթոլիկ-կղերականներ են, չաջողւի երկրի սահմանադրութիւնն իրանց մոքով փոփոխել: Բելգիայում երկու կուսակցութիւններ են իրար հետ մրցում երկրի կառավարութեան համար՝ կաթոլիկ-կղերականները և լիբերալները: Ութ տարի առաջ լիբերալները կորցրին իշխանութիւնը և մէկը միւսից յետ շարունակ պարտութիւններ կրեցին, այնպէս որ կղերական կուսակցութիւնն աւելի ու աւելի զօրեղացաւ և դրեթէ երկու անգամ աւելի ներկայացուցիչներ ունէր պարլամէնտում քան լիբերալներն ունէին: Յունիսի նոր տոմարով 14-ին նշանակւած պարլամէնտական ընտրութիւններին սակայն լիբերալները շատ նշանաւոր յաղթութիւն տարան, ոչ թէ նոքա աւելի ընտրեցին քան կղերականները, բայց զոնէ սահմանադրութիւնը վերաքննող պարլամէնտում նոքա այժմ աւելի թւով են լինելու քան էին առաջ: Լիբերալներն ամեն ճիշդ թափեցին որ կղերականները չկազմեն ընդհանուրի $2/3$ -ը, քանի որ

Երկու երրորդականի մեծամասնութիւն է պահանջում սահմանադրութիւնը կամ նորա որ և է կէտը փոխելու համար: Յունիսի 14-ին լիբերալները սակայն այնպիսի յաղթութիւններ տարան, որ կղերական կուսակցութեան իլլիւզիաներն ի դերեւ ելան. մանաւանդ Բելգիայի մայրաքաղաք Բրիւսսէլում լիբերալների տարած յաղթութիւնն ահազին էր, քանի որ նոքա խեցին կղերականներից 9 տեղ սենատում և 18 տեղ պատգամաւորների ժողովում: Նոր լուծւած պարլամէնտում կղերականները լիբերալներից թւով աւելի էին — սենատում 30-ով, պատգամաւորների ժողովում՝ 50 հոգով, մինչդեռ յունիսի 14-ի ընտրութիւններից յետոյ կղերականները սենատում միայն 12, ներկայացուցիչների ժողովում՝ 24 տեղ աւելի կ'ունենան քան լիբերալները: Իսկ այդ մեծամասնութիւնը երկու երրորդական չի կազմելու, հետևապէս կղերական իմաստով սահմանադրութեան փոփոխութիւնը տեղի ունենալ չի կարող: Կղերական կուսակցութեան պարագլուխ Վօէստէ (Woeste), որ ընտրութիւններից առաջ դրութեան կատարեալ տէր էր իրան համարում, այժմ ստիպւած կը լինի լիբերալների և նոցա պարագլուխ Ֆրէր-Օրբանի հետ կոմպրոմիսի մէջ մանկելու: Կղերականներն աշխատում էին շատ սահմանափակել ժողովրդի ձայնատուութեան իրաւունքը, ինչպէս որ սահմանափակւած է ցայժմեայ սահմանադրութիւնով. մինչդեռ լիբերալները պահանջում էին ընդարձակ ձայնատուութեան իրաւունք, օրինակ այնպէս, ինչպէս այդ զոյգութիւն ունի Ֆրանսիայում կամ Գերմանիայում:

Ընտրողական պայքարն սկսել է Անգլիայում. չորս տարին չրացած պարլամէնտը լուծւեց և նորա տեղն իրաւունք վայելող ժողովուրդը կոչւած է նոր ընտրողութիւններ անել պատգամաւորների ժողովի համար: Պահպանողական կուսակցութիւնը մարկիզ օֆ Սօլսբրիի գլխաւորութեամբ արդէն եօթ տարի է որ կառավարում է երկիրը: Այդ տարիների ընթացքում ազատամիտների պարագլուխ ծերունի Քլադսոնը 1886 թւականից սկսած դրել է Իրլանդիայի հոմուլի (ինքնավարութեան) խնդիրը, որ և ներկայ թւականի ընտրութիւններին լիբերալների ծրագրի ամենաէական

կէտը կը կռւար: Գլադատօնն արդէն յայտարարել է իւր ընտրողական յորդորը իւր ընտրողական վիճակին: Այն աչդ յորդորը, որ իւր մէջ շատ կարեւոր կէտեր է պարունակում:

«Ներկայ (յունիս) ամսի 16-ին լրանում է այն լիազօրութիւնը, որ ես երեք անգամ պատիւ եմ ունեցել ստանալ ձեզնից, և ես խոնարհաբար խնդրում եմ այն նորոգել: Այն հանգամանքները, որոնց մէջ դուք առաջին անգամ 1880 թւականին ինձ հաւատացիք ձեր լիազօրութիւնը, ծանր էին. բայց ներկայիս պայմաններն աւելի ևս շատ բան են պահանջում ազգի բանականութիւնից և հայրենասիրութիւնից, որովհետեւ այժմ Մեծ-Բրիտանիան պէտք է ի միջի այլ խնդիրների վճռի նաև այն, ինչ մեզ համար բոլոր խնդիրների խնդիրն է, այն է թէ այժմեանից Անգլիան, Շոտլանդիան և Իրլանդիան կազմելու են արդեօք իրապէս և ոչ միայն օրէնքով և անունով Միացեալ Թագաւորութիւն: Երբէք չի եղել մի ժամանակ, երբ Իրլանդիան ոգևորած լինէր աւելի հպատակութեան զգացմունքներով դէպի թագը և այնքան ամուր կապած լինէր Մեծ-Բրիտանիայի հետ և կամ սրտով այնքան մօտ լինէր նրան, որքան այն տարիներին, որոնք յաջորդեցին 1782 թւականին, երբ նա սկսեց վայելել ինքնավարութեան արտօնութիւնները մինչև այն տարին, երբ 1795 և հետեւեալ տարիներին նրան մահացու հարւած տրեց անագնիւ միջոցներով: Մի սերունդի ընթացքում միութիւնից (ունիա) յետոյ Իրլանդիան խարխալեց տնտեսական աղքատութեան և քաղաքական ստրկութեան խորը քնի մէջ: 1829 և 1832 թւականներին իրագործած բեֆորմները վերադարձրին նրան զիտակցութիւնը և ձայնը: Այդ ժամանակից սկսած և մինչև այժմ նորա ծանր տառապանքները և կռիւ ձգտումները հանդիսանում էին որպէս մեծ և մշտական լուծ, որ ծանրացած էր ձեր պարլամենտի վերայ և որ խանգարում էր Մեծ-Բրիտանիան հարկաւոր եռանդով կառավարելու ծանր և բարդ գործը: Ես յոյս ունիմ մինչև մի քանի օր պարզեմ ձեր առաջ այն օրինազօծի հիմունքները, որի օգտին ազատամիտ կուսակցութիւնն անդադար աշխատել է վերջին վեց տարիներում: Այժմ միայն կ'ասեմ, որ առաջարկող բեֆորմի նպատակը կայանում է Իրլանդիային ազատութիւն և պարլամենտ ընծայելու մէջ, որ նա կարողանայ

ինքը տնօրինել իւր տնային գործերը սեպհական օրէնսդրական ժողովի միջոցով և համաձայն իրլանդական գաղափարներին. որ նա կարողանայ շիջել հաւաքած պակասորդները և բաւականացնել այլ և այլ օրէնսդրական պէտքերը, որ. ունին Անգլիան, Շոտլանդիան և Վալիսը: Առողջ հայեացքների անընդհատ աճումը, որ վկայած է մասնաւոր ընտրութիւնների երկար շարքի հետեւանքներով, ասպցուցեց, որ ժամանակի և հանգամանօրէն քննադատուելու ազդեցութեան ներքոյ բրիտանական ազգը միանգամայն համոզւեց մի կողմից, թէ Իրլանդիայի պահանջները որքան անմերժելի են, եթէ պատուով և արդարութեամբ դատուել լինինք, իսկ միւս կողմից թէ պահանջների բաւարարացումը որքան ճանապարհ է բացում բրիտանական շահերին բաւականացումն տալու համար, որ շատ երկար ժամանակ գտնուում են արհամարանքի մէջ:

Էինչ վերաբերում է Իրլանդիայի կառավարութեանը այժմեայ պարլամենտով, ես ձեզ շարունակ կ'ապացուցանեմ իմ ճառերում, որ կառավարութեան քաղաքականութիւնն ամեն կողմից անաջողութիւն ունեցաւ մի բացառութեամբ՝ մինիստրութիւնը կարելիութիւն ունեց իրլանդական կապալառուներին ¹⁾ բարեօրէն իրանց չրութիւնը 1887 թւականի օրէնքի միջոցով, որի գլխաւոր հիմունքները նա ինքն անւանում էր 1886 թւին անբարոյական և անշիտակ: Այն ժամանակ առաջարկւած բեֆորմի դիմաց այդպիսի դիրք բռնելով, մինիստրութիւնը մղեց իրլանդական ժողովուրդը դէպի կոիւ և դառաւ իսկական պատճառը յետագայ վտանգների և տառապանքների: Իրլանդիան, զայրացած պահպանողականների և հերձաժողների ²⁾ միաբանութեան խոսմանդանցութիւնից, այժմ աւելի քան երբ և իցէ թշնամական դիրք է բռնած դէպի Ռուբլինի պալատի ³⁾ կառավարչական սխտեմը, որ մի ժամանակ այնքան պերճախօս կերպով

¹⁾ Իրլանդիայի հողատէրերն անգլիական լորդեր լինելով, հողագործները, գիւղացիք՝ միմիայն կապալառուներ են և սեպհական հող չունին:

²⁾ Հերձաժողներ ասելով Վրադստոնն ակնարկում է աղատամիտ կուսակցութիւնից Իրլանդիայի խնդրի պատճառով բաժանւած լորդ Հարդինգտոնի կուսակցութիւնը:

³⁾ Ռուբլինը Իրլանդիայի մայրաքաղաքն է, ուր նստում է թագուհուց Նշանակւած փոխ արքան կամ կառավարչապետը:

պատարակում էր Չեմբերլենը: Բայց Իրլանդիան հանգիստ է և խաղաղասէր, ապաւինելով ձեզ և Մեծ-Բրիտանիայի միւս ընտրողների վերայ. և այն զգացումները, որոնցով ոգևորւած են բրիտանական և իրլանդական ազգերը, բաղդաւոր նախանշաններ են այն բարեկամական յարաբերութիւնների, որոնք, որպէս հոմ-ռուլի (իրլանդական ինքնավարութեան) հետեանք, այն հոմ-ռուլի, որ դրւած կը լինի Թագի գլխաւորութեան ներքոյ, չեն կարող չը հաստատուել նաեւ հիւսիսային այն երկու կոմսութիւններում¹⁾, ուր զրգումունքը իշխում է բանականութեան խաղաղութեան վերայ: Նս չեմ կասկածում, որ փորձը Ուլստերի բնակիչներին շուտով կը դարձնի զէպի այն եղբայրական զգացումները մնացած Իրլանդիայի նկատմամբ, որ կային առաջ, մինչև միութիւնը:

Գլադստոնի յորդորի մնացած մասը վերաբերում է այլ խնդիրներին. ի միջի այլոց, նա խօսում է բանւորական դատակարգի մասին, որի համար նա պահանջում է, որ բանւորները կարելիութիւն ունենան աւելի լաւ օգտուել ընտրողական այն իրաւունքից, որ նոքա ունին 1884 և 1885 թւականների ընտրողական օրէնքների բեֆորմից յետոյ: Բայց այդ օրէնքներն այնպիսի նիւթական խոչընդոտներ են դնում, որ բանւորները չեն կարողանում իրապէս օգտուել իրանց իրաւունքից ինչպէս հարկն է:

Z.

NB. Այս յօդւածը գրելուց յետոյ հեռագիրը հաղորդեց կատարւած ընտրութիւնների հետեանքների հետ: Գլադստոնի կուսակցութիւնը յաղթող դուրս եկաւ առաւելութեամբ մինչ քառասուն ձայների: Այդ մասին հետեւեալ անգամ:

Z.

¹⁾ Իրլանդիայի հիւսիսային երկու գաւառների (գլխաւորապէս Ուլստերի) բնակիչները իրլանդացիք չեն, այլ անգլիացիք և շոտլանդացիք, որոնք գաղթել են աշտոնի դարերից ի վեր: Նոքա բողոքականներ են և դաւանում են անգլիական եկեղեցին և միշտ թշնամական յարաբերութիւններ են ունեցել կաթոլիկ իրլանդացոյ հետ:

Մանօթ. Z.

ԽՈՒՆԵՐԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեր երկիրը սարսափելի փորձութեան է ենթարկւած այժմ։ Խողերան մեր երկրումն է, սկսելով Բաքում յունիսի Ե-ից, ուր նա եկել էր Պարսկաստանից, անցնելով Անդրկասպեան երկրի վրայով։ Բաքում սկսած որից Խողերան արագ զարգացաւ, ճարակելով սկզբում մանաւանդ քաղաքի երրորդ բաժինը, ուր մեծ թւով բանւորներ էին բնակուած, ապա և քաղաքի այլ բաժինները։ Սարսափահար բաքւեցիք սկսեցին ցրւել երկրիս ամեն կողմերը, գլխաւորապէս Շուշի քաղաքն ու շրջակայ գաւառների գիւղերը, Գանձակ, Քիֆլիս և այլ տեղեր։ Ուստի բանւորները մեծ բազմութեամբ ծովով անցան Հաշտարխան և առհասարակ եւրոպական Ռուսաստան։ Եւ ամեն մի տեղ, ուր Խողերայի ստորակէտ-բացիլաներով վարակւած բաքւեցիք անարգել մոռոք դործեցին, վարակեց և հիւանդութեան նոր բոցն դառաւ։ Բաքում մեռնողների թիւը հասաւ յունիսի վերջերքին օրական մինչ 280 հոգու, հաշի առնելով միայն պաշտօնապէս վկայւածները, չը նայած որ քաղաքը այդ ժամանակ ամենամեծ մասով արդէն դատարկւած էր։ Հռչայաւոր Բաքուն, որ այս վերջին երկու տասնեակ տարիներում աճել էր մինչ 120.000 բնակիչների, դատարկեց արագ կերպով այնպէս, որ, ամիս չանցած, նորա մէջ մնացին, որպէս պնդում են, միայն երկու տասնեակ հազար հոգի։ Սակայն Աովկասի միւս վարակւած տեղերից և ոչ մէկը մօտաւորապէս անգամ մինչև օրս զոնէ այն ողբալի տեսարանը չի ներկայացրել, ինչ որ Բաքուն, որի եղած հասարակութիւնը, քաղաքային և այլ վարչութիւնները իրանց կատարելապէս սնանկ ցոյց ուին աղէտի մասին լուրջ մտածելու, ուր մնաց թէ նորա դէմ կուէլու։ Գեղեցիկ օրինակ ցոյց տւեց այդ կողմից Քիֆլիս քաղաքը, ուր ձեռք առնւած հակախօլերական միջոցները կարողա-

ցել են մինչ օրս վարակումից մեռնողների թիւը պահպանել մէկի
և իննի մէջ, իսկ խոլերական հիւանդների թիւը մինչ քսանից զէնը
չը թոյլ տալ, չը նայած որ քաղաքը ամառաց այս շոք եղանակնե-
րին դեռ ևս պահպանել է իւր՝ այդ սեզոնին սովորական կերպա-
րանքը, սարսափի ու պանիկայի ենթարկւած չը լինելով:

Անշուշտ մինչ «Մուրճ»-ի հետեւեալ համարի լոյս տեսնելը կա-
րելի կը լինի աւելի ամփոփ թւեր ժողովել և ներկայ հիւանդու-
թեան էպիդեմիական բնաւորութիւնը աւելի պարզ որոշել: Բացց
մեզ վերայ պարտք է դրւած զգուշացնել ժողովուրդը աւելորդ սար-
սափից և յորդորել նորան օգտուել գիտութեան աւած խորհուրդ-
ներից: Բարի հետեւանքներին կարելի է հասնել միայն երբ համե-
րաշխութիւն լինի մի կողմից գիտութեան մօտիկ կանգնածների և
նորա խօսքը ըմբռնողների, միւս կողմից գիտութիւնից հեռու
կանգնած ժողովրդական տղէտ խաւերի մէջ՝ խոլերայի դէմ ընդ-
հանուր հաւատով կռւելու համար: Դորանից բղիտում է անհրաժեշ-
տութիւնը մտաւոր ինտելլիկեցիայի համար մօտիկ շվուել ժողովրդի
հետ և այն, ինչ մամուլը կարող է տալ՝ աւելի հեռուն տարածել:
Դորա մէջն է միակ փրկութիւնը, որովհետեւ այժմեայ հանգամանք-
ներում որ և է այլ բանի վերայ յոյսեր դնելը միայն թիւրիմա-
ցութիւն կը լինի: Այդ ամենապարզ կերպով ապացուցեց ուսու ժո-
ղովուրդը Հաշտարխանում, Սարատովում և Ռոստովում Դոնի վե-
րայ, ուր ամբոխը բռնտի չափսերին հասցրեց իւր հակառակութիւնը
գիտութեան ծառայողներին և իւր անհաւատութիւնը դէպի գի-
տութիւնը դործով ցոյց տւեց հիւանդների հիւանդանոցներից զօ-
ռով դուրս բերելով փողոցները, բոլորովին չը կասկածելով որ դո-
րանով նա յանցանք է գործում՝ դէպի ամբողջ մարդութիւնը, տա-
րածելով խոլերայի ստորակէտ-բացիլլաները և վարակելով ամբողջ
քաղաքը, դորանով ի հարկէ և միւս տեղերը, ուր որ կը փախչեն
բնակիչները: Ոչ մի ուրիշ օրինակով չի կարելի աւելի շօշափելի
կերպով ցոյց տալ այն վիճը, որ դժբախտաբար գոյութիւն ունի
մարդկային հասարակութիւնների ինտելլիգէնտ և ոչ-ինտելլիգէնտ
շրջանների մէջ: Եւ տարաբախտաբար այդ վիճը գոյութիւն ունի
նաեւ մեր երկրում, թէև նա չի արտայայտուել այնպիսի բռնի
ձևով, ինչպէս այդ եղել է Ռուսաստանի վերոյիշեալ քաղաքներում:

Կարելիին չափ փոքրացնել այդ իրար բաժանող վիհը, մարդկացին ազգի այլ և այլ խաւերը իրար մօտեցնելով, կամ աւելի լաւ ասած՝ ստորին խաւերը վեր ու վեր բարձրացնելով—ահա թէ ինչը պէտք է լինի ամենքիս ձգտումը. առանց դորան անգամ ամենախելացի կարգադրութիւնները կը զարնւեն ամբոխի ապառաժ ժայռին առանց ցանկացած արդիւնքին հասնելու:

ԱԻԵՏԻՓ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Խ Ո Լ Ե Ր Ա

ԲԺԻՇԿ ՆԵՐՍԷՍ ՈՒՄԻԿԵԱՆԻ

Խոլերայի սարսափը: Խոլ. պատմութիւնը: Խոլ. հիւանդանալու պատճառները և դրա տարածման պայմանները: Խոլ. նշույները: Խոլ. ճանաչելը: Գիշտիկական և առողջապահական պայմաններ խոլերայի դէմ: Խոլերայի բժշկութիւնը: Գեղինֆեկցիան:

Ներկայ յօդածովս, որի կազմելուն ինձ օգնել են զանազան նորագոյն շարադրութիւններ, ես կաշխատեմ ապացուցանել որ խոլերայի սարսափը ներկայումս անհիմն է, անուղի և աւելորդ, քանի որ բժշկական նորագոյն գիտութիւնը՝ նորագոյն հետազոտութիւնների և փորձերի շնորհիւ աւելի ուժեղ միջոցներ է գտել թէ խոլերայի առաջն առնելու և թէ հետը կռւելու համար:

Խոլերայի պատմութիւնը: Նորագոյն հետազոտութիւնները հաստատում են, որ խոլերայի հայրենիքը Հնդկաստանն է և մասնաւորապէս գետաբերանները Գանգէսի և Բռամապուտրի. այդտեղից են սկսւել միշտ մեծ խոլերային համաճարակումները:

Խոլերան եղել է Հնդկաստանում ամենահին ժամանակներից սկսած—չը նայելով որ խոլերային համաճարակումների մասին մեզ պակասում են տեղեկութիւններ: Ամենից առաջ անգլիացի բժիշկ Մակֆերսոնը հաստատեց որ 1616 թ. խոլերային համաճարակումը տարածւած էր Հնդկաստանի հիւսիս-արեւմտեան մասերում: Այնուհետև Սոներաւն նկարագրում է Պոնդիշերի ¹⁾ քաղաքի շրջակայքում

¹⁾ Գտնւում է Հնդկաստանում:

1768—1771 թ. եղած խոլերան, որ 60,000 մարդ զոհ էր տարել: Ռոբերտ Տախտերը նկարագրում է Կալկաթա քաղաքում և սրա հիւսիս-արևմտեան մասերում 1817 թւին եղած ամենամեծ խոլերան: Այդ տարի խոլերային զոհ ղնացածների թիւը հասնում է 600,000 մարդու:

1818—1820 խոլերան տարածւած էր ամբողջ Հնդկաստանում, որտեղից նոյն 1820 թ. անցաւ Բաղդադ, Իսպահան և Շիրազ՝ ժողովրդի $\frac{1}{4}$ մասը զոհ տանելով: Միւսնոյն ժամանակ խոլերան անցաւ Հնդկաստանից դէպի արևելք՝ տարածւելով Եաւա, Բորնէօ և հարևան կղզիները: Մինչև 1830 թ. խոլերան կրկնւում էր այդ տեղերում՝ գրեթէ ամենայն տարի և ժողովրդի մեծ կոտորած անում:

Այդ թւականից նա անցաւ Աւրոպայի սահմանները—այն է՝ Աստրախան և Օրենբուրգ քաղաքները, որտեղից տեղափոխւեց Նիժնի-Նովգորոդ: Պարսկաստանում—այցելելով Քէհրան և Քաւրիզ քաղաքները անցաւ Կովկասը: Քիշլիսի ժողովրդի մի մասը հեռացաւ քաղաքից, իսկ մնացածի $\frac{1}{4}$ մասը խոլերայի զոհ դարձաւ: Այնուհետև խոլերան այցելեց Կովկասը 3 անգամ՝ 1847, 1865 և 1870 թ.: Սոցանից ամենասատիկը 1847 թ. էր:

1831—1832 թ. խոլերան տարածւեց ամբողջ Աւրոպա՝ Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Շեչցարիա:

1832 թ. խոլերան անցաւ Հիւսիսային-Ամերիկա և ապա տարածւեց ողջ Նոր-Աշխարհում:

Այդ թւականից սկսած մինչև մեր օրերը խոլերայի համաճարակումները մերթ րնդ մերթ երևան էին զաւիս երկրագնդի զանազան մասերում և կոտորածներ անում:

Խոլերացով հիւանդանալու պատճառները և նրա տարածման պայմանները: Հիմնւելով այն հանգամանքի վրայ, որ խոլերան հեշտ և շուտ փոխւում է մէկ մարդուց միւսը—այդ ախտը դասւած է վարակիչ հիւանդութիւնների շարքում նման ծաղկին, քութեշին (скарлатина), տիֆին և այլն: Այդ հիւանդութիւնների նման՝ խոլերան ինքն ըստ ինքեան չի առաջ գալիս և ոչ էլ մրսելուց գոյանում, — այլ անհրաժեշտ է որ մէկը միւսին վարակի: Սրա պատճառը խոլերայի թոյնն է, որի գոյութեան մասին, իրաւ

է, առաջ էլ մտածում էին, բայց որի բնաւորութեան մասին գաղափար չունէին: Շնորհիւ միմիայն պր. Կոխի հանրահռչակ դառած փորձերին և հետազոտութիւններին՝ հաստատուեց որ խոլերայի թոցնը է՝ չը զինւած աչքով անտեսանելի մի սունկ, որ՝ շնորհիւ իւր կրած ձեւին կոչւում է ստորակէտած և բացիլլէ կամ ստորակէտած միկրոբ (commabacillen): Մարդու մէջ կան շատ ուրիշ միկրոբներ, բայց միմիայն Կոխի դրած ստորակէտած միկրոբներն են բնորոշում և պայմանաւորում խոլերան:

Այդ ստորակէտած միկրոբներն են իսկապէս խոլերայի թոցնը և ահա ինչու.

1) Այդ տեսակ միկրոբները, բացիլլները գտնւում են միշտ խոլերայից մեռածների մէջ:

2) Այդ միկրոբների շատութիւնը կամ քչութիւնը պայմանաւորում են խոլերային հիւանդութեան ծանրութիւնը կամ թեթեւութիւնը:

3) Այդ միկրոբները ջրի հետ ընդունւած ¹⁾ վարակում են մարդկանց խոլերայով:

4) Կոխը և ուրիշները կենդանիներին թունաւորելով յիշեալ բացիլլներով՝ առաջ են բերել խոլերանման հիւանդութիւն այդ կենդանիներին մէջ:

Խոլերայի ստորակէտած բացիլլները ²⁾ մուտք են գործում մարդու օրգանիսմի մէջ կամ օդի հետ, որ մենք չնչում ենք ներս, կամ գլխաւորապէս մեր ուտելիքի և խմելիքի հետ մուտք գործելով մեր մարսողական գործարանների մէջ և այնտեղ բարեջաջող պայմաններ գտնելով՝ արագ բազմանում և առաջ են բերում այն ցաւերը, որոնք բնորոշում են խոլերան: Խոլերայի միկրոբները

¹⁾ Կալկաթայի արւարձաններում փորձեր անելիս, Կոխը հետազօտելով մի լճակի ջուր՝ գտել էր նրա մէջ խոլերայի ստորակէտած միկրոբներ: Այդ լճակում լացած են եղել խոլերականների սպիտակեղէնը: Մօտակալ բնակիչները խմում էին այդ ջրից և մեռնում խոլերայով, մինչդեռ չըջակալքում խոլերայի անուն իսկ չկար:

²⁾ Մի բացիլլի երկայնութիւնը է 0,001 — 0,0015 միլլիմետր, իսկ լայնութիւնը 0,0003 — 0,0005 միլլիմետր: 1000 միլլիմետր = 1 մետր = 1,4 արշին:

ներգործում են մեր մարմնի վրա կամ ինքնին, կամ իրանց կենսազորութեան արդիւնքներով (продукты жизнедеятельности) թունաւորելով մեր մարմինը: Դոքա, միկրոբների կենսազորութեան արդիւնքները, կոչւում են պտոմալիններ (птомалины): Ամենահաւանականը այն է որ միկրոբները ներգործում են մեր մարմնի վրա իրանց կենսազորութեան այդ արդիւնքներով:

Խոլերան շատ արագ և շատ հեշտ է տարածւում մի տեղից դէպի միւսը այն պատճառով, որ խոլերայի տարածելու նպաստող միջոցները բազմաթիւ են:

Ինքն ըստ ինքեան վտանգաւոր չէ խոլերայով հիւանդներին մօտենալ և շփուել: Վտանգաւոր է եթէ խոլերականի (խոլերայով հիւանդի) փսխանքը կամ կղկղանքը ընկնելու լինին մեր շորերի վրա, քանի որ թէ փսխանքը և թէ կղկղանքը պարունակում են իրանց մէջ բազմաթիւ միկրոբներ, որոնք որ և է կերպով ներս մտնելով մեր մարտդական գործարանների մէջ՝ կարող են հիւանդացնել բացի մեր անձից նաև ուրիշներին:

Բացի դրանից խոլերայի միկրոբները ընկնելով շորերի վրա կարող են բազմանալ, այս իրողութիւնը ապացուցել է Կոխը: Ճանապարհորդները, վաճառականները, ուղտադնացիները՝ իրանց շորերի վրայ խոլերայի միկրոբներ ունենալով՝ տարածել են այդ ախտը երկրէ երկիր:

Խմելու ջուրը կարող է նմանապէս նկատուել խոլերայի տարածող միջոցներից մէկը: Խմող ջուրը կարող է խոլերայի միկրոբներ պարունակել, եթէ խոլերականների կղկղանքը ածւած է լինում այդ խմող ջրի մօտ տեղերը. հողի միջով միկրոբները թափանցում ընկնում են խմող ջուր մատակարարող ջրամբարի մէջ և սկսում այդ տեղ բազմանալ, ապա ջրի հետ ընդունւելով՝ վարակել մարդկանց: Միկրոբները բազմանում են նաև այն ջրում, որի մէջ լւացւում են խոլերականի շորերը, հագուստը: Nicati և Ritsch'ը խոլերայի միկրոբներ էին գտել այնպիսի մի ջրում, որի մէջ 81 օր առաջ խոլերականի ճերմակեղէն էր լւացւել:

Միւրդը, ուտուելիցէն, դարձած է իբրեւ մահնները

դառնում են վարակիչ՝ եթէ լացում են կասկածաւոր մի-
րոններ պարունակող ջրով:

Խօսերականի սպիտակեղէնը լացող լացարարը
կարող է վարակել իւր ձեռքերի միջոցով:

Օգի միջոցով վարակելը շատ դժւար է, այդպիսի՝
դէպքեր շատ հազւագիւտ են: Վերջապէս ճանճերը և այն ամեն
միջատները, որոնք սիրով նստաւում են աղտոտութիւնների կամ
խոլերականների դիակների վրա, կարող են այնուհետև վարակել ա-
ռողջ մարդկանց՝ նրանց վրա նստելով: Կոխը դառն էր խօսերանցի
միկրոբների ճանճերի թեւերի և կրծքերի վրա:

Բացի այս զլխաւոր տարածող միջոցներից կան նաև երկրոր-
դական տարածող պատճառներ:

Կեղտոտ փոշոցները, բակերը և տները բացիլլների
ամենասիրած տեղերն են: Այդպիսի կեղտոտ տեղերում
նոքա զտնում են իրանց համար սննդատու նիւթեր և արագ բազ-
մանալով՝ դարձնում են նոյն տեղերը բացիլլների օջաղներ: Յացր
և խոնաւ տեղերը նմանապէս նպաստում են բացիլլների զար-
գանալուն, նկուղների, նոր և խոնաւ տների բնակիչները աւելի շատ են
վարակում, քանի որ բացիլլները խոնաւ տեղերում աւելի նպաս-
տաւոր պայմաններ են զտնում զարգանալու համար:

Մարդկանց խմբելը նմանապէս նպաստում է խոլերայի տարած-
ման, բանտերում, զինւորանոցներում, թատրոններում և ոճնափառա-
ներում պատահած բազմաթիւ դէպքերը հաստատում են այս կէտը:

Բացի վերոյիշեալ պայմաններից կան նաև տրամադրող
պայմաններ խոլերայով հիւանդանալու, շատ բանեւոյց ուժա-
սպառ եղածները, հիւանդութիւններ ունեցող և մասնաւորապէս
ստամոքսի հիւանդութիւն ունեցողները աւելի շուտ են տրամադիր
հիւանդանալու, քան առողջ մարդիկ:

Նմանապէս ամեն մի չափազանցութիւն նպաստում է
խոլերայով հիւանդանալուն: Նկատւած է որ տօն օրերից, կիւրակի
օրերից յետոյ՝ երկուշաբթի և երեքշաբթի օրերը խոլերայով հի-
ւանդացողների թիւը միշտ աւելի շատ է եղել:

Վերջապէս ասը քիչ դեր չի կատարում խոլերայով հիւան-
ան ալու համար:

Խողերացով կարելի է հիւանդանալ մի քանի անգամ, ասել է թէ նա կրկնւող է: Գալով սեռին՝ պէտք է նկատել որ իգական սեռը աւելի է ենթարկւած խոլ. հիւանդանալու և նկատւած է որ զոքա զոհի աւելի մեծ $\frac{9}{10}$ են աւել խողերացին:

Հասակի վերաբերմամբ պէտք է ասել որ երեխայքը և ծերերը աւելի քիչ են ենթարկւում խողերացին. ամենից շատ հիւանդանում են 20—40 տարեկանները:

Վատ առողջ ապահան պայմանները նպաստում են մի կողմից խողերացի արագ տարածւելուն և միւս կողմից շուտ հիւանդանալուն:

Խողերացի համաճարակումի սկզբում հիւանդանում են մի քանի հոգի, այնուհետև դէպքերը բազմանում են: 4—6 շաբաթից յետոյ համաճարակումը հասնում է իւր գագաթնակէտին: Համաճարակումի սկզբում մահւան դէպքերը աւելի շատ են լինում քան վերջում: Ինքը համաճարակումը տևում է 4—6 շաբաթ, բայց երբեմն շարունակել է 4—6 ամիս:

Խողերացի նշույլները: Խողերացով հիւանդացածը 2—3 ժամ կամ նոյն իսկ 2—3 օր ոչինչ չի զուշակում իւր հիւանդութեան մասին: Այս 2—3 օրւոյ ժամանակամիջոցը բժշկութեան մէջ կոչւում է թուխտի պերիօդ (инкубацион. пер.): Երբեմն՝ թէև շատ սակաւ՝ այնպիսի դէպքեր են պատահում, որ այդ պերիօդը տևում է 4—5 շաբաթ: Այդ պերիօդում, առհասարակ, հիւանդը իրան երբեմն-երբեմն լաւ է զգում և երբեմնակի՝ թուլութիւն և գլխացաւ: Այս պերիօդից յետոյ սկսւում են խողերացի իսկական նշանները.

Մանրութեան համեմատ խողերան բաժանւում է երեք կարգի.

1) Խողերացին փորլուծութիւն:

2) Խողերինա:

3) Շնչեղձ խողերա:

Պատահում է և այնպէս որ թեթև խողերացով հիւանդացողը յետոյ աւելի ծանր տեսակին է ենթարկւում:

Խողերացին փորլուծութիւնը ոչնչով չի զանազանւում հասարակ փորլուծութիւնից. միայն, խողերացին համաճարակումի ժամանակ, այսպիսի փորլուծութիւնը ճանաչւում է խողերացին: Առիթ

գտած ստորակէտածե բացիլները պատահում են առհասարակ փորլուծութիւնով հիւանդի արտաթորութիւնների մէջ և սրանով հաստատում հիւանդութեան խոլերա լինելը: Յանկարծ աւողջ ժամանակ, ցերեկով, կամ կէսգիշերին կամ երեկոյեան հիւանդը զգում է փորի զրզրոց և դուրս գնալու ցանկութիւն: Օրը 5—10 անգամ տեղի ունեցող արտաթորութիւնները լինում են առատ, ջրալի և առանց որ և է ցաւի: Հիւանդը այս պատճառով թուլութիւն է զգում: Մէջը սաստիկ պակասում է կամ բոլորովին կտրւում: Հիւանդի բերանը կպչող է լինում: Հիւանդը զգում է սաստիկ ծարաւ և ախորժակի բացակայութիւն: Հիւանդը գանգատւում է սրտի բաբախումից: Մորթը սառչում է և սպիտակում, երեսը փոս ընկնում, զարկերակը թուլանում: Հիւանդը մկանունքի ցաւեր է զգում:

Սակայն խոլերային փորլուծութեան սկզբնական նշանները այնքան թույլ են լինում, որ հիւանդը առանց իսկութիւնը գուշակելու, ձանապարհ է ընկնում և անգիտակցաբար նպաստում խոլերայի տարածման՝ կարծելով թէ սովորական փորլուծութիւնով է հիւանդ: Հէնց այս պատճառով խոլերային համաճարակում ի ժամանակ պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել թեթեւ փորլուծութիւնով հիւանդանալու ամեն մի դէպքի վրա՝ խոլերային բնաւորութիւնը աչքից չը թողնելու և խոլերայի տարածման առաջը առնելու համար:

Շատ դէպքերում խոլերային փորլուծութիւնով հիւանդը աւողջանում է մի քանի շաբաթից յետոյ. հակառակ դէպքերում հիւանդութեան թեթեւ նշանները ծանրանում են և հիւանդութիւնը փոխում է խոլերայի:

Խոլերայի արկածները առաջանում են խոլերային փորլուծութիւնից, սակայն դոքա աւելի վտանգաւոր և աւելի բուռն բնաւորութիւն ունին: Փորլուծութիւնը դառնում է աւելի ջաճախ, և նման լինելով ալիւրախիւսի, ունենում է հոտած հոտ: Շուտով տեղի է ունենում սրտախառնութիւն, զկուտույ, փսխում:

Ընդհանուր նշանները աւելի ծանր են, թուլութիւնը արտաշայտւում է զօրեղ կերպով: Հիւանդի ձայնը բարակում է, մարմնի ծայրերը սառչում են, զարկերակը թույլ է և արագ, մկանունքները

սկսւում են կծկել: Առողջանալը տեղի է ունենում կամ շատ արագ կամ շատ դանդաղ:

Շնչհեղձ խուլերացի նշանները տեղի են ունենում կամ յանկարծակի կամ խուլերացից յետոյ: Յանկարծ — տեղի է ունենում ընդհանուր թուլութիւն, դողցուց, գլխի պտոցաւ:

Փորլուծութիւնը դառնում է շատ սաստիկ, կատարւում է շատ չաճախ, շատ առատ, ջրալի և առանց ցաւի: Սկզբում ունենում է հասարակ կղկղանքի տեսք, իսկ յետոյ ելած բրնձաջրի նման, անգոյն և անհոտ: Գուրս գնալը հասնում է օրական 20 անգամից 30-ի, իսկ քանակութիւնը հաւասար է 500-ից մինչև 5000 խորանարդ սանտիմետրի: Փորլուծութիւնից յետոյ սկսւում է փսխանք, որ տեղի է ունենում օրական մինչև 20 անգամ և առանց հիւանդի կողմից ոյժ գործ դնելու: Քանակութիւնը երբեմն հասնում է 35.000 խորանարդ սանտ.: Սկզբում դա լինում է հիւանդի կերած-խմածը — աճուհետեւ ընդունում է բրնձաջրի կերպարանք — մի հանգամանք որ շատ վտանգաւոր է հիւանդի համար:

Փսխանքի հետ միասին սկսւում է և զկռտոց. աճուհետեւ տեղի է ունենում ակտորժակի կատարեալ բացակայութիւն և ընդհակառակը սաստիկ ծարաւ: Աեզուն պատած է կպչուն լորժիւնով. հիւանդի որովայնը տափակ է, թուլացած, երբեմն փոս ընկած, փորը սեղմելիս հիւանդը ցաւ է գգում:

Հեղուկի առատ արտահոսութիւնից, արտաթորութիւններից և տեղի ունեցած փսխանքից առաջանում է արիւնի թանձրացումն և արիւնի անկանոն շրջանառութիւն: Հիւանդը զանգաւում է սրտի բաբախումից: Սակայն շուտով զարկերակը այնպէս ընկնում է, որ դրեթէ չի լսւում և անհնարին է լինում նրա զգալը: Արիւնի անկանոն շրջանառութիւնից հիւանդի դէմքը սառչում է սառուցի պէս, դէմքը կապոյտ գոյն է ստանում, շրթունքները սևանում, մորթու տաքութեան աստիճանը ընկնում է 35° C ¹⁾: Հիւանդի աչքերը և թշերը փոս են ընկնում, մորթը կորցնում է առաձգութիւնը, ձայնը դառնում է խուլոտ (сиплый, vox cholERICA) և թոյլ, շնչառութիւնը ծանրանում, ուշքը պահպանւում է մինչև վերջին րոպէն:

¹⁾ Յետի ջերմաչափ — հարկւրականը:

Բացի սորանից բնորոշ նշաններ են նաև մկանների ցնցումները և մէզի պակասելը կամ խստաւ դադարելը: Աւանց որ և է պատճառի տեղի է ունենում մկանների ցնցումն, ձկնամսի, ոտի մատների, ազդրների, ձեռքերի: Այս ցնցումները շարունակւելով երբեմն մի քանի րոպէ հիւանդին ցաւ են պատճառում:

Նկարագրած խոլերայի նշաններով հիւանդութիւնը չի կարող տեւել մի կամ երկու օրից աւելի: Բազմաթիւ դէպքերում մի քանի ժամից կամ կէս օրանից յետոյ հիւանդը մեռնում է ոյժերի ընդհանուր կորստից: Հակառակ դէպքերում հիւանդութիւնը ընդունում է stadium reactionis ընթացքը և հիւանդը առողջանում է: Արտաթորութիւնները դառնում են աւելի և աւելի սակաւ և ընդունում խիստկանի յատկութիւնը: Փսխումը, զկռումը դադարում են, զարկերակը զօրանում է, սառչելը պակասում է, մարմնի ջերմութիւնը դառնում է բնական, նորմալ, դէմքի գոյնը լուր տեղն է դալիս, ցնցումները դադարում են, ախորժակը բացւում է, մէզը սկսւում է երևալ և շուտով դառնում է կանոնաւոր: Երբեմն տեղի է ունենում քրախք և ապա 1—2 շաբաթից յետոյ հիւանդը բոլորովին առողջանում է:

Սակայն այս յետաշրջութիւնը (reakcia) չի վերջանում միշտ առողջանալով—տեղի են ունենում կրկնութիւններ և վերադարձ դէպի ծանր դրութիւն, որին զարձեալ մահ է հետևում: Կամ թէ նոյն այդ յետաշրջական ընթացքը stadium typhodium cholericum է ստանում—այսինքն տիֆի ընթացք: Այս դէպքում տեղի է ունենում մարմնաջերմութեան աւելանալը, գլխացաւ, ուշքի կորուստ: Զարկերարը լինում է սաստիկ, հիւանդի դէմքը ընդունում է կարմիր գոյն, մորթու վրայ բծեր են յայտնւում: Ապա այս տիֆի ընթացքը վերջանում է առողջանալով, կամ փոխւում է նոր հիւանդութիւնների, որոնք մեծ մասամբ առաջ են բերում մահ:

Խոլերայի ճանաչելը համաճարակումի ժամանակ չի ներկայացնում ոչ մի դժւարութիւն: Ստորակէտածև բացիլլների արտաթորութեանց մէջ զոննելը հաստատում է խոլերայի միւս նշանները: Բայց եթէ խոլերայով հիւանդացողները մէկ մէկ հատ են, պէտք է զգոյշ լինել հիւանդութիւնը խոլերա ճանաչելու համար:

որովհետև կան հիւանդութիւններ, օրինակի համար cholera nostras, մկենդային թունաւորութիւն և այլն, որոնց նշանները նման են խոլերային:

Ասիական խոլերան տալիս է ահագին մահացութիւն. 50—70% հազաւազիւտ երեւոյթներ չեն: Ընթերցողը յիշում է որ 20—40 տարեկանները աւելի շատ են հիւանդանում, բաց լաւացնենք, որ խոլերայով հիւանդացած երեխայքը և ծերերը մահու աւելի մեծ % են մատակարարում քան առաջինները:

Վիէտիկական և առողջապահական միջոցներ խոլերայի դէմ: Եթէ ընթերցողը յիշելու լինի այն ամենը՝ ինչ որ ես ասացի խոլերայի տարածման մասին, խոլ. հիւանդանալու մասին, հիւանդանալու տրամադրող պատճառների մասին,—նա ինքը կեզրակացնի թէ ինչ միջոցներ պէտք է գործածել զոցա առաջն առնելու համար:

Ուստի անհրաժեշտ է որ մեր բնակարանները, տներն բակերը, արտաքնոցները միշտ մաքուր պահւին, ամեն աղբ շատ շուտով հեռացնելով:

Քաղաքի հիւրանոցները, քարվանսարանները և այլ կրպակները, ուր վաճառում են ուտելեղէններ — մաքուր պահել՝ մեծ ուշադրութիւն դարձնելով նաև ուտելեղէնի որակութեան. ուստի քաղաքային վարչութեան վրա պարտք է դրում հսկել ուտելեղէն մթերքների լաւ յատկութեան վրա, որպէս զի այդ մթերքները միշտ մաքուր և թարմ լինեն: Ամեն ոք ուշադրութիւն պէտք է դարձնի իւր կերածի ոչ միայն որակիսութեան այլ և քանակութեան վրա — երբեք չճանրաբեռնելով ստամոքսը: Անհրաժեշտ է նախապատուութիւն տալ դիւրամարս և սննդատու նիւթերին, իսկ կանաչեղէնը, թաց միրգը աւելի լաւ է բնաւ չգործածել¹⁾:

Կաթը հարկաւոր է եփածը գործածել:

Ձանազան հիւանդութիւններ և մասնաւորապէս ստամոքսի հիւանդութիւն ունեցողները պէտք է առհասարակ աւելի զգուշ լինեն —

¹⁾ Կամ քիչ գործածել միայն թէ եթ տա՛ն կամ 0,012 լորակի, թթւաւ պարունակող ջրի մէջ լաւնալուց փտու:

քանի որ, վերը ասածիս համաձայն, թուրակազմ, տկար մարդիկ աւելի են թափաջ են հիւանդանալու խոլերայով քան թէ առողջները:

Պէտք է ուշադրութիւն դարձնել որ խմող ջուր մատակարարող տեղերի մօտակայքը չաճւեն խոլերականի աղտոտութիւնները և ոչ էլ խոլերականի սպիտակեղէնը լւանալու համար դորձածած ջուրը: Ուստի աւելի նախապատուելի է խմելու ջուրը եփ տալ և ցրտացնել: Զրի տեղ, ծարաւը չաղեցնելու համար, կարելի է դորձ ածել նաև թոյլ թէյ:

Գալով աջնայիս խմիչքներին՝ ինչպիսի են կրապ, լիմոնադ, սելտերիան ջուր և այլն աւելի լաւ է սկի չբանեցնել, որովհետև այդպիսիները կարող են կասկածելի հում ջրից պատրաստած լինել:

Գինի, արաղ, կոնեակ և այլ ոգեղէն խմիչքների դորձածելը թոյլատրուում է չափաւոր կերպով:

Մարմինը պէտք է մաքուր պահել—շուտ շուտ բաղնիս գնալով, միայն թէ աշխատելու է չըմբսել: Յուրտ և խոնաւ օրերը տաք հագնել:

Աշխատելու է ոտները և փորը նմանապէս տաք պահել, շորերը և սպիտակեղէնը շուտ շուտ փոխել՝ մաքուր պահելով հանդերձ: Խուսափել քէֆերից և հարբեցողութիւնից, քանի որ դրանք աւելի ևս նպաստում են խոլերայով հիւանդանալու:

Անհրաժեշտ է պակասացնել թէ մտաւոր և թէ ֆիզիկական աշխատանքի ժամերը, որովհետև թուլութեան ամենայն կերպը յաջողում է վարակելու:

Խոլերականի բժշկութիւնը: Գալով խոլերայով հիւանդի բժշկութեան՝ պէտք է յիշեցնեմ ասածս, որ այդ բժշկութեան բարեցաջող կամ՝ անբարեցաջող ելքը կախած է լինելու թէ ինչ դիէտիկական (կանոններ կերակուր ուտելու և զգոյշ լինելու) և առողջապահական սրայմաններով էր ապրում խոլերականը հիւանդանալուց առաջ: Եթէ այդ պայմանները դորձագրւել են համաճարակութից առաջ—կարելի է յուսալ հիւանդի համար յաջող ելքի, քան եթէ այդ պայմանները զանց էին առւած: Ուստի ամենայն մի փորլուծութեան դէպքի վրա—ուր մնաց որ դա համաճարակութի ժամանակ պատահած

լինի—պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել. հիւանդին իսկոյն պառկեցնել անկողին, բարձր առաստաղով և լայնարձակ սենեակի մէջ: Սենեակի միջից պէտք է հեռացնել ամեն կեղտոտ սպիտակեղէն և աւելորդ իրեր, պահել մաքուր, օդը շուտ շուտ փոխելով կամ լուսամուտները բաց թողնելով ամառ ժամանակը, իսկ ձմեռը դիմել օդափոխ գործիքներին:

Սենեակում քամուկ, կամ ինչպէս ասում են թափանցիկ քամի չը պիտի լինի: Հիւանդի կերակուրը պէտք է բազկացած լինի եփած կաթից, սպասից, մսի բուլիոնից, թէյից, սպարսիմատից: Այս կանոնները, այս դիէտը պէտք է պահպանել նաև առողջանալուց յետոյ մի քանի օր: Հիւանդի բժշկութիւնը աւելի լաւ է յանձնել բժշկի՝ առաջին կասկածելի փորլուծութեան հէնց առաջին օրից:

Մինչև բժշկի գալը կարելի է գործածել հետևեալ միջոցները.

Փորլուծութեան առաջն առնելու համար դնել փորին ցուրտ կոմպրեսներ, կամ տաքը, եթէ հիւանդը չի կարողանում տանել ցուրտը: Բացի կոմպրեսներից կարելի է դնել փորի վրա տաք առաղով լի տոպրակներ, կամ շորով փաթաթած աղիւսներ: Փսխելու դէմ կուլ տալ անանուխի հետ սառուցի մանր կտորներ: Այժերի նւազումի և սրտի թուլութեան ժամանակ գործածել զինի (շաֆալյն, պորուէյն և այլն), թանձր սև սուրճ: Մորթու ջերմութեան պակասութեան միջոցին հարել ոտ ու ձեռքը, տաք փաթաթել դրանց, լամպնել տաք տաք թէյ, սուրճ, զինի, ոտքերին դնել տաք ջրով լիքը շիշեր:

Փորլուծութեան սկզբում գործածել լուծողական (կաստորկա), իսկ այնուհետև Բոտլինի, Ինդլեմցովի կաթիլները և այլն:

Ինձ մնում է մի քանի խօսք ասել հիւանդի կղկղանքի և փսխածի մասին.

Արովհետև դրանք պարունակում են իրանց մէջ խոլերայի բացիլլները—ակներև է որ այնպէս վարւելու է, որ սրանք չը կարողանան բազմանալ և վարակել նոր մարդիկ: Կան այնպիսի միջոցներ որոնք սպանում են խոլերայի բացիլլները, եթէ հարկաւոր քանակութեամբ ածում են խոլերականի կղկղանքի և փսխածի վրա:

Մենք կը դնենք այստեղ այդ ակտաճան միջոցներից գլխաւորները՝ աւելացնելով նաև դոցա վերցնելու չափերը: Սուլեմա $\frac{1}{10}^0/0$

Վարբուկան թթւան (карболовая кислота) 3—5%, хлористый цинк 20%, երկաթի և պղնձի արջասպ 10—20%: Վարելի է կազմել նաև խառնուրդներ այլ նիւթերից:

Դեզինֆեկցիան կատարում է հետևեալ կերպով: Խոլերականի կղկղանքը և փսխածը հաւաքում են մի անոթի մէջ, ուր ածում են նաև վերը յիշած միջոցներից մէկը որոշ չափով:

Խոլերականի հագի շորերը, սպիտակեղէնը, անկողինը, կահւարսիքը նաև բոլոր իրերը պէտք է կրկին գործածութիւնից առաջ ենթարկել խիստ դեզինֆեկցիայի և այս բանի համար գործածել $1/10^0/0$ սուլեմայի:

Աւելի լաւ է խոլերականի էթանագին իրերը այրել: Անհրաժեշտ է դեզինֆեկցիայի ենթարկել նաև խոլերականի սենեակը:

Ի վերջոյ չը մոռանամ յիշելու՝ որ յիշեալ բոլոր ակտանան միջոցները թունաւոր են, ուստի գործածելիս պէտք է զգոյշ լինել չը թունաւորելու համար:

Բորժոմ, յունիս 27:

ԽՐԱՏՆԵՐ ԽՈՒՆԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ ¹⁾

I

ՄԻՋՈՑՆԵՐ, ՈՐ ԱՆՀՐԱՃԵՇՏ Է ՁԵՌՆԱՐԿԵԼ ՄԻՆՁԵԻ ԽՈՒՆԵՐԱՅԻ ԵՐԵՒԱԼԸ

1. Ամեն մի բնակիչ պարտավոր է, չէնց իւր օգտի համար, նպաստել քաղաքի առողջապահական դործին, մաքուր պահելով իւր տունը, բակը, գոմը և սրահը:

2. Աղբը և ուրիշ ամեն տեսակ անմաքրութիւնները պէտք է հաւաքել առանձին արկղիների մէջ և քաղաքից դուրս տանել, իսկ աւելի անվտանգութեան համար պէտք է նախապէս նրանց վրա չը հանգցրած կիր ածել և աչնպէս տանել:

3. Արտաքնոյնները պէտք է մաքուր և խտտակ պահեն, և ամեն օր այնտեղ պէտք է ածել աղտահանիչ (дезинфицирующая) նիւթեր:

4. Կեղտոտ ջրերի, աղբակիր և ամեն տեսակ անմաքրութիւնների համար չինւած փոսերը պէտք է մաքուր և խտտակ պահել, իսկ նրանց մէջ հաւաքւած աղբը պէտք է քաղաքից դուրս տանել, կանխապէս զեղերով նրանց անվտանգ դարձնելով:

Ծանօթութիւն. Երբ քաղաքում արդէն հիւանդութիւն կա, կամ թէ շատ մօտիկ է քաղաքին, աչն ժամանակ աւելի լաւ է լցւած փոսերը չը մաքրել, ալ նրանց մէջ ածել անվտանգ դարձնող նիւթեր, ծածկել կրով և ամուր փակել:

5. Քաղաքի ճերքին մասերում և դետի ափերում եղած հորերը պէտք է փակեն, չամնաւն զէպս նրանց ջուրը չի կարելի ոչ մի կերպ դործա-

¹⁾ Այս խրատները Թիֆլիզի քաղաքապետի խանձնարարութիւնով կազմել է պարոն բժշկապետ Վ. Մ. Արծրունին, Քաղաքապետ Վարչութիւնը իւր լուծարի 20-ի նիստում վաւերացրել է և որոշել է հրատարակել նրանց ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով, ընդամենը 25,000 օրինակ. աչժմ ալլ «խրատներն» սպառւած են:

ծել, լաացքի, գետին ջրելու, մանաւանդ խմելու համար: Նոյնպէս պէտք է փակեն և ալն հորերը, որոնք փորւած են արտաքնոցների և աղբի փոսերի մօտ:

6. Եթէ հիւանդութիւն եղած տեղում աղբիւրալին ջուր չը կա, ալն ժամանակ հորի կամ գետի ջուրը ուրիշ կերպ չի կարելի գործածել, եթէ ոչ անպատճառ եռացրած:

Ծանօթ ու թիւն. Միշտ պէտք է զգուշ լինել և կեղտոտ առուների մօտից ջուր չը վերցնել:

7. Զորահինգ օր շարունակ պէտք է շատ զգուշ վարաբերութիւն ունենալ վարակած տեղերից եկողների հետ:

II

ՄԻՋՈՅՆԵՐ, ՈՐ ՊԵՏԲ Է ԶԵՌՆԱՐԿԵԼ ԽՈՒՆԵՐԱԻ ԺԱՄԱՆԱԿ

Հէնց որ քաղաքում երեաց խողերալին առաջին դէպքը, բոլոր վերեւիչած միջոցները պէտք է գործադրեն աւելի մեծ խտութեամբ:

Ամեն մարդ պէտք է հոգալ, որ խողերալից ազատւի: Այս պատճառով անհրաժեշտ է առանձին ուշադրութիւն դարձնել.

ա) ԲՆԱԿԱՐԱՆԻ ՎՐԱ,

բ) ԽՈՂԱՆՈՅԻ, ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՒ ԹԷՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՎՐԱ,

գ) ՈՒՏԵԼԻՔԻ ԵՒ ԽՄԵԼԻՔԻ ՎՐԱ,

դ) ԱՊՐԵԼՈՒ ԵՂԱՆԱԿԻ ՎՐԱ:

Ա. Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն

8. Հարկաւոր է, որքան կարելի է, շուտ շուտ բնակարանների օդը փոխել, եթէ մինչև անգամ նա ընդարձակ է և մեծ լուսամուտներ ունի:

9. Որովհետև չորութիւնը ոչնչացնում է խողերալին, հարկաւոր է զգուշ լինել լակը ջրելուց, սենեակների չատակը լանալուց և սենեակում թաց շորեր պահելուց, որոնք լացելուց չեսող պէտք է լաւ չորացվին: Խակ չատակը մաքրել միայն չոր շորով:

Բ. ԽՈՂԱՆՈՅԻ, ՍԵՂԱՆԱՏԱՆ ԵՒ ԹԷՅԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

10. Խոհանոցի մաքրութեան և չատակութեան վրա պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել: Կաթսաները, բանաղնելուց առաջ, պէտք է եռացող ջրում լանալ, նոյնպէս և տարելիները, բաժակները, դանակները, պատառաքաղները և զգալները, խակ ալիտեղ, ուր կարելի է, պէտք է չորացնել զուլումով վառարանում:

11. Անձեռոցիկները, սփռոցները և թէլի անթի սրբիչները պէտք է միշտ պահարանում պահել չորացած և աղետեղից հանել միայն գործածելու ժամանակ:

12. Սեղանատան և թէլի ձերմակեղէնը կարելի է քանձնել լաճալու համար միայն աչն լաճարարին, որ նրան չի խառնիլ խոլերալով հիւանդների կեղտոտ ձերմակեղէնի հետ. առելի լաւ է առհասարակ տանը լաճալ բոլոր ձերմակեղէնները:

Գ. ՈՒՏԵԼԻՔ ԵՒ ԸՄՊԵԼԻՔ

13. Խոլերալի ժամանակ ջուր և կաթ կարելի է խմել միայն եռացրած: Հանքավիւն ջրեր կարելի է խմել և առանց եռացնելու: Ինչ որ վերարկւում է արւեստական ջրերին, պէտք է գնել լաւ գործարաններում: Կարելի է գործածել զեւտերեան ջուր, խոյ տալով սոցալին ջրից: Ըմոնաղը օգտակար է:

14. Գինի խորհուրդ են տալիս խմել կարմիրը, աչն էլ աչնպիտին, որ խոլերան երեւոյց առաջ է չիչերի մէջ ածւած: Սովորած մարդը դարեջուր կարող է խմել քիչ քանակութեամբ միայն աչնպիտին, որ չառ լաւ խմորած և պարզած է: Խսկ կատս պէտք չէ խմել, նոյնպէս և պաղ պաղակ (մորոժենտե) չ'ուտել:

15. Խորհուրդ են տալիս խմել թէլ, կոֆէ կոնեակով, օղիով և առանց որանց: Օգտակար են նոյնպէս քիչ քանակութեամբ սօժ, շամպանիս, Լաւ է գործածել գրող և զլինտէչն:

16. Կերակուրը պէտք է դիւրամարս լինի, որպէս զի նա ստամոքսին չը խանդարի: Պէտք է ուտել քիչ-քիչ և շուտ-շուտ: Կերակրի համար գործածւած բոլոր բաները պէտք է լաւ եփւած և խորոված լինին: Անհրաժեշտ է զրոշանալ հում բանձարեղէն և կանանչեղէն, սալաթ, վարունգ և ալլն ուտելուց:

17. Հում պտուղներ կարելի է ուտել միայն մաքուր ջրի մէջ լաւ հալուց քետոյ, իսկ սուելի լաւ է լաճալ սալիցիլի, լիմոնի կամ գինեքարի թթւածնի (վիննեկամենալեա կիւտտա) բազալրութեան մէջ: (Մի թէլի զգալը խառնելով մի շիշ ջրի հետ):

Մանօթու թիւն: Աղետեղ, ուր հնար չը կալ աչս նախազգուշութիւնները գործ գնել, առելի լաւ է պտուղներ բոլորովին չուտել, մանաւանդ չը պիտի ուտել թուր, ծիւան (կուրազա) և սեխ:

18. Պէտք է զգուշ լինել նոյնպէս և չաղ (չաղ միս, դմակ և ալլն) և սառն (բոռւլինի, ալիւշկա, վինեգրեա) կերակուրներն ուտելուց, նոյնպէս և աչնպիտի բաներից, որ ծարաւ են զրգսում (կըշիկ, խողի միս, աղլի ձուկն, աղի պանիր): Հացը պէտք է շատ լաւ թխած լինի:

19. Նախաճաշիկը, օրինակ՝ պանիրը, լուլը, ապուխտը և այլն, պէտք է պահել ծածկոյի տակ կամ մաքուր անձեռոցիկի մէջ փաթաթած, որպէս զի ճանճերը նրանց վրա ախտ չը բերեն: Խորհուրդ են տալիս հացը, ուտելուց առաջ, դնել վառարանի մէջ կամ օջաղի կրակի կամ սպիրտովոյ կանթեղի բոցի վրա պահել կամ աւելի լաւ է երեսի կեղեր հանել (քերթել) և միջուկը ուտել:

Գ. ԱՊՐԵԼՈՒԻ ԵՂԱՆԱԿԸ

20. Ընդհանուր կանոնն այս է, որ չը պիտի կհանքի սովորական եղանակը փոխել խոլերալի ժամանակ, եթէ նա կանոնաւոր է եղել: Սակաւն անհրաժեշտ է զգուշ լինել մրսելուց, խոց տալ խոնաւութիւնից, նոյնպէս և ալն բոլոր բաներից, որոնք կարող են չորհեցնել և թուլացնել մարդուն, որոնք են՝ երկար ժամանակ արթուն մնալը, ուժից վեր ֆիզիքսպէս և մտաւորապէս աշխատելը և ուրիշ ամեն տեսակ չափազանց աշխատութիւններ:

21. Մանաւանդ պէտք է զգուշ լինել հարբեցութիւնից, որովհետև ոգելից ընպելիքների ի չարը զործ դնելը մարդուն տրամադրում է խոլերալով հիւանդանալուն: Ծերերը և զառամեալները պէտք է առհասարակ աւելի զգուշ լինեն:

22. Մարմնը պէտք է մաքուր պահել, չարաթական 2—3 անգամ առք բաղանիք ընդունել: Գետում լաւ է չը լողանալ: Ամառալին ժամանակ պէտք է հալնել թեթեւ հաղուտ, իսկ երեկոները աւելի տաք: Խորհուրդ են տալիս փլանելի փորկապ հագնել:

23. Լուացարարը չը պիտի ընդունի լուանալու հիւանդների ախպիսի ճերմակեղէնները, որոնք չեն ախտահանակ, ալ պէտք է միայն ախպիսիները ընդունի, որոնք զրած են եղել աջպէս ասած կրիստալիչ և սկալեա կարբոնովալեա կիսլոտալի 5 մասը խառնած 100 մ. ջրի մէջ — ոչ պակաս քան 24 ժամ: Լուացարարը չը պիտի մոռանայ, որ հիւանդների ճերմակաղէնը, մանաւանդ թաց ճերմակեղէնը խոլերալին ախտի զլխաւոր տարածողներից մէկն է և հէնց այս պատճառով ամենից շատ լուացարարներն են մեռնում:

24. Խոհարարները, երբ սկսում են կերակուր պատրաստել, սպասաւորները սեղան ծածկելու ժամանակ պէտք է իրանց ձեռները լուանան սապոնով և խոզանակով (չլետկա) կամ ներքեում լիչաւ ախտահան խառնուրդներից մէկով, իսկ ամենից լաւն է կարբոլեան թթուածնի 3 մասի և 100 մաս ջրի խառնուրդով:

25. Պէտք է մարդկանց մեծ բազմութիւններից խոց տալ՝ տօնալուծառներից, ուխտատեղիներից և այլն:

26. Եթէ մի տան մէջ խոլերալին հիւանդ կալ, պէտք է նրան ծա-

ռաջ մի մարդ, ուրիշները կարող են հիւանդին աչցելէլ միայն կարճ ժամանակով, որովհետեւ թէկուզ շուտ շուտ բայց կարճ ժամանակով հիւանդի մօտ մնալը, ինչպէս երեսում է, անվտանգ է: Խոլերային հիւանդներին աչցելուները պէտք է լիտու լուանան իրանց ձեռներն ու երեսը և փոտահանեն, աչինքն՝ անվտանգ դարձնեն կարբոլեան թթւածնի 3 մ. և 100 մ. ջրի խառնուրդով, նոշնպէս և բերանները ողողել աղալին թթւածինով (սոլեանալեա կիսլոտա), վերջինից ածելով 10—15 կաթիլ մի բաժակ ջրի մէջ:

27. Լաւ է միշտ տանը ունենալ հետեւեալ միջոցները. Բոսկինի և Խնոզեմցովի կաթիլներ, Էֆիր, Նաշատիրնի սպիրտ, Վալերիանովալեա և Գոֆմանսկալեա կաթիլներ, ընդ սմին նրանց գործածելու ժամանակի և եղանակի մասին խորհուրդ հարցնել բժշկից կամ զեղարանում: Սակայն ոչ մի դէպքում չը պիտի ալս միջոցների վրա լոյս դնել և պէտք է նրանց գործածել միայն մինչև բժիշկի դալը: Բոլոր միւս տեղական միջոցներից և արտոնագրած դեղերից անպայման պէտք է խոյս տալ:

28. Խոլերային հիւանդների արտաթորութիւնները և փախանքը պէտք է զրուշութեամբ փոտահանել, անվտանգ դարձնել և լիտու ածել արտաքնոց, բայց երբեք բակը կամ փողոց չը թափել:

29. Խոլերայից մեռածի դիակը պէտք է փաթաշիւ սաւանի մէջ, որ թրջւած է կարբոլեան թթւածնի (կարբոլովալեա կիսլոտալի—5 մասը 100 մաս ջրի հետ) կամ սուլեմալի (2 մասը 1000 մաս ջրի հետ) խառնուրդի մէջ և անմիջապէս փակ դադաղով թաղել:

30. Բնակարանը, կահ-կարասին, և առ հասարակ բոլոր իրեղէնները պէտք է բժշկի խորհրդով խիստ դեղինֆեկցիալի ենթարկւեն: Խնչ վերաբերում է հիւանդի հագուտին, ձեռնակեղէնին, սաւանին, աւելի լաւ է ալրել, իսկ եթէ, որ և է պատճառով, ալդ անկարելի է, դնել նրանց կարբոլեան թթւածնի թունդ խառնուրդի մէջ (5 մասը 100 մաս ջրի հետ) մի ամբողջ օր:

Ե. ԱՅՏԱՀԱՆՈՂ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾԱՐՈՒԹԻՒՆՆԸ

ա. Ս ու լ ե մ ա վերցնել 1 մաս 1000 մաս ջրի համար (մօտաւորապէս 16 պրան սուլեման մի չիշ ջրի համար) և աւելացնել 40 մաս աղալին թթւածին (սոլեանալեա կիսլոտա):

Ծ ա ն օ թ ու թ իւ ն: Այս միջոցը հասարակութեան ձեռքը չէ տրուում, որովհետեւ սուլեման չափազանց զօրեղ թուն է:

բ. Վ ա լ բ ո լ ե ա ն թ թւ ա ծ ի ն 2-ից մինչև 5 մաս վերցնել 100 մաս ջրի համար:

գ. Պ զ ն ձ ա չ ի ն կ ու պ ո Ր ո ս (մեղնի կուպորոս) վերցնել 1-ից մինչև 3 մասը 100 մաս ջրի համար և երկաթեալ կուպորոսը (ժելեզնի կուպորոս) 10 մասը 100 մաս ջրի համար:

դ. Չըհանդցրած կիր (նեղաշեննալա իզվեստ):

ե. Խոլերալին կիր (խլորինովալա իզվեստ):

զ. Նրի ջուր (իզվեստովսե մուսկո) չը հանդցրած կիր 20 մասը վերցնել և խառնել 100 մաս ջրի հետ. միշտ պէտք է թարմ պատրաստածը ունենալ:

է. Արտաքնոցները զեղլինֆեկցիա անելու (անվտանգ դարձնելու) համար ամեն օր աչնտեղ ածել պղնձալին կուպորոսի (2 մասը 100 մաս ջրի մէջ) և երկաթալին կուպորոսի (ժելեզնի կուպորոսի 1 մասը 8 մաս ջրի մէջ) խառնուրդ, թոնդ կարբոլեան (5 մաս 100 մաս ջրի համար) կամ սուլեմալի (1 մաս 1000 մաս ջրի համար խառնուրդի և 40 մաս աղալին թթւածնի հետ): Նթէ աղբի փոսերը լիքն են, անհրաժեշտ է ծածկել աղբը չը հանդցրած կիր հաստ ծալքով, նախապէս ածելով աչնտեղ վերալիշեալ ախտահանող խառնուրդներից մէկը:

ը. Հիւանդների արտաթորութիւնները և փսխանքը անվարակիչ դարձնելու համար կարելի է գործածել նոյն ախտահանող միջոցները նոյն չափով, որչափ է արտաթորութիւնը կամ փսխանքը: Այս նպատակի համար գործադրուած է նոյնպէս ծծմբալին կամ աղալին թթւածին:

պ. Հիւանդի արտաթորութիւնը կամ փսխանքը չատակից կամ կահ-կարասիէց մաքրելու համար գործադրուած են սուլեմալի 2 մասը 100 մաս ջրի հետ:

ժ. Հիւանդների և մեռածների անկողինը, ճերմակեղէնը և հագուստը անվարակիչ դարձնելու համար, պէտք է աջ առարկաները մի ամբողջ օր թողնել կարբոլեան թթւածնի 5 մաս 100 մաս ջրի կամ սուլեմալի 2 մաս 1000 մաս ջրի թոնդ խառնուրդի մէջ:

ի. Իսկ բնակարանը և տունը ախտահանելու համար պէտք է դիմել բժշկին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

ՊՈԼԵՐԱՅԻ մեր երկրում երևալու անակնկալ դէպքը և նորա ընդարձակ ծաւալումը Կովկասում և եւրոպական Ռուսիայում առիթ տւեցին «Մուրճ»-ի խմբագրութեանը սովորական ժամանակից աւելի ուշ հրատարակելու ներկայ Ձեռք՝ իւր բժիշկ աշխատակից Ն. Ումիկեանի լօղւածը ալժամ հրատարակելու համար: Դորա հետ կից տպւում է նաև պ. բժշկ. Վ. Արծրունու «Խրատները խոլերայի մասին»:

«ՄՈՒՐՃ»-Ի ՅԱԶՈՐԴ ԶԵ 7-ը լուս կը տեսնի միացած Ձե 8-ի հետ օգոստոսի վերջում:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ մասին ստացանք հետեւալը.

«Թող տւէք այս երկտող գրութիւնս զետեղել ձեր պատւական ամսագրի էջերում ի գիտութիւն ընթերցող հասարակութեան.

«Շատերը գիմում են ինձ նամակով իմանալու թէ «Մանկավարժական գրադարան» վերնագրով ժողովածուն երբ լոյս կը տեսնէ և թէ ալդ վերջինի հրատարակութիւնը ինչո՞ւ աչապէս ուշացաւ: Հետեւալ հանգամանքներն ստիպեցին ինձ «Մանկավարժական գրադարանի» հրատարակութիւնն ուշացնել. առաջին՝ որ չարգելի աշխատակիցներս իրանց լօղւածները շատ ուշացրին, նոցն իսկ շատերից առաջին հատորի համար խոստացած լօղւածներն սպասելով և ոչինչ չը ստանալով, ստիպւած էի մի ուրիշին զիմել կամ ինքս աշխատել ալդ պակաս լօղւածի տեղ ուրիշը զետեղելու համար: Երկրորդ՝ բաժանորդագրութիւնը շատ դանդաղ էր քաջում. մինչև ալօր ևս շատ տեղերից բաժանորդագրութեան թերթերը չեմ ստացել, չը նալելով որ քանիցս անգամ զիմել եմ նոցա նամակով: Վերջապէս «Մանկավարժական գրադարանի» առաջին հատորը պատրաստ է և այս ամիս կ'ուղարկւի չարգելի բաժանորդներին: Լիալոյս եմ, որ միւս հատորներն աւելի ճոխ լինին և նոցա հրատարակութիւնն առաջինի նման աչապէս չ'ուշանալ, ըստ

որում խմբագրութիւնն աւելի կանոնաւոր կերպով տեղի կ'ու-
նենայ, նամանաւանդ որ կ'ունենայ խմբագրական ժողովներ
բաղկացած բանիմաց պարոններէր:

«Վերջացնելով երկտող գրութիւնս, խնդրում եմ աչն պա-
րոններին, որոնց ձեռքին գտնուում է «Մանկավարժական դրա-
վարանի» բաժանորդագրութեան թերթը, չուտով ուղարկեն
ինձ հետեւալ հասցեով՝ Боржомъ. Иоаннесу Бархударіанъ,
дача садовника Гаврііла.

Յովհաննէս Բարխուդարեանց»:

«ՆԱՏՈՒՐԱԼԻՍՄ ԵՒ ԷՄԻՆ ԶՈՒՆ» լօղածը, որ անցեալ №-ից տպա-
գրւում է «Մուրճ»-ում, ընթերցողներէր շատերը կարծել են
թէ թարգմանական է: Հարկ ենք համարում, սակայն, չափ-
նել, թիւրիմացութիւնների դէմն առնելու համար, որ լօղածի
հեղինակ ֆելիքսը «Մուրճ»-ի աշխատակից է:

ՊՐՈՖ. Պ. ԳՐ. ԽԱԼԱԹԵԱՆՑԻ ներկայ համարում տալով գրախօսական
լօղածի առիթով պարտք ենք համարում չափնել, որ նա
ստացած էր Մոսկւայից գեռ եւ մալիսի վերջին՝ «Մուրճ»-ի
№ 5-ում զետեղելու համար. սակայն, արդէն ուշ լինելու պատ-
ճառով, մի ամսով շատաճեցինք նորա տպագրութիւնը:

ՍՏԱՅԱՆՔ՝ Բացի իւր տեղում լիցաններէր, նաև հետեւալ նոր գիրքը՝
АНАНОВЪ С. І., д-ръ. — „Абастуманъ и его цѣлебное зна-
чение“. Тифлисъ, типографіа М. Д. Ротинянцъ, 1892 года,
դրին է 1 ր. 60 կ. և ճանապարհածախք 25 կոպէկ:

ՎՐԻՊԱԿ: Ռուսական քրոնիկի լառաջաբան տողերում, երես 830 սպրդել է
մի սխալ. տպւած է՝ «Ռուսական քրոնիկ վերնադրի տակ մինք
կ'աշխատենք կարելիին չափ պարբերաբար, գէթ ամիսը մի
անգամ «Մուրճ»-ի ընթերցողներին հաղորդել ռուսական
կեանքին վերաբերեալ կարեւորագոյն ֆակտերը և ալլն: Պէտք
է լինի՝ «գէթ երեք ամիսը մի անգամ»: Եւ ամիսը մի
անգամ լոյս տեսնող թերթը չէր կարող մի բան խոստանալ
գէթ ամիսը մի անգամ, քանի որ դա ամենաշատն է ինչ նա
անել կարող է:

„ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻ

Նօթերորդ կիսամեակի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ

1892 թ. № 1, 2, 3, 4, 5, 6, № 1892 թ.

№ 1

1 ԽՄԲ.	3 «Մուրճ»-ը 1888—1891 թւական:
2 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ	25 Կաթողիկոսական թեկնածուներ:
3 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	29 Հօր անէծքը (բանաստեղծութիւն):
4 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ.	32 Ազգ (բանաստեղծութիւն):
5 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	33 Տիգրանուհի (ղրամա):
6 ՍԵՆԿԵՒԻՉ, Հ.	55 Առանց դաւանանքի (վէպ):
7 ՄԻՒԹԱՐԵԱՆՑ, ԱՐՇԱԼՈՅՍ.	78 Երուս. պատերի առաջ (բանաստ.):
8 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆ.	79 Նախկին քաղաքակրթ. վարերում:
9 ԼԵՈՒՆՑ	91 Ամպը (բանաստեղծութիւն):
10 »	» Մ.ին (բանաստեղծութիւն):
11 ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ, ԲԺՇԿ.	93 Հիպոտոսիս I, II:
12 ՄԱԳԱԹԵԱՆ, ԵՂԻՇԷ.	119 Բանաստ.-հրապարակաւոր (վերջ):
13 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ	132 Երկու խօսք մի բանակու. առիթով:
14 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, ՍՏ.	135 «Նշիչի պատմութիւնը»:
15 ԼՈՒՍԻՆԻ.	150 Զրօրհնէքի աղէտը թիֆլիսում:
16 »	152 Թեմական պատ. ընտրութիւնները:
17 Լ. Ս.	159 Բաքուի Մարդ. ընկերութիւնը:
18 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐ.	163 Երաժշտական նկատողութիւններ:
19 ՂԱԶԱՐԵԱՆՑ, ԵՐՈՒԱՆԻ.	171 Միտք և զգացմունք:
20 ՇՐՈՒՄՊՅ	173 Նստակ խմբ.: Դը Լապարդի մահը:

- 21 ԽՄԲ. 175 Խմբագրութեան կողմից: Թարգմա-
նակ. գրականութիւնը «Մուրճ»-ում:
Սմբ. Շահաղիլի չօրելեանին: Հաջոց
Բարեգործական Ընկերութեան ընդ-
հանուր ժողովը և ընտրութիւնները:
«Մասիս» երեքշաբաթաթերթը:

№ 2

- 1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . 187 Տիգրանուհի (գրամա):
2 ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ 218 Առանց դաւանանքի (վէպ):
3 ԲԱԼՈՒՂԵԱՆ, ՋԱԻԱԳ. . . . 250 Դիշերալին գիցուհին (բանաստ.):
4 ՀԷՅՆԷ-ԻՅ՝ ԲԱԼՈՒՂԵԱՆ. . . 251 Դու մի ծաղիկ ես (բանաստ.):
5 ԲԱԼՈՒՂԵԱՆ, ՋԱԻԱԳ. . . . » Ձգու՛! (բանաստեղծութիւն):
6 ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀԱՆ. . . 252 Նախկին քաղաքակր. վարերում:
7 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ. . . 263 *** (բանաստեղծութիւն):
8 ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ, ԲԺՇԿ. . 264 Հիպնոտիսմ (վերջ):
9 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՍԱՐԳԻՍ. . . . 289 «Նաղուբեանի բառարանը»:
10 ԼՈՒՍԻՆԻ 305 Տաճկահայերը և կաթ. ընտրութիւն:
309 Ղար. թեմ. պատ. ընտրութիւնը:
310 Վերընտրութիւն Թիֆլիսում:
11 ՍԱՐԳՍԵԱՆՑ, ԼԵՒՈՆ 315 Էթանագին Գրադարանը:
12 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐԻԳՈՐ . . . 323 Երաժշտական նկատողութիւններ:
13 ԼՈՒՍԻՆԻ. 326 Թիֆլ. թեմ. պատ. ընտրութիւնը:
14 Շ. 332 Քաղաքական Տեսութիւն: Ընդհա-
նուր քաղաքական դրութիւնը:
Ֆրանսիայի նոր մինիստրութիւնը:
Ֆրանսիական կարգինալների չափ-
տարարութիւնները: Միջին-եւրո-
պական պետութիւնների առևտրա-
կան դաշնը: Մաքսալին բեֆորմը
Ֆրանսիայում: Պրուսական դպրո-
ցական նոր օրինագիծը:
15 ԽՄԲ. 342 Խմբագրութեան կողմից: Շահաղիլի
չօրելեանի կոմիտեից: Կաթողի-
կոսացուների մասին:

№ 3

- 1 ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ . . . 347 Տիգրանուհի (գրամա):

2	ՄՈՁԽՈՒԲԱՐԻՁԷ, ԱԼ.	369	Էլիսո (վէպ):
3	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	389	Անարդ սիւն (բանաստեղծութ.):
4	ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ	391	Առանց դաւանանքի (վէպ):
5	ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀ.	414	Քրիստոսը անապատում (բան.):
6	ՏԷՐ-ՄԻՐԱՔԵԱՆ, ՅՈՎՀ.	415	Նախկին քաղաքակր. վայրերում:
7	ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅ, ՅՈՎՀ.	434	Յովհաննէս Ամուս Կոմենիոս:
8	ՔԱԼԱՆԹԱՐ, ԱԼ.	443	Վ. Փափազեանի պատկերները:
9	ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ	453	«Եղեղեանի բառարանը»:
10	ՊՈՏԱՊԵՆԿՈ, Ի. Գ. Ն.	470	«Գաղափարական քահանայ»:
11	ԼՈՒՍԻՆԻ.	473	Ամուսն. քրոնիկ: Հրապարակական նիստերի արձանագրութիւնները մեղանում: Թիֆլիսի թեմական պատգամաւորի ընտրութ. գործը: Թիֆլիսի հալոց թատրոնական ժողովը:
12	ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	489	Հրատարակչական ընկերութիւնը:
13	Ֆ.	496	Արտասահմանեան քրոնիկ:
14	Ա. Ա.	503	Սարգսեանց Սարգիս:
15	ԽՄԲ.	505	Խմբագրութեան կողմից: Խրիմեան Հայրիկի ծննդեան տարեդարձը: Կաթողիկ. թեկնածուների մասին: Նամակ Զմիւռնիալից: Մոզխուբա-րիձէի Էլիսո վէպը «Մուրճ»-ում:

№ 4

1	ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ, ԱԻՍՏԻԲ.	511	Վերջին խօսք:
2	ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ	515	Տիգրանուհի (դրամա):
3	ՄՈՁԽՈՒԲԱՐԻՁԷ, ԱԼ.	552	Էլիսո (վէպ):
4	ՄԻԹԱՐԵԱՆՅ, ԱՐՇԱԼՈՅՍ.	566	Քաջ հովիւ (բանաստեղծութիւն):
5	ՍԵՆԿԵՒԻՉ, ՀԵՆՐԻԿ	567	Առանց դաւանանքի (վէպ):
6	ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆ.	593	Ախթամար (բանաստեղծութիւն):
7	ԲԱԼԱՂԵԱՆՅ, ՍԱՄՈՒԷԼ.	597	Հրաբուղիները:
8	ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՏԻԳՐԱՆ.	604	Դէորդ Բրանդէս:
9	ՍԱՐԳՍԵԱՆՅ, ՍԱՐԳԻՍ	619	«Եղեղեանի բառարանը»:
10	Մ. Տ.-Ա.	634	«Պաւղոս Գափտանի քիմիան»:
11	ԼՈՒՍԻՆԻ.	638	Թեմակ. պատգ. ընտր. Թիֆլիսում:
12	Ֆ*.	643	Արտասահմանեան քրոնիկ:
13	ԵՍԵՄԵԱՆ	651	Օրէ ցօր:

- 14 ԽՄԲ. 657 Խմբագրութեան կողմից: Խրիմեան
Հայրիկի ծննդեան 72-րդ տարե-
դարձի առիթով հեռագիր: «Մուրճ»-ի
հեռագիրը Սմբ. Շահազիզեանին:

№ 5

- 1 ԽՄԲ. 661 Կաթողիկոսակ. ընտրութիւնները:
2 ԳՈԳՈԼ, Ն. 663 Պլիւշկին:
3 ԼԵՌԵՆՑ. 687 Երազ (բանաստեղծութիւն):
4 ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ 689 Առանց դաւանանքի (վէպ):
5 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ. 725 Նւէր (բանաստեղծութիւն):
6 ՎԱՐԻԱՆԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ. 726 Արդիւնագործ. Անդրկովկասում, II:
7 ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. 739 Միջատակեր բոսորը:
8 ՖԵԼԻՔՍ 743 Նատուրալիստը և Զոլան, I:
9 ՄԱԼԽԱՍԵԱՆՑ, ՍՏ. 758 «Եղիշէի պատմութիւնը»:
10 ՏԷՐ-ԱՆԴՐԵԱՍԵԱՆ, ՄԽ. 769 «Քիմիա Ռոսիոյ»:
11 ԼՈՒՍԻՆԻ. 773 Ամսադ. քրոնիկ. Խրիմեանի ընտ-
րութիւնը: Տաճկահայեր և Ռուսա-
հայեր: Թիֆլիսի թատրոնի գործը:
12 Իւ. Մ. 779 Նամակներ Էջմիածնից:
13 * 805 Պատգամ. ազգանւան ցուցակ:
14 ԱԿԱՆԱՏԵՍ. 809 Ամեն. հայոց կաթող. ընտրութիւնը:
15 Ֆ. 826 Ռուսակ. պետ. ելմտացուց 1892 թ.:
16 Ֆ. 830 Ռուսական քրոնիկ:
17 ՆԱՀԱՊԵՏԵԱՆ, ԳՐ. 841 Երաժշտական քրոնիկ:
18 ԼՈՒՍԻՆԻ. 844 Գրականագէտն. օգնութ. ընկեր.:
19 ԽՄԲ. 845 Խմբագրութեան կողմից: Հեռագիր
Խրիմեանին: Գողթը «Մուրճ»-ում:
Թիֆլիսի Հայոց Հրատարակչական
ընկերութեան ընդհ. ժողովը:

№ 6

- 1 ՍԵՆԿԵԻԶ, ՀԵՆՐԻԿ 855 Առանց դաւանանքի (վէպ):
2 ԹՈՒՄԱՆԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ. 883 «Զորագետը գիշերով» (բանաստ.):
3 " " 884 Բոմանս (բանաստեղծութիւն):
4 ՊԵՏՕ 885 Հանապարհորդ. վիշտութիւններ:
5 ՈՒՄԻԿԵԱՆ, ՆԵՐՍԷՍ, ԲԺՇ. 899 Սննդառութիւն և կերակուր, I:
6 ՖԵԼԻՔՍ 916 Նատուրալիստը և Զոլան:

7	ԽԱԼԱԹԵԱՆ, ԳՐ.	934	«Նղիշէի պատմ. վարդանանց»:
8	ՈՒՄԻԿԵԱՆ, Ն.	949	«Երլիցկի ժառանգ. մասին»:
9	ԼՈՒՍԻՆԻ.	951	Հայոց Բարեգործական ընկերու- թիւնները ընդհանրապէս և թիֆ- լիսի Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը մասնաւորապէս:
10	ՂԱԶԱՐԵԱՆՅ, ԵՐՈՒԱՆԳ.	959	Աղքատութիւն և խղերատ:
11	Ֆ.	965	Արտասահմանեան քրոնիկ:
12		982	Նրաժշտական քրոնիկ:
13	Զ.	985	Փաղաքական տեսութիւն:
14	ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ, ԱԻԵՏԻՔ.	997	Խղերան և հասարակութիւնը:
15	ՈՒՄԻԿԵԱՆ, ՆԵՐՍԷՍ, ԲԺ.	1000	Խղերան:
16	ԱՐԾՐՈՒՆԻ, ՎԱՀԱՆ, ԲԺ.	1013	Խրատներ խղերակի մասին:
17	ԽՄԲ.	1019	Խմբադրութեան կողմից:
18	ԽՄԲ.	1021	Բովան. «Մուրճ» ՆՁՆՁ 1—6, 1892 թ.:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԳԱՋԱՐԻԱՆՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	Բ.	Կ.
«ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1890 թականի, երկու հատորով . . .	12	—
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7	—
3. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ՅԵՅԵՐ» (վէպ)	1	—
4. ՏԷՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ. զլարցի)՝ «Մանուկների մարտը թ. գործարանների հիւանդութիւնները» . . .	—	05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵԻ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթոլիկ- ների կեանքից	1	—
6. ԼԷՕ. — «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ).	—	50
7. Մ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵԻ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր)	—	40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» . . .	—	60
9. ՊՈՒՇԵԱՆՅ, ՊԵՐՃ. — «ԲՂԴԷ», վէպ	1	20
10. ՓԱՓԱՋԵԱՆՅ, Վ. — «ԽԼԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից . . .	—	15
11. ՄԱՐԻՍԵԱՆ, ԽԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը . . .	—	50
12. » » » » բ. մասը . . .	—	75
13. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ. — «ՍԵԻ-ԼԵՈՆՅԻՐ» (տոհմագ. պատկ.) . . .	—	15
14. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵԻԱՆՆԵՐ»	—	03
15. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
16. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	05
17. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
18. » » «ՆԻԱՋԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
19. » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03

20. ԳԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	— 15
21. ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ. — «ՄԻԿՐՈՖՆԵՐԸ»	— 10
22. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ»	— 10
23. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	— 15
24. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	— 20
25. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ. — «ՀԻՊՆՈՏԻՍՄ»	— 50
26. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ. — «ՏԻԳՐԱՆՈՒՀԻ»	— 50

Դիմել՝ ВЪ Редакцію журнала „МУРЧЪ“. Վճարել կարելի է նաև պոստի մարկաներով:

ԻՍԿԱԿԱՆ ԿԱՐԵՄԵՔԵՆԱՆԵՐ „ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԶԻՆԳԵՐԻ“ ՆԻՒ-ԵՕՐԿՈՒՄ

ԱՐԺԱՆԱՅԱԾ

աշխարհի մէջ կարեւորեցանք թողոր ցուցանանք ձերոյ

ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ

Նորոյ ընկերներ տան աղիքների և աղիք օգնականներ
 թողոր արհեստաւորների համար

ԳՏՆԻՈՒՄ ԵՆ ՄԻՄԻԱՅՆ

Թիֆլիսում Զինգերի ընկերութեան կենդրոնական գահիտում, Գո-
 լովնիսկի պրօսպեկտի վերայ, Միլիմանովի տան և նրա բաժանմունք-
 ների մէջ:


Բաղում: Մեքայէլեան փողոցում,
 Միլիմանովի տան վերայ,
 Գոլովնիսկի պրօսպեկտի վերայ,
 Միլիմանովի տան վերայ,
 Բալթիկում: Միլիմանովի տան վերայ

Գոցում: Կուզնեցի տ.
 Սախարաւում: Գոստինի զւոր №
 2, Տ. Ա. Ֆանասեի
 Նրեւնում: Իմ ճամբորդ գործա-
 կալների մօտ:

և նրանց ճանապարհորդող գործաւորներին հոգ

Միջին և Լիթւանիայի Նիւրնբերգի Զինգերի Նիւրնբերգի
 Գ. Լ. Նիւրնբերգի Զինգերի Նիւրնբերգի

Գ. Ն. Նիւրնբերգի




Գնողները կարող են, եթէ կամենում են, գրամը հետևելով միջոցով ստիպւած քանակութեամբ, ալի է՝ չարափով կամ
 ածառով և կամ ժամանակամիջոց ստանալ գրաւակալութեամբ գրամը միջոցով համար:

Յ. Գ. Զինգերի և ընկ. թողոր պահանջներում գտնուում են մեքենաներին պատկանելի գործիքները, լինելով ևն
 ասեղներ, թել, մետաքս և այլ մեքենային պատկանելի իրեղեններ ամենաապագայ գնորդ:

REPORT OF THE COMMISSIONERS OF THE
LAND OFFICE OF THE STATE OF NEW YORK
IN RESPONSE TO A RESOLUTION OF THE SENATE
PASSED MAY 1, 1890
RELATIVE TO THE
LANDS BELONGING TO THE STATE





„Մ Ո Ւ Ր Ճ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ — ՀԱՍԱՐՔԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԵՐ

Բ Ա Յ Ի Ա Մ . Է

Տարեկան գինն է 10 ռ.

Բաժանորդագրութեան համար ղիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ } Тифлисъ. Въ редакцію журнала „МУРЧЪ“.
Tiflis. Rédaction de la Revue „MOURTCH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

ԹԻՖԼԻՍ. — Կենտրոնական գրադաճառանոց:

» պ. Յովհաննէս Թումանյ, Սիօնի փողոց № 27:

ԲԱՔՈՒ. — պ. Աւետիս Դաւթեանց (Մարդաս. ընկ. ընթերցարան):

» պ. Ստեփան Սուլիանեանց („Надежда“ ընկ., Набережная:

ՌՈՍՏՈՎ. — ՆՈՐ-ՆԱԽՁԵԻԱՆ. — Եղբ. Պ. և Դ. Ունանեաններ:

ԲԱԹՈՒՄ. — պ. Սարգիս Մակարեանց (գրաս. եղբ. Մովհաննէրի):

ՎԱՀԱՐՇԱՊԱՏ. - պ. Ստեփան Արամեանեանց:

ՄՈՍԿՒԱ. - պ. Վարդան Թումանեանց (Чистые Пруды д. Тупицына

» պ. Ստեփան Վարդաղարեանց, (Б. Харитоньевскій, № 6):

ՕՐԵՍՏ. — պ. Միքայէլ Մուրադեանց (գրասեն. եղբ. Մովհաննէրի):

ԹԱԻՐԻՉ. — պ. Ասատուր բէկ Միքայէլեանց:

ՉՄԻՒՐՆԵԱ. — պ. Յ. Տէր-Միրաբեանց (Մեարտպ. վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — պ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԷՅԱ. - պ. Սիմէօն Միրզայեանց: Rue St Jacques № 86:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանուում է Թրիշլիս, Վեհաժինեան փողոց, տուն № 8:

